

ԿՏՐԻՃ ՍԱՐԴԱՐՅԱՆ

**ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1918-1921 ԹԹ.**

(47.925)
U-26

ԿՏՐԻՃ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1918-1921 ԹԹ.

3528

ԵՐԵՎԱՆ, «ՆԱԻՐԻ», 2002



ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ս 260

ՍԱՐԴԱՐՅԱՆ Կ.

Ա 260 Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ.–
Եր.: «Նաիրի», 2002.– 224 էջ:

Գիրքը նվիրված է Վրաստանի և Հայաստանի 1-ին հանրապետությունների քաղաքական առնչությունների պատմությանը: Հեղինակը վերլուծում է երկու հարևան ժողովուրդների՝ մինչպետական շրջանից պետականի անցման դժվարությունները:

Ցույց են տրվում ցարական Ռուսաստանից վարչատարածքային բաժանմամբ ստացած ժառանգության հետևանքները, որոնք սահմանավեճի տեսքով փոխանցվեցին նորաստեղծ հանրապետություններին և դարձան նրանց միջև առճակատման հիմնական պատճառը:

Տրված է, որ հայ – վրացական պատերազմը տարածքային վիճելի հարցերին լուծում չտվեց, բայց նաև չդարձավ թշնամանքը խորացնելու պատճառ: Վերացավ Վրաստանի կողմից Հայաստանի շրջափակումը, և դրանից հետո միջպետական հարաբերություններ հաստատվեցին կողմերի միջև:

Գիրքը շարադրված է անդրկովկասյան քաղաքական իրադարձությունների հենքով:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

0503020913
Ս ----- 2002
705(01)2002

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-550-01263-4

© «Նաիրի» հրատարակչություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Գլուխ 1. Տարածքային վեճերի սկզբնավորումը	7
Գլուխ 2. Սահմանավեճը խաղաղ կարգավորելու ջանքեր.....	35
Գլուխ 3. Հայ-վրացական պատերազմը	69
Գլուխ 4. Թիֆլիսի պայմանագիրը և միջպետական հարաբերությունների հաստատումը	96
Գլուխ 5. Իրադրությունն Անդրկովկասում Ադրբեջանի խորհրդայնացումից հետո	119
Գլուխ 6. Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը	190
Հետադարձ հայացք կամ վերջաբանի փոխաբեն	222

Ն Ե Ր Ա Ճ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն տեսանկյունի իրողությամբ, որ Անդրկովկասում պատմությունը քայլում է ներկայի հետ և ախտահարելով ապագան՝ այն նմանեցնում է իրեն: Կարելի է ասել, որ քաղաքակիրթ ազգերի համար միջնադարում հաղթահարված այդ երևույթը ուղեկիցն էր Անդրկովկասյան հանրապետությունների ոչ միայն դարասկզբին, այլև դարավերջին: Պատճառը պատմության և հատկապես՝ քաղաքական պատմության, վատ ուսուցիչ լինելն է, կամ ասել է թե՛ նման երևույթի անքննելիության խորհուրդը թաքնված է արդեն եղածի փորձն ու դասերը ճիշտ չյուրացնելու մեջ: Այս խոսքերը վերջին տարիներին շատ են ծամծամվել և ինչ-որ տեղ կորցրել իրենց իմաստը՝ տուրք տալով քաղաքական մեխանիկական կրկնություններին, որոնց ձայնարկողները հին մոտեցումների նորօրյա կրկնողներն են: Հայ-վրացական 1918-21թթ. հարաբերությունները ուսանելի են այն առումով, որ կայսրությունից ժառանգություն ստացած ազգամիջյան վեճը, որը կայսրության շրջանում անշառ հայրենասիրական զբաղմունք էր, իր ջրբաժանը չունեցավ մինչպետական և պետական շրջանի հարաբերություններում: Ուսանելի ու արդիական է նաև այն դրսևորումը, որ հարաբերությունների օբյեկտից նորաստեղծ պետությունները չկարողացան դառնալ սուբյեկտներ, վերջինիս յուրահատուկ ու օրինաչափ գործելակերպով:

Կան պատերազմներ, որոնք քաղաքական առումով հարցեր չեն լուծում, այսինքն՝ չեն դառնում քաղաքականության շարունակություն: Անդրկովկասի համար բարդությունն այն է, որ նման պատերազմները կանխելը նույնքան դժվար է ու անհնա-

րին, որքան այն պատերազմները, որոնք հարցեր լուծելու առումով անխուսափելի անհրաժեշտություն են: Հայ-վրացական պատերազմն այդ տեսակետից ուսանելի է, որովհետև առաջինն էր: Պատերազմը ծագեց տարածքային վեճից, բայց այն չկարողացավ լուծել այդ վեճը: Ուսանելի է ու արդիական, որովհետև այդ պատերազմի միջոցով Հայաստանը վերացրեց Վրաստանի կողմից պարտադրված շրջափակումը: Ուսանելի է օրվա քաղաքական շարժի առումով նաև այն բանի համար, որովհետև այդ պատերազմը երկու ժողովուրդների մեջ թշնամանքը ոչ միայն չխորացրեց, այլև դարձավ ամիսների կուտակված հակադրումն ու թշնամանքը վերացնելու միջոց: Պատերազմը վիճելի տարածքների հարցը չլուծեց, որովհետև կողմերը բանակցությունների սեղանի շուրջ նստեցին Անգլիայի և Ֆրանսիայի միջնորդությամբ:

Միջնորդները գործով ապացուցեցին, որ նման պատերազմներում հաղթողներ ու պարտվողներ չեն լինում: Հայ-վրացական պատերազմի գլխավոր դասը Հայաստանի համար թերևս այն էր, որ միջնորդների միջոցով անպետական շրջանի տասնամյակների փորձին գումարվեց նաև պետական փորձը, որը պետք է նրան զերծ պահեր տարածքային վեճի հարցերը միջազգայնացնելու ավանդույթից: Ցավալիորեն հայ-վրացական պատերազմի փորձը չկարողացավ Հայաստանի 1-ին հանրապետության ղեկավարներին 1919թ. ազատել միջնորդների միջոցով հարցեր լուծելու գայթակությունից: Հենց այստեղ է փորձի անտեսումը, որի հետևանքը եղավ այն, որ Հայաստանի 3-րդ հանրապետությունը կրկնեց 1-ին հանրապետության միջազգային ատյաններում հարցերի լուծում փնտրելու պատմությունը: Այսօրվա իրողությունների տեսադաշտից ստացվում է ձախողված փորձի եռակի կրկնություն: Գրքում տրված է հայ-վրացական հարաբերությունների քաղաքական տրամաբանությունն ու պետական որակական չափանիշների բացակայությունը, ինչը պատճառ դարձավ ու նույնատիպ դարձրեց 1918թ. և 1921թ. իրադարձությունները:

Չեմ անդրադարձել ռազմական գործողությունների մանրամասներին, որովհետև դրանք կարևոր չեն համարել: Կարևորել և ուշադրության կենտրոնում եմ պահել այն հանգամանքը, որ Անդրկովկասի երեք հանրապետությունները երկու տարի շարունակ չկարողացան իրար խոսք հասկացնել ու հարաբերվել՝ ելնելով Անդրկովկասի շահերից և արդյունքում իրար մեղադրելով՝ կործանվեցին: Աշխատությունը գրված է գերազանցապես արխիվային նյութերի հիման վրա:

Կարծում եմ, որ գրքում բարձրացված հարցերը կարող են նպաստել հայ-վրացական հարաբերությունների բարելավմանը:

Գլուխ 1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հայտնի է, որ ցարական Ռուսաստանն Անդրկովկասի վարչատարածքային բաժանում կատարելիս անտեսել էր ազգային սկզբունքը: Ի հետևանս որի Ախալքալաքի և Բորչալուի գավառները ներառված էին Թիֆլիսի նահանգի մեջ: Բնականաբար, իրերի նման վիճակը կառավարման դյուրինության տեսանկյունից ձեռնառու էր Ռուսաստանին, որովհետև նա Անդրկովկասը պահում էր ազգամիջյան վեճերի մեջ ու երկրամասն ամբողջությամբ դարձնում կառավարելի: Բնական է նաև, որ հայոց ազգային խորհուրդը չէր հաշտվում իրերի նման վիճակի հետ և պարբերաբար Պետերբուրգ էր ներկայացնում Անդրկովկասն ազգային-տերիտորիալ սկզբունքով վերաբաժանելու իր մտտեցման նախագծերը: Ռուսական արքունիքը նույնիսկ թույլ էր տվել հայերի նմանատիպ առաջարկությունները քննարկել երեք ազգերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Նման քննարկումներ եղել են 1909 և 1916 թվականներին: Մանրամասն չեմ ներկայացնում զեմստվոյան այդ խորհրդակցությունները, որովհետև դրանք ազգամիջյան տարաձայնությունները խորացնելուց բացի, այլ գործնական հետևանքներ չունեցան: Թերևս անհրաժեշտ է նշել, որ 1916 թվականի խորհրդակցությանը Հայոց Ազգային խորհրդի ներկայացրած նախագիծը ենթադրում էր նոր վարչատարածքային բաժանում ոչ թե էթնիկ սկզբունքով, այլ ըստ բնակչության թվի: Այսինքն՝ վերաբաժանումը կատարել ըստ Անդրկովկասի տարածքի ու բնակչության համամասնության: Այդ մտտեցումը հիմնավորվում էր հետևյալ թվային պատկերով. Անդրկովկասի բնակչության 28% վրացի էր, 29%՝ հայ և 43%՝ թաթար: Ելնելով

այս պատկերից, հայկական նախագիծը հիմնավորում էր, որ Անդրկովկասի ընդհանուր տարածքի 29%-ը պետք է տրվի հայերին, 30%-ը՝ վրացիներին և 41%-ը՝ թաթարներին¹ (աղբյուրները): Արդեն ասվել է, որ այս նախագիծը մերժվեց վրացիների և աղբյուրների կողմից:

Հաջորդ անգամ այս հարցերը քննարկման նյութ են դարձել 1917թ. ամռանը Պետերբուրգում: Խորհրդակցությունը հրավիրել էր Ռուսաստանի ներքին գործերի մինիստրը Անդրկովկասի համար նոր զեմստվոյան կառավարման դրույթներ մշակելու և ընդունելու նպատակով: Այդ խորհրդակցությանը մասնակցելու էին հրավիրված Սահմանադիր ժողովի դրույթները մշակելու համար Պետերբուրգում գտնվող Հայոց Ազգային խորհրդի անդամներ Խատիսյանը և Շահխաթունյանը: Վերջիններս էլ բարձրացնում են Անդրկովկասի վարչական սահմանների փոփոխության հարցը: Խորհրդակցության մասնակիցները հարցին տալիս են դրական պատասխան և առաջին անգամ ընդունում են, որ այն պետք է լուծվի էթնիկական սկզբունքով: Խորհրդակցությունն ընտրում է նաև հատուկ հանձնաժողով, որը պետք է մշակեր էթնիկական սկզբունքով Անդրկովկասի նոր վարչատարածքային բաժանման նախագիծը: Հանձնաժողովի նախագահ է ընտրվում պետական իրավունքի վրացի պրոֆեսոր Զուրաբ Ավալովը: Հանձնաժողովի անդամներ են ընտրվում Անդրկովկասի ազգություններից երկուական ներկայացուցիչ: Կարճ ժամանակում հանձնաժողովը քննարկում և ընդունում է Խատիսյանի և Շահխաթունյանի առաջարկությունը Ախալքալաքը և Լոռին Թիֆլիսի նահանգային վարչական պատկանելիությունից դուրս բերելու մասին: Այնուհետև հանձնաժողովի արձանագրությունում ասված է, որ «Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Լոռու, Կարսի և Կադզվանի գավառներից կազմավորվում է նոր Ալեքսանդրապոլի հայկական նահանգը»²: Հանձնաժողովի այս նախագիծը

¹ ՀՀ ՊԿՊԱ Ֆ. 223, ց. 1, գ. 61, թ. 1:

² ՀՀ ՊԿՊԱ Ֆ. 223, ց. 1, գ. 61, թ. 3:

տրվում է ներքին գործերի մինիստրության հաստատմանը: Վերջինս ոչ էական փոփոխություններով հաստատում է այն և ուղարկում Թիֆլիս, Անդրկովկասի հատուկ կոմիտեի եզրակացությունն ստանալու:

Օգակոմը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին մի քանի խորհրդակցություններ է հրավիրում հարցը քննարկելու նպատակով, բայց այդպես էլ որևէ եզրակացություն չի տալիս: Հոկտեմբերի 14-15-ի խորհրդակցության ժամանակ նշվում է, որ նման փոփոխությունն անհնարին է, որովհետև այն խախտում է Վրաստանի և Ռուսաստանի միջև կնքված 1783թ. պայմանագիրը: Ու նաև, որ «տարածքների վերանայումը հայ-մուսուլմանական նոր բախումների տեղիք կարող է տալ»³: Հոկտեմբերյան հեղափոխությունը, Ռուսաստանում իշխանության փոփոխությունը և Սեյմի կողմից Անդրկովկասն անկախ հռչակելը, բնականաբար, առժամանակ դադարեցրին տարածքային վեճերի քննարկումը: Ավելի ստույգ, կապված աշխարհաքաղաքական տեղաշարժերի հետ, դրանք ստացան նոր դրսևորումներ և ավելի խորացրին հայ-վրացական տարածայնությունները:

1918թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի և գերմանական խմբավորման պետությունների միջև ստորագրվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այս պայմանագրով Թուրքիային էին անցնում ինչպես Ռուսաստանի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքները, այնպես էլ Կարսի և Բաթումի մարզերը: Այս պայմանագրի դեմ, Տրոցկուց հետո, ամենից շատ աղմկեցին հայ քաղաքական ուժերը: Հայոց Ազգային խորհուրդը բոլորովին հաշվի չառնելով կատարվածի դեմ զգացական ընդվզման հնարավոր հետևանքները, Բրեստի պայմանագրի դեմ բողոքելու նպատակով հատուկ պատվիրակություն ուղարկեց Մոսկվա: Արշակ Ջամալյանի գլխավորած այս պատվիրակությանը Մոսկվայում հաճույքով ընդունեցին

³ Նոյն տեղում, ք. 5:

Տրոցկին, Չիչերինը, Ստալինը և Կարախանը: Նրանք պատվիրակության անդամներին հասկացրին, որ հարկավոր է գնալ Գերմանիա և բողոքել գերմանական կառավարությանը, որովհետև Բրեստի պայմանագիրը հայտնի չափով ոտնահարում է հայ ժողովրդի շահերը: Ահա թե մոսկովյան հանդիպումների մասին ինչ է գրում Ա. Ջամալյանը 1918թ. մարտի 23-ին Ա. Սահակյանին հղած նամակում. «Տրոցկին ասաց, որ հայկական կազմակերպությունները պետք է եռանդուն բողոքեն այդ դաշնագրի դեմ և պետք է կոչ անեն Եվրոպայի հասարակական կարծիքին օգնության գալու հայ ժողովրդին»⁴: Անշուշտ, Տրոցկուն, որը համաշխարհային հեղափոխության տարածման նկատառումներով էր դեմ Բրեստի պայմանագրին, քիչ էին հետաքրքրում հայ ժողովրդի շահերն ու իրավունքները: Նա ցանկանում էր, որ հայ քաղաքական գործիչները դառնան իր ձայնավորող և աղմուկ բարձրացնեն Եվրոպայում Բրեստի պայմանագրի դեմ: Հենց Տրոցկու հորդորներով ու օգնությամբ էլ հայկական պատվիրակությունը մեկնեց Գերմանիա: Մեծ դժվարությամբ հասնելով Բեռլին՝ հայ բանագնացները հանդիպում և իրենց բողոքն են ներկայացնում Բրեստի պայմանագրի դեմ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությանը Ռեյխստագի անդամներին: Տեղի հայ - գերմանական կոմիտեն կազմակերպում է հայ գործիչների հանդիպումը գերման քաղաքական գործիչներ Էրցբերգերի, Շեյդեմանի, Գորդենի, Նոսկեյի և Էրերտի հետ: Հայ բանագնացները Բրեստի պայմանագրի հարցում Գերմանիայի թրքամետությունն ապացուցելու համար փաստում էին նաև 1915թ. իրադարձություններում Գերմանիայի բռնած հակահայկական դիրքորոշումը և նրա ունեցած մեղքի բաժինը կատարվածի մեջ: Հիմնավորում են, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը նոր աղետ է բերելու հայ ժողովրդի գլխին: Այս հանդիպումների արդյունքում հայ բանագնացներին զրկում են Մոսկվայի և Թիֆլիսի հետ կապի

⁴ ՀՀ ՊԿՊԱ, քաղվածքների ֆոնդ, գ. 53, ք. 107:

հնարավորությունից և արդեն մայիս ամսին նրանց հասկացնում են, որ պետք է հեռանան Գերմանիայից⁵:

Հայ քաղաքական գործիչների բեռլինյան այս հանդիպումները Գերմանիայի կառավարությանը հուշեցին, որ պետք է մասնակցել Բաքումում գումարվելիք թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին: 1918թ. մայիսի 14-ին Մոսկվայում Գերմանիայի դեսպան կոմս Միրբախը ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինին հաղորդում է, որ Գերմանիան պատրաստ է միջնորդի դեր խաղալու Թուրքիայի և Անդրկովկասի միջև Բաքումում ընթացող բանակցություններում: Հաջորդ օրը՝ մայիսի 15-ին, Գ. Չիչերինը գրում է Բեռլինում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Իոֆֆեին, որ վերջինս Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությանը հայտնի այն մասին, որ ՌՍՖՍՀ-ը նույնպես ցանկանում է մասնակցել Բաքումի բանակցություններին⁶: Չնայած Գ. Չիչերինը Իոֆֆեին հղած այս նամակում ընդգծում է, որ նա Գերմանիայի կառավարությանը հայտնի, որ հակառակ դեպքում Ռուսաստանը չի ճանաչի Թուրքիայի և Անդրկովկասի միջև կնքված պայմանագիրը, բայց և այնպես Ռուսաստանին չթույլատրվեց մասնակցելու Բաքումի բանակցություններին: Բեռլինում գտնվող հայ բանագնացները չէին էլ կռահում, որ բողոքելով Բրեստի պայմանագրի դեմ, իրենք ակամայից նպաստում էին թուրքական պլանների իրականացմանը: Նրանք նույնիսկ տեղեկություն չունեին, որ Սեյմն արդեն Անդրկովկասը անկախ է հռչակել, և Թուրքիան այլևս որևէ պարտավորվածություն չզգալով Ռուսաստանի հանդեպ, արդեն խախտել էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Երկու ամիս շարունակ Բեռլինում ունեցած բազում հանդիպումների ու բողոքների անիմաստությունն ամբողջական է դառնում, երբ հայ բանագնացները Բեռլին ժամանած վրաց պատվիրակությունից տեղեկանում են, որ Սեյմը Անդրկովկասը հռչակել է Ռուսաստանից անկախ, և որ

⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 132, ք. 2:

⁶ Նույն տեղում, գ. 131, ք. 1:

Թուրքիան, խախտելով Բրեստի պայմանագիրը, իր գորքերով խորանում է Հայաստանի տարածքները: Հայ քաղաքական գործիչների մերժողական վերաբերմունքը Բրեստի պայմանագրի հանդեպ իր կնիքը դրեց 1918թ. մարտին Թուրքիայի և Անդրկովկասի Սեյմի միջև սկսված բանակցությունների ձախողման վրա: Բանակցություններում Սեյմի պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին վարպետորեն օգտագործեց հայերի թշնամական դիրքորոշումը Բրեստի պայմանագրի հանդեպ: Տրապիզոնի բանակցություններում թուրքական պատվիրակությունը (նախագահ՝ Ռաուֆ Բեյ) Անդրկովկասի հետ պայմանագիր կնքելու նախապայման դրեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը: Ի պատասխան դրա Ա. Չխենկելին հայտարարեց, որ «իրենք չեն ընդունում Բրեստի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող մասը, որովհետև Անդրկովկասը, փաստորեն, անկախ է Ռուսաստանից և ունի իր կառավարությունը: Իրականության հետ անհամապատասխան այս ոգով մարտի 21-ին Տրապիզոնում Ա. Չխենկելու հայտարարությունում նաև ասված է, որ «Հաշտության պայմաններ կնքելու հիմք պետք է ծառայի վերականգնումը Ռուսաստանի և Տաճկաստանի պետական սահմանների, որոնք գոյություն ունեին 1914թ. պատերազմ հայտարարելու պահին»⁷: Ռաուֆ Բեյը տեսնելով, որ Սեյմի պատվիրակության հայտարարության երկրորդ մասն ամբողջապես հակասում է Անդրկովկասի անկախության մասին հարցադրմանը, պատասխան հայտարարությամբ պնդում է, որ պատրաստ է բանակցությունների մեջ մտնել անկախ Անդրկովկասի հետ: Տեսեք, թե ինչպիսի դիվանագիտական հնարքով է կառուցված թուրքական կողմի պատասխանը. «Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը պարտադիր է Ռուսաստանի կազմի մեջ մտնող բոլոր տարածքների համար, ուստի և Սեյմի պատվիրակությունն

⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 119, ք. 7-8:

այն չընդունելու իրավունք չունի»⁸: Ինչ վերաբերում է Անդրկովկասը Ռուսաստանից անջատ համարելու Սեյմի պատվիրակության ցանկությանը, ապա թուրքական կողմը նկատում է. «Օսմանյան պատվիրակությունն այժմ տեղեկանալով նշված հանրապետության կազմակերպվելուն իբրև անկախ պետություն, բավականությամբ նկատում է դրան վերաբերող Կովկասյան պատվիրակության հայտարարությունը և պատրաստ է նրա հետ բանակցության մեջ մտնել բարեկամական պայմանագիր կնքելու համար»⁹: Հետագա թյուրիմացություններից խուսափելու նպատակով թուրքական պատվիրակության հայտարարության մեջ նաև նշվում է, որ «Նրա (Անդրկովկասի) հետ բանակցություններ կարող են սկսվել միայն այն դեպքում, երբ հրաժարվեն Բաթումի, Արդահանի և Կարսի սանջակների վերաբերյալ որևէ պահանջից»¹⁰: Այս հայտարարություններից հետո բանակցությունները շարունակվում են ևս 10 օր, բայց կողմերը որևէ ակնկալիք չունեին, որ դրանք պայմանագրային ավարտ են ունենալու: Թուրքական կողմը տեսնելով, որ Անդրկովկասի պատվիրակությունը չի ընդունում Բրեստի պայմանագիրը, փաստելով Անդրկովկասի գոյություն չունեցող անկախությունը, մարտի 31-ին դադարեցնում է բանակցությունները և հայտարարում, որ «Բարեկամական պայմանագիր կնքելու համար հետագա բանակցություններ սկսելուց առաջ անհրաժեշտ է, որ Անդրկովկասը հայտարարի իր անկախությունը»¹¹: Ինչպես տեսնում ենք, այս հայտարարության մեջ այլևս չի հիշատակվում Բրեստի պայմանագրի ընդունման պայմանը: Թուրքական կողմին այլևս այն չէր հետաքրքրում, որովհետև Անդրկովկասը Ռուսաստանից անկախ հայտարարելու պարագայում Թուրքիան այլևս պարտավորված ու հարկադրված չէր լինի կատարելու Բրեստ-Լիտովսկի

⁸ Նույն տեղում, ք. 2 – 3:

⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 119, ք. 4:

¹⁰ Նույն տեղում, ք. 12:

¹¹ Նույն տեղում:

պայմանագրի պայմանները: Փաստորեն, հենց դրան էլ ձգտում էր թուրքական դիվանագիտությունը: Նրա այդ ցանկությանը Տրապիզոնի կոնֆերանսում ընդառաջ գնաց Անդրկովկասյան Սեյմի պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին, ոչ մեկ անգամ փաստելով հայ ժողովրդի շահերի ոտնահարման հանգամանքը և հանդես գալով իբրև այդ շահերի պաշտպան: Ինչպես քիչ հետո կտեսնենք, Ա. Չխենկելուն մտահոգողը ոչ թե Բրեստի պայմանագրով ոտնահարված հայ ժողովրդի շահերն էին, այլ այդ պատրվակն օգտագործելով հող նախապատրաստելը Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու համար: Անշուշտ, դժվար ու նաև անիմաստ է կռահել իրադարձությունների զարգացման ընթացքը, եթե Անդրկովկասի պատվիրակությունը Տրապիզոնում ընդունեք թուրքական կողմի առաջարկությունը, և այդ ոգով պայմանագիր ստորագրվեր: Մի բան փաստ է, որ Սեյմի պատվիրակության և հատկապես նրա նախագահի դիրքորոշումը հեռուն տանող քաղաքական նպատակներ ունեին: Ապրիլի 1-ին Տրապիզոնից Թիֆլիս ժամանելուց հետո Ա. Չխենկելին իր համախոհների հետ սկսեց եռանդուն գործունեություն ծավալել, որպեսզի Սեյմը Անդրկովկասը Ռուսաստանից անկախ պետություն հռչակի: Մեկ շաբաթ տևող համառ պայքարից հետո 1918թ. ապրիլի 9-ին Սեյմի նիստը Անդրկովկասը հռչակեց անկախ հանրապետություն և հանձնարարեց նույն Ա. Չխենկելուն կազմել կառավարություն: Սեյմի ապրիլի 13-ի նիստում Ա. Չխենկելին հայտարարեց անկախ Անդրկովկասի կառավարության կազմը: Բոլոր գլխավոր մինիստրական տեղերը հատկացված էին վրացիներին ու ադրբեջանցիներին: Հանգամանք, որն ապացուցում էր, որ նորաստեղծ կառավարության քաղաքականության մեջ հայերը որևէ էական դեր չէին ունենալու: Նրանց տրված էր ֆինանսատնտեսական ոլորտի չորս մինիստրական տեղեր: Դրանք էին՝ ֆինանսների (Ա. Խատիսյան), պարենավորման (Ա. Սահակյան), խնամատարության (Հ. Քաջազունի) և աշխատանքի (Ա. Երզնկյան): Կառավարության կազմը

Սեյմի կողմից հաստատվելուց հետո նրա գործունեության ծրագրին ծանոթացնում է Ա. Չխենկելին: Նա հատկապես ընդգծում է, որ կառավարության գործունեությունը նպատակամղված է լինելու. «Բարեկամական ամենաջերմ հարաբերություններ հաստատել բոլոր պետությունների հետ և մասնավորապես նրանց, ում հետ Անդրկովկասյան հանրապետությունն ունի ընդհանուր սահմաններ: Այս է մեր արտաքին քաղաքականության ուղղությունը սահմանող իդեալը»¹²: Կառավարության նախագահի ելույթին հաջորդում է Ռատֆ Չաղեի խոսքը, որը ողջունելով կառավարության ծրագիրը, ասում է. «Ապրիլի 9-ին մեր ընդունած վեհ սկզբունքը հնարավոր կլինի ի կատար ածել կառավարության ջանքերով ամենաջերմ և անկեղծ հարաբերություններ հաստատելով մեզ շրջապատող պետությունների հետ»¹³: Նույն միտքն է հայտնում նաև Ծերեթեյին: Իրար լրացնող այս համերաշխ քաղաքական ելույթներից հետո ծայրը տրվում է Սեյմի պատգամավոր Խաչատուր Կարճիկյանին: Նա դաշնակցական ֆրակցիայի անունից հայտարարում է, որ «իրենք կպաշտպանեն կառավարության ղեկավարացիան, եթե այն ապահովի Անդրկովկասի բոլոր ժողովուրդների անկախությունն ու շահերը»: Այնուհետև Խ. Կարճիկյանն ընդգծում է հայությանը մտահոգող հետևյալ միտքը. «Անկախության հայտարարման փաստը Անդրկովկասի ժողովուրդների համար մահացու վտանգի պահին ինքնին ասում է, որ այն կատարված է արտաքին ուժերի ճնշման տակ: Եվ ահա, այդ արտաքին ուժերը, որ հարկադրեցին Անդրկովկասի անկախությունը հայտարարել հենց այդ պահին, ստիպեցին Անդրկովկասի ժողովուրդներին և ղեմնկրատիային որոշ վարանումներ ցուցաբերել: Արդյո՞ք տվյալ պահին դա է փրկությունը և չի՞ տանում այն դեպի կործանում: Կասկած չկա, որ ոչ միայն քաղաքական խմբավորումներն ու կուսակցությունները, այլև դրանց անդամներից շատերն այս հիմնական հարցում


¹² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 127, ք. 5:

¹³ Նույն տեղում, ք. 6:

3528

տարբեր կարծիքներ ունեն: Այս առումով կառավարության առաջ շատ ծանր խնդիրներ են կանգնած: Եթե նա կհաղթահարի այդ խնդիրները, հավատ կներշնչի, որ կփրկի Անդրկովկասի ժողովուրդների կյանքը, դա կլինի այս կառավարության մեծ ծառայությունն Անդրկովկասի առաջ: Եթե դա չլինի, ապա այդ դեպքում մեր ֆրակցիայի անունից կասեմ, որ ոչ մի կառավարություն և ոչ մի ուժ չի կարող ամրապնդել այդ անկախությունը»¹⁴: Հայ քաղաքական գործչի այս փաստարկները խեղդվեցին հետագա ելույթ ունեցողների մեղադրանքների տարափում: Հատկապես աղմկում էին վրաց մեծշիկները, որոնք անթաքույց ակնարկում էին, որ հայերը դեմ են Անդրկովկասի անկախությանը և ցանկանում են «Անդրկովկասի ժողովուրդավարությունը խեղդել բոլշևիկյան սվիններով»: Հայ քաղաքական գործիչների նման դիրքորոշումը ոչ միայն պայմանավորված էր ռուսական կողմնորոշումով, այլև հոգեբանորեն նրանք պատրաստ չէին իրադարձությունների նման ընթացքին: Այս վիճակը հասկանալու համար ընթերցողը պետք է պատկերացնի այն ոգևորությունը, որ ընդամենն ամիսներ առաջ ապրում էր հայ իրականությունը: Չէ՞ որ ռուսական զորքերը պարտության էին մատնել Թուրքիային և գրավել էին Արևմտյան Հայաստանը: Եվ ահա հայության համար այդ հուսադրող պահին տեղի ունեցավ ռուսական հեղափոխությունն ու տակնուվրաս արեց ամեն ինչ: Հույսը փոխվեց հուսախաբությանը, և հայ քաղաքական ուժերը պարզապես չգիտեին իրենց անելիքը ստեղծված բարդ ու հակասական իրավիճակում: Ինչպես միշտ, ժողովրդի կյանքը տնօրինող հայ քաղաքական գործիչները չէին կարողանում ճիշտ ու ժամանակին կռահել իրադարձությունների զարգացման ընթացքն ու միայն արձանագրում էին արդեն կատարվածը: Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու դեմ հանդես եկավ նաև Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը: Այդ նպատակով վերջինս ապրիլի 16-ին հրավի-

¹⁴ Նույն տեղում, ք. 10-12:



յնց ազգային ժողով: Այս ներկայացուցչական ժողովում Ազգային խորհուրդի նման դիրքորոշմանը հետևյալ բացատրությունը տվեց նրա նախագահ Ա. Ահարոնյանը. «Անկախությունն ավելի աղետաբեր պետք է լինի մեզ համար, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը: Թուրքիան պահանջ է դրել Անդրկովկասն անկախ հայտարարել և այդ պահանջը նա բանակցությունների նախապայման է հայտարարել: Ընդունելով այդ պայմանը և Անդրկովկասն անկախ հայտարարելով ու մեր քիկունքում չունենալով մեծ Ռուսաստան, մեր պատգամավորներն ավելի խեղճ պիտի լինեն բանակցությունների ժամանակ: Տաճիկները մեր առաջ պիտի դնեն ավելի ծանր պայմաններ, իսկ երբ մեր պատվիրակությունը հայտարարի, որ անկարող է համաձայնել առաջարկված պայմաններին, Թուրքիան պատերազմ կհայտարարի: Ես չգիտեմ, թե Չխենկելին ու իր ընկերներն ի՞նչ են մտածում այս մասին»¹⁵: Դժվար է հասկանալ Ա. Ահարոնյանի վերը բերած փաստարկներն այն պարզ պատճառով, որ եթե իրենք հույսը դնում էին Մեծ Ռուսաստանի վրա, ուրեմն ժամանակին պետք չէր ընդվզել նույն Ռուսաստանի կողմից ստորագրված Բրեստի պայմանագրի դեմ, որը և պատճառ ընդունելով, Չխենկելին ձախողեց Տրապիզոնի բանակցությունները և հող նախապատրաստեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու համար: Իրադարձությունները զարգանում էին գլխապտույտ արագությամբ, բայց հայ քաղաքական ուժերն այդպես էլ չէին կռահում, որ շատ շուտով Հայաստանը միայնակ է մնալու Թուրքիային դեմ հանդիման:

Անկախ Անդրկովկասի կառավարության առաջին քայլը եղավ Թուրքիային հայտնելը, որ իր կառավարությունն ընդունում է Բրեստի պայմանագիրը: Ապրիլի 10-ին հայկական և վրացական կորպուսների հրամանատարներ Նազարբեկովը և Գաբաևը ստացան ռազմական միմիստրի պաշտոնակատար

Օդիշելիձեի հրամանը պատերազմական գործողությունները դադարեցնելու մասին¹⁶:

Այս հրամանի հետևանքը եղավ այն, որ թուրքական զորքերը ապրիլի 11-ին, առանց կրակոցի գրավեցին Կարսը: Ավելի ճիշտ, անկախ Անդրկովկասի կառավարության առաջին քայլը եղավ, ի կատարումն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի, Կարսի հանձնումը Թուրքիային: Քաղաքական տրամաբանության առումով հակառակը պետք է լիներ: Այսինքն, եթե դեռևս Ռուսաստանի կազմում գտնվող Անդրկովկասի պատվիրակությունը Տրապիզոնի բանակցություններում չընդունեց Բրեստ-Լիտովսկի պայմանները, և այդ պատճառով էլ ձախողվեցին բանակցությունները, ապա Անդրկովկասն անկախ հռչակելուց հետո Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումն ու Կարսի հանձնումը պարզ ցույց է տալիս գերմանա-թուրքական բլոկի և վրացի ու ադրբեջանցի զործիչների նախնական պայմանավորվածության մասին հանգամանքը: Հայկական քաղաքական ուժերը և Հայոց Ազգային խորհուրդը կրկին հանդես եկան փաստն արձանագրողի և կատարվածի դեմ բողոքողի կրավորական դերում: Նրանք նույնիսկ չկարողացան Սեյմում հիմնավորել, որ եթե Անդրկովկասն իրեն անկախ է հայտարարել Ռուսաստանից, և դա արել է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չընդունելու պատճառաբանությամբ, ապա ի՞նչ տրամաբանությամբ ու քաղաքական շահով է թելադրված, որ անկախ Անդրկովկասի առաջին ու գլխավոր քայլը եղավ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումն ու Կարսի հանձնումը թուրքերին: Նրանք Սեյմի նիստերում միայն պնդում էին, որ առանց Ռուսաստանի Անդրկովկասը չի կարող գոյատևել, որը և հանդիպում էր վրացիների ու ադրբեջանցիների դիմադրությանը: Փաստորեն, անկախ Անդրկովկասի Սեյմի ու կառավարության հայ անդամներն ականալից դարձել էին Ռուսաստանի շահերի անիմաստ պաշտպանը: Կաշկանդվելով քաղաքա-

¹⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, ք. 9:

¹⁶ Նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 181, ք. 1:

կան հակվածությամբ, նրանք չկարողացան պայքարել, որ Ռուսաստանից անկախացած Անդրկովկասը չընդունի նույն Ռուսաստանի կողմից ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այսինքն՝ նրանք չկարողացան դառնալ անկախ Անդրկովկասի շահերի պաշտպանը: Հանգամանք, որը նույնիսկ արդեն կատարված իրողությունների հանդեպ նրանց բողոքներն անգամ հակասական էին դարձնում ու որևէ գործնական հետևանք չէին կարող ունենալ: Քիչ հետո մենք կտեսնենք, թե ինչպես Հայոց Ազգային խորհուրդը բանագնացներ ուղարկեց Գերմանիա, որպեսզի վերջինս ազդի Թուրքիայի վրա, որ նա հարգի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այն փուլում, երբ սեփական շահերից ելնելով, նրանք չպետք է դառնային այլոց ձայնավորող ու բողոքեին Բրեստի պայմանագրի դեմ, բողոքում էին, իսկ հետո էլ խնդրում էին, որ Թուրքիան հարգի նույն պայմանագիրը: Սա հայ քաղաքական մտքի հին, բայց ցարդ չհնացած դրսևորման կերպն է: Ու այն առաջին հերթին պայմանավորված է մեծ տեղաշարժերի մեջ իր ժողովրդի շահը փնտրելու անիրատես ռոմանտիզմով: Կարսի մարզը թուրքական գորքերին հանձնելուց հետո ավելի սրվեցին հայ-վրացական հարաբերությունները: Առավել ևս, երբ շուտով պարզ դարձավ, որ Թուրքիան ոչ ոքի առաջ պատասխանատու չէ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը կատարելու առումով:

Նման պայմաններում Անդրկովկասի և Թուրքիայի միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով 1918թ. մայիսի 11-ին Բաթումում սկսվեցին բանակցությունները: Բաթումի կոնֆերանսի աշխատանքներին, միջնորդ առաքելությամբ, մասնակցում էր նաև Գերմանիայի պատվիրակությունը: Բաթումի բանակցությունների երկրորդ օրը թուրքական կողմը (Խալիլ Բեյ, Վեհիբ փաշա) նոր պահանջներ առաջ քաշեց հայկական տարածքների վերաբերյալ: Այդ քայլով նա անդրկովկասյան պատվիրակությանը հասկացրեց, որ ինքը որևէ պարտավորվածություն չունի կատարելու Բրեստ-Լիտովսկի

պայմանագիրը: Գերմանական պատվիրակությունը հայտարարեց, որ թուրքական կողմը պարտավոր է հարգել Բրեստի պայմանագիրը և հայկական նոր տարածքների հանդեպ հավակնություն հանդես չբերել: Ահա թե այդ մասին ինչ է գրում իր կառավարությանը գերմանական պատվիրակության ղեկավար գեմ. Ֆոն Լոսովը մայիսի 12-ին Բաթումից Բեռլին ուղարկած հեռագրում. «Թուրքերի պահանջներն անցնում են ամեն չափ ու սահման՝ անջատելու գուտ հայկական Ախալքալաքի ու Ալեքսանդրապոլի գավառները և Երևանի նահանգի մասերը, որոնք աղաղակող կերպով խախտում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և նպատակ ունեն բնաջնջել հայերին Անդրկովկասում»¹⁷: Հարցի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերմանական պատվիրակության մասն ղիրքորոշումն առավելապես ցուցադրական էր, որովհետև այն բացարձակապես չազդեց թուրքական կողմի վրա: Մայիսի 25-ին տեսնելով, որ չեն կարողանում ազդել թուրքական պատվիրակության վրա, գերմանական բանագնացները լքեցին բանակցություններն ու հեռացան Բաթումից: Դրանից հետո շարունակվեց տրապիզոնյան բանակցություններով սկսված «դիվանդիտական ներկայացման» երկրորդ արարողությունը: Մայիսի 26-ին թուրքական կողմը պահանջեց լուծարել Սեյմը, որպեսզի հետագա բանակցությունները շարունակի Անդրկովկասի նորաստեղծ պետությունների հետ առանձին: Նույն օրը՝ մայիսի 26-ին, Վրացոց Ազգային խորհուրդը հայտարարեց Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը նույն ոգևորությամբ անկախ պետություն հռչակվեց Ադրբեջանը: Մայիսի 26-ին կայացավ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի նիստը, որը բողոքեց Սեյմի ինքնալուծարման և անկախ հանրապետություններ ստեղծելու որոշման դեմ: Իսկ մինչ այդ, քանի որ թուրքական գորքերը գրավել էին Ալեքսանդրապոլն ու առաջ էին շարժվում, մայիսի 24-ին հերթական պատվիրակությունն էր

¹⁷ Գերսառ Ահարոնյան, Մեծ երազուն ճամփուն վրա, Պեյրոս, 1964թ., էջ 105:

ուղարկել Գերմանիա: Այս անգամ արդեն բողոքելու, որ Թուրքիան խախտել է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և խնդրելու գերմանական կառավարությունից, որ վերջինիս պարտավորեցնի Թուրքիային կատարելու Բրեստի պայմանագիրը: Բեռլինում բանազնացներ Հ. Օհանջանյանը և Ա. Ջուրաբյանը հանդիպում են Բաթումի բանակցություններից հեռացած Գերմանիայի պատվիրակության ղեկավար Ֆոն-Լոսովին: Այդ հանդիպման մասին մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհրդին հղած մամակում Հ. Օհանջանյանը գրում է. «Կրկին հանդիպեցի Լոսովի հետ: Վրացիների հետ խոսելուց հետո նա այժմ ավելացնում է, թե չի կարող վճռական կերպով մեզ խորհուրդ տալ անկախություն հայտարարել: Դիմադրել ևս խորհուրդ չի տալիս: Ասում է, որ պետք է նահանջել բողոքելով»¹⁸: Եվ այս խորհուրդ տվողը նույն այն Լոսովն է որն ի նշան բողոքի, հեռացել էր Բաթումի բանակցություններից, որովհետև «Թուրքիայի պահանջները հայերի նկատմամբ անցնում էր ամեն չափ ու սահման»: Իրականում Անդրկովկասի հանդեպ տարվող քաղաքականության իրական հեղինակը Գերմանիան էր, որը ջանում էր օր առաջ գրավել Բաթում և տիրանալ նավթային ռեսուրսներին: Այլապես ինչու՞ պետք է Լոսովը հայերին խորհուրդ տար չդիմադրել թուրքական զորքերին: Իսկ թուրքական զորքերը Հայաստանի վրայով երկու ուղղությամբ շարժվում էին դեպի Բաթու:

Հետաքրքիր ու նաև հավելյալ մեկնաբանության անհրաժեշտություն ունի Ֆոն-Լոսովի այն միտքը, որ ինքը խորհուրդ չէր տա Հայաստանն անկախ հայտարարելու: Այս մտտեցումը նա նաև հիմնավորել է այսպես. «Թուրքիան կարող է ասել, թե քանի որ սա անկախ երկիր է՝ ես ազատ եմ նրա հետ վարվելու ինչպես ուզում եմ, ոչ ոք գործ չունի և չի կարող միջամտել»¹⁹: Այս «խորհուրդը» հետաքրքիր է այն պատճառով, որ որևէ քաղաքական մտտեցում չի պարունակում մի կողմից, իսկ մյուս

¹⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 289, ց. 1, գ. 14, ք. 1:

¹⁹ Նույն տեղում:

կողմից էլ պարզ ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել նախնական պայմանավորվածություն հայկական տարածքները Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի միջև բաժանելու: Այս մասին փաստարկված կիսուսեմք հաջորդ գլխում: Այստեղ միայն հարկ է նկատել, որ հիմնավորապես սխալ ու մոլորություն է մեր պատմագիտության մեջ տեղ գտած այն թեզը, որ իբր հայ դիվանագիտությունը խայտառակ պարտություն կրեց՝ Թուրքիայի հետ 1918թ. հունիսի 4-ին ստորագրելով Բաթումի պայմանագիրը: Անշուշտ, շատ դժվար էր հաշտվել 10-12 հազ. քառ. կիլոմետր տարածքով Հայաստանի հետ, որը հայ քաղաքական ուժերի երևակայության ու ձգտումների համեմատ «ընդամենը մի գերեզմանի տարածք էր»: Հնարավոր է նաև, որ իմ բերած փաստերն ամբողջական պատկերը չեն տալիս այն կաթվածահար ու որևէ գործնական քայլ չնախաձեռնող իրավիճակի: Թիֆլիսի ու Բաքվի Հայոց Ազգային խորհուրդները փաստորեն չէին կարողանում հաշտվել փոփոխված մեծ տեղաշարժերի հետ և մատնված էին խուճապի ու անգործության: Այս համատարած քառուսի պայմաններում 1918թ. մայիսի 28-ի Հայաստանի անկախության հռչակումը կյանքում իրագործվելու որևէ հնարավորություն չէր ունենա, եթե Երևանի ազգային խորհուրդն Արամի գլխավորությամբ չկազմակերպեր մայիսյան ինքնապաշտպանական մարտերը: Ուստի խոսել «Բաթումի խայտառակ դիվանագիտական պարտության» մասին առնվազն անլուրջ է և կատարված իրադարձությունների հետ որևէ կապ չունի: 1918թ. հունիսի 4-ին Բաթումի պայմանագրով Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունն այն տարածքներով, որը զենքով պաշտպանել էր հայ ժողովուրդը: Փոքր էր այդ տարածքը, իհարկե փոքր էր՝ ընդամենը 12 հազար քառակուսի կիլոմետր, բայց ստեղծված պայմաններում դա էր փրկության միակ քաղաքական ելքը:

Պատմական իրադարձությունները չզերագնահատելով ու չթերագնահատելով, պետք է արձանագրել ու նաև բանաձևել, որ մայիսյան ինքնապաշտպանական մարտերի քաղաքական

իմաստն ու պատմական նշանակությունն այն էր, որ դրանք հնարավորություն տվեցին Թուրքիայի հետ կնքելու Բաթումի պայմանագիրը: Այսպես չէր լինի Հայաստան ու այդ 12 հազար քառակուսի կիլոմետրն էլ բաժանվելու էր Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի միջև: Անշուշտ, Թիֆլիսի և Բաքվի Հայոց Ազգային խորհուրդները և քաղաքական ուժերը չէին կարողանում հաշտվել կատարված իրադարձությունների հետ, և հենց այդ հոգեբանական վիճակն էլ բխվում էր քաղաքական ռեալությունների հետ ու ծնում տարաբնույթ մեկնություններ կապված Բաթումի պայմանագրի հետ: «Կատարված է դավաճանություններն ամենաստորը», - ասված է Բաքվի Հայոց Ազգային խորհրդի հայտարարության մեջ: Այս ոգով էին ընկալում մեկ տարվա ընթացքում տակնուվրա եղած իրադարձությունները, որովհետև ընդամենը մեկ տարի առաջ հայությանը թվում էր, որ ահա ուր որ է՝ իրականանալու է Ռուսաստանի միջոցով Արևմտյան Հայաստանն ազատագրելու իր վաղեմի երազանքը: Հույսի, հուսադրման և հուսախաբության հերթական խաբկանքն ու տեղապտույտն էր ապրում հայ իրականությունը: Տերությունների օգնությամբ Մեծ Հայաստան ստեղծելու տասնամյակների տեսլականը բխվել էր հայրենիքի փոքրիկ մասի վրա անկախ պետություն ունենալու փաստի հետ: Այստեղից էլ ակունքվում ու բխում էր հայ իրականության գաղափարաբանական ու հոգեբանական անհաշտությունը կատարված քաղաքական իրադարձությունների հանդեպ՝ ընդհանրապես և Թուրքիայի հետ 1918թ. հունիսի 4-ին կնքված Բաթումի պայմանագրի հանդեպ՝ մասնավորապես: Հետագայում այս ամենին ավելացավ նաև այն մոտեցումը, որ իբր 1918թ. մայիսյան ինքնապաշտպանական հաղթական մարտերի և դրանից հետո ստորագրված Բաթումի պայմանագրի միջև համարժեքություն չկար: Տարիների ընթացքում այս ճշմարտանման մոտեցումն ամրագրվեց պատմագիտության մեջ ու քաղաքական միտքը սնեց ռոմանտիկ այն մտայնությամբ, որ հայ դիվանագիտությունը Բաթումում «խայտա-

ռակ պարտություն կրեց» ու «չկարողացավ օգտվել զինական հաջողությունից»: Պատմական և գեղարվեստական գրականության մեջ տեղ գտած այս ու մմանատիպ մոտեցումները հենու են կատարվածի պատճառահետևանքային փոխկապակցված քաղաքական մեկնությունից: Այս հարցի գիտական ու քաղաքական չափումներով քննարկումն ու մեկնաբանությունը կարևոր է ոչ այնքան գիտական, որքան գուտ քաղաքական առումով: Բաթումի դաշնագիրը սկիզբ էր ոչ միայն հայոց պետականության, այլ նաև սկիզբ էր դնում միջպետական ու դիվանագիտական հարաբերությունների՝ Թուրքիայի հետ: Բաթումի պայմանագրի ոչ քաղաքական մեկնությունը արդեն 1919թ. ունեցավ այն տխուր հետևանքը, որ օգտագործվեց Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու ու նաև արդեն 60 հազ. քառ. կիլոմետր տարածք ունեցող Հայաստանը հեզմանքով «Արարատյան հանրապետություն» կամ, որ ավելի ցավալի էր, Թուրքիայի օրհնությամբ լույս աշխարհ եկած պետություն կոչելու համար: Առաջ անցնելով նշեմ, որ ներքին հոգեբանական այս բարդույթը ճակատագրական դարձավ Հայաստանի 1-ին հանրապետության կործանման գործում: Ու քանի որ Հայաստանի 3-րդ հանրապետությունը, փաստորեն, իրավահաջորդը դարձավ 1-ին հանրապետության, ուստի այսօրվա քաղաքական կյանքի կանոնավորման առումով էլ վաղեմության ժամկետը չի կորցրել ճիշտ ու հստակ պատկերացումը Բաթումի պայմանագրի մասին: Նաև այն պատճառով, որ 1994թ. հետո ընկած շրջանում էլ քաղաքականությունից ազոտ պատկերացում, բայց նրա նկատմամբ մեծ հավակնություններ ունեցող քաղաքական ուժերը հաճախ են օրվա դիվանագիտական անհաջողությունների ու Բաթումի «խայտառակ պայմանագրի» միջև նմանության եզրեր տեսնում: Վերջացնելով միտքս Բաթումի պայմանագրի մասին և վերստին նշելով կամ ընդգծելով, որ այն համարժեք էր մայիսյան զինական հաջողություններին, հավելելն նաև, որ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը, դժկամությ-

յամբ հանդերձ, պատասխանատու որոշում կայացրեց՝ ստորագրելով Բաթումի պայմանագիրը: Նախորդ շարադրանքից դուր տեղյակ եք Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանի բացասական վերաբերմունքին՝ ինչպես Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու Մեյմի որոշմանը, այնպես էլ անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախությանը: Այդ իսկ պատճառով էլ ցանկանում եմ ընթերցողին ներկայացնել հենց Ավ. Ահարոնյանի մոտեցումները խնդրո առարկա հարցին:

1918թ հունիսի 2-ին Երևանի ազգային խորհրդին հղած նամակում նա Բաթումի բանակցությունների մասին գրում է. «Ոչ մի տեղից հույս չունենալով և չցանկանալով հայ ժողովրդի մնացած մասին ենթարկել անտեղի փորձության և գոհողության անհավասար պայքարում ազգային խորհուրդը ստիպված էր գնալ այդ քայլին (խոսքը Բաթումում թուրքական վերջնագրի ընդունման մասին է - Կ. Ս.): Որքան մեզ էր հայտնի գերմանացիները և թուրքերը ցանկանում էին Անդրկովկասը բաժանել Վրաստանի և Ադրբեջանի միջև: Պետք է ենթադրել, որ մեր գործերի դիմադրությունը ստիպեց նրանց ճանաչել նաև Հայաստանը»²⁰: Ուստի հայկական դիվանագիտության պատմության մասին պատմագիտության դիտարկումները կապված են մայիսյան ինքնապաշտպանական մարտերի դերը գերազնահատելու հետ: Այս հարցում անհրաժեշտ փոխկապակցված մոտեցումը պահանջում է տեսնել այն օրգանական կապը, որ զոյություն ունեւ Հայաստանը պետություն հռչակելու մայիսի 28-ի ակտի և Բաթումի պայմանագրի միջև: Այսինքն, եթե չստորագրվեւ Բաթումի, իսկապես շատ ծանր, պայմանագիրը, չէր ծնվի նաև Հայաստանի Հանրապետությունը: Ժամանակակիցներից նրանք, ովքեր չէին ցանկանում ճանաչել տասը հազար քառ. կիլոմետրի վրա ստեղծված Հայաստան պետությունը, փաստում էին, որ այն «թուրքական ծնունդ է»: Բոլորովին այլ նկատառումներով կատարվածն այդպես էին ներ-

կայացնում նաև Բաթումի պայմանագիրը կնքած թուրքական պատվիրակներ Վեհիբ և Խալիլ փաշաները: Առաջինների մոտեցմանը չենք անդրադառնում, որովհետև հետագան ցույց տվեց, որ նրանք չեն ընդունում կորցրած հայրենիքի մասի վրա ստեղծված պետությունը ցանկացած տարածքով: Երբ 1919թ. Հայաստանի տարածքներն ընդլայնվեցին և դարձան վաթսուներեք հազար քառ. կիլոմետր, ամբողջը երազողներն այն անվանում էին «Արարատյան հանրապետություն»: Մենք դեռ առիթ կունենաք անդրադառնալու, թե Թուրքիայի պարտությունից հետո ինչպես ամբողջի ձգտումը դարձավ պետական քաղաքականություն: Այդ պատճառով էլ չեմ կարծում, որ առանձնապես մեծ տարբերություն կար Բաթումի պայմանագիրը ստիպված ընդունողների և այն չընդունողների միջև: Երբ հանգամանքները փոխվեցին, մոտեցումներն էլ փոխվեցին, որովհետև սկզբունք չկար: Իհարկե, կային առանձին անհատներ, որոնք, ելնելով անցած ուղու փորձից, գտնում էին, որ Բաթումի պայմանագիրը սկիզբն է, և Թուրքիայի հետ միջպետական հարաբերությունները պետք է զարգացնել ու անշրջելի դարձնել:

Այժմ տեսնենք, թե թուրքական կողմի շահագրգռություններն ինչ նպատակ էին հետապնդում: Ինչու էին Թուրքիայի դիվանագետները, և նույնիսկ Թալեաթն ու Էնվերը, տեղի-անտեղի հիշատակում, որ իրենք ստեղծեցին Հայաստան անկախ պետությունը: Այս հարցի պատասխանը տվել է Վեհիբ փաշան Բաթումի բանակցությունների ժամանակ: Մայիսի 30-ի նիստում թուրքական վերջնագիրը քննարկելու ժամանակ Ալ. Խատիսյանն, ի պատասխան թուրքական կողմի փաստարկների, նկատում է, որ «Հայկական հարցը միջազգային խնդիր է և չի կարող այդ ձևով վերանալ մեջտեղեն»: Վեհիբ փաշան այս հարցադրմանը պատասխանում է հետևյալ կերպ. «Ասում եք, որ հայկական հարցը միջազգային է և պիտի քննարկվի հաշտության ընդհանուր խորհրդաժողովի մեջ: Այդ բանը շատ լավ գիտենք: Հենց դրա համար էլ մենք առաջինը լինելով հանձն կառնենք այն լուծելու և ընդունելու նրա անկախ գոյությունը: Կարևորն այն է, որ մենք բարեկամներ դառնանք և

²⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 137, ք: 1:

փոխադարձաբար պաշտպանենք իրար: Մեզ պետք է հայերի նպաստավոր քարոզչությունը արտասահմանի մեջ»²¹: Կարծում եմ, որ Վեհիբ փաշայի ասածները ամբողջապես պատկերացում են տալիս թուրքական կողմի նպատակների մասին: Այդ պատճառով էլ չեմ անդրադառնում հետագայում նույն խնդրի մասին Թալեաթի և Էնվերի հայտնած մտքերին, որովհետև դրանք նույն իմաստն են պարունակում: Ակնարկելով նաև, որ սահմաններն ընդարձակվելու հնարավորություն ունեն: Սրանք են թուրքական պլանների էությունը: Բաթումի պայմանագրի հետ կապված հայ քաղաքական ուժերը և մամուլը ամենից շատ մեղադրել են Վրաստանին, որ «վերջինս դավաճանեց հայ ժողովրդին»: Ակնարկում էին նաև վրաց-տաճկական զաղտնի պայմանավորվածության մասին: Նման մեղադրանքները տեսանելի էին դարձնում Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, իսկ հետո էլ անդրկովկասյան առանձին հանրապետություններ ստեղծելու գործում վրացի քաղաքական գործիչների ջանքերը: Տրապիզոնի ու Բաթումի բանակցություններում թուրքական կողմը գործն իրեն ցանկացած հունով էր տանում վրացիների միջոցով: Ուստի թուրք-վրացական զաղտնի համաձայնության մասին խոսակցությունները հիմնադուրկ չէին: Անշուշտ, վրացիների նման մտեցումը կարելի էր բացատրել նաև վրացի մենչևիկների հակաբոլշևիկյան թշնամանքով, ինչպես նաև անկախ Վրաստան պետություն ունենալու ձգտմամբ: Սակայն այս փաստարկները, և հատկապես վերջինը, որի վրա պնդում էին վրաից քաղաքական ուժերը, չէին բացառում կամ քողարկում էին թուրք-վրացական զաղտնի համաձայնությունը: Կան հիմնավորողներ, որ նման համաձայնություն Թուրքիայի հետ կայացել էր դեռևս պատերազմից առաջ: «Վրաստանի փրկության կոմիտե» անունով կազմակերպության և Թուրքիայի միջև կայացել է համաձայնություն պատերազմի ընթացքում և դրանից հետո համախոր-

հուրդ գործելու նպատակով: Երկկողմ այդ պայմանավորվածությամբ «խաղաղություն կայանալուց հետո՝ Տաճկաստանն անհապաղ դուրս է բերում իր զորքերը Վրաստանի սահմաններից»: Այնուհետև՝ 1. «Տաճկաստանը պարտավորվում է ճանաչել Վրաստանի անկախությունը, նրա անվիճելի իրավունքները ռեալ պատմական տերիտորիայում, որն իր մեջ պարունակում է՝ Սև ծովի ափով Դակոպսկուց ուղիղ գծով մինչև Աբուշիր, այնտեղից ուղիղ գծով մինչև Էլբրուս, Էլբրուսից ուղիղ գծով մինչև Բաթա և մինչև Ասակով: Ասակովից մինչև Սալավաթ: Սալավաթից ուղիղ գծով մինչև Գյոկչայի լիճը, որի հյուսիսային մասը պատկանում է Վրաստանին: Գյոկչա լճից սահմանն անցնում է ուղիղ գծով հյուսիս, այնտեղից մինչև Արտանուշ: Արտանուշից 1913թ. ռուս-տաճկական սահմանով անցնում է մինչև Ճորոխ գետը: 2. Տաճկական կառավարությունը չպետք է արգելք հանդիսանա վրացական կառավարության կազմելուն Վրաստան ազատագրված մասում: 3. Հենց որ Վրաստանը հայտարարվի անկախ Տաճկաստանը ճանաչում է նրա անկախությունը»²²: Վրաստանի անկախության ճանաչման դիմաց վրացական կողմը (փրկության կոմիտեն) պարտավորվում է ամեն կերպ աջակցել տաճկական զորքերին: Պրոպագանդա մղել հոգուտ Տաճկաստանի: Խոսելով պատերազմից առաջ ձեռք բերած վրաց - թուրքական համաձայնության մասին, մենք հեռու ենք այն մտքից, որ վրացական կողմը հենց դա է ունեցել գործողության ուղեցույց: Բանն այն է, որ Տրապիզոնից մինչ Բաթումի բանակցություններ վրացական կողմի բռնած դիրքում ու գործողություններում քաղաքական այդ տոնայնությունը կա: Դրանից բացի, բերված փաստաթուղթը հավաստում է, որ ճշմարտությունից հեռու չի եղել այն վարկածը, որ ստեղծված պայմաններում կարող էին հայկական տարածքները վերջնականապես բաժանվելին Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Այդ մասին ավելի քան պարզ ասում

²¹ Այ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 86-87:

²² Եղիշե Ա քահ. Գեղամյանց, Տաճիկները Կովկասում և Բաքվի անկումը, Բաքու, 1919թ., էջ 29-31:

է Իրակլի Ծերեթելին 1918թ. հունիսին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի անդամներին: Ստեղծել ուժեղ վրացական պետություն, որը կպաշտպանի և՛ վրացիներին, և՛ հայերին: Տարածքային նման հավանականություններին Խ. Կարճիկյանը պատասխանում է, որ Ծերեթելու կողմից հայկական անվիճելի տարածքները Վրաստանի անբաժանելի մասը համարելու հարցադրման մեջ ինքը տեսնում է Հայաստանը Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև բաժանելու հին պլանը²³: Հին պլան ասելով Խ. Կարճիկյանը վրացական կողմին հասկացնում է վրացական կողմի ձգտումները, թե՞ խոսում է որոշակի պայմանավորվածության մասին (Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի), դժվար է ասել: Ժամանակի հայ քաղաքական գործիչները Վրաստանի բռնած դիրքը քննադատելով՝ մոռացության էին տվել, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հանդեպ իրենց մերժողական վերաբերմունքը նպաստեց իրադարձությունների նման ընթացքին: Այս հարցը կարևորում են, որովհետև Բրեստի պայմանագիրը մերժելը, իսկ հետո ստիպված Բաթումի, շատ ավելի ծանր, պայմաններն ընդունելը բնութագրական է հայ քաղաքական ուժերի գործունեությանը: Սկզբից փոթորկել ու մերժել նպաստավորը, թող որ այն լինի հարաբերական նպաստավոր, իսկ հետո խնդրել, աղաչել ու չարչարվել մերժվածի համար և արդյունքում ընդունել անպաստը: Ու նաև կատարվածի համար մեղավորներ փնտրել դրսում, ամուր փակելով սեփական սխալների ու քաղաքական մոլորությունների մասին քննարկման հնարավորությունների դուռը: Սեփական մոլորությունն ու քաղաքական անհեռատեսությունն այլոց չարակամությամբ պայմանավորելը հնարավորություն է տվել նույն սխալի կրկնություններին: Հետո մենք կտեսնենք, որ Բրեստի ու Բաթումի պայմանագրերի պատմությունը գրեթե նույնությամբ կրկնվեց նաև 1920 թվականին: Ալեքսանդրապոլի պայմանագիրն էլ էր «խայտառակ»: Ու

²³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 61, ք. 5: Стен Գաև. Армяно – грузинский Конфликт, Баку, 1919г, с. 11:

կրկին ոչ մի խոսք այն խայտառակության մասին, որ նույն քաղաքական գործիչները ոչ մի կերպ չէին հաշտվում 60 հազար քառակուսի կիլոմետր տարածքով Հայաստանի հետ: Այս խնդիրների քննարկումն ու վերախմաստավորումը շատ կարևոր է, որովհետև դրանց հիմքում ընկած է ազգային-քաղաքական արժեքային համակարգ, որը անհաշտ է կորցրած հայրենիքի մասի վրա պետություն ստեղծելու գաղափարի հետ: Ու բնավ կարևոր չէ, թե ստեղծված պետությունը 10 հազար քառակուսի կիլոմետր է, թե՞ 60 հազար, որովհետև ամբողջի ձգտումը միշտ էլ մոռացության է տալիս նախկին երդումն ու որոշումը և ձև գտնում ներսից այն ախտահարելու, մեկուսացնելու և արդյունքում կործանելու: Նեղ դրության մեջ կամ հարկադրանք-պարտադրանքի անհրաժեշտությամբ ասված մտքերին լուրջ չպետք է վերաբերվել, որովհետև դրանք անմիջապես մոռացվել են իրադարձությունների ու հանգամանքների փոփոխության հետևանքով: Ավ. Ահարոնյանը վերոհիշյալ նամակում գրել է նաև հետևյալ տողերը. «Մեզանից շատերը կարծում են, որ եթե մենք հաստատենք բարեկամական հարաբերություններ թաթարների հետ, հանձին նրանց, մենք կունենանք ավելի հավատարիմ դաշնակիցների, քան վրացիներն էին»: Պարզ երևում է, որ հանգամանքներն ու ավելի շատ՝ վրացական կողմից նեղացածությունն է մղել Ավ. Ահարոնյանին նման ծայրահեղության: Ավ. Ահարոնյանը մոռանում էր, որ վրացի քաղաքական գործիչներն էլ իրեն էին մեղադրում «անուղղելի ռուսասիրության» համար: Ահա թե ինչպես է վրացական կողմի վերաբերմունքը մեկնում իրադարձությունների մեկ ուրիշ մասնակից. «Վրացիների վերաբերմունքը մենք չենք դատապարտում, ինչ որ մեր քաղաքական և գրական գործիչները սիրում են անել դժբախտաբար: Վրացիք՝ դժգոհ ռուսական կառավարությունից կամեցան իրենց հայրենիքը ազատել ռուսների տիրապետությունից և երկրորդ՝ իրենց ժողովուրդն ու

երկիրը փրկել կոտորածներից ու ավերածություններից... Եվ վրացիք չսխալվեցին ու հասան հաջողության»²⁴: Եղիշե Գեղամյանցը կատարվածի համար մեղադրում էր Թիֆլիսի և Բաքվի Հայոց Ազգային խորհուրդներին, որոնք ի տարբերություն վրացիների, չէին հասկանում կատարված իրադարձությունները քաղաքական իմաստը: Նույն բանը հաստատում է նաև իրադարձությունների կենտրոնում գտնվող Ալ. Խատիսյանը: Երբ մայիսի 25-ին Ն. Ժորդանիան նրան հայտնում է, որ «ստեղծված պայմաններում այլ ելք չի մնում, քացի Վրաստանն անկախ հայտարարելուց», Խատիսյանը զարմացած հարցնում է. «Իսկ մե՞նք»: Այս հարցին Ժորդանիան պատասխանում է. «Մենք չենք կարող խեղդվել ձեզ հետ միասին: Մեր ժողովուրդը կուզե փրկել այն, ինչ որ կարող է: Դուք էլ պարտավոր եք համաձայնության լեզու գտնել թուրքերի հետ: Ուրիշ ելք չունեք»: Ահա, երբ Թուրքիայի վերջնագրի հարկադրանքով կատարվեցին հետագա քայլերը, Ավ. Ահարոնյանն անմիջապես իր մտտեցումները հարմարեցրեց դրանց, գտնելով, որ «հանձին թափարների մենք կունենանք ավելի հավատարիմ դաշնակիցներ, քան վրացիներն էին»: Հենց այս դյուրաթեթությունը նկատի ունենալով էր Ե. Գեղամյանցը նրանց գործունեությունը համարում դժբախտություն: Նախկինում քանի անգամ էին նրանք թեքվել այս կամ այն ուժի կողմը և հետո մեղադրել նրանց «հավատարիմ դաշնակից չլինելու» համար: Եթե իրենք ռուսների դաշնակիցներն էին, իսկ վրացիները պայքարում էին անկախանալու համար, ապա ո՞ր տրամաբանությամբ էին նրանք վրացիներին իրենց դաշնակից համարել: Սրանք հարցեր էին, որոնց պատասխանները պատասխանատվություն էին ենթադրում: Իսկ պատասխան տալը արվածի համար ու նաև պատասխանատու քաղաքական մթնոլորտ ստեղծելը դուրս է եղել գրական և քաղաքական գործը մեկտեղած հայ ազգային առաջնորդների գաղափարաբանությունից:

²⁴ Եղիշե Ա քահանա Գեղամյանց, Տաճիկները Կովկասում և Բաքվի անկումը, Բաքու, 1919թ., էջ 31:

Այդ պատճառով էլ նրանք միշտ սեփական ձգտման ու հակվածության ձախողումը պայմանավորել են օբյեկտիվ իրադարձություններով կամ վատ դաշնակիցներով: Իհարկե, այդ ամենն «հիմնավորելով» նաև հետին թվով արված դատողություններով: Անշուշտ, քաղաքական պատասխանատվության տարրական զգացում ունեցողն այդքան զոհողություններից ու զրկանքներից հետո չէր կարող ասել. «Եթե մենք գիտե՞նայինք, որ այդպես կլինե՞ր...»: Չարմանալ կարելի է, որ Հայոց Ազգային խորհուրդը կամ նրա նախագահ Ավ. Ահարոնյանը տեղյակ չեն եղել, որ Բրեստի պայմանագրից ու Տրապիզոնի բանակցություններից առաջ գոյություն է ունեցել վրաց-թուրքական համաձայնություն: Նման բան պարզապես հնարավոր չէր, որովհետև Ե. Գեղամյանցը 1919թ. հրատարակած գրքում, չորս էջի ծավալով, շարադրում է «Վրաստանի փրկության կոմիտեի» և թուրքական կողմի միջև կնքված գաղտնի պայմանագիրը²⁵: Նաև հիմնավորում է, որ այդ պայմանագիրը կողմերի միջև ստորագրվել է մինչև աշխարհամարտի սկսվելը: Իհարկե, այդ պայմանագրի տեքստը համեմատելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո վրացիների գործունեության հետ, տեսնում ենք անհամապատասխանություն: Կարևորն այն է, որ վրացի քաղաքական ուժերը վաղօրոք պատրաստված են եղել հնարավոր մարտահրավերներին դիմակայելու ու պատերազմող մեծ տերություններից մեկի հանդեպ հավատարմությամբ իրենց ժողովրդին քավության նոխսագ չդարձնելուն: Դժվարին քաղաքական խնդիր էր սա ստեղծված բարդ ու հակասական պայմաններում: Կյանքը ցույց տվեց, որ վրացի քաղաքական ուժերը կարողացան իրենց ժողովրդին ու տարածքը փրկել ինչպես առաջին աշխարհամարտի, այնպես էլ դրան հաջորդած հեղափոխական մակընթացություններից: Իհարկե, այս ամենին նրանք հասան նաև «անազնիվ քաղաքական խանդերի» միջոցով: Այսպես էին կարծում ու գնահա-

²⁵ Եղիշե Ա քահանա Գեղամյանց, Տաճիկները Կովկասում և Բաքվի անկումը, Բաքու, 1919թ., էջ 26-31:

տում վրացի մենչևիկների գործունեությունը հայ քաղաքական ուժերը: Վերջիններս, անշուշտ, նման զնահատականներ տալիս ելնում էին Ռուսաստանի հանդեպ իրենց ցուցաբերած ազնվությունից ու հավատարմությունից: Ու իրենց բնավ հաշիվ չէին տալիս, թե ինչ նստեց սեփական ժողովրդի վրա իրենց այդ հավատարմությունը: Քաղաքականության մեջ ի՞նչ ասել է ազնիվ ու նվիրված լինել, եթե այն չի ծառայում սեփական ժողովրդին: Ուստի, զուտ քաղաքական առումով, հայկական կողմը կատարված անցքերի համար հանիրավի էր մեղադրում վրացիներին անազնվության մեջ: Այս հարցադրման անթերի պատասխանը տրվել է վրացական քաղաքական կյանքը տնօրինող Ն. Ժորդանիայի և հայ քաղաքական առաջնորդ Ալ. Խատիսյանի՝ 1918թ. մայիսի 25-ին Բաքումում կայացած երկխոսության ժամանակ: Ալ. Խատիսյանի այն մեղադրանքին, որ վրացիների արածը «ազնիվ բան չէ», Ն. Ժորդանիան հանգիստ պատասխանում է. «Ազնիվ բան է այն, ինչ որ օգտակար է սեփական ժողովրդին»²⁶:

²⁶ Ալ. Խատիսյան, նշվ. աշխատությունը, էջ 82:

Գլուխ 2. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՋԱՆՔԵՐԸ

Ինչպես տեսանք, Վրաստանը և Հայաստանը անկախ պետությունների դարձան փոխադարձ անվստահության ու նաև թշնամանքի պայմաններում: Սուվերենություն ձեռք բերելուց հետո նրանք չկարողացան հաղթահարել նախկին թշնամանքը, և կարելի է ասել, որ այն ամբողջությամբ տեղափոխվեց միջպետական հարաբերություններ: 1918թ. հունիս-հուլիս ամիսների ծանր փոխհարաբերությունների գլխավոր պատճառն այն էր, որ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը, որը փաստորեն տնօրինում էր հայ քաղաքական կյանքն ամբողջությամբ, չէր ցանկանում հեռանալ Թիֆլիսից: Հանգամանքն այս, բնականաբար, զայրացնում էր Վրաստանի կատավարությանը և քաղաքական ուժերին: Վեճի մյուս պատճառը Անդրկովկասի ընդհանուր գույքի բաժանման հարցն էր, զորքերի պարենավորման և այլ խնդիրներ, որոնք բնական են նման բաժանումների ժամանակ: Այս ամենը լուծելի խնդիրներ էին, որոնք կարող էին պատասխան ստանալ միջպետական հարաբերությունների արդյունքում: Գլխավոր ու անլուծելի հարցն այն էր, որ վրացի քաղաքական ուժերը հայությանը մեղադրում էին ռուսամետության համար, իսկ հայ քաղաքական ուժերը վրացիներին համարում էին դավաճան ու հայ ժողովրդի շահերի հաշվին իրենց գործերը կարգավորող: Հանգամանքն այս պարզապես թույլ չէր տալիս նոր որակի հարաբերություններ սկիզբ դնել նորաստեղծ պետությունների իշխանություններին: Պատմությունը երկու ժողովուրդների քաղաքական ուժերին

պետական չափանիշներով քննություն հանձնելու հնարավորություն էր ընձեռել, իսկ նրանք շարունակում էին առաջնորդվել միջպետական շրջանի ազգային չափումներով: Այդ պատճառով էլ մեր խնդիրն է քննել կատարված անցքերը հիմնական շարժառիթների հանրագումարով:

Ինչու՞ Հայաստանի կառավարությունը և Հայոց Ազգային խորհրդի անդամները չէին ցանկանում թողնել Թիֆլիսը: Արդյոք, բնական չէ՞ր, որ հապադումն այս հարուցում էր Վրաստանի քաղաքական շրջանների ու կառավարության անթաքույց դժգոհությունը: Այս հարցում տաղտուկը միայն այն չէր, որ Երևանում սով էր ու ծանր պայմաններ և մարդկայնորեն հասկանալի էր համեմատաբար ապահով ու բարեկեցիկ Թիֆլիսից չհեռանալը: Վրացիք խնդիրը պայմանավորում էին միայն այս տեսանելի ու հեշտ բացատրելի երևույթով և եզրակացնում, որ Հայոց Ազգային խորհուրդը ցանկանում է Հայաստանը կառավարել Թիֆլիսից: Այդ պատճառով էլ հաճախ էին հասկացնում, որ Հայաստանի մայրաքաղաքը Թիֆլիսը չէ և որ պետք է տեղափոխվել Երևան: Այս հարցում թե՛ Վրաստանի կառավարության և թե՛ հասարակական կարծիքի վրդովմունքը տեղին էր: Առավել ևս, եթե նկատի ունենանք, որ խնդրի հետ կապված գրեթե մույն վրդովմունքն ու աճապարանքն էր տիրում նաև Երևանում: Այստեղ ևս գտնում էին, որ ինչքան էլ ծանր լինեն պայմանները, կառավարությունը և Թիֆլիսում ապրող հայ քաղաքական երևելիները օր առաջ պետք է տեղափոխվեն Հայաստան և ստանձնեն երկրի ղեկավարումը: Խնդիրն այն էր, որ բացի բարոյա-հոգեբանական գործոնից, կային նաև այլ բնույթի խնդիրներ, որոնք դժվարություններ էին ստեղծում: Նախ, Հայաստանի կառավարության կազմավորման աշխատանքներն սկսվեցին միայն այն ժամանակ, երբ Բաթումից վերադարձավ Ալ. Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը: Հետո սկսվեցին քաղաքական ու միջկուսակցական վեճերը կառավարություն կազմելու և պետական պատասխանատվություն ստանձնելու հարցում: Նախապես

Թիֆլիսի ազգային խորհուրդը հակված էր կազմելու կուսիցիոն կառավարություն դաշնակցության և ժողովրդական կուսակցությունների մասնակցությամբ: Այդ պատճառով էլ կառավարության կազմավորումը ձգձգվեց մինչև հունիսի վերջերը: Բանն այն է, որ երբ վարչապետ Հ. Քաջագունին դիմեց ժողովրդական կուսակցության առաջնորդ Մ. Պապաջանյանին այդ առաջարկով, վերջինս կտրականապես մերժեց կառավարության կազմում ժողովրդականների ընդգրկվելու առաջարկը: Ավելին, ժողովրդական կուսակցությունը հրապարակավ պահանջում էր, որ դաշնակցությունը հեռանա քաղաքական ասպարեզից և իշխանությունը հանձնվի հայ ժողովրդական կուսակցությանը: Նրանց հիմնական փաստարկն այն էր, որ Դաշնակցությունը պատասխանատու է հայ ժողովրդի աղետների համար¹: Ժողովրդական կուսակցությունը գտնում էր նաև, որ Թուրքիայի հետ դաշնակցությունը չի կարող նոր հարաբերություններ կառուցել, իսկ իրենք կարող են: Երբ Ազգային խորհուրդը մերժեց ժողովրդական կուսակցության այս պահանջը, նրանք առաջարկեցին խորհրդին պատվիրակություն ուղարկել Երևան և կառավարություն կազմել տեղական ուժերից, իսկ Ազգային խորհուրդը մնա Թիֆլիսում և գործի որպես համազգային իշխանություն: Այս վերջին առաջարկությունն էլ հիմք տվեց դաշնակցականներին պնդելու, որ Միքայել Պապաջանյանն ու իր կուսակցությունը, պարզապես քաղաքական պատճառաբանություններով, ցանկանում են մնալ Թիֆլիսում²: Ծնարտությունից հետո չէին այս դիտարկումները, և երբ կառավարության կազմավորումից հետո էլ Ազգային խորհրդի նիստերում շարունակվում էին քննարկվել Թիֆլիսից մեկնել-չմեկնելու հարցերը, փաստը հարուցեց ինչպես վրացի, այնպես էլ հայ հասարակական կարծիքի բուռն զայրույթը:

¹ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1968թ., էջ 178:

² Այս տեսակետը շուտով իրական դարձավ, երբ Պապաջանյանը համաձայնեց դաշնակցականներ Ավ. Ահարոնյանի և Ալ. Խատիսյանի հետ ընդգրկվել Թուրքիա մեկնող պատվիրակության կազմում և հունիսի 14-ին նրանց հետ մեկնեց Ստամբուլ Թուրքիայի հետ բանակցելու և միջպետական նոր հարաբերություններ հաստատելու:

Ջգալով խնդրի լրջությունն ու անհեթեթությունը, Ազգային խորհրդի և կառավարության հուլիսի 13-ի նիստում Քաջագնունին զայրացած հայտարարում է, որ եթե Ազգային խորհուրդը մնա Թիֆլիսում, ինքը կիրաժարվի վարչապետությունից: Այդ նիստում էլ, վերջապես, քվեարկությամբ որոշվեց (ընդամենը երկու ձայնի առավելությամբ), որ Ազգային խորհուրդն ու կառավարությունը տեղափոխվում են Երևան: Ահա այսպիսի ծայրահեղ շիկացած մթնոլորտում 1918թ. հուլիսի 17-ին Հայոց Ազգային խորհրդի և կառավարության անդամները հրաժեշտ տվեցին Թիֆլիսին, բայց ոչ Վրաստանի կառավարության անդամներին, որովհետև նրանցից ոչ ոք չէր եկել ուղեկցելու իրենց երկար տարիների գործընկերներին:

Միասնություն է կարծել, որ նման վերաբերմունքի պատճառն այն էր, որ Հայաստանի կառավարությունը և Ազգային խորհուրդը ամիս ու կես ուշացումով մեկնեցին Թիֆլիսից: Եթե այդպես լիներ, ապա մեկնումից հետո հայ-վրացական հարաբերությունները միջպետական առումով կտրուկ պետք է բարելավվեին: Այդպես չեղավ, որովհետև վեճի ու տարաձայնության բուն պատճառը տարածքային խնդիրն էր, որն անկախությունից հետո ավելի սրվեց ու խորացավ: Այս պատմությունը Վրաստանի և Հայաստանի անկախ պետություններ դառնալուց հետո բաժանվում է երկու փուլի: Առաջին փուլը ներառում է 1918թ. հունիս-հոկտեմբեր ամիսները: Այն հիմնականում ընթանում էր Հայաստանի շրջափակմամբ ու տարածքային հավակնություններով՝ միջպետական ու դիվանագիտական մակարդակով: Երկրորդ փուլը սկսվեց հոկտեմբերի վերջերից, երբ թուրքական զորքերը սկսեցին նահանջել գրաված տարածքներից: Մինչ այս երկու փուլերի պատմությանն անցնելը հարկ է նկատել, որ Հայաստանի և Վրաստանի միջև միջպետական հարաբերություններ չհաստատվեցին: Ու թե դրանք կային, ապա միայն փոխադարձ մեղադրանքների, պահանջների ու բողոքների մակարդակով: Հիմնականում նմանատիպ գործունեությամբ էր զբաղված Թիֆլիսում Հա-

յաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ Ա. Ջամալյանը: Վրաստանի և Հայաստանի միջև միջպետական հարաբերությունների սկիզբը նշանավորվեց Վրաստանի կողմից տարածքային պահանջով: Բաթումի կոնֆերանսից անմիջապես հետո՝ 1918թ. հունիսին, Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ռամիշվիլին և Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան այցելում են Հայոց Ազգային խորհուրդ և հայտարարում, որ Բորչալուի գավառը պետք է բաժանել Վրաստանի և Հայաստանի միջև՝ էթնիկական սկզբունքով: Ու խնդրում են այդ նպատակով բանակցություններ սկսելու համար ներկայացուցիչներ ուղակել: Հաջորդ օրը հայկական պատվիրակությունը (Խ. Կարճիկյանի գլխավորությամբ) գալիս է Վրաստանի Ազգային խորհուրդ բանակցություններ սկսելու: Բանակցությունների փոխարեն Ի. Ծերեթելին Վրաստանի Ազգային խորհրդի կողմից անում է հետևյալ հայտարարությունը. «Վրաստանի կազմում պետք է ընդգրկվեն Ախալքալաքի, Ղազախի, Բորչալուի գավառներն ամբողջությամբ և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը»: Ու նաև հիմնավորում է նման միակողմանի որոշումը հետևյալ փաստարկով. «Նման սահմանները անհրաժեշտ են ինչպես Վրաստանի, այնպես էլ հայ ժողովրդի կենսական շահերի համար»³: Այս հայտարարության մեջ կա նաև պատասխանն այն հարցի, թե ինչով է նման որոշումը բխում նաև հայ ժողովրդի կենսական շահերից: «Որովհետև, - ասում է Ի. Ծերեթելին, - հայերը Բաթումի համաձայնագրից հետո չեն կարող ստեղծել որևէ չափով կենսունակ պետություն և այդ պատճառով էլ նրանց ձեռնառու է ուժեղացնել Վրաստանը: Այդպիսով Կովկասում կստեղծվի ուժեղ քրիստոնեական պետություն, որը գերմանացիների օգնությամբ կպաշտպանի և իրեն, և հայերին»⁴: Վրաստանի Ազգային խորհրդի այս հայտարարությունը ցրեց խաբկանքը, որ Բորչալուի հայկական մասը վերադարձվելու է Հայաստանին:

³ Армяно-грузинский вооруженный конфликтъ, Баку, 1919г. с. 10-11:

⁴ ՀՀ ՊԿՊԱ. ն. 223, ց. 1, գ. 61, ք. 4-5:

Բանն այն էր, որ երբ թուրքական զորքերը մայիսի վերջին Դիլիջանի կիրճով առաջ էին շարժվում դեպի Բաքու, Վրաստանը, օգտվելով իրավիճակից, գրավեց Լոռին: Հայոց Ազգային խորհրդի բողոքին նրանք պատասխանեցին, որ դա արվել է թուրքական զորքերի հնարավոր հարձակումը Թիֆլիսի վրա կանխելու նպատակով և որ հետո այդ տարածքը կվերադարձվի Հայաստանին⁵: Ահա, Ծերեթելու վերոհիշյալ հայտարարությունից հետո նրանք պարզ հասկացրին, որ ոչ միայն Լոռին չեն վերադարձնելու, այլև հավակնում են Լոռի-Փամբակ ստրատեգիական տարածքին: Ի պատասխան դրա, Խ. Կարճիկյանը գայրացած հայտարարում է, որ փաստորեն Հայաստանը Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջև բաժանելու հին պլանին նոր կերպարանք է տալիս Ի. Ծերեթելու հայտարարությունը: Կարճիկյանի բողոքից հետո Ծերեթելին առաջարկում է մի քանի օր մտածել և հետո կրկին հանդիպել ու քննարկել հարցը: Հաջորդ օրը՝ հունիսի 12-ին, Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը Վրաստանի Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիային հայտնում է, որ խախտվել է իրենց պայմանավորվածությունը Հայաստանի և Վրաստանի միջև սահմանների որոշման շուրջ բանակցություններ սկսելու մասին: Ընդգծելով, որ Ծերեթելու հայտարարությունում տեղ գտած տարածքային հավակնություններն իրենց մեջ ռեալություն չեն պարունակում: Առաջարկում է սկսել հայ-վրացական բանակցություններ, որոշել վիճելի տարածքների հարցը և սահմանագատվել ազգագրական հիմունքներով, համաձայն նախնական պայմանավորվածության⁶: Այս դիմումը և նրանում առաջ քաշված հարցադրումները մնացին անպատասխան: Պատճառն այն էր, որ Վրաստանի կառավարությունը տրամադրված չէր սահմանների հարցի շուրջ Հայաստանի կառավարության հետ լուրջ բանակցություններ վարելու: Պարզապես այդ քայլերով նա տեղյակ դարձրեց իր

մտադրությունների մասին և դրանից մի քանի օր հետո Վրաստանի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց իր պետական սահմանների մասին: Դրանում, բնականաբար, ընդգրկված էին այն տարածքները, որոնց մասին հայտարարել էր Ի. Ծերեթելին: Հանդես գալով նման հայտարարությամբ, Վրաստանի կառավարությունը մոռացել էր նաև, որ դեռևս հունիսի 4-ին անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև սահմանների որոշման հարցով Թիֆլիսում եռակողմ բանակցություններ սկսելու առաջարկով դիմել էր Ադրբեջանի և Հայաստանի կառավարություններին⁷: Այս ամենը հաստատում է, որ Վրաստանի կառավարությունը ասում էր մի բան, իսկ գործնականում անում դրա հակառակը: Թիկունքում ունենալով Գերմանիայի հովանավորությունը, Վրաստանը ոչ միայն հավակնում էր վիճելի, այլև բուն հայկական տարածքների, որոնք երբեք վեճի առարկա չեն եղել: Դրանից բացի, վրացի սոցիալ-դեմոկրատները անկախ Վրաստանը պատկերացնում էին որպես այլազգիներից մաքրված զուտ վրացական պետություն: Պարզ է, որ նման մոտեցման առաջին թիրախ էին դառնում հայերը: Հարկ է նկատել, որ ազգային պետության այս պարզունակ ընկալումը ընդգծված նկատվում էր նաև Ադրբեջանում և Հայաստանում: Ինչպես հետագայում կտեսնեք, պետություն կատեգորիայի տարրողությունից դուրս ազգայնական այս գոյավիճակն էլ ներսից ախտահարեց կանոնն ու օրինաչափությունը և դարձավ անդրկովկասյան երեք հանրապետությունների կործանման ներքին պատճառներից գլխավորը: Տարածքային վեճերի գայթակղությունն ու հակավածությունը, որ ցարական Ռուսաստանի տիրապետության շրջանում անշառ ու շահեկան ազգային զբաղմունք էր, պետական հարաբերությունների շրջանում դարձավ փորձանք երեք հարևան ժողովուրդների գլխին:

⁵ ՀՀ ՊԿՊԱ. ն. 223, ց. 1, գ. 61, ք. 6:

⁶ ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 200, ց. 1, գ. 17, ք. 16:

⁷ ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 200, ց. 1, գ. 17, ք. 16:

Քաղաքական-ազգային այս հակվածության խտացված դրսևորումն էր, որ հաճախ լսվում էր վրացի հայտնի քաղաքական գործիչների կողմից. «հայության ինչին է պետք այդ փոքրիկ պետությունը, բերեք ստեղծենք միասնական պետություն, որը կպաշտպանի վրացի և հայ ժողովուրդների շահերը»: Ակնհայտ է, որ նրանք ապրում էին Թամար քագուիու և Ջաքարյանների շրջանի վերհուշը: Դրան, անշուշտ, նպաստում էր նաև Հայաստանի ծանր դրությունը: Առաջ անցնելով նկատեն, որ 1920թ. ամռանը, երբ արդեն ակնհայտ էր թուրք-բոլշևիկյան վտանգը Անդրկովկասի համար, Հայաստանի կառավարության առաջարկները դաշինք ստեղծելու մասին Վրաստանի կառավարությունը թողեց անպատասխան:

Ասածներինս մեջ ոչ թե մեղադրանք, այլ ավստանք կա, որովհետև Անդրկովկասի տարողությամբ վրացական քաղաքական գործիչները և քաղաքական իրավական միտքը համեմատաբար բարձր էր մյուսներից: Ու նրանք է, որ պետք է ջանալին պետաիրավական առումով ճիշտ սկիզբ դնելու միջպետական հարաբերություններին, որը և անշրջելի կդարձներ երեք հանրապետությունների սուվերեն գոյությունը: Փաստերը ցույց են տալիս, որ արվում էր ճիշտ հակառակը: Վրաստանն իր անկախության առաջին քայլերից սկսած, ջանում էր ցույց տալ իր հեգեմոն դիրքը մյուսների և հատկապես ծանր կացության մեջ գտնվող Հայաստանի հանդեպ: Բազում ու բազմաբնույթ մեծ փաստերից ցանկանում են բերել մի քանիսը: 1918թ. հունիսի 1-ին զինվորական մինիստր Գեորգաձեն երկու գրություն է հղում Հայոց Ազգային խորհրդին: Առաջին գրությամբ հայտնում է, որ «Վրաստանի տարածքում այլ երկրի օրենսդիր կամ ադմինիստրատիվ օրգանների գոյությունն անթույլատրելի է ու այն խախտում է Վրաստանի սուվերենության իրավունքը»: Մենք արդեն, նշել ենք, որ Վրաստանի կառավարությանը չի կարելի մեղադրել այս հարցում: Այլ հարց է, թե ինչու է այդ դիմումի տակ ստորագրել զինվորական, այլ ոչ թե արտաքին գործերի մինիստրը: Նույն օրվա երկրորդ գրությամբ

Գեորգաձեն հայտնում է, որ «Վրաստանի կառավարությունը ստեղծել է հանձնաժողով լուծարելու նախկին Անդրկովկասյան Ֆեդերացիայի և ռուսական բոլոր հիմնարկությունները: Որոշված է հանձնաժողովի աշխատանքներին (անդամներ Ռ. Արսենիձե, Ֆ. Գոգիչայիշվիլի և գեղապետ Ասաթիանի) մասնակից դարձնել նաև երեքական հոգի Հայոց և մուսուլմանական ազգային խորհուրդներից»: Նաև խնդրում է, որ երեք օրվա ընթացքում լիազորները պատրաստ լինեն հանձնաժողովի աշխատանքներին: Թվում է, թե հարցադրումը հաշվի է առնում երեք նորաստեղծ հանրապետությունների շահերը, որովհետև խոսքը վերաբերում է Անդրկովկասի ընդհանուր ունեցվածքի բաժանմանը: Չարմանալին ու հակասականն այն է, որ նույն հունիսի 1-ին Հայոց Ազգային խորհուրդը մի այլ գրություն է ստանում Վրաստանի գործերի մատակարարման պետ գեներալ Բենոկից: Այս գրությամբ նա հայտնում է, որ հունիսի 25-ից դադարեցվելու է Վրաստանում գտնվող հայկական գործերի պարենային մատակարարումը, որովհետև ինտենդանտական պաշարները Վրաստանի սեփականությունն են: Այնպիսի տպավորություն է ստացվում, որ կամ գեներալ Բենոկը տեղյակ չի եղել, թե նույն օրը նույն հասցեով իր մինիստրը ի՞նչ գրություն է ուղարկել, կամ էլ՝ հակառակը: Իրականում որդեգրած նույն գործելակերպն է, ինչին մենք արդեն հանդիպել ենք տարածքային «վիճելի հարցերը կարգավորելիս»: Այսինքն՝ անդրկովկասյան տարանջատման հարցերում Վրաստանի կառավարությունը իր համառ ցանկալի որոշումը կայացնում էր, իսկ դրանից հետո գրություններ էր ուղարկում միջպետական հարաբերությունները չանտեսելու նկատառումներով: Այս եղանակով Վրաստանի կառավարությունը սեփականացրեց նախկին ռուսական ու Անդրկովկասի հանրապետության ողջ ունեցվածքը: 1918թ. հունիսի 2-ին Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը դիմում է Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ռամիշվիլուն և բողոքում է մեծ միակողմանի որոշումների դեմ: Այդ դիմումում մասնա-

վորապես ասված է. «Վրաստանի գորբերի մատակարարման պետ, գեներալ Բենոնը որոշել է հունիսի 25-ից դադարեցնել պարենի մատակարարումը դեռևս Վրաստանում գտնվող հայկական գորբերին: Վրաստանում գտնվող ինտենդանտական պաշարները Անդրկովկասի ունեցվածքն էր, այժմ այն համարելով միայն Վրաստանինը մեզ դնում էք ամենադժվարին վիճակի մեջ»⁸: Այնուհետև խնդրում է, որ կառավարությունը չեղյալ համարի զինվորական մինիստրության որոշումը և շարունակի հայկական գորամիավորումների կերակրումը մինչև նրանց էվակուացումը Վրաստանից: Վրաստանի կառավարությունը մեկ ամսով հարգում է Ա. Ահարոնյանի խնդրանքը: Ծանապարհների փակ լինելու պատճառով Վրաստանում գտնվող շուրջ 1800 զինվորներին ու սպաներին չեն կարողանում տեղափոխել Հայաստան: Ուղիղ մեկ ամիս հետո, 1918թ. հուլիսի 1-ին Վրաստանի կառավարությունը կրկին անդրադառնում է այդ հարցին: Այս անգամ Հայոց Ազգային խորհրդին ուղղված գրության տակ ստորագրում է զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ Զախարիաձեն: Վերջնագրի տեսքով այս գրությունում երեք օր ժամանակ է տրվում հայկական գորամիավորումները Թիֆլիսից դուրս բերելու համար⁹:

Այլ փաստեր չեն բերում, որովհետև դրանք ի գորտ չեն եղածին որևէ բան ավելացնելու: Առավել ևս, եթե նկատի ունենանք, որ Վրաստանի կառավարությունը թույլ չտվեց երկրից դուրս բերելու նույնիսկ Հայոց Ազգային խորհրդի ունեցվածքը:

Բացառությունը, թերևս, երկու մեքենաներն էին, որոնցով Հայաստանի կառավարության և Ազգային խորհրդի անդամները տեղափոխվեցին Երևան: Եթե այս ամենին գումարենք նաև երկաթուղային շրջափակումը, ապա ամբողջական կդառնա այն վերաբերմունքը, որը ցույց էր տալիս Վրաստանի կառավարությունը Հայաստանի հանդեպ: Այս ամենը հիմք էր տալիս Հայաստանի կառավարությանը վերաբերմունքն այդ որակելու

մարտահրավեր կամ չարակամություն ու թշնամանք: Վրաստանի կառավարությունն իր հերթին նման վերաբերմունքը բնական էր գտնում և զարմանում էր, որ Հայաստանի կառավարությունը չի հասկանում կամ ըմբռնումով չի մոտենում միջպետական հարաբերությունների նման դրսևորմանը: Նրանք որևէ թշնամանք չունեին Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ: Պարզապես հասկացնում էին, որ ձեռք քաշեք ինքնուրույն պետություն ունենալու գաղափարից, և ամեն բան կհարթվի ու կվերականգնվի հայ-վրացական բարեկամությունը:

Հետաքրքիր է նաև, որ փոխհարաբերությունների նման մթնոլորտում Վրաստանի կառավարության ղեկավար Ն. Ռամիշվիլին 1918թ. հունիսի 10-ին դիմում է Հայոց Ազգային խորհրդին, որպեսզի վերջինս «ելնելով Բաքվի վրա ունեցած իր ազդեցությունից իր վրա վերցնի այնտեղ ապրող վրացահպատակների անձնական և գույքային ապահովության խնդիրները»¹⁰: Ուշադրություն դարձրեք այն հանգամանքին, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդիրներին վերաբերող Վրաստանի կառավարության գրությունները հիմնականում ստորագրվում էին ռազմական գերատեսչության չինովնիկների կողմից: Ահա, երբ խոսքը վերաբերում է կողմնակի խնդիրներին, ապա այն ստորագրում է կառավարության նախագահը: Նախ, մի կողմ թողնենք, որ այլ երկրի ներքին գործերին խառնվելու միջնորդության խնդրանքով դիմում են բարեկամական կամ զոհե նորմալ միջպետական հարաբերություններ ունեցող երկրի ղեկավարությանը: Վրաստանի կառավարությունն, ինչպես վերը տեսանք, ինքը խախտում էր հայության անձնական և գույքային իրավունքները և դիմում էր Հայոց Ազգային խորհրդին վրացիների նույն իրավունքները Բաքվում պաշտպանելու խնդրանք-միջնորդությամբ: Տրամաբանությունից գուրկ նման գործելաձևը, թերևս, կարելի է բա-

⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, ք. 16:

⁹ Նույն տեղում, ք. 26:

¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, ք. 11:

ցատրել նրանով, որ Վրաստանի կառավարությունն նույն հեգեմոն հարաբերությունները փորձում էր կառուցել նաև Ադրբեջանի հետ և հանդիպում էր համարժեք վերաբերմունքի: Մյուս կողմից էլ, Հայոց Ազգային խորհրդին և կառավարությանը հասկացնում էին, որ իրենցից հարկ չկա նեղանալ, որովհետև նույն վերաբերմունքին Բաքվում արժանանում են վրացիները: Ամենայն հավանականությամբ, կոահելով մյան միջնորդության բուն նպատակը ու նաև գերծ մնալու համար նաև անուղղակի մեղադրանքից, 1918թ. հունիսի 12-ին Ավ. Ահարոնյանը, ի պատասխան Ն. Ռամիշվիլու գրության, հայտնում է Վրաստանի կառավարությանը, որ «վերջին ամիսներին ամբողջապես կտրված է Բաքվից, ուստի չի կարող իր վրա վերցնել Բնքվում բնակվող վրացիների ապահովությունը»: Բայց և այնպես, այդ պատասխան գրությունում նշվում է, որ Վրաստանի կառավարության խնդրանքը կհաղորդվի Բաքվի հայոց ազգային խորհրդի մասնաճյուղին:

Հարկ է նկատել, որ ինչպես Վրաստանի կառավարության նախագահը, այնպես էլ Հայոց Ազգային խորհուրդը լավատեղյակ էին, որ թուրքական զորքերը շարժվում էին Բաքու և թե մոտ ապագայում ինչ ճակատագիր է սպասվում Բաքվի հայոց ազգային խորհրդին ու Բաքվի հայությանն ընդհանրապես:

1918թ. հուլիսի վերջերից, երբ Հայաստանի կառավարությունն ու Ազգային խորհուրդը մեկնեցին Երևան, կրքերը մի երկու ամսով համեմատաբար հանդարտվեցին: Փոխադարձ մեղադրանքներն ու բողոքները վերսկսվեցին օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Այդ ամիսներին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը մի քանի անգամ բողոքեց Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը: Խնդիրը կապված էր այն բանի հետ, որ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Վրաստանի կառավարությունը զորահավաք կազմակերպեց Լոռվա գյուղերում: Սկզբում Վրաստանի արտաքին գործերի նախարարությունում Ա. Ջամալյանին

բացատրեցին, որ պարզ թյուրիմացություն է տեղի ունեցել, և խնդիրը կարգավորելու համապատասխան հրահանգ է տրված: Սեպտեմբերին Հայաստանի կառավարությունն որանոր տեղեկություններ է ստացվում, որ զորահավաքը շարունակվում է: Այս ուղղությամբ Հայաստանի կառավարության հետագա բողոքները արժանացան նույն վերաբերմունքին:

Կարելի է ասել, որ այս ամենով էլ վերջացավ հայ-վրացական միջպետական հարաբերությունների առաջին փուլը: Հոկտեմբերից այն թևակոխեց նոր ու ավելի լարված շրջան, որն ամբողջությամբ կապված էր տարածքների հետ: Փաստորեն, Վրաստանի կառավարությունը 1918թ. հունիսից սկսած մերժեց տարածքային վիճելի հարցերը լուծելու և Հայաստանի ու Վրաստանի միջև պետական սահմանները որոշելու նպատակով երկկողմ բանակցություններ սկսելու հայկական կողմի առաջարկությունները: Այս օրինաչափ անհրաժեշտությունը, բացառելը անշուշտ, կապված էր Բաքուի պայմանագրի հետ, և Վրաստանը ջանում է առավելագույնս օգտվել Գերմանիայի աջակցությունից: Դրությունը հետագա ամիսներին փոխվեց կապված այն բանի հետ, որ հոկտեմբերին արդեն ակնհայտ էր 1-ին աշխարհամարտում գերմանա-թուրքական խմբավորման պարտությունը: Հանգամանքն այս ակնհայտորեն նյարդայնացնում էր Վրաստանի կառավարությանը, որովհետև տեսնում էր, որ աշխարհաքաղաքական իրադարձությունները փոխվում են հօգուտ Հայաստանի: Այդ իսկ պատճառով էլ Վրաստանի կառավարությունը ջանում էր վերջացնել հայ-վրացական տարածքային վեճը հօգուտ Վրաստանի, բանի դեռ Փարիզում չէին սկսվել պատերազմում հաղթող և պարտված կողմերի բանակցությունները: Ասածիս վկայությունը դրան նպատակամղված գործունեության սկիզբն էր 1918թ. հունիսին, երբ առանց հայկական կողմի հետ բանակցելու, Վրաստան կառավարությունն հայտարարեց իր երկրի սահմանների մասին: Այն ներառում էր ոչ միայն վիճելի տարածք համարվող Բորչալուի գավառն ամբողջությամբ, այլ նաև Լո-

ոյ-Փամբակ տարածքը: Ահա, երբ 1918թ. հոկտեմբերին թուրքական զորքերը թողեցին այդ տարածքը, հայկական զորքերն անմիջապես գրավեցին այն: Այս փաստն այնքան էր զայրացրել Վրաստանի կառավարությանը, որ դեպքի հաջորդ օրը՝ հոկտեմբերի 19-ին, հետևյալ բողոքագիրը հղեց Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանին. «Վրաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացավ, որ հոկտեմբերի 18-ին հայկական զորքերի առաջին և չորրորդ հրաձգային գնդերի կողմից գրավվել են Կոբեր կայարանից սկսած մինչև Սանահինի շրջանները: Վրաց կառավարությունը, որ միշտ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնության միջոցով կարգավորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հանրապետության հետ, իր պարտականությունն է համարում հայտարարելու, որ քանի մնան համաձայնություն չի կայացել, հայկական զորամասերի մուտքը Թիֆլիսի նահանգի սահմաններից ներս վրաց կառավարության կողմից կդիտվի որպես Հայաստանի կողմից թշնամական քայլ Վրաստանի հանդեպ»¹¹: Վրաստանի և Հայաստանի միջև, անկախությունից հետո ընկած շրջանում, սա առաջին դեպքն էր, որ Վրաստանի կառավարությունը նշում է փոխադարձ համաձայնության միջոցով սահմանային հարց կարգավորելու մասին: Այլ հարց է, որ հայկական զորքերի կողմից գրավված տարածքները Թիֆլիսի նահանգի հետ կապ չունենին: Ինչ վերաբերում է Լոռու մարզին, ապա վրացական զորքերը այն գրավել էին «թուրքական զորքերի Թիֆլիս տանող ճանապարհը փակելու» նպատակով և հունիս ամսին Հայոց Ազգային խորհրդին խոստացել էին զորքերն այնտեղից հանել, երբ վերանա թուրքական վտանգը: Ահա և հասել էր պահը, երբ թուրքական զորքերը հեռանում էին, ու Վրաստանի կառավարությունը մոռանալով իր տված խոստումը, պահանջում էր, որ հայկական զորքերը դուրս բերվեն Լոռուց: Հաջորդ օրը՝ հոկ-

¹¹ Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 207:

տեմբերի 20-ին, պաշտպանության մինիստր Գեորգաձեի հրահանգով Վրաստանի սահմանապահ զորքերի հրամանատարը հայկական սահմանապահ վաշտի հրամանատարին է հանձնում հետևյալ վերջնագիրը. «Հիմնվելով Վրաստանի զինվորական նախարարի հրամանի վրա՝ 24 ժամվա ընթացքում տեղեկացրեք Ձեր կառավարությանը, որ Ձեր զորքերը պետք է հեռանան Շահալի կայարանից այն կողմ»: Այս վերջնագիրը Հայաստանի կառավարությունը ստացավ հոկտեմբերի 21-ին: Պահի լրջությունը վարչապետ Քաջազնունուց պահանջեց հարցը քննարկել Ազգային խորհրդում: Հոկտեմբերի 22-ի խորհրդարանի նիստում Քաջազնունին արեց հետևյալ հայտարարությունը. «Մեր տարածքներից Լոռի-Փամբակի շրջանը գրավված էր թուրքական զորքերով: Մեր կառավարությունը մի քանի անգամ բողոքներ է ներկայացրել Թուրքիայի կառավարությանը այդ տարածքները թողնելու պահանջով: Հոկտեմբերի 5-ին Երևանում Խալիլ փաշան հայտնեց մեզ, որ կառավարությունից հրաման է ստացել դատարկելու վերոհիշյալ երկրամասը: Անմիջապես մեր և թուրքաց շտաբները կազմեցին գործողության ծրագիրը: Այն սկսվեց հոկտեմբերի 18-ին և առանց որևէ միջադեպի շարունակվեց մինչև հոկտեմբերի 21-ը, երբ զիջերվա ժամը 12-ին հեռագիր ստացանք Դրոյից այն մասին, որ վրացիները վերջնագիր են ներկայացրել, պահանջելով դատարկել մեր ստացած շրջանները մինչև Շահալի: Դրոն խնդրում է կարգադրություն անել: Կառավարությունը որոշեց չընդունել վերջնագիրը և զենքի դիմելու պարագային դիմադրություն ցույց տալ»: Այդ նիստում Հ. Քաջազնունին նաև նշում է, որ կառավարությունը հեռագիր է ուղարկել Ն. Ժորդանիային, որով առաջարկվում է զինաբախման չգնալ և աշխատել վեճը լուծել խաղաղ ճանապարհով:

Հ. Քաջազնունու հայտարարության հիման վրա խորհրդարանի նիստը հավանություն է տալիս կառավարության քաղաքականությանը և կնճիռը խաղաղ ճանապարհով կարգավորելուն ուղղված քայլերին: Ստանալով խորհրդարանի հավա-

նությունը, վարչապետը նույն օրը հեռագրով Ա. Ջամալյանի միջոցով հայտնում Վրաստանի կառավարությանը, որ հայկական գործերի կողմից գրավված տարածքները չեն դատարկվի: Նշելով նաև, որ ամեն ջանք պետք է գործադրվի հարցի խաղաղ կարգավորման նպատակով: Նույն բովանդակությամբ մի հեռագիր էլ ուղարկվում է Վրաստանի խորհրդարանի նախագահ Ն. Ժորդանիային, որով Հ. Քաջագունին նրան հիշեցնում է հունիսին Հայոց Ազգային խորհրդում արած այն հայտարարության մասին, որով հավաստվում էր, որ «Վրաստանը աչք չունի Լոռու վրա և որ այն գրավվել է ժամանակավոր, քուրքական գործերի մուտքը Թիֆլիս բացառելու համար»: Հոկտեմբերի 23-ից 26-ը իրադրությունը խիստ լարվում է: Վրացական գործերի հրամանատար Ծուլուկիժեն նույնիսկ հրաման է տալիս ռազմական գործողությունների, և ռմբակոծվում են Շնողը և մի քանի գյուղեր, բայց հոկտեմբերի 26-ին գործողությունները դադարեցվում են: 1918թ. հոկտեմբերի 26-ին Վրաստանի խորհրդարանը գումարում է արտահերթ նիստ՝ «հայ-վրացական կոնֆլիկտին» վերաբերող հարցը քննարկելու: Ձեկուցողը՝ արտաքին գործերի մինիստր Ն. Ռամիշվիլին, խորհրդարանին հայտնում է. «հայկական գործերը հանիրավի գրավել են Թիֆլիսի նահանգի մի մասը և, չնայած Վրաստանի կառավարության պահանջներին, չեն դատարկում այն»¹²: Հարցի բուռն ու ցանկալի քննարկումից հետո խորհրդարանը հավանություն է տալիս կառավարության ձեռնարկած միջոցառումներին և հայտարարում, որ ոչ մի կտոր հող Վրաստանն իր տարածքներից չի տա Հայաստանին: Ձինվորական մինիստր Գեորգաձեն էլ իր հերթին խորհրդարանին հավաստեց, որ ինքը «զենքի ուժով կճնշի հայերի ապստամբությունը»: Անշուշտ, խորհրդարանի որոշման մեջ նշված է նաև, որ «ամեն ջանք պետք է գործադրել, որպեսզի երկու հարևանների միջև հարցը լուծվի խաղաղ ճանապարհով»¹³: Վրացական գործերը

¹² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 78, ք. 308:

¹³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 78, ք. 310 - 312:

պատրաստվում էին զենքով ճնշել «հայ գյուղացիների ապստամբությունը», ու ինչպես ասվեց, հոկտեմբերի 23-ից արդեն սկսել էին ռազմական գործողությունները, երբ Թիֆլիսում ստացվեց Գերմանիայի բլոկի պետությունների պարտության լուրը: Իր դաշնակից Գերմանիայի պարտության լուրը բնական տրտմություն առաջացրեց Վրաստանում և պատճառ դարձավ հայ-վրացական պատերազմի 45-օրյա հետաձգման: Վրաստանի կառավարությունը որոշեց փոխել Հայաստանի հանդեպ իր մարտավարությունը և Ս. Միլվանուն նշանակեց Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ:

Աշխարհաքաղաքական փոփոխված տեղաշարժերի հնարավոր բարդությունները դիմագրավելու նպատակով 1918թ. հոկտեմբերի 27-ին Վրաստանի կառավարությունը որոշում է Թիֆլիսում հրավիրել համակովկասյան ժողով: Նույն օրը նա դիմումներ է հղում Ադրբեջանի, Հայաստանի և Հյուսիսային Կովկասի լեռնականների հանրապետությունների կառավարություններին ու հայտնում, որ 1918թ. նոյեմբերի 3-ին Թիֆլիսում գումարվելու է Կովկասյան կոնֆերանս: Միացյալ կոնֆերանսի անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ նկատառումներով. «Համաշխարհային պատերազմը մոտենում է ավարտին և խաղաղության միջազգային համաժողովը պետք է որոշի ժողովուրդների ճակատագրերը: Կովկասի ժողովուրդը պետք է պատրաստ լինի այդ համաժողովին հանդես գալու միասնական և համերաշխ»¹⁴: Այս քայլով Վրաստանի կառավարությունը ձգտում էր ժամանակ շահել մինչև պարզվի հաղթանակած խմբավորման տերությունների վերաբերմունքը Անդրկովկասի հանդեպ: Մինչև Գերմանիայի պարտությունը, նրա մտքովն անգամ չէր անցնում նման կոնֆերանս հրավիրելու անհրաժեշտությունը: Այս հարցում դեր էին խաղում ինչպես Գերմանիայի հովանավորությունն, այնպես էլ Անդրկովկասի

¹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 62, ք. 10:

գործում հեգեմոն դեր ունենալու վրացական քաղաքական մտայնությունը: Այդ էր պատճառը, որ Վրաստանի կառավարությունը հունիս ամսին, առանց հաշվի առնելու մյուս հանրապետությունների կարծիքը, Թիֆլիսում գտնվող Անդրկովկասի ողջ ունեցվածքը հայտարարեց Վրաստանի սեփականություն: Նաև անտեսելով տարածքային ներքին վեճերը, միակողմանիորեն որոշեց Վրաստանի պետական սահմանները: Այնպես որ, մինչև հոկտեմբերի վերջը Վրաստանը գործում էր ինքնավստահ, քիկուճքում ունենալով գերմանական հովանավորությունը: Նույնիսկ հոկտեմբերի կեսերին, երբ Ա. Ջամալյանը Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Քրեսին հարցնում է, թե հայ-վրացական պատերազմում Գերմանիայի դիրքն ինչպիսին է լինելու, ստանում է ոչ դիվանագիտական պատասխանը, «մենք պաշտպանելու ենք Վրաստանին»: Թիֆլիսում Կովկասի հանրապետությունների մասնակցությամբ կոնֆերանս հրավիրելը նաև հետապնդում էր հայ-վրացական սահմանային վեճը այդ կոնֆերանսի միջոցով լուծելու նպատակ: Այսինքն՝ Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի լեռնականների հանրապետությունների օժանդակությամբ պարտադրել Հայաստանին ընդունելու 1918թ. Վրաստանի կողմից պետական սահմաններ հռչակած տարածքները, որոնց մեջ մտնում էր նաև ոչ միայն Լոռին, այլև Փամբակը: Այս տխուր փորձը հայ քաղաքական գործիչներն ունեին դեռևս ցարական ժամանակներից, երբ իրենք տարածքային հարցերը քննարկելիս միշտ մենակ էին մնում վրացիների և թաթարների դիմաց: Նախկինում ունեցած այս փորձն էլ Հայաստանի կառավարությանը և քաղաքական ուժերին անմիջապես կռահեցնել տվեց, որ հարկավոր է մերժել Թիֆլիսում կովկասյան կոնֆերանս հրավիրելու գաղափարը բոլոր առումներով և չմասնակցել նրա աշխատանքներին: Նկատենք նաև, որ Հայաստանից պատասխան չստանալու պատճառով կոնֆերանսի աշխատանքների բացումը նոյեմբերի 3-ից տեղափոխվեց նոյեմբերի 10-ը: Այդ օրերին Վրաստանի արտաքին գործերի մի-

նիստությունը մի շարք դիմումներ է հղում Ա. Ջամալյանին՝ խնդրանքով, որ Հայաստանի պատվիրակներն անպայման մասնակցեն կոնֆերանսին: Ա. Ջամալյանի խուսափողական պատասխանները նյարդային վիճակ են ստեղծում կոնֆերանսի աշխատանքի շուրջ: Նոյեմբերի 3-ին Թիֆլիսում հատուկ բաժինը ձեռքակալում է Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության զինվորական կցորդ գեղապետ Կ. Դոլուխանյանին: Ա. Ջամալյանը բողոքում է արտաքին գործերի նախարարին՝ միջազգային իրավունքի նորմերը խախտելու համար: Հետաքրքիր է, որ Վրաստանի արտաքին գործերի նախարարը նոյեմբերի 4-ի Ջամալյանի բողոքին պատասխանելու փոխարեն, նոյեմբերի 5-ին նրան գրում է, որ «Անդրկովկասի ժողովուրդների շահերը պետք է վեր դասել ձևական կողմից և չձախողել կոնֆերանսի աշխատանքները»¹⁵: Վրաստանի կառավարությունը հնարավոր բոլոր միջոցների դիմում է, որպեսզի Հայաստանը փոխի իր վերաբերմունքը և մասնակցի անդրկովկասյան հանրապետությունների կոնֆերանսի աշխատանքներին: Դրա վկայությունն է այն զայրույթը, որն արտահայտված է նոյեմբերի 6-ին Քաջազունուն հղած հետևյալ ռադիոհեռագրում. «Նկատի ունենալով Ձեր արտահայտած ցանկությունը և մեր առաջարկին տված համաձայնությունը տարածքային վիճելի հարցերը խաղաղ համաձայնության միջոցով լուծելու՝ պատիվ ունեն Ձեզ հայտնելու, որ այդ հարցը դրված է անդրկովկասյան կոնֆերանսի օրակարգում: Կոնֆերանսի աշխատանքները նշանակված են նոյեմբերի 10-ին: Հուսով եմ, որ կողարկեք Ձեր ներկայացուցիչներին լուծելու համար, ի միջի այլոց, նաև այդ հարցը»¹⁶: Ու թե նկատի ունենաք, որ արտաքին գործերի մինիստրի փոխարեն այս ռադիոհեռագիրը ստորագրել էր հողագործության մինիստրը, պարզ կդառնա, որ կոնֆերանսը հրավիրված էր հայ-վրացական սահմանային վեճը խաղաղ ճանապարհով լուծելու համար:

¹⁵ Նույն տեղում, p. 15:

¹⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, g. 1, q. 62, p. 12

Այս և նույն խնդրին վերաբերող այլ դիմումներում վրացական կողմը հասկացնում է, որ չմասնակցելով կոնֆերանսին, Հայաստանը խուսափում է սահմանային հարցը խաղաղ ճանապարհով կարգավորելու առաջարկից: Հայաստանի կառավարությունը տեսնելով, որ այդ հանգամանքը հետագայում իրեն մեղադրելու փաստարկ է դառնալու Վրաստանի ձեռքին, որոշեց չմասնակցել Թիֆլիսի կոնֆերանսին հետևյալ հիմնավորմամբ. «հայ-վրացական սահմանային վեճը կապ չունի այդ խորհրդաժողովի հետ և այն պետք է վճռվի միայն երկու հանրապետությունների ներկայացուցիչների միջոցով»: Ճիշտ և փորձով իմաստնացած որոշում կայացրին խորհրդարանն ու կառավարությունը, ու եթե Հայաստանի կառավարությունն իր հետագա գործունեությունում ևս առաջնորդվեր հարևան պետությունների հետ եղած տարածքային վիճելի հարցերը ուղիղ բանակցությունների միջոցով լուծելու ճանապարհով և ձեռք քաշեր սեփական լուծելիք հարցերը միջազգային ատյաններում քննելու կետարյա հին հիվանդությունից, բոլորովին այլ ընթացք կունենար Հայաստանի 1-ին հանրապետության պատմությունը: Հարցի օբյեկտիվ քննության անհրաժեշտությունը պարտադրում է նշել, որ գերմանական խմբավորման պարտությունից հետո դաշնակիցների վրա հույս դնելու մոլորությունն ու դրանից բխող քաղաքական ամբիցիաները Վրաստանից անցնում է Հայաստանին: Հանգամանքն այս արդեն դրսևորվում է Թիֆլիսում գումարվելիք հիշյալ կոնֆերանսի հանդեպ Հայաստանի կառավարության ունեցած վերաբերմունքով: Ինչքան էլ որ ակնհայտ լիներ կովկասյան կոնֆերանսի նախաձեռնման Վրաստանի միտումը և Հայաստանի կառավարության՝ դրան համարժեք դիրքորոշումը, միևնույն է, Կոնֆերանսի աշխատանքին չմասնակցելու Հայաստանի որոշումը դժվար է արդարացնել: Չէ՞ որ այդ կոնֆերանսում միայն հայ-վրացական սահմանային վեճը չէր քննարկվելու: Վերջին հաշվով, Հայաստանի կառավարությունը կարող էր մասնակցել կոնֆերանսին և պնդել, որ հայ-վրացական սահմանային

վեճին վերաբերող հարցը հանվի օրակարգից: Նման պարագայում Կովկասյան կոնֆերանս հրավիրելու Վրաստանի կառավարության բուն նպատակը կիմաստազրկվեր, բայց և այնպես Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունները հետագայում հիմք չէին ունենա Հայաստանին մեղադրելու, որ նա խուսափեց Փարիզի խաղաղության համաժողովին ընդառաջ միասնական դիրքորոշում մշակելու առաջարկից: Այս մեղադրանքը ճշմարտաման էր այն պատճառով, որ ինչպես Ադրբեջանն ու Վրաստանն էին վերաբերում Հայաստանին մինչև իրենց դաշնակից գերմանա-թուրքական խմբավորման պարտությունը, այնպես էլ Հայաստանը սկսեց վարվել նրանց հետ Անտանտի խմբավորման հաղթանակից հետո: Այսինքն՝ փոխվում էին գումարելիների տեղերը, և դրանից Անդրկովկասի քաղաքական միտքը որակական տեղաշարժ չէր ապրում ու գործում էր նախորդ շրջանի ազգամիջյան հարաբերությունների ավանդույթներով: Նման քաղաքական մտայնությունը որքան բացատրելի, նույնքան էլ վտանգ պարունակող էր այն առումով, որ Անդրկովկասյան հանրապետությունները մնացին որպես հարաբերությունների օբյեկտ: Օրինաչափ պետական սկիզբը պահանջում էր նման կոնֆերանսը գումարել 1918թ. հունիսին՝ լուծելու համար տարանջատման ու միջպետական հարաբերությունների հաստատման խնդիրները: Նման օրինաչափ սկիզբը կունենար և իր տրամաբանական շարունակությունը, և ներդաշնակություն կստեղծվեր հարաբերություններում: Հինգամսյա ուշացումը հակասությունները հասցրին հակադրության, և ուշացած քայլերը ի գործու չէին կանխելու հայ-վրացական պատերազմը: Այդ ամենի հետևանքով էլ ծախողվեցին Թիֆլիսում գումարվելիք կովկասյան հանրապետությունների կոնֆերանսի աշխատանքները:

1918թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը գրում է Հայաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Տիգրանյանին. «Նոյեմբերի 10-ին բացվեց կոնֆերանսի առաջին նիստը: Մասնակցում

էին՝ Վրաստանից Գեգեչկորին ու Ռամիշվիլին, Աղրբեջանից՝ Ջաֆարովը և Վեքիլովը, Լեռնական հանրապետությունից՝ Կոցեր և Ջաբազիւր: Կոնֆերանսն ընդունելով իմ հայտարարությունը, որ Հայաստանի կառավարությունը ժամանակին չի տեղեկացվել, կոնֆերանսը որոշեց ընտրել մանդատային հանձնաժողով և հետաձգել նիստերը մինչև նոյեմբերի 14-ը ու սպասել Հայաստանի պատվիրակների ժամանմանը»¹⁷: Այս ամենի մասին նոյեմբերի 11-ին Ա. Ջամալյանին տեղյակ էր պահել Գեգեչկորին և հույս հայտնել, որ Հայաստանի ներկայացուցիչները, թեկուզև ուշացած, կմասնակցեն կոնֆերանսի աշխատանքներին¹⁸: Երկարատև ձգձգումից հետո Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 18-ին միայն վերջնական պատասխան է տալիս: Ա. Ջամալյանին նոյեմբերի 18-ին հղած արտաքին գործերի մինիստրի գրությունում կարդում ենք. «Հայաստանը դեմ չէ կովկասյան կոնֆերանսին, սակայն գտնում է, որ Հայաստանի և Վրաստանի սահմանների որոշման հարցը պետք է լուծվի երկու հանրապետությունների փոխհամաձայնությամբ, որից հետո միայն դրվի կոնֆերանսին: Սրանք սկզբունքային հարցեր են են, որից կախված է կոնֆերանսի հաջողությունը: Կոնֆերանսի հավաքվելը հեշտ է, բայց այն կարող է հեշտությամբ էլ ապարդյուն անցնել, միմիայն ցուցադրելով ու ընդգծելով մեր անհամաձայնությունը, որը միայն վնասակար կարող է լինել: Այդ կոնֆերանսին վերաբերող բոլոր հարցերով ես այստեղ բանակցում եմ Ս. Մոլիվանու հետ»¹⁹: Ջանացեք տեղյակ լինել, առանց մեզ տեղի ունեցող, կոնֆերանսի աշխատանքներին²⁰: Այս գրությունով վերջ տրվեց կովկասյան կոնֆերանսի շուրջ խոսակցություններին, ու այդ ուղղությամբ Վրաստանի կառավարության գործադրած ջանքերն ապարդյուն անցան: Հայաստանի կառավարությունը

¹⁷ Նույն տեղում, գ. 10, ք. 98:

¹⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 10, ք. 42:

¹⁹ Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչը, որը Երևան էր եկել 1918թ. հոկտեմբերի 29-ին:

²⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 10, ք. 47:

խուսափեց անդրկովկասյան կոնֆերանսում քննարկել և լուծում տալ հայ-վրացական տարածքային վեճին, ջանալով հարցը լուծել ուղիղ բանակցությունների միջոցով: Դժվար է արդարացնել Հայաստանի կառավարության մնան դիրքորոշումը: Անդրկովկասի նորաստեղծ պետությունները լուծման կարող բազմաթիվ խնդիրներ ունեին, որոնք պարտադիր էին դարձնում մնան կոնֆերանսների գումարումը: Առավել ևս, որ այնտեղ քննարկվելու էր Փարիզի վեհաժողովին միասնական դիրքորոշմամբ հանդես գալու հարցը: Բացի դրանից, Հայաստանի կառավարության՝ կովկասյան կոնֆերանսից խուսափելու հանգամանքը Վրաստանի և Աղրբեջանի քաղաքական շրջանակներում քարմացրեց այն խոսակցությունները, որ Հայաստանի իշխանությունները կրկին հույսը դրել են դրսի ուժերի վրա: Նման դիտարկումները հեռու չէին ճշմարտությունից: Հոկտեմբերի վերջերից Հայաստանի կառավարության գործունեությունը դուրս էր գալիս պարտադրված իրատեսության շրջանակից՝ կապված դաշնակիցների հաղթանակի հետ: Հայաստանի իշխող վերնախավին թվում էր, որ իրենք պատերազմում հաղթանակած կողմի դաշնակիցներն են, իսկ Վրաստանն ու Աղրբեջանը՝ պարտված կողմի: Հոգեբանական այս դրսևորումը Հայաստանի իշխանությունները տեսանելի դարձրին կովկասյան կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելուց հրաժարվելու փաստով: Այն երևում էր նաև նոյեմբերին Հայաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Տիգրանյանի և Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Մոլիվանու միջև ընթացող բանակցություններից: Բանակցություններն ընթանում էին բարեկիրք մթնոլորտում, բարեկամության ու բարիդրացիության ցանկությունները ուղեկից էին ոչ միայն Ս. Տիգրանյանի հետ տարվող սահմանավեճերի հետ կապված քննարկումների, այլև Հայաստանի մյուս ղեկավարների հետ Ս. Մոլիվանու ունեցած հանդիպումների ժամանակ: Դրանց մասին Ս. Մոլիվանին ամենայն մանրամասնությամբ պարբերաբար տեղյակ էր պահում Վրաստանի արտաքին

գործերի մինիստրին: Այդ գեկուցագրերում նա նշում է, որ արտաքին հանգամանքները զգալի ազդեցություն ունեն Հայաստանի գործիչների դիրքորոշման վրա: Նա, անշուշտ, ելնում էր այն իրողությունից, որ շրջափակված ու աշխարհից մեկուսացված Հայաստանի իշխանությունները չէին կարող նման հաստատականությամբ պնդել, որ Լոռին և Ախալքալաքը հայկական տարածքներ են և պետք է միանան Հայաստանի Հանրապետությանը: Ս. Մդիվանին մոռանում էր, որ նույն դրսևորումն ամբողջապես բռնել էր վրաց քաղաքական դաշտը և թույլ չէր տալիս հավասարի դիրքերից հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, երբ Անդրկովկասը տնօրինում էին Վրաստանի դաշնակից գերմանացիները: Այնպես որ, մեծ տեղաշարժերի մեջ իրենց շահը փնտրող հոգեբանական այս բարդույթից զերծ չէին Անդրկովկասի բոլոր պետությունները: Այս դրսևորման խորքային բացատրությունները մեզ շատ հեռուն կտանեն: Թեմայի հետ այն առնչվում է այնքանով, որքանով խոչընդոտում էր փոխզիջման հասնելու՝ կողմերի ցանկություններին: Շուրջ մեկ ամիս տևած հանդիպումների, նախնական քննարկումների, հայ-վրացական բարիդրացիության անհրաժեշտության և փոխզիջման մասին բազում խոսք ու գրույցներից հետո Ս. Մդիվանին նոյեմբերի 29-ին նուտա հղեց Հայաստանի արտաքին գործերի մինիստրին: Ս. Մդիվանու վկայությամբ Վրաստանի կառավարության մոտեցումները գրավոր ձևակերպելու միտքը իրեն տվել է Ս. Տիգրանյանը: Վերջինս այդ պահանջը հիմնավորել էր, որ պառլամենտական շրջանակներն էին պահանջում, որպեսզի Ս. Մդիվանին պաշտոնապես Հայաստանին ներկայացնի Վրաստանի կառավարության վերջնական դիրքորոշումը հայ-վրացական սահմանների վերաբերյալ: Հայաստանի արտաքին գործերի մինիստրը Ս. Մդիվանուն նաև հայտնել էր, որ պառլամենտը ցանկանում է քննարկել Վրաստանի առաջարկությունը և այն ընդունելու պարագայում հանձնաժողով ստեղծել Վրաստանի հետ բանակցությունները Թիֆլիսում շարունակելու համար:

Նոյեմբերի 29-ին Ս. Մդիվանին Ս. Տիգրանյանին է հանձնում հետևյալ նուտան. «Վրաստանի Հանրապետության կարծիքով Հայաստանի և Վրաստանի միջև սահմանագիծը պետք է անցնի նախկին Թիֆլիսի նահանգի սահմանով...»: Այնուհետև, նշում է, որ «եթե Հայաստանի կառավարությունն առաջարկություններ կունենա նման սահմանագծի դեմ, թող իր առաջարկությունները հայտնի ինձ, որովհետև ես լիազորություն ունեմ հարցի վերջնական լուծման և այն Վրաստանի կառավարության հաստատմանը ներկայացնելու»²¹: Հաջորդ օրը Ս. Մդիվանին Վրաստանի արտաքին գործերի մինիստր Ն. Ռամիշվիլուն հեռագրում է. «Իմ նուտան լավել է պառլամենտի Սենյոր-կոնվենտում և որոշվել է այն հանձնել կառավարության որոշմանը»: «Սենյոր-կոնվենտ» ասելով Ս. Մդիվանին, հավանաբար, նկատի ունի Հայաստանի խորհրդի դաշնակցական ֆրակցիան: Թերևս այդպես է, որովհետև խորհուրդը չի քննել հարցը և հանձնաժողով էլ չի ընտրել: Այդպես պետք է լիներ Ս. Տիգրանյանի և Ս. Մդիվանու նախնական պայմանավորվածության համաձայն, որը և հիմքեր է տվել Ս. Մդիվանուն Ն. Ռամիշվիլուն հայտնելու, որ ինքը Թիֆլիս կվերադառնա Հայաստանի պառլամենտի պատվիրակության հետ: Չարմանալի է, թե ինչից ելնելով էր Ս. Մդիվանին համոզված, որ սահմանների նման առաջարկությունը ընդունվելու է Հայաստանի պառլամենտի ու կառավարության կողմից: Նախնական հանդիպումների ու բանակցությունների տրամադրվածությունը նրան չէին կարող հուշել, որ շրջափակման մեջ գտնվող երկրի իշխանությունները զնալու են նման զիջման: Ս. Մդիվանին նման առաջարկության մեջ, թերևս, փոխզիջում էր տեսնում այն, որ Վրաստանի կառավարությունն այլևս չէր հավակնում Փամբակի շրջանին: Նախնական հանդիպումներում նման դիտարկում եղել է: Ի պատասխան հայկական կողմի պնդումներին, որ վրացական դեմոկրատիայի առաջնորդները 1917-

²¹ Изъ истории армяно-грузинских отношений 1918г. Тифлисъ, 1919г., стр. 68-69:

18թթ. ընդունել են ազգային տարածքային բաժանման նպատակահարմարությունը, Ս. Մղիվանին ջրբաժանը տարել է անկախությունից հետո ընկած շրջանից սկսված մոտեցումներով և նշել, որ Վրաստանը հրաժարվում է Փամբակի շրջանից: Այն, ինչպես հիշում եք, առաջ էր քաշված 1918թ. հունիսի 10-ի՝ Ա. Ծերեթելու սահմանների վերաբերյալ հայտարարության մեջ: Ս. Մղիվանին իր կառավարության նման քայլը բացատրում էր այն բանով, որ Թուրքիայի զորքերի հեռանալուց հետո Փամբակն այլևս ստրատեգիական տարածք չէ Վրաստանի համար: Պարզվում է հայկական կողմը ըմբռնումով չէր մոտեցել Ս. Մղիվանու այդ առաջարկությանը, 1918թ. դեկտեմբերի 1-ի պատասխան նոտայում կրկնելով իր նախկին փաստարկները: Դեկտեմբերի 1-ի Հայաստանի կառավարության պատասխան նոտան նույն օրը Ս. Մղիվանին հայտնում է իր կառավարությանը: Այն տալիս են ամբողջությամբ. «Հայաստանի կառավարության հանձնարարությամբ պատիվ ունեն, ի պատասխան Ձեր նոյեմբերի 29-ի նոտայի հայտնելու հետևյալը: Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև սահմանային գծի վերաբերյալ Հայաստանի կառավարությունը հավատարիմ է մնում այն սկզբունքներին, որոնց շուրջ հայ և վրաց դեմոկրատիան համաձայնության է եկել 1917-1918թթ.: Այդ համաձայնությունների հիմքում ընկած է եղել սահմանազատման ազգագրական սկզբունքը և չի պատրաստվում շեղումներ թույլ տալ ազգային-տարածքային տարանջատման այդ սկզբունքներից, հօգուտ Վրաստանի: Այդ նախագծով տարածքային տարանջատումը ընդունված է վրացական կողմից և վեճի ենթակա չէ, որ Ախալքալաքի գավառն ամբողջությամբ և Բորչալուի գավառի մեծ մասը իր հայ ազգաբնակչությամբ հանդիսանում են Հայաստանի անբաժանելի մասերը: Միևնույն ժամանակ Բորչալուի գավառի հյուսիսային մասերը (մինչև Թիֆլիս) ազգաբնակչության մեծամասնությունը նույնպես հայեր են, բայց այդ տարածքները միացված են Վրաստանին հայության կուլտուր-ազգային ավտոնոմիայի հարգ-

ման երաշխիքներով: Ձեր նոտայով գծագրված նոր սահմանագիծը հատկապես ու զգալիորեն վնաս է Հայաստանին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունելի չի համարում Ձեր առաջարկած սահմանագիծը բազում անգամ հայտնած նկատառումներով, որոնց ծանոթ է Վրաստանի կառավարությունը: Դրա հետ միասին իմ կառավարությունը հարկ է համարում հայտարարել, որ Վրաստանի կառավարության կողմից նման առաջարկության պնդելը իր հետ բերում է հարցի ամբողջական վերանայման անհրաժեշտություն: Վերանայման են ենթարկվելու ոչ միայն այն շրջանների հարցերը, որոնց հետ կապված Վրաստանի կառավարությունը վեճ է հարուցում (Ախալքալաք և Բորչալուի մասը), այլ նաև այն շրջանների (հյուսիսային Բորչալուի և թիֆլիսյան), որոնք կարող են միացվել Վրաստանի տարածքին միայն Հայաստանի և Վրաստանի միջև տարածքային բաժանման նախորդ նախագծերի ամբողջական պահպանման պարագայում»²²: Այս նոտայում բերված փաստերը, տարակուսանք առաջացնելով հանդերձ, ցույց են տալիս, որ Հայաստանի կառավարությունը, բանակցություններ վարելով Ս. Մղիվանու հետ, ժամանակ էր շահում: Այն նախագիծը, որի մասին խոսում և որի հենքով կառուցել էր իր պատասխան նոտան Ս. Տիգրանյանը պարզապես գոյություն չուներ: Խոսքը վերաբերում է 1917թ. Պետերբուրգում մշակված նախագծին, համաձայն որի Անդրկովկասում պետք է կատարվեր վարչատարածքային նոր բաժանում՝ հիմքում ունենալով ազգագրական սկզբունքը: Կողմերի նման դիրքորոշումը նկատի ունենալով եմ ասում, որ նրանք գործում էին մինչպետական շրջանի մոտեցումներով ու հոգեբանությամբ: Վրաստանի համար ցարական վարչատարածքային բաժանումն էր տարածքների ձևավորման հիմքը, իսկ Հայաստանի համար՝ 1917թ. վարչատարածքային նոր բաժանման նախագիծը: Ս. Մղիվանին տեսնելով, որ Հայաստանի կառա-

²² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 61, ք. 26:

վարության դիրքորոշումը գնալով կարծրանում է, ի պատասխան Ս. Տիգրանյանի ղեկտեմբերի 1-ի նոտայի, նրան է հղում իր բացատրությունները ղեկտեմբերի 3-ին: Ս. Միլվանին չի ժխտում, որ 1917թ. ազգագրական հիմունքներով տարածքային բաժանման նախագիծ եղել է, ավելացնելով նաև, որ այդ նախագիծը վերաբերել է Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող նահանգներում ապրող երկու ժողովուրդներին, այլ ոչ թե ինքնուրույն պետությունների սահմանազատմանը: Ս. Միլվանուն զարմացրել էր հյուսիսային Բորչալուի մասին Ս. Տիգրանյանի ակնարկը: Նա, այդ հարցի հետ կապված, նշում է, որ նախկինում, ինչպես նաև իրենց հանդիպումների ժամանակ, հայկական կողմը երբեք այդ խնդիրը չի բարձրացրել: Այնուհետև մանրամասն պատմում ու հիմնավորում է, թե Վրաստանի համար որքան անհրաժեշտ է Ախալքալաքը և Բորչալուի գավառն ամբողջությամբ: Վերջում Ս. Միլվանին գտնում է, որ «Վրաստանը պնդելով Ախալքալաքի և Բորչալուի գավառների հարցում, չի ստեղծում աննպաստ պայմաններ Հայաստանի հետ համաձայնության գալու և նրա հետ հաստատելու բարիդրացիական և բարեկամական հարաբերություն»: Մեկ ամսվա բանակցությունների արդյունքը ունեցավ այն ավարտը, որ կողմերը լավ ծանոթացան իրար և նաև հասկացան, որ իրենց անգիջում դիրքորոշումներով գիտակցված փակուղի են տանում սահմանային վեճը: Որ հարցը խաղաղ լուծման հնարավորություն ուներ, և կողմերը կարող էին հասնել դրան, կասկածից վեր է: Այդ մասին է վկայում Ս. Տիգրանյանի և Ս. Միլվանու ղեկտեմբերի 2-ի հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունը: Այդ մասին ղեկտեմբերի 3-ին հետևյալ հաղորդագրությունն է հղվել Թիֆլիս՝ Վրաստանի արտաքին գործերի մինիստրին. «Երեկ Տիգրանյանի հետ հանդիպման ժամանակ մենք պայմանավորվեցինք Ախալքալաքը Վրաստանին զիջելու մասին: Այդ համաձայնության հիմքում ղնելով այն պայմանը, որ եթե Հայաստանը Թուրքիայից ստանա իր հողերի գոնե կեսը: Վրաստանն իր

հերթին պարտավորվում է այդ հարցում պաշտպանել Հայաստանին»²³: Գեկտեմբերի 2-ի հանդիպումը շարունակելու ղեկքում կողմերը կարող էին գտնել փոխզիջման տարբերակ: Բայց, ինչպես լինում է նման շրջադարձային պահերին, այդ հանդիպումը անհասկանալիորեն շարունակություն չունեցավ: Թիֆլիս վերադառնալուց հետո արտաքին գործերի մինիստրին ներկայացած հաշվետու զեկուցագրում ղեկտեմբերի 2-ի հանդիպման մասին խոսելիս Ս. Միլվանին փաստորեն նշում է, որ հարցի փոխզիջումային տարբերակը գտնված է եղել: Ախալքալաքը Վրաստանին զիջելու տարբերակը նույնությամբ ներկայացնելուց հետո Ս. Միլվանին ավելացնում է հետևյալը. «Ես իմ կողմից հայտարարեցի Տիգրանյանին Լոռու շրջանը Հայաստանին զիջելու մասին, որի սահմանների մասին պետք է պայմանավորվեինք հաջորդ օրը, բայց այն այդպես էլ չկայացավ»²⁴: Հետաքրքիր է, թե ինչու՞ հանդիպումը չի կայացել, և փոխզիջման տարբերակն այլևս չի քննարկվել: Առավել ևս, որ ղեկտեմբերի 2-ի հանդիպումից հետո Ս. Միլվանին մեկ անգամ էլ է հանդիպել Տիգրանյանին: Դա եղել է ղեկտեմբերի 7-ին Միլվանու Թիֆլիս մեկնելուց մեկ օր առաջ: Այդ մասին ևս նա հիշատակում է ղեկտեմբերի 20-ի զեկուցագրում. «Թիֆլիս մեկնելուց առաջ ես այցելեցի Տիգրանյանին և վերջնականապես պայմանավորվեցինք, որ Տիգրանյանը կամ մեկ ուրիշ պատվիրակություն զան Թիֆլիս բանակցությունները շարունակելու և որոշելու երկու երկրների սահմանների հարցը»²⁵: Հնարավոր է, որ Ս. Տիգրանյանը և Միլվանին պայմանավորվել են Լոռին Հայաստանին զիջելու հարցի քննարկումը շարունակել Թիֆլիսում: Այս տարբերակի օգտին է խոսում նաև Ս. Միլվանու դրական ու նաև հուսադրող կարծիքը Երևանում իր վարած բանակցությունների մասին: Նա նույնիսկ նշում է, որ կողմերը ընդհանուր մոտեցումները ճշտել էին, որի հետագա

²³ Изъ истории армяно-грузинскихъ отношеній 1918г., Тифлисъ 1919г., с. 75:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 76:

քննարկումները պետք է կայանար Ս. Տիգրանյանի Թիֆլիս գալուց հետո»: Ս. Միլիվանու նման մոտեցումը մեզ հիմք տալիս է եզրակացնելու, որ, այնուամենայնիվ, փոխզիջման տարբերակի շուրջ կողմերը նախնական համաձայնություն ձեռք էին բերել: Փորձենք կնճիոր բացահայտելու համար դիմել կողմնակի կամ լրացուցիչ փաստերի: Դեկտեմբերի 2-ի հանդիպման ժամանակ Ս. Միլիվանին Հայաստանի արտաքին գործերի մինիստրին հայտնում է, որ վրացական գործերը պատրաստվում են գրավել Ախալքալաքի գավառը: Այս փաստը բերեցի ցույց տալու այն հնարավոր տարբերակը, որ լուրը լսելուց հետո է Ս. Տիգրանյանը Ս. Միլիվանուն հայտնել Ախալքալաքը Վրաստանին զիջելու իր մոտեցումը: Այս մոտեցման պարագայում էլ հարկավոր է ճշտել, թե ինչու՞ է Ս. Տիգրանյանը Ախալքալաքը Վրաստանին զիջելու պայման դնում թուրքահայաստանի հողերի գոնե մի մասը Հայաստանին տալը: Ինչու՞ հենց բանակցությունների վերջին օրը շոշափվեց Թուրքիայի խնդիրը, և Միլիվանին համաձայնեց, որ Վրաստանը «պարտավորվում է պաշտպանել թուրքական գավառների մի մասը Հայաստանին վերադարձնելու գործին»: Խնդիրն այն է, որ Վրաստանի իշխանություններին շատ զայրացրել էր այն հանգամանքը, որ թուրքական գործերը նոյեմբերին Ախալքալաքի գավառից հեռանալուց առաջ Հայաստանի կառավարությանն առաջարկել էին գրավել այն: Այս փաստը Վրաստանի կառավարությանը հեռուն տանող հետևությունների մասին խորհելու առիթ էր տվել: Դեկտեմբերի 2-ին Միլիվանուն հղած հեռագրում Վրաստանի արտաքին գործերի մինիստրը, անդրադառնալով այդ հարցին, հետևեցնում է. «Հնարավոր է, որ դա հետևանք է թուրքական հրամանատարության և Հայաստանի կառավարության համաձայնության, որը դժվարացնում է մեր հնարավոր համաձայնությունը Հայաստանի հետ»: Այս փաստերի համադրումը ցույց է տալիս, որ Ս. Միլիվանին փորձած պետք է լիներ թուրքական գործունը խաղարկել Ս. Տիգրանյանի հետ դեկտեմբերի 2-ի հանդիպման ժամանակ:

Այլ մոտեցմամբ չի բացատրվում հայ-վրացական նախնական համաձայնությունում Թուրքիայի անվան շոշոփումը: Դիվանագիտական պրակտիկայում նման բան հնարավոր է միայն դաշնակից պետությունների միջև վարվող բանակցություններում: Այս ամենից երևում է, որ Վրաստանը Հայաստանի վրա ազդող դրսի ուժ ասելով, փաստորեն, նկատի է ունեցել Թուրքիային: Անշուշտ, պարտված Թուրքիան կցանկանար ու նաև ջանքեր կգործադրեր, որ Հայաստանի ու Վրաստանի միջև համաձայնություն չկնքվի, և թշնամանքը խորանար: Բայց դա չէր կարող նշանակել, որ համաձայնություն է եղել թուրքական հրամանատարության ու Հայաստանի կառավարության միջև: Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու պետք է Թուրքիան ցանկանար, որ Ախալքալաքի գավառից իր գործերը դուրս բերելուց հետո այն գրավեն հայկական գործերը, ապա սրա պատասխանը շատ պարզ է եղել ու հեռուն տանող եզրակացությունների տեղիք չպետք է տար: Ստեղծված պայմաններում Թուրքիային ձեռնտու էր, որ Ախալքալաքը միանա Հայաստանին, որպեսզի վերջինս քիչ տարածքային պահանջներ ներկայացնի իրեն: Այս տարբերակները թվարկելով հանդերձ, չեմ բացառում նաև Թուրքիայի հնարավոր դերը հայ-վրացական պատերազմը սաղորելու գործում: Սա բացատրելի էր, բայց բոլորովին այլ բան է թուրքական հրամանատարության ու Հայաստանի միջև համաձայնության մասին Վրաստանի արտաքին գործերի մինիստրի անթաքույց դիտարկումը: Համենայն դեպս, եթե նման համաձայնություն եղած լիներ, այն Ս. Միլիվանու աչքից չէր կարող վրիպել, ու նա դրան անպայման կանդրադառնար Թիֆլիս ուղարկված իր հեռագրերում և զեկուցագրերում: Ավելի հավանական է թվում, որ հայ-թուրքական հնարավոր համաձայնության ակնարկով Վրաստանի արտաքին գործերի մինիստրը Ս. Միլիվանուն հասկացրել է, որ նա բանակցությունների ժամանակ հայկական կողմի ուշադրությունը Ախալքալաքի գավառից շեղի դեպի Թուրքահայաստանի տարածքներ: Եթե աչքաթող չա-

նենք այս հնարավոր տարբերակը, ապա պետք է նկատենք, որ հենց Մոլիվանու առաջարկությամբ է Տիգրանյանը նախնական համաձայնություն տվել Ախալքալաքը Վրաստանին զիջելու՝ պայմանով, որ Վրաստանը ապագայում կպաշտպանի Հայաստանի հողային պահանջները Թուրքիայից: Այս տարբերակի օգտին է խոսում նաև այն համադրությունը, որ ես վերը կատարեցի կապված Ախալքալաքը Վրաստանին զիջելու փաստի հետ: Բանն այն է, որ այդ նախնական համաձայնության մասին երկու տարբեր հիշատակություններ է թողել Ս. Մոլիվանին: Դեկտեմբերի 3-ին Թիֆլիս ուղարկած հեռագրում նա խոսում է միայն Ախալքալաքը Վրաստանին զիջելու մասին, իսկ ահա դեկտեմբերի 20-ի հաշվետու զեկուցագրում նշում է, որ Ս. Տիգրանյանի հետ Ախալքալաքը Վրաստանին զիջելու համաձայնությունից հետո ինքը հանդես է եկել Լոռին Հայաստանին զիջելու հայտարարությամբ: Ս. Մոլիվանու կողմից նույն հարցի մասին կազմված այս երկու տարբեր տեքստերը ինչ-որ բանի մասին խոսում են: Կամ Ս. Մոլիվանին մոռացել է դեկտեմբերի 3-ի հեռագրում նշել Լոռին Հայաստանին զիջելու իր կողմից արված հայտարարության մասին, կամ էլ, որն ավելի հավանական է թվում, այդ մասին ընդհանրապես խոսակցություն չի եղել դեկտեմբերի 2-ի հանդիպման ժամանակ: Պարզապես դեկտեմբերի 20-ին Երևանում իր առաքելության մասին տված զեկուցագրում Մոլիվանին մտացածին է նշել Լոռին Հայաստանին զիջելու իր չարած հայտարարությունը, որպեսզի ցույց տար, որ վրացական կողմը փոխզիջում առաջարկել է, բայց, չնայած դրան, Հայաստանը սկսեց պատերազմը: Հետին թվով այս հնարավոր փոփոխությունը ևս չի կարելի ամբողջությամբ բացառել թեկուզև այն պատճառով, որ վրացական կողմը պատերազմի ողջ պատասխանատվությունը դնում էր Հայաստանի իշխանությունների վրա: Այսինքն՝ խնդիրը պետք է քննենք թեզի և հակաթեզի համադրությամբ, որպեսզի կարողանանք ճշգրտել, թե ի՞նչ պատճառով էր, որ Ս. Տիգրանյանի և Ս. Մոլիվանու միջև Երևանում ընթացող բա-

նակցություններն ընդհատվեցին հենց այն պահին, երբ կողմերը քննարկում էին պատերազմը բացառող փոխզիջման տարբերակը: Ամբողջ բարդությունն ու հակասությունը կայանում է այն բանում, որ այս փաստը հաստատող մի տեղեկատվություն կա իմ ձեռքի տակ: Արդեն ասել եմ, որ դա Ս. Մոլիվանու դեկտեմբերի 3-ի հեռագիրն է և դեկտեմբերի 20-ի զեկուցագիրը: Այլ հիմնավորումներ, որպեսզի պնդեմ, որ իսկապես այդպես է եղել, ձեռքիս տակ չկան: Ցավալի է, որ հայկական աղբյուրներն ընդհանրապես որևէ հիշատակություն չեն անում 1918թ. դեկտեմբերի 2-ին Ս. Տիգրանյանի և Ս. Մոլիվանու ձեռք բերած նախնական համաձայնության մասին: Նոյեմբերյան բանակցությունների արձանագրությունները մեր արխիվներում պահպանված չեն: Նույնիսկ հայտնի էլ չէ, արձանագրություններ եղե՞լ են, թե՛ ոչ: Իրենց մեծածավալ գրքերում այդ մասին որևէ հիշատակություն չունեն Ալ. Խատիսյանը և Ս. Վրացյանը: Այս ամենը որքան էլ զարմանալի, բայց փաստ է: Համերաշխ լռությունն այդ կարևորագույն խնդրի մասին ավելի քան տարօրինակ է թվում: Ժամանակակիցներից թերևս միայն օրվա վարչապետ Հ. Քաջազունին է, որ հայ-վրացական պատերազմի մասին հետևյալ դիտարկումն է արել. «Մտահոգությունների դուռ էր բաց անում հայ-վրացական պատերազմի փաստն ինքնըստինքյան»²⁶: Ինչ քաղաքական գաղտնիք է թաքնված այս տողերի արանքում և ինչի՞ց է դժգոհում օրվա իրադարձությունները դեկավարած կառավարության նախագահը: Այստեղ, անշուշտ, գաղտնիք կա, որը մտածված չի բացում Հ. Քաջազունին: Նրա մոտեցումն ամբողջապես պաշտպանում է այնօրյա Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը: Ջամալյանի կարծիքը կարևոր է ոչ միայն որ նա գործելով Թիֆլիսում, ի մոտո ծանոթ էր անցքերին, այլ նաև այն բանի համար, որ 1924թ. Քաջազունու գրքի դեմ գրած հողվածում ամբողջապես մեր-

²⁶ Հ. Քաջազունի, Դաշնակցությունն անելիք չունի այլևս, էջ 35:

ժում է գրքի դրույթները և նրա հետ համաձայնում միայն հայ-վրացական պատերազմի հարցում: Ա. Ջամալյանն այդ մասին գրում է. «Համաձայն են Քաջազունու հետ, որ ծանր մտահոգությունների դուռ է բաց անում հայ-վրացական պատերազմի փաստը»²⁷: Փաստորեն Ա. Ջամալյանը միայն կիսում է Քաջազունու բացասական վերաբերմունքը հայ-վրացական պատերազմի մասին, չտալով որևէ հավելյալ բացատրություն այն մասին, թե խոսքն ինչին է վերաբերում: Կառավարության այն ժամանակվա նախագահը հասկացնում կամ ակնարկում է, որ պատերազմից հնարավոր էր խուսափել, իսկ Թիֆլիսում գործած չայաստանի ներկայացուցիչն ամբողջապես համերաշխում է նրա տեսակետի հետ: Փաստորեն, նրանք չբացելով փակագծերը և չասելով, թե ինչպես կարելի էր խուսափել պատերազմից, հիմնավորում են Ս. Մդիվանու հավաստիացումներն այն մասին, որ Երևանի հայ-վրացական բանակցությունները չէին սպառել կամ գտել էին հարցը խաղաղ կարգավորելու հնարավորությունը: 1918թ. դեկտեմբերի 20-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստրին հղած Ս. Մդիվանու զեկուցագիրը վերջանում է հետևյալ տողերով. «Ես Երևանից դուրս եկա (դեկտեմբերի 8-ին – Կ. Ս.) այն համոզմամբ, որ երկու երկրների ապագան նրանց համերաշխության ու համագործակցության մեջ է: Թվում էր, թե այդ գաղափարներով էր ներծծված մեր բոլոր հանդիպումներն ու զրույցները: Թվում էր նաև, որ հարցի խաղաղ կարգավորումն այլընտրանք չուներ: Ստեղծված պայմաններում այլ տարբերակի մասին մտածելու որևէ հիմք չկար, բացի փոխադարձ ըմբռնողությամբ բարեկամական համաձայնության գալուց»²⁸:

²⁷ Ա. Ջամալյան, Հ. Քաջազունու ին և ՀՀ դաշնակցությունը, Հայրենիք, 1924թ., ք. 5, էջ 132:

²⁸ Изъ истории армяно-грузинских отношений 1918г., Тифлисъ 1918г., с. 86.

Գլուխ 3. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Միշտ չէ, որ պատերազմը քաղաքականության շարունակությունն է կամ նրա հասունացած անհրաժեշտության դրսևորումը: Եղել են և կան պատերազմներ, որոնք պարզապես զարդարում են տվյալ ժողովուրդների հայրենասիրական կենսագրությունը: Այսինքն՝ արդյունքում այդ պատերազմները քաղաքական հարցեր չեն լուծում, բայց դրանք կանխելը նույնքան անհնարին է, որքան քաղաքական հարցեր լուծող պատերազմները: Անդրկովկասի դարասկիզբը և դարավերջը լեցուն է նման պատերազմներով: Դրանցից մեկը և առաջինը 1918 թվականի դեկտեմբերի 13-ին սկսված և դեկտեմբերի 31-ին ավարտված հայ-վրացական պատերազմն էր: Այս պատերազմը կայսերական շրջանի ազգամիջյան վեճերն ու տարածայնությունները, ինտերցիայի ուժով ու մինչպետական հոգեբանությամբ, նորաստեղծ պետությունների կողմից իրավաժառանգելու դրսևորում էր: Այս շարժառիթը ներսից և ուղղորդումը դրսից թույլ չտվեցին նորաստեղծ հարևան պետություններին առանց պատերազմական փորձության լուծելու տարածքային վիճելի խնդիրները:

Ինչպես տեսանք, կողմերին հաջողվեց հոկտեմբերին սկսված սահմանային բախումները կանխել: Բայց գործադրած ջանքերն ընդամենը երկու ամսով հետաձգեցին բախումը: Գլխավոր պատճառն այն էր, որ պատերազմը կանխելու ցանկությունը չէր ուղեկցվում դիրքորոշումների որակական փոփոխությամբ: Կողմերի ազգային ձգտման մոտեցումները չէին կարողանում որակափոխվել պետաիրավական քաղաքականության տարողությամբ: Կայսերական շրջանում ձևավորված

ազգային հայրենասիրությունը պետական մակարդակում չէր փոփոխվում: Մինչ պատերազմին անցնելը հիշենք, որ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին վերջին փորձերն արվեցին հայվրացական տարածքների սահմանազատման խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու: Կյանքը ցույց տվեց, որ այդ ուղղությամբ կողմերի գործադրած ջանքերն իզուր էին, որովհետև նրանք պարզապես կրկնում էին հունիս-հոկտեմբեր ամիսների փոխադարձ մեղադրանքները: 1918թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում Վրաստանի լիազոր ներկայացուցից Ս. Մդիվանին այցելում է Հայաստանի արտաքին գործերի մինիստրություն և մինիստր Ս. Տիգրանյանին հայտնում, որ գեներալ Մակակը նշանակվել է Ախալցխա-Ախալքալաքի գեներալ-նահանգապետ ու նախապատրաստական աշխատանքներ է տանում Ախալքալաքը վրացական զորքերով գրավելու: Դեկտեմբերի 3-ին Ս. Տիգրանյանը բողոքի նուտա է հղում Վրաստանի կառավարությանը և պահանջում. «ձեռնպահ մնալ Ախալքալաքի գավառ զորքեր մտցնելուց»¹: 1918թ. դեկտեմբերի 5-ին վրացական զորքերը, կոտորելով հայկական կայազորի դինադրությունը, գրավում են Ախալքալաքը: Այդ մասին նույն օրը Վրաստանի զինվորական մինիստրին հեռագրով հայտնում է գեներալ Մակակը²: Դեկտեմբերի 8-ին Նազարբեկյանին հղած հեռագրում Լոռի-Փամբակի հայկական զորամասի հրամանատար Դրաստամատ Կանայանը (հետայսու՝ Դրո) հայտնում է, որ վրացական զորքերը մտել են Ախալքալաքի գավառ և ստիպում են հայկական զինվորական մասերին հեռանալ գավառի տարածքից: Հայկական զորամասերը Ախալքալաք էին մտել գավառի տարածքից, 1918թ. նոյեմբերի վերջին, թուրքական զորքերի հեռանալուց հետո: Հանգամանք, որը հարուցել էր վրացական կողմի գայրույթը: Ահա, քե ինչու, երբ դեկտեմբերի 5-ին վրացական զորքերը մտան Ախալքալաք, Թիֆլիսից Երևան ուղարկվեց հետևյալ բովանդակությամբ

յամբ հեռագիրը. «Ախալքալաքի գրավման հարցը պատմական, քաղաքական և բարոյական առումներով վիճելի չի կորող համարվել»³: Դեկտեմբերի 8-ի հեռագրում Դրոն հայտնում է նաև, որ Ախալքալաքի գավառի գրավումը և Լոռու հայկական գյուղերի դեմ վրացական զորքերի գործողությունները փոխկապակցված են: Կառավարության դեկտեմբերի 9-ի նիստում վարչապետ Հ. Քաջազունին ներկայացնում է նույն օրը Դրոյից ստացված մեկ ուրիշ հեռագիր, որով նա հաղորդում է, որ. «վրացական զորքերը ռմբակոծել են Ուզունլար գյուղը և Լոռու հյուսիսային մասում քալանում ու բռնությունների են ենթարկում հայ ազգաբնակչությանը»: Կառավարության նիստը, քննարկելով ստեղծված կացությունը, հանձնարարում է արտաքին գործերի մինիստրին բողոքի հեռագիր ուղարկել Վրաստանի կառավարությանը՝ պահանջելով դադարեցնել բռնությունները: Հանձնարարվում է նաև զինվորական մինիստրին անհրաժեշտ ռազմական պատրաստություն տեսնել, նկատի ունենալով իրադարձությունների հետագա հնարավոր բարդացումը⁴: Դեկտեմբերի 10-ին Ուզունլար գյուղից հեռագրում են Երևան, որ երկու օր շարունակ գյուղը գտնվում է հրետանային կրակի տակ: Գյուղացիները ապստամբել են և չեն ենթարկվում վրացական զորքերի հրամանատարությանը: Հայտնում են նաև, որ գնալով իրենց դրությունը ծանրանում է և խնդրում են անհապաղ օգնություն: Դեկտեմբերի 11-ին Ղարաքիլիսայում Դրոն հանդիպում է Հայաստանում Վրաստանի լիազոր ներակայացուցիչ Ս. Մդիվանուն (ներկա են լինում նաև Ավ. Ահարոնյանը և Մ. Պապաջանյանը, որոնք մեկնում էին Փարիզ՝ խաղաղության վեհաժողովին մասնակցելու): Ղարաքիլիսա-Լոռի զորամիավորման հրամանատարի անունից Դրոն Մդիվանուն է հանձնում հետևյալ վերջնագիրը. «Գեներալ Ծուլուկիձեի զորքերի բռնությունները Ուզունլարի գյուղացիների հանդեպ ապստամբեցրել է ողջ Լոռու ազգաբնակչույթ-

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 61, ք. 26:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 11, ք. 24:

յանը: Առաջարկում եմ հետագա բարդություններից խուսափելու համար հիշյալ տարածքից հանել վրացական բոլոր գորամիավորումները: ...Մենք չենք կարող ականատեսը լինել հրետանային կրակին տրված մեր գյուղերի, կանանց և երեխաների տառապանքին: Երկու ժողովուրդների շահերից ելնելով, խնդրում եմ նշանակել գործը քննող հանձնաժողով և այդ շրջաններում թողնել միայն աղմինիստրացիան: Հակառակ պարագայում, իրադարձությունների պատասխանատվությունը դնում եմ վրացական գորքերի հրամանատարության վրա»⁵: Ամենայն հավանականությամբ, Դրոյի այս քայլն էր Հայաստանի ռազմական մինիստր գեներալ Հախվերդյանին տրամադրել նկատելու, որ «Դրոն ստեղծել էր այնպիսի վիճակ, երբ հրանոթներն իրենք են կրակում»: Այս դիտարկումը բնավ չի նշանակում, որ Դրոյի ղեկավարների 11-ի վերջնագիրը հանգեցրեց պատերազմի: Պարզապես լինելով սահմանագծում և տեսնելով պատերազմի անխուսափելիությունը, ջանում էր, որ կառավարությունն այլևս չխուսափի հասունացած ու անխուսափելի ռազմական առճակատումից, որն ավելի թանկ էր նստում շրջափակված Հայաստանի վրա: Դրոյի այս դիրքորոշումը շատ լավ էր հասկացել Ս. Մղիվանին, որը ղեկավարների 11-ին Դարաքիլիսայից Հայաստանի արտաքին գործերի մինիստրի հետ ունեցած հեռախոսագրույցի ժամանակ նկատում է. «Տեսանելի է, որ իրադարձությունները ընդունում են շատ լուրջ բնույթ: Այդ ապստամբության մասին ես լսել էի դեռևս Ալեքսանդրապոլում, որտեղ ես այդ մասին գրույց ունեցա Դրոյի հետ: Նրա հետ ինձ հաջողվեց համաձայնության գալ հարցի բարեհաջող լուծման ու հանկարծ, անսպասելիորեն բռնկվեցին ցավալի իրադարձությունները: Դարաքիլիսա վերադառնալուց հետո ես կրկին բանակցություններ ունեցա Դրոյի հետ, որից ստացա նոր և լրացուցիչ պահանջներ: Այդ պայմանները ոչ միայն չեն նպաստելու հարցի բարեհաջող կարգավորմանը,

⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 61, ք. 16:

այլև կարող են ավելի սրել իրավիճակն՝ ընդհուպ ողբերգական ավարտ: Այդ պատճառով էլ խնդրում եմ Ձեզ, կառավարությանը համոզեք փոխելու այն պայմանները, որոնք ինձ է հանձնել Դրոն»⁶: Այնուհետև Ս. Մղիվանին Ս. Տիգրանյանին ասում է, որ չնայած կապ չկա, բայց իրեն հաջողվել է Կորեից երկաթուղու հեռախոսագծով խոսել գեներալ Ծուլուկիձեի հետ, որը հաղորդել է, որ ղեկավարների 10-11-ին իր գորքերի վրա հրաձգություն են բացել Սանահին և Ալավերդի կայարաններում, որին ինքը չի պատասխանել: Ս. Մղիվանին այս ամենն ասում էր Հայաստանի արտաքին գործերի մինիստրին, որպեսզի ցույց տա, որ ապստամբության ու ռազմական գործողությունների նախաձեռնողը Դրոն է: Հասկանալով, որ Ս. Մղիվանին փորձում է ճշտել, թե տարածայնություններ կա՞ն, արդյոք, Հայաստանի կառավարության ու Դրոյի բռնած կոշտ դիրքորոշման միջև, Ս. Տիգրանյանը Մղիվանուն հարցնում է, թե իր ղեկավարների 9-ի նոտան հաղորդվե՞լ է Վրաստանի կառավարությանը: Սրանով նա հասկացնում է, որ Դրոյի ղեկավարների 11-ի վերջնագրի և Հայաստանի կառավարության ղեկավարների 9-ի՝ Վրաստանի կառավարությանը հղած նոտայի միջև էական տարբերություն չկա: Այս հարցին Ս. Մղիվանին պատասխանում է, որ կապ չլինելու պատճառով այն չի հաղորդվել Թիֆլիս, մոռանալով, որ ինքն արդեն Տիգրանյանին ասել էր, որ ամսի 10-ին Կորեից երկաթուղու հեռախոսագծով խոսել է Ալավերդիում գտնվող գեներալ Ծուլուկիձեի հետ: Անշուշտ, Հայաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչը լավ էլ հասկանում էր, որ Դրոն ինքնագուրջ չի գործում, բայց և այնպես փորձում էր հնարավորին չափ ձգձգել իրերի նման դասավորությունը, որը ձեռնառու էր Վրաստանին: Այդ պատճառով էլ նա Ս. Տիգրանյանին ստեղծված դրությունից դուրս գալու ելք է առաջարկում. «Ստեղծենք հայ-վրացական հանձնաժողով ու թող այդ հանձնաժողովի անդամները անցնեն ապստամբ գյու-

⁶ Նույն տեղում, գ. 60, ք. 26-27:

ղերով ու առաջարկեն ազգաբնակչությանը ենթարկվել գոյություն ունեցող կարգերին, մինչ սահմանային վեճի կարգավորումը»: Ս. Մղիվանին, երևի թե, տեղյակ չէր այն բազում գրություններին, որոնք Լոռվա գյուղացիները հղում էին Հայաստանի կառավարությանը օգնության խնդրանքով:

Դեկտեմբերի 11-ի հեռախոսագրույցի ժամանակ նա նաև նշում է, որ եթե «անսպասելիորեն դեպքերը նման զարգացում պետք է ստանային, ինչի⁷ համար էին ամիս ու կեսվա մեր վարած բանակցությունները»: Ու նաև հասկացնում է, որ Լոռվա գյուղերում բռնկված հակավրացական ապստամբությունը նախապատրաստել է Դրոն, որպեսզի հիմք ունենա պահանջելու վրացական զորքերի դուրս բերումը տարածքից, որը, ըստ Մղիվանու, «նշանակում է խառնվել Վրաստանի ներքին գործերին»: Մինչ այս հարցադրումը, Ս. Մղիվանուն ղիվանագիտորեն պատասխանող Ս. Տիգրանյանը միանգամից փոխում է խոսքի ղիվանագիտական տոնայնությունը: Ու այս երկարատև հեռախոսագրույցը վերջացնում է հետևյալ պահանջով. «Հայաստանի կառավարությունը չի կարող հաշտվել ազգաբնակչության հանդեպ դաժան վերաբերմունքի հետ և առավել ևս, նրանից պահանջել ենթարկվել այն իշխանություններին, որոնք ապօրինաբար մնում են Հայաստանին պատկանող շրջաններում: Մեր կառավարությունը գտնում է, որ նախկինում կատարված դեպքերը և ստեղծված ծանր կացությունը պահանջում են, որպեսզի Վրաստանի կառավարությունը, սեփական նախաձեռնությամբ, իր զորքերը դուրս բերի բոլոր այդ տարածքներից հանուն խաղաղության և ազգերի ինքնորշման իրավունքի⁷»: Հանգամանորեն անդրադարձա 1918թ. դեկտեմբերի 11-ին Հայաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Տիգրանյանի և Հայաստանում Վրաստանի ղիվանագիտական ներկայացուցիչ Ս. Մղիվանու հեռախոսագրույցին, որովհետև այն պարզ ցույց է տալիս, թե ինչու⁸ էր պատերազմն անխու-

սափելի անհրաժեշտություն, գոնե Հայաստանի համար: Այն հերքում է նաև վրացական կողմի փաստարկները, որ կարելի էր խուսափել պատերազմից, եթե Հայաստանի կառավարությունը շարունակեր սահմանային վեճի լուծումը փնտրել խաղաղ բանակցությունների միջոցով: Անտեղի ու նաև քաղաքական տարողությունից գերծ մոտեցում է, որովհետև բանակցություններ ասելով, վրացական կողմը հասկանում էր, ծանր կացության մեջ գտնվող Հայաստանի վիճակից օգտվելով վերջինիս պարտադրել իր կամքը և վերջնականապես Վրաստանի տարածք դարձնել ոչ միայն Ախալքալաքի գավառը, այլև Լոռին: Ընթերցողը նաև այդ հեռախոսագրույցից տեսավ միջպետական հարաբերություններ կամ բանակցություններ ասածը վրացական կողմի համար իր հեգեմոն դիրքը Հայաստանին պարտադրել էր նշանակում: Այլապես, բանը չէր հասնի նրան, որ Ս. Մղիվանին Հայաստանի կառավարությունից պահանջեր հանգստացնել ապստամբներին և նրանցից պահանջել ենթարկվելու Վրաստանի իշխանություններին: Իհարկե, նման դիրքերից միջպետական հարաբերություններ կառուցելն ու բանակցություններ վարելը նաև ուներ հոգեբանական բարդություններ, որը ոչ մի կերպ վրացական կառավարությունը և քաղաքական միտքը չէր կարողանում հաղթահարել: Այս խնդրին մենք նախորդ շարադրանքում անդրադարձել ենք, բայց այստեղ տեղին է նշել, որ նրանք իսկապես չէին հավատում, որ Լոռվա գյուղերը կարող էին ոտքի կանգնել իրենց դեմ: Տասնամյակներով այդ տարածքը մտած էր Բորչալուի գավառի մեջ և բոլոր առումներով կապված էր եղել Թիֆլիսի հետ: Թիֆլիսը եղել է և՛ մայրաքաղաք, և՛ տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոն: Այս ամենն ասում են ոչ թե արդարացնելու Վրաստանի կառավարության շրջափակման ու տարաբնույթ ակնհայտ չարական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ, այլ որպեսզի փորձենք ինչ-որ ձևով հասկանալ այդ բարդության գոնե հոգեբանական շարժառիթները: Որովհետև բարդ երևույթների մակերեսային քննարկումները, որոնք, ինչպես

⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 60, ք. 26-27:

կանոն, ուղեկցվում են միայն դեպքերի ու իրադարձությունների պարզունակ շարադրմամբ, դառնում են պատճառ արդեն երկու նորոյա կրկնության: Անդրկովկասի այսօրվա քաղաքական պատկերն ինձ ազատում է հավելյալ փաստարկներով ապացուցելուց, թե ինչու է անհրաժեշտ երևույթի մեկնությունն իր շարժառիթների, պատճառների ու դրանց ունեցած հետևանքների ամբողջական տարրությամբ:

Վրաստանի և Հայաստանի անկախանալուց հետո վեց ամիս շարունակվեց սահմանային վեճը, ու քանի որ կողմերը վճռականորեն պնդում էին Ախալքալաքի գավառը և Լոռու տարածքը իրենցը լինելու հանգամանքը, բոլոր տեսակի փորձերը հարցը խաղաղ կարգավորելու ուղղությամբ մտան փակուղի, և սկիզբ դրվեց պատերազմական գործողություններին: Որոշակի որ օրը սկսվեց պատերազմը՝ դեկտեմբերի 9-ի⁸, երբ վրացական զորքերը սկսեցին ոմբակոծել Ուզունլար գյուղը, որի հետևանքով դեկտեմբերի 11-ին արդեն ապստամբել էին Լոռու գրեթե բոլոր գյուղերը, թե՛ դեկտեմբերի 13-ին, երբ հայկական ջոկատները գրավեցին Ուզունլար գյուղը: Վրացական կողմը գտնում է, որ պատերազմը սկսվել է դեկտեմբերի 9-ին: Դեկտեմբերի 16-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստր Գեգեչկորին Հայաստանի իր գործընկերոջը հղած ռադիոհեռագրում նշում է, որ «հայկական ջոկատները հարձակումն սկսել են դեկտեմբերի 9-ին, իսկ դեկտեմբերի 13-ից վրացական զորքերը ստիպված են եղել պաշտպանվելու»⁸: Նաև նշում է, որ սկսված եղբայրասպան և երկու հարևան ժողովուրդների համար ողբերգական հետևանքներ ունեցող պատերազմի սանձազերծման համար ողջ պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի Հանրապետության կառավարության վրա: Ծի⁹ շտ էին, արդյոք, Վրաստանի արտաքին գործերի մինիստրի փաստարկները: Անշուշտ, ճիշտ են, բայց միայն Վրաստանի մոտեցումների տեսանկյունով, որովհետև նրանց

հակավածությունը թույլ չէր տալիս լսելու ու քաղաքական առումով ընկալելու հայկական կողմի հակափաստարկները: Նրանք վեց ամիս շարունակ միայն պնդում էին, որ «Ախալքալաքի ու Բորչալուի գավառները Վրաստանի անբաժանելի մասն են»: Ու զարմանում էին, որ հայկական կողմը չի կարողանում հասկանալ ու հաշտվել այդ փաստի հետ: Ծի⁹ շտ էին հայկական փաստարկները, որ սահմանագատումը պետք է լինի ազգագրական սկզբունքով, որ Ախալքալաքի գավառի ազգաբնակչությունն իր ճնշող մեծամասնությամբ հայեր են, իսկ Լոռին վրացական զորքերը 1918թ. գրավել էին ժամանակավոր ու պայմանավորվել էին այն վերադարձնել Հայաստանին, երբ թուրքական զորքերը հեռանան Անդրկովկասից: Այս բոլոր փաստարկները ևս ճիշտ էին և ստույգ, բայց վրացական կողմն էլ իր հերթին չէր ուզում հասկանալ հայկական կողմի փաստարկները: Պատերազմն սկսվել էր, բայց մեղադրանքները մնացել էին նույնը, և կողմերը նույն հոգեբանությամբ մեղադրում էին իրար, դժվարացնելով ճշգրտելու, թե պատերազմական գործողությունները երբ սկսվեցին: Հայաստանի զինվորական մինիստր, գեներալ Հ. Հախվերդյանը պատերազմական գործողությունների սկիզբ է համարում դեկտեմբերի 12-ից 13-ը, երբ Ղարաքիլիսա-Լոռի ջոկատը գրավեց Ուզունլար գյուղը, իսկ «Ալեքսանդրապոլից դուրս եկած բատալեոնը կոտրելով վրաց կայազորի դիմադրությունը, գրավեց Ախալքալաքը»⁹: Արդեն նշել ենք, որ գեներալ Հախվերդյանը գտնում էր, որ նախահարձակ կողմը Հայաստանն էր: Անհրաժեշտ են համարում նշել, որ չվիճարկելով հանդերձ պատերազմի սկզբի վերաբերյալ Հայաստանի զինվորական մինիստրի ասածները, այնուամենայնիվ, վիճարկելի է Ախալքալաքը գրավելու մասին նրա դիտարկումը: Ոչ այդ օրերի Հայաստանի կառավարության միստերի արձանագրություններում և ոչ էլ վրացական կողմի նոտաներում ու դիմումներում այդ փաստի հիմնավորու-

⁸ Նույն տեղում, ք. 9:

⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, ք. 2-3:

մը չկա: Վրացական կողմի գրագրություններում կա այլ փաստ: 1918թ. դեկտեմբերի 9-ին Ս. Մդիվանուն հղած հեռագրում Վրաստանի արտաքին գործերի մինիստրը նշում է, որ վրացական գորքերի կողմից Ախալքալաքի գավառը դեկտեմբերի 5-ին գրավելու ժամանակ Բոգդանովկայում է եղել հայկական ռազմական էսկադրան: Դեկտեմբերի 5-ին Ախալքալաք մտած վրացական գորքերի հրամանատար, գեներալ Մակակը Վրաստանի զինվորական մինիստրին հղած 1918թ. դեկտեմբերի 11-ի հեռագրում նույնպես հաստատում է այդ փաստը: Նա նկարագրում է, որ Բոգդանովկայից դուրս եկած հայկական էսկադրան դեկտեմբերի 9-ին գտնվում էր Գորելովկայում: «Ես Բոգդանովկայից Գորելովկա ուղարկեցի,- հաղորդում է գեներալ Մակակը,- հայկական փախստականների կոմիտեի ներկայացուցիչ Աբելյանին և զնդապետ Գվելեսիանին և պահանջեցի մաքրել Գորելովկան, որին հայկական էսկադրոնի հրամանատարը պատասխանեց, որ հրաման ունի Ախալքալաքը գրավելու և խնդրել էր ժամանակ տալ կապվելու իր հրամանատարի հետ»¹⁰: Այնուհետև Մակակը նշում է, որ դեկտեմբերի 10-ին հայկական ջոկատը Ախալքալաքի սահմանից դուրս եկավ իր վերջնագրի հարկադրանքով: Համադրելով այս ամենը, կարելի եզրակացնել, որ հայկական զորաջոկատը մտել է Ախալքալաք, բայց ոչ թե դեկտեմբերի 12-13-ին, ինչպես նշում է գեներալ Հախվերդյանը, այլ դրանից շուտ: Քանի որ այլ փաստեր չկան հայկական գորքերի կողմից Ախալքալաքի գավառը գրավելու մասին, ուստի պետք է կարծել, որ հայկական ջոկատը Ախալքալաք է մտել դեկտեմբերի 4-ին կամ 5-ին: Այսինքն՝ այն բանից հետո, երբ երևանյան բանակցությունների ժամանակ՝ դեկտեմբերի 2-ին, Ս. Մդիվանին Հայաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Տիգրանյանին հայտնել էր, որ Վրաստանը նախապատրաստվում է գրավելու Ախալքալաքը: Թերևս, այն ժամանակ, երբ վրացական գորքերը մտել են Ա-

¹⁰ Из истории армяно-грузинских отношений 1918г., Тифлиси, 1918г., ст. 127:

խալցխա և շարժվել են դեպի Ախալքալաք, հայկական զորաջոկատը Ալեքսանդրապոլից մտել է Ախալքալաք: Դեկտեմբերի 10-ին տեղի տալով Ախալցխայից Ախալքալաք շարժվող վրացական ուժերի առաջ, հայկական զորաջոկատը, առանց մարտի բռնվելու, դուրս է եկել Ախալքալաքի գավառից: Դեպքերի նման զարգացմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ դեկտեմբերի 9-ին Լոռիում արդեն սկսվել էին ռազմական գործողությունները, և ուժերի փոքրաթիվ լինելու պատճառով հայկական կողմը չի ցանկացել պատերազմել երկու ճակատով: Սա նշանակում է նաև, որ հայկական զորաջոկատը Ախալքալաքն առանց մարտի թողել է հենց Դրոյի հրամանով: Թերևս Ախալքալաքում կատարված իրադարձություններով կարելի է բացատրել Երևանի հայ-վրացական բանակցությունների ձախողումը: Այլապես, չեն բացատրվում փոխզիջման հնարավորության բաց թողումը և Մդիվանու մեկնումը Երևանից: Ս. Մդիվանին Երևանից մեկնել էր դեկտեմբերի 8-ին, այսինքն՝ այն բանից հետո, երբ հայկական գորքերը մտել էին Ախալքալաք, որը դեմ էր փոխզիջման ոգուն, համաձայն որի Ախալքալաքը մնալու էր Վրաստանի կազմում, իսկ Լոռին՝ Հայաստանի: Մեր այնօրյա գործիչները հայկական զորաջոկատի կողմից Ախալքալաքը գրավելու և հետո այնտեղից նահանջելու հետ կապված որևէ հիշատակություն չեն անում: Վրացական կողմը ոչ միայն անդրադառնում է խնդրին, այլև ցույց է տալիս, որ կատարվածը «թուրքական հրամանատարության երկդիմի խաղի հետևանք էր, որոնք Հայաստանին առաջարկել են գրավել Ախալքալաքը»¹¹: Վրացական կողմը նման փաստարկներով ցանկացել է ցույց տալ, որ գերմանա-թուրքական բռնի պարտությունից հետո Հայաստանի կառավարությունը գործում էր այլոց թելադրանքով, այդ թվում նաև՝ Թուրքիայի: Այսինքն, եթե թուրքական հրամանատարության «երկդիմի խաղը» չլիներ, Հայաստանն Ախալքալաքի հանդեպ

¹¹ Из истории армяно-грузинских отношений, 1918г., с. 98.

հավակնություն չէր ունենա: Վրացական կողմը նման դատողություններ անելով՝ ամբողջապես մոռանում էր, որ նույն քաղաքականությունը Հայաստանի հանդեպ ինքը վարում էր, երբ գերմանա-թուրքական խմբավորումն էր տնօրինում Անդրկովկասը: Այս ամենը սերտորեն կապված էր այն հանգամանքի հետ, որ ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Վրաստանի կառավարությունները չունեին իրավասությունների քաղաքական չափումներ և իրար էին մեղադրում, որը և հանգեցրեց պատերազմի: Բացի դրանից, առաջին պլան մղելով տարածքային վեճը, վրացական կողմը մոռանում էր իր կողմից Հայաստանի շրջափակման խնդիրը, որն ինքնին պատերազմ էր նշանակում: Մենք դեռ կանդրադառնանք այն հարցին, որ Հայաստանի կառավարության համար այս պատերազմը, ավելի շատ միջոց էր շրջափակումը վերացնելու և արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու համար: Բացի դրանից, վրացական կողմը բացարձակապես չէր ցանկանում հաշվի նստել Լոռվա հայ ազգաբնակչության՝ Հայաստանին միանալու բնական ցանկությունների հետ: Այդ պատճառով էլ վրացական կողմը պատերազմի սկիզբ էր համարում դեկտեմբերի 9-ի Ուզունլար գյուղի ապստամբությունը: Վրաստանի արտաքին գործերի մինիստրը գտնում էր, որ այդ ամենը կազմակերպել է Հայաստանի կառավարությունը: Համաձայն այդ մոտեցման, պատերազմը սկսել են հայկական ջոկատները Դրոյի հրամանատարությամբ: Այդպես էր գտնում նաև այդ օրերին Ղարաքիլիսայում գտնվող Ս. Միլիվանին: Հայկական կողմն էլ իր հերթին այդ ամենին հավելում էր, որ «Հայաստանի կառավարությունը չէր կարող անմասնակից հանդիսատեսը լինել այն բանի, թե ինչպես են հարևան երկրի զորքերը սանձարձակ վերաբերմունք ցուցաբերում Հայաստանին պատկանող տարածքների ազգաբնակչության հանդեպ»: Այս տողերը մեջբերեցի դեկտեմբերի 14-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստր Գեգեչկորուն հղած Հայաստանի արտաքին գործերի մինիստրի հեռագրից: Այն նույնպես փաստում է, որ պատերազմի սկիզբն ու

առիթը կապված է Լոռվա ապստամբության հետ: Պատերազմի սկիզբը դեկտեմբերի 13-ին համարողները նկատի ունեն ողջ ճակատով ռազմական գործողություններ սկսելու փաստը¹²: Դեկտեմբերի 13-ից 15-ի գործողությունները կանխորոշեցին նաև պատերազմի ընդամենը երկշաբաթյա տևողությունը: Նախաձեռնելով ուժեղ զրոհային ճնշում, հայկական զորքերը երկու օրում գրավեցին Սանահինը, Ալավերդին: Հայկական կողմից պատերազմին մասնակցում էին վեց հազար կանոնավոր զորք և մեկ-երկու հազար կամավորականներ: Չորքերի անմիջական հրամանատարն ու ռազմական գործողությունների կողողինացնողը Դրոն էր: Ղարաքիլիսա եկան նաև դիվիզիայի հրամանատար, գեներալ Սիլիկյանը և նեքին գործերի մինիստրի տեղակալ Ս. Մանասյանը: Հայկական երեք ուղղությամբ հարձակվող զորամիավորումներն ունեին շուրջ 30 գնդացի և 7 լեռնային թնդանոթ¹³: Երկօրյա հաջող մարտերի հետևանքով խուճապի մատնված վրացական զորքերը Սանահինում և Ալավերդիում թողեցին զգալի քանակությամբ ռազմական տեխնիկա և ինտենդանտական պաշարներ: Հայկական զորամիավորումների առաջին ռազմական հաջողությունները իրարանցում առաջացրին Թիֆլիսում, որի հետևանքը եղավ այն, որ դաշնակիցների անդրկովկասյան զորքերի հրամանատար, գեներալ Թոմսոնը խաղաղարար միջնորդության նպատակով ռազմական գործողությունների վայր ուղարկեց կապիտան Գրինին: Դեկտեմբերի 15-ին Գրինը Սանահինում Դրոյին է հանձնում 7 կետից բաղկացած զինադադարի հետևյալ միջնորդությունը. «1. Չինադադար 14 օրով: 2. Պատերազմող կողմերը թողնում են վիճելի տարածքներ Ախալքալաքը և Լոռին: 3. Այդ տարածքների բոլոր գյուղացիները պետք է մնան իրենց տեղերում հանգիստ և կողմերը չպետք է միջամտեն նրանց գործերին: 4. Երկաթգծի հաղորդակցություն-

¹² Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958թ., էջ 220:

¹³ Երկշաբաթյա ռազմական գործողություններին մանրամասն անդրադարձել է Ս. Վրացյանը: Տե՛ս նշված աշխատությունը, էջ 220-230:

նը պետք է վերականգնվի և բոլոր գնացքները պետք է ազատ երթևեկեն: 5. Կողմերը պետք է իրենց ներակայացուցիչներին ուղարկեն Սանահին հարցի միասնական լուծման նպատակով: 6. Ջրահագնացքը պետք է կանգնած մնա Սանահինում և վրաց ծառայողները պետք է հեռանան գրահագնացքից: Այն պետք է անցնի բրիտանական հանձնաժողովի տրամադրությամբ: 7. Ախալքալաքում գործող հայկական փախստականների հանձնաժողովին պետք է թույլատրել շարունակելու իր աշխատանքները»¹⁴: Նույն օրը Գրինի առաջարկությունները հեռագրով Երևան է հաղորդվում: Հարցի հրատապությունից ելնելով՝ Քաջագունին դեկտեմբերի 15-ին կառավարության նիստ է հրավիրում: Նա կառավարության անդամներին հաղորդում է, որ Դրոն հեռագրով հաղորդել է բրիտանական բանակի կապիտան Գրինի խաղաղարար առաջարկությունը: Կառավարությունը, ծանոթանալով անգլիական միջնորդությանը, որոշում է հեռագրել Սանահին, Դրոյին՝ կապիտան Գրինին հաղորդելու, որ Հայաստանի կառավարությունը ըմբռնունով է մոտենում նրա առաջարկություններին, բայց վերջնական պատասխան կտա վաղը, հարցը խորհրդարանում քննարկելուց հետո¹⁵: Նույն օրը երեկոյան խորհրդարանը քննում է հարցը և հավանություն է տալիս բրիտանական միջնորդությանը: Դեկտեմբերի 16-ին Հ. Քաջագունին հեռագրում է Ղարաքիլիսայում գտնվող Ս. Մանասյանին և Մ. Սիլիկյանին. «Փոխանցեք Դրոյին հետևյալը. հաղորդեք կապիտան Գրինին, որ խորհրդարանը, քննարկելով նրա առաջարկությունը և գտնելով այն ընդունելի, հանձնարարեց կառավարությանը պատվիրակներ ուղարկել, որոնք Գրինի և վրաց պատվիրակների հետ կորոշեն ռազմական գործողությունների դադարեցման պայմանները: Բացառիկ անհրաժեշտ ենք համարում մեկ նախապայման. Հայաստանը կարող է իր գործերը դուրս բերել Բորչալուի գավառից միայն այն դեպքում, եթե ստանա,

¹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, ք. 28:

¹⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, ք. 28:

որ ինչպես այդ, այնպես էլ Ախալքալաքի գավառները ապահովված կլինեն վրացական զորքերի հետագա ներխուժումից: Հայաստանի կառավարության լիազորները մեկնելու են վաղը»¹⁶: Հաջորդ օրը Ղարաքիլիսա մեկնեց Հայաստանի կառավարության պատվիրակությունը՝ Մ. Հարությունյանի գլխավորությամբ: Անգլիական այս միջնորդությունը ձախողվեց, որովհետև Վրաստանի կառավարությունը պատվիրակություն չուղարկեց և Գրինին հայտնեց, որ հայկական զորքերն առանց որևէ նախապայմանի պետք է դուրս բերվեն Բորչալուի գավառից: Կապիտան Գրինը վերադարձավ Թիֆլիս և գեներալ Թոմսոնին զեկուցեց կատարվածի մասին: Այս միջնորդությունը չնայած ձախողվեց, բայց ցույց տվեց, որ Հայաստանի կառավարությունը պատրաստ էր հարցը լուծելու փոխադարձ զիջումների ճանապարհով¹⁷: Ինչը, որ չի կարելի ասել Վրաստանի կառավարության մասին: Մերժելով կապիտան Գրինի միջնորդությունը, Վրաստանն, այնուամենայնիվ, չէր մերժում դաշնակիցների հետագա միջնորդությամբ պատերազմը ավարտելու գաղափարը: Նրանք սպասում էին իրադարձությունների՝ այսինքն՝ ռազմական գործողությունների, ընթացքին, որովհետև հույս ունեին, որ իրենք կհաղթեն: Այդ նպատակով ռազմաճակատ էին ուղարկում թարմ ուժեր, որի հնարավորությունը Հայաստանը չուներ: Այդ պատճառով էլ Հայաստանին ձեռնտու էր պատերազմի շուտափույթ ավարտը: Պատերազմող կողմերի միջև մի ուրիշ տարբերություն էլ կար: Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանում այն ուղեկցվում էր կահակական բազմապլան քարոզությամբ: Ծայրահեղ ծանր կացություն էր ստեղծվել Թիֆլիսի հայության համար: Չերբակալությունները, խուզարկություններն ու բռնագրավումները դարձել էին սովորական երևույթ: Ա. Ջամալյանն այդ մասին պարբերաբար տեղեկացնում էր կառավարությանը: Ուրեմն,

¹⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 60, ք. 34:

¹⁷ Այդ է վկայում դեկտեմբերի 18-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարի Վրաստանի կառավարությանը հղած հեռագիրը, որը մնաց անպատասխան:

բացի Հայաստանի շրջափակված ծանր վիճակից, որը երկարատև պատերազմի հնարավորություն չէր տալիս, նաև քիֆի-սահայության տագնապն էր ստիպում Հայաստանի կառավարությանը արագ ավարտելու պատերազմական գործողությունները: Արդեն դեկտեմբերի 18-ին հայկական զորամիավորումները գրավեցին Այրումը, Ախթալան և Բոլնիս-Խաչենը: Այրումի գրավման ժամանակ, բազմաքանակ ռազմական ավարի հետ միասին, գերի ընկավ նաև վրացական մի գումարտակ գնդապետ Էրիստովայի գլխավորությամբ: Այս կռիվներում իրենց ռազմական հմտությամբ աչքի ընկան ռուս հրամանատարներ Նեստերովսկին և Կորոլկովը, որոնք, համապատասխանաբար, գլխավորում էին երեք ուղղությամբ գործող հայկական զորքերի կենտրոն և աջ թևերը: Չախ թևի հրամանատարն էր գնդապետ Տեր-Նիկողոսյանը: Հայաստանի զինվորական միմիստը, գեներալ Հ. Հախավերդյանի վկայությամբ, պատերազմի ամենալուրջ ընդհարումներ տեղի ունեցան դեկտեմբերի 20-22-ին: Այս մարտերում անհաջողություն արձանագրելուց հետո վրացական զորքերի հրամանատար, գեներալ Ծուլուկիձեն նահանջեց Շուլավեր-Սաղախլո ուղղությամբ: Դեկտեմբերի 23-24-ին հայկական զորքերը կտրեցին հակառակորդի դիմադրությունը և գրավեցին Սաղախլուն ու Շուլավերը: Սրանից հետո վրացիները նոր համարում ստացան: Գեներալ Ծուլուկիձենի փոխարինած գեներալ Մագնիևի գործադրած ջանքերը ունեցան միայն այն արդյունքը, որ կանգնեցրին հայկական զորքերի հետագա առաջխաղացումը: Վրաստանի իշխանությունները տեսնելով, որ ռազմական գործողությունները ցանկալի ընթացք չունեցան, անմիջապես դիմեցին դաշնակիցների միջնորդությանը: Ն. Ժորդանիան մի քանի հանդիպումներ ունեցավ Թիֆլիսում Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ և պայմանավորվածություն ձեռք բերեց: Անշուշտ, վրացի քաղաքական գործիչների դաշնակիցները հասկացրին, որ Հայաստանի ուժեղացումը նշանակում է ռուսական դիրքերի ուժեղացում Անդրկովկասում:

Հանգամանք, որն ստեղծված պայմաններում ինչ-որ չափով կողմնորոշեց ու նաև ուղղորդեց նրանց միջնորդական առաքելության քաղաքական տոնայնությունը, որին կանդրադառնանք քիչ հետո: Ինչպիսի՞ն էր Հայաստանի կառավարության դիրքորոշումը ռազմաճակատում ունեցած այս հաջողությունից հետո: Արդյո՞ք նրա համար բարդությ չէր առաջացրել հաջողությունը, և չէ՞ր փոխվել պատերազմը շտապ ավարտելու դիրքորոշումը: Անշուշտ, Հայաստանի կառավարությունը ուրախ էր ռազմական հաջողության համար, բայց այս ամենն ուղեկցվում էր առանց ավելորդ ոգևորության: Եթե ոգևորություն կար էլ, ապա այն չէր կորցրել չափի զգացողությունը, որը քաղաքականության վատթարագույն ուղեկիցն է ու ներքին թշնամին: Այս հանգամանքը ընդգծում են, որպեսզի ընթերցողը տեսնի, որ 1918-20թթ. պատմությունն ունեցել է նաև նման իրատեսական շրջան: Այժմ վերը շարադրվածը փորձեն փաստերով հիմնավորել: Դեկտեմբերի 24-ին ռազմաճակատից ստանալով Սաղախլո-Շուլավեր սահմանագծի գրավման լուրը, Հ. Քաջազունին անմիջապես հրավիրում է կառավարության նիստ: Կառավարությանը ներկայացնելով ռազմական գործողությունների բարեհաջող ընթացքը, վարչապետը նշում է, որ զորքերը գրավել են այն գիծը, որը մենք համարում ենք հայկական տարածք: Այնուհետև նա շարադրում է իր մտեցումները. «Պատերազմը շարունակելու մենք այլևս պատճառ չունենք: Մյուս կողմից, թե արտաքին քաղաքական պայմանները, թե երկրի ներսնտեսական դրությունը և թե գուտ զինվորական դժվարությունները անհրաժեշտ են դարձնում օր առաջ վերջացնել պատերազմը և բացել երկաթուղային հաղորդակցությունը: Այդ ամենին հասնելու համար անհրաժեշտ է բանակցությունների մեջ մտնել Վրաստանի հետ»: Կառավարությունը քննարկելով հայ-վրացական պատերազմի վերաբերյալ Քաջազունու գեկուցումը, որոշում է. ա) ընդունել, որ մեր ներքին և արտաքին կացությունը անհրաժեշտ են դարձնում որքան կարելի է շուտ վերջացնել պատերազմը, բ) նորից դիմել

վրաց կառավարությանը պատվիրակություն ուղարկելու մեր պատվիրակության հետ համաձայնության գալու զինադադարի պայմանների մասին: Հաղորդելով (Վրաստանի կառավարությանը), որ հայկական զորքերին հրաման է տրված չանցնելու Բորչալուի գավառի այն գիծը, ուր վերջանում է Հայաստանին պատկանող տերիտորիայի սահմանը, գ) միջոցներ ձեռք առնել, որ Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչները իրենց կողմից ճնշում գործ դնեն վրաց կառավարության վրա՝ բանակցություններն արագացնելու համար, դ) եթե վրացիք չհամաձայնեն անմիջական բանակցություններ սկսել մեզ հետ, նրանց առաջարկել վեճը հանձնեն արբիտրաժի (ընդունել իբրև արբիտր Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչներին), ե) եթե բանակցությունների ընթացքում պարզվի, որ հակառակորդը չի ընդունում մեր պայմանները և որ բանակցությունները կարող են խզվել այդ պատճառով, զիջումներ անել վրացիներին: Չիջումները կարող են կայանալ հետևյալում. Բորչալուի գավառի այն մասը, որ մենք գրավել ենք, մնում է մեր ձեռքը: Այնտեղ հաստատվում է հայկական ադմինիստրացիա և մնում են հայկական զորքերը: Ախալքալաքի գավառի մասին. համաձայն ենք, որ այնտեղ ժամանակավոր մնան վրացական զորքերը և վրացական քաղաքացիական վարչությունը: Այս ոգով հրահանգներ տալ մեր պատվիրակությանը¹⁸ և մեր ներկայացուցչությանը Թիֆլիսում»¹⁹: Կառավարության նիստի արձանագրությունը մեջ բերեցի ամբողջությամբ, որովհետև այն ցույց է տալիս Հայաստանի կառավարության վերաբերմունքի մանրամասներն ու փոխզիջման գնալու տրամադրվածությունը: Չնայած պատերազմական գործողությունները դեռևս շարունակվում էին, բայց կառավարության նիստում չի հնչել թշնամի արտահայտությունը: Սա հոգեբանական կարևոր դրսևորում է ու տեսանելի է դարձնում, որ կառավարության

համար պատերազմը ոչ թե թշնամանքը խորացնելու, այլ այն հաղթահարելու միջոց էր: Նման մոտեցման համար, թերևս, դեր է խաղացել այն հանգամանքը, որ իրենք հաջողություն ունեին պատերազմում և որ հաղթողը թշնամի չի ունենում: Մեր ոգևորվող ու հիասթափվող քաղաքական հոգեբանության համար նաև շատ կարևոր է, որ ռազմական հաջողությունը չէր կորցրել չափի զգացողությունը: Հայաստանի կառավարությունը ոչ միայն հրահանգել էր զորքերին Սադախլու-Շուլավեր սահմանագիծը չանցնել և սկսել ուղիղ բանակցությունները Վրաստանի հետ, այլև հայտնում է փոխզիջումների մասին իր պատրաստակամությունը: Իհարկե, Հ. Զաչազունու հասցեին մեղադրական ձայներ էին հնչում, որ նա չի ցանկանում ու նաև չի կարողանում ճիշտ օգտվել «հայ քաջարի զորքերի փայլուն հաղթանակից», բայց այդ հոգեբանական գրոհները որևէ չափով չազդեցին կառավարության բռնած սքափ քաղաքական դիրքորոշման վրա: Հայաստանի վարչապետին ավելի շատ հետաքրքրում էր Վրաստանի կողմից շրջափակման վերացումը, որի հետևանքով աշխարհից կտրված Հայաստանը շնչահեղձ էր լինում: Այսպիսով, Հայաստանի համար կարևորվում էր ռազմական հաջողությունն օգտագործել շրջափակումը վերացնելու, Վրաստանի կողմից դրսևորվող թշնամանքը հաղթահարելու ու դրանց հանրագումարով միջպետական նորմալ հարաբերություններ հարևան երկրի հետ հաստատելուն: Հայաստանի կառավարության այս մոտեցումները չէին կարող իրագործվել, եթե Վրաստանի կառավարությունը չփոխեր իր մինչպատերազմյան վերաբերմունքը: Ինչպես հիշում ենք, Վրաստանի կառավարությունը մի կողմից մեղադրում էր Հայաստանին պատերազմը սկսելու համար, ընդգծելով վեճը բանակցություններով լուծելու իր խաղաղարար բնույթը, իսկ մյուս կողմից էլ մերժեց կապիտան Գրինի խաղաղարար միջնորդությունը: Անպատասխան մնաց նաև դեկտեմբերի 18-ին Հայաստանի արտաքին գործերի մինիստրի՝ Վրաստանի կառավարությանն հղած հեռագիրը, որով ա-

¹⁸ Խոսքը վերաբերում է Ղարաբաղիսայում գտնվող Մ. Հարությունյանի գլխավորած պատվիրակությանը:

¹⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, ք. 37:

ուջարկվում էր ընդունել անգլիական միջնորդությունը և սկսել բանակցությունները: Ահա, երբ նրանք տեսան հայկական զորքերի հաջողությունը, որոնք 10 օրվա ընթացքում Լոռու ողջ տարածքը մաքրեցին վրացական զորքերից, ընդունեցին դաշնակիցների միջնորդությունը: Արդեն դեկտեմբերի 25-ին Ն. - Ժորդանիան անգլիական բանակի գեներալ Ռիկրոֆտը և ֆրանսիացի գեներալե-Շարդինը ստորագրում են համաձայնագիր, համաձայն որի «պատերազմական գործողությունը Վրաստանի և Հայաստանի միջև անմիջապես պետք է դադարեցվեն: Բրիտանական և ֆրանսիական սպաներից կազմված հանձնախումբը, վրաց կառավարության ներկայացուցիչների ուղեկցությամբ, պետք է մեկնի ճակատ բացատրելու համաձայնությունը և հսկելու նրա կատարումը»: Այս համաձայնագրի ստորագրման արարողությանը ներկա էր նաև Թիֆլիսում Հայաստանի ներակայացուցիչ Ա. Ջամալյանը, որը հրաժարվում է ստորագրել համաձայնագիրը: Նա նաև բողոքում է համաձայնագրի այն կետի դեմ, որով Ախալքալաքի գավառից վրացական զորքերը դուրս չեն բերվելու: Նույն օրը այս համաձայնագիրը հաղորդվում է Երևան: Թիֆլիսից դուրս եկած այդ պատվիրակությունը դեկտեմբերի 28-ին հասնում է Ղարաբաղի սահմանները և սկսում բանակցությունները այնտեղ գտնվող Հայաստանի պատվիրակության հետ: 1918թ. դեկտեմբերի 30-ի կառավարության նիստում Հ. Քաջազնունին հաղորդում է, որ հեռագիր է ստացել Ղարաբաղիսայում վրացիների հետ բանակցություններ վարող հայկական պատվիրակության ղեկավար Մ. - Հարությունյանից, որով նա հաղորդում է այն մասին, որ դեկտեմբերի 29-ին զինադադարի համաձայնություն է կնքվել Հայաստանի և Վրաստանի միջև²⁰, որը ուժի մեջ է մտնելու դեկտեմբերի 31-ին, ժամը 24-ին:

Հետաքրքիր է, որ զինադադարի այս համաձայնագիրը ստորագրելուց զուգահեռ համալրում ստացած վրացական

զորքերը ուժեղ հարձակում են ձեռնարկում ռազմաճակատի ողջ հատվածով: Ռազմական այս վերջին գործողությունները փոփոխակի հաջողություններով շարունակվում են մինչ դեկտեմբերի 31-ը: Ջինադադարի պայմանագիրը ստորագրելուց հետո այս գործողությունները կողմերից բազում զոհեր խլելուց բացի, ոչինչ չսովեցին, որովհետև զինադադարը կայացավ ու պատերազմը դեկտեմբերի 31-ին, ժամը 12-ին վերջացավ նույն այն վրաց-հայկական սահմանագծում, որտեղ կանգնած էին կողմերի զորքերը դեկտեմբերի 28-ին: Այս անիմաստ տեղապատույտը կատարվեց միայն այն պատճառով, որ Վրաստանի կառավարությունը չէր հաշտվում ստեղծված վիճակի հետ և ձգտում էր բեկում մտցնել ռազմադաշտում մինչև զինադադարի համաձայնագրով կանխորոշված ժամկետը: Դա են վկայում նաև այդ օրերին Վրաստանում խորացող հակահայկական դրսևորումները, որոնք շարունակվեցին մինչև 1919թ. հունվարի կեսերը: Պատերազմի ընթացքում վիրահայության հալածանքների մասին պատմող բազում փաստերից պարզ է դառնում նաև, թե ինչու էր Հայաստանի կառավարությունը ամեն ջանք ու փոխգիծման հնարավորություն օգտագործում պատերազմն ավարտելու, որի հետ կվերջանար նաև այն մղձավանջը, որի մեջ հայտնվել էր Թիֆլիսի հայությունը: 1919թ. հունվարի 8-ին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը Հայաստանի կառավարությանը հղած նամակում այդ ամենը ներկայացնում է այսպես. «Ռեպրեսիաների համար ահազանգ է հանդիսացել ներքին գործերի մինիստր Ն. Ռամիշվիլու գաղտնի շրջաբերականը: Պատերազմի առաջին օրվանից, Հայաստանի Հանրապետության ենթակառուցվածքից ցուցակագրելու անվան տակ, միլիցիայի և հատուկ ջոկատների ներկայացուցիչները սկսում են զիջերային ստուգումները հայերի բնակարաններում, որը վերածվում է իսկական թալանի: Չերբակալվածները կամ հսկայական փրկագնով ազատվում են, կամ արքորվում Քութայիսի մարզանցի հանքերը աշխատանքի: Փակվում է հայկական թերթերի մեծ մասը, իսկ մնացածները

²⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, ք. 41-42:

չեն կարողանում արձագանքել կատարվող հանցագործությունների ամենահասարակ փաստերին: Վրաստանի ազգայնական քերթերը կոչ են անում ամենադաժան պայքար մղել ողջ հայ ժողովրդի դեմ, բռնագրավել նրանց ունեցվածքը և քշել Վրաստանից: Կատարվող քաղաքացիական և հակահայկական քաղաքականությանը «ղասակարգային գիտակցություն» հաղորդելու նպատակով կամպանիան որակեցին վրաց դեմոկրատիայի ու հայ բուժուսանողի միջև պայքար: Ստուգումներ ու բռնագրավումներ կատարվեց Արամյանցի տանը, որտեղ տեղավորված էին Հայոց Ազգային խորհուրդը, հայկական ներկայացուցչությունը, գաղթականության բաժինը և այլ կազմակերպություններ: Դեկտեմբերի 24-ին հրապարակվում է Վրաստանի պառլամենտի օրենքը դավաճանության համար մահապատժի սահմանման և ունեցվածքի բռնագրավման մասին:

Դեկտեմբերի 26-ին հրապարակվում է Թիֆլիսի գեներալ-նահանգապետ Մակլակեյիձեի որոշումը, որը Հայաստանի Հանրապետության հպատակներին և Բորչալուի գավառի այն մասի բնակիչներին, որոնք գրավված են հայկական գործերի կողմից հայտարարում է ռազմագերիներ: Դրանից հետո Թիֆլիսի հայերի վիճակը դառնում է անտանելի: Փակվում են հայերի խանութները և կրպակները, թալանը և ձերբակալությունները հասնում են աննախադեպ չափերի: Արտասահմանյան ներկայացուցիչներից ոչ մեկը ապաստան չի տալիս հետապնդվող հայերին, բացի պարսկական հյուպատոսությունից: Ռուսական ազգային խորհուրդը, որտեղ պատասպարվում էին ռուսահպատակ հայերը, ենթարկվեց խուզարկության ու ձերբակալվեցին նաև այնտեղ պատասպարված հայերը»²¹: Հայոց Ազգային խորհրդի ներկայացրած այս փաստերի իսկությունը ստուգենք Թիֆլիսի ռուսական ազգային խորհրդի նախագահ Ֆ. Լեբեդևի միջոցով: 1918թ. դեկտեմբերի 31-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստրին հղած նամակում

²¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 60, ք. 1-2:

Լեբեդևը գրում է. «Կապված գեներալ-գուբերնատորի օրերս հրապարակված որոշման հետ, որով Հայաստանահպատակ հայերը հայտարարվում են ռազմագերիներ, քաղաքում կատարվում են հայերի զանգվածային ձերբակալություններ ու աքսոր: Իրականում միլիցիայի կողմից ձերբակալվում և աքսորվում են բոլոր հայերը, այդ թվում նաև ռուսահպատակները: Այս ամենի մասին Ձեզ տեղեկացնելով, Անդրկովկասի ռուսական ազգային խորհուրդը հայտարարում է իր ամենախիստ և վճռական բողոքը՝ ընդդեմ Ռուսաստանի հպատակների ձերբակալությունների, որոնք փաստորեն կատարվում են ապօրինաբար, առանց որևէ մեղադրանք ներկայացնելու»²²: Այսպիսի մի բողոք էլ Անդրկովկասի ռուսական ազգային խորհրդի նախագահը Վրաստանի կառավարությանն էր հղել դեկտեմբերի 26-ին, որն, ինչպես երևում է, որևէ ազդեցություն չէր ունեցել: Ականատեսները վկայում են, որ այս ամենը շարունակվել է նաև պատերազմի ավարտից հետո: 1919թ. հունվարի 5-ին տեղի են ունեցել զանգվածային վերջին ձերբակալությունները: Ձերբակալվել են, ի թիվս շատերի, նաև Հ. Թումանյանը, Իոսիֆ Ամիրխանյանը, քիմիկոսներ Ղամբարովը և Քալանթարովը, հոգևորականներ, պետական ծառայողներ: Սրանց մի մասը կալանքից ազատվել է մեծ փրկագին վճարելով (15. 000-ից մինչև 50. 000 ռուբլի): Թիֆլիսի հայության «ղասակարգային ստեղծության» մակարդակի իջեցված անտանելի դրությանը վերաբերող այլ փաստեր չեն բերում, որովհետև պատկերը պարզ է: Կատարվածը նաև հավելյալ մեկնաբանության անհրաժեշտություն չունի: Դարավոր բարեկամության, հարևանության ու նաև նույնադավանության մասին փաստարկներն անտեղի են: Իհարկե, կարելի է բարոյախոսությամբ զբաղվել, բայց դա քաղաքականության հետ ընդհանրապես և Անդրկովկասի տարրողության ու չափումների հետ մասնավորապես որևէ կապ չունի: Օրինակ, ինչի՞ նման կլինի, որ ելնելով վերը

²² Նույն տեղում, ք. 32:

բերած փաստերից, մեղադրենք վրաց. ժողովրդին, որ նա չէր բռնում իր սոցիալ-դեմոկրատ առաջնորդների ձեռքերն ու ասում. «Այս ի՞նչ եք անում եղբայրական հայ ժողովրդի հետ, չե՞ որ մենք դավանակից հարևաններ ենք»: Անիմաստ կլինի, որովհետև պատմության երեկն ու նաև այսօրը չի արձանագրել, որ Անդրկովկասի երեք հանրապետություններից մեկում ժողովուրդը դիմակայի կամ հակադրվի իր առաջնորդների նեղմիտ ու ժողովուրդների համակեցության կանոններն ու նորմերը ոտնահարող քաղաքականությանը: Վրացի ժողովուրդն ի՞նչ աներ, որ Ն. Ժորդանիան, Ն. Ռամիշվիլին, Ի. Ծերաթելին պետական քաղաքականության «մաքուր ազգային» մոդելն ունեին իրենց գլուխներում: Բոլորովին այլ հարց է, որ պետաիրավական օրինաչափությունների հետ գործ չունեցող «մաքուր ազգային» պետություններ ստեղծելու մոդելը երբ կատարում է իր ներքին ավերածությունները, քաղաքական պատասխանատուները, մեղքն իրենցից վանելով, ցուցանում են սեփական ժողովուրդների հակվածությունը: Այսինքն՝ «ժողովուրդն է ուզել, որ մենք նման քաղաքականություն ենք վարել»: Կամ էլ «արել ենք հանուն ազգի»: Այս վերջին ճշմարտանման փաստարկը փակվում է պատասխանատվության մասին հարցադրումների ապազգային միտվածությամբ և սողանցք թողնում կամ դուռ բացում արդեն եղածի շարունակական կրկնության համար նույն ազգային ցուցանակով: Անդրկովկասյան հանրապետությունների դարավերջյան պատկերը ասածներիս հիմնավորումն է: Ուստի, քննադատելով հանդերձ վրացական սոցիալ-դեմոկրատների քաղաքականությունը և նրանց անփոխգիշում դիրքորոշումը Հայաստանի հանդեպ, հարկ է նաև նկատել, որ չնայած այդ ամենին, նրանք, այնուամենայնիվ, հայությանը չքշեցին Թիֆլիսից: Ու պատերազմի ավարտից ընդամենը երկու-երեք ամիս անց վերականգնվեցին Վրաստանի հայության իրավունքները, և նրանց կյանքը մտավ նորմալ հունի մեջ: Այս ամենը նաև նշանակում է, որ 18 օր տևած հայ-վրացական պատերազմը չդարձավ երկու ժողովուրդների միջև

թշնամանքը խորացնելու միջոց: Պատերազմը քննելով քաղաքական, պատմական ու բարոյա-հոգեբանական շարժառիթների հանրագումարով, մենք տեսնում ենք, որ անիմաստ է կողմերին մեղադրելը այն չկանխելու համար: Անիմաստ է նաև կողմերից մեկին հաղթող կամ մյուսին պարտված համարելը: Արխիվային բոլոր փաստերը ցույց են տալիս, որ այս պատերազմում հաղթող ու պարտվող չի եղել: Եղել են բանակցությունների միջոցով չլուծվող խնդիրներ, և պատերազմը ընդամենը դարձավ միջոց այդ խնդիրները ինչ-որ ձևով կարգավորելու: Իհարկե, հայկական զորքերը կարողացան, ազգաբնակչության ակտիվ աջակցությամբ, Լոռու շրջանից դուրս քշել վրացական զորքերին: Սա իրողություն է, բայց այս իրողությունը դեռևս ապացույց չէ, որ պատերազմում Վրաստանը պարտվեց կամ Հայաստանը հաղթեց: Առավել ևս, եթե նկատի ունենանք, որ հաղթանակ հասկացությունն իր մեջ ներառում է պատերազմի արդյունքում կնքված պայմանագիրը: Հաջող գլխում կտեսնենք, որ 1919թ. հունվարի 17-ին Թիֆլիսում կնքված հայ-վրացական պայմանագիրն ընդհանրապես նման մոտեցումների համար տեղ չի թողնում: Ժամանակին տարածում գտած այն տեսակետը, որ Հայաստանի կառավարության չափավորությունն էր պատճառը, որ Դրոն չմտավ Թիֆլիս, ժողովրդական բանահյուսության ժանրից է: Այս պատումի տարածման գործում իր ավանդն ունի նաև վրացական կողմը: Երբ դեկտեմբերի 24-ին հայկական զորքերը հաջողությամբ ավարտեցին Լոռու ազատագրումը, հակառակ կողմը խուճապային տրամադրության մեջ ասեկոսեց, որ հայերը ցանկանում են գրավել Թիֆլիսը: Անշուշտ, դրանով մի կողմից ուզում էին գորքերի մարտական ոգին բարձրացնել, մյուս կողմից էլ արդարացնել վիրահայության հանդեպ իրագործվող բռնարարքները: Իրականությունն այն էր, որ Հայաստանի կառավարության դեկտեմբերի 24-ի նիստը որոշել և հրահանգել էր գորքին Վրաստանի տարածք չմտնել: Ու դրանից հետո հայկական զորքի գործողությունները ստացել էին պաշտպանողական

բնույթ: Դեկտեմբերի 24-ից 31-ը ընկած բախումները եղել են սահմանագծի վրա, որի հետևանքով Սադախուն ու Շուլավերը մի քանի անգամ ձեռքից ձեռք են անցել: Նույնիսկ զինադադարի ժամը լրացավ թե՛ մարտերի պահին և թույլ չտվեց դեկտեմբերի 31-ի զինաբախման հաղթողն ու պարտվողը որոշելու: Պատերազմի ավարտի մասին խոսելիս ամենևին պետք չէ մոռանալ, որ ժամանակն աշխատում էր հոգուտ Վրաստանի: Բայց պատերազմի ավարտի ժամանակը կանխորոշված էր զինադադարի համաձայնությամբ, որի պայմանները հավասարաչափ չէին բավարարում կողմերի հասարակական հակվածությամբ: Պատերազմում կողմերի ունեցած հաջողության կամ անհաջողության մասին խոսելիս նաև պետք է հիշել, որ զինադադարն ու պատերազմի ավարտը պարտադրված էին դաշնակիցների կողմից: Դաշնակիցների միջնորդությունն էլ թույլ չտվեց, որ պատերազմում հաղթող ու պարտվող լինի: Իրադարձությունների ակնառես Ֆ. Մախարաձեն գրում է, որ. «Անգլիան երկու կողմին էլ ստիպեց դադարեցնել պատերազմը, որից կառավարությունը և ողջ ազգային մտավորականությունը ծայրահեղ դժգոհ էր»: Այս դիտարկումը տիպական է, տարողունակ ու նաև կրկնվող (միջնորդություն խնդրող, հետո միջնորդության արդյունքներից դժգոհող ու փոթորկող) Անդրկովկասի հասարակական-քաղաքական դրսևորումներն ընկալելու առումով:

Հետաքրքրությունից գուրկ չէ իմանալը, թե Վրաստանի կառավարությունն ինչու⁶ էր դժգոհում: Հնարավո՞ր է, որ Ն. Ժորդանիան մոռացած լիներ ընդամենը մեկ շաբաթ առաջ (պատերազմի ավարտից) իր հանդիպումները դաշնակիցների ներկայացուցիչների հետ, որի արդյունքում էլ լույս աշխարհ եկավ զինադադարի համաձայնությունը: Անշուշտ, չէր մոռացել: Նաև հիշում էր, որ զինադադարի իր և դաշնակիցների կողմից դեկտեմբերի 25-ին ստորագրած համաձայնագրի դեմ բողոքել ու այն ստորագրելուց հրաժարվել էր Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանը: Եթե Վրաստանի կառավարությունը

դժգոհ էր կատարվածից, ուստի, պետք է հրաժարական տար, այլ ոչ թե միանար հասարակական կարծիքին, որի ազգայնական ու դասակարգային կրքերն ինքն էր ուղղորդել Հայաստանի ու հայության դեմ: Ն. Ժորդանիայի ու իր գլխավորած կառավարության ազգամիջյան հակամարտությունները երկարաձգելու հակվածությամբ է բացատրվում խոսքի ու գործի նման իրարամերժությունը: Հայաստանի կառավարությունից հայ հասարակական կարծիքի դժգոհությունը հասկանալի էր, որովհետև համարժեքություն չկար պատերազմի արդյունքների և զինադադարի պայմանների միջև: Չնայած դրան, Հայաստանի կառավարությունը չի դժգոհել դաշնակիցների խաղաղարար միջնորդությունից: Թերևս, պատճառն այն էր, որ Հայաստանի կառավարությունը խնդիր էր համարում օր առաջ պատերազմը վերջացնելը ու հարևան երկրի հետ հարաբերությունները կարգավորելը: Բայց չէ՞ որ նույն խնդիրը պետք է հետապնդեր նաև Վրաստանը: Այս առումով երկի տեղին է այն հին իմաստությունը, որ «վերջնական ռազմական հաղթանակի չձգտողը չպետք է մտնի պատերազմի մեջ»: Այս մոտեցումն էլ չի բացատրում Վրաստանի դժգոհությունը կատարվածից, որովհետև վրացական զորքերը ընդհանրապես ռազմական հաջողություն չեն ունեցել այս պատերազմում: Ստացվում է, որ Վրաստանի կառավարությունը դժգոհ էր, որ դաշնակիցների միջնորդությամբ վերջ դրվեց հակամարտությանը, որը չէր տեղավորվում իրենց քաղաքական հաշիվների մեջ: Թերևս, հակառակ մղումներից ելնելով, Հայաստանի կառավարությունը ստորագրեց զինադադարի պայմանագիրը և չէր դժգոհում ոչ պատերազմի ավարտից և ոչ էլ դաշնակիցների խաղաղարար միջնորդությունից: Հայաստանի կառավարությունը քաղաքական ռեալությունները ճիշտ գնահատեց և համաձայնեց դաշնակիցների միջնորդությամբ վերջ դնելու պատերազմին և բանակցությունների սեղանի շուրջ փորձելու կարգավորել հայ-վրացական հակամարտությունը: Այսինքն՝ Հայաստանի կառավարության համար պատերազմը միջոց էր Վրաստանի կողմից Հայաստանի շրջափակումը վերացնելու:

Գլուխ 4. ԹԻՖԼԻՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Պատերազմի ավարտից հետո Ղարաքիլիսայում գտնվող հայկական պատվիրակությունը կառավարությունից ցուցում ստացավ մեկնել Թիֆլիս՝ մասնակցելու 1919թ. հունվարին սկսվելիք բանակցություններին: Բանակցությունների առաջին փուլը տեղի ունեցավ հունվարի 9-ից 17-ը և ավարտվեց հունվարի 17-ին կնքված պայմանագրով: Այդ կոնֆերանսում քննարկվեցին և լուծում ստացան միայն տարածքային հարցերը: Հայ-վրացական միջպետական հարաբերությունների հաստատման, տնտեսական, առևտրական և լուծման կարոտ մյուս հարցերի քննարկումը բավականին երկար տևեց և ավարտվեց 1919թ. մարտին: 1919թ. հունվարի 7-ին սկսված կոնֆերանսը նախագահում էր բրիտանական բանակի գեղապետ Ստյուարտը: Կոնֆերանսին մասնակցում էին Վրաստանից՝ Ե. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Ե. Ժուրուլին, գեներալ Գեղևանովը, Կ. Սաբախբարաշվիլին, Կ. Կանդելակին, Ա. Մդիվանին և գեղապետ Ջափարիձեն: Հայաստանի կողմից՝ Մ. Հարությունյանը, Ս. Մամիկոնյանը, գեներալ Ն. Ղորղանյանը, Ս. Խաչատրյանը, Գ. Տեր-Խաչատրյանը և Ա. Խոնդկարյանը: Շուրջ 9 օր տևած կոնֆերանսի աշխատանքներն ընթանում էին շատ լարված: Կողմերը պնդում էին իրենց մինչպատերազմյան մոտեցումները: Հայաստանի կառավարությունն իր պատվիրակությանը ցուցումներ էր տվել, որ փոխզիջումները պետք է կատարվեն ելնելով այն ռեալությունից, որ Լոռին գրավված է հայկական զորքերով, իսկ Ախալքալաքը՝ վրացական: Այս հարցում Հայաստանի պատվիրակությունը հանդի-

պեց մեծ դժվարությունների այն առումով, որ 1918թ. դեկտեմբերի 29-ին Ղարաքիլիսայում ստորագրելով նույն ամսի 25-ին Ն. Ժորղանիայի և դաշնակիցների կողմից կազմած զինադադարի պայմանագիրը, կարծում էր, որ բանակցությունների ժամանակ հնարավոր է դուրս գալ դրա շրջանակներից: Կոնֆերանսի աշխատանքները պարզեցին, որ դա անհնարին է: Օրեր տևած բանավեճերից հետո կոնֆերանսի նախագահ Ստյուարտը հայտարարեց, որ կողմերը պարտավոր են հարգել հոկտեմբերի 29-ին ստորագրված զինադադարի պայմաններն ամբողջությամբ: Փաստորեն, դաշնակիցների ճնշման տակ էլ հայկական պատվիրակությունը հունվարի 17-ին համաձայնեց ստորագրելու պայմանագիրը, որի հիմքում ընկած էին զինադադարի պայմանները: Համաձայն 1919թ. հունվարի 17-ին դաշնակիցների միջնորդությամբ Վրաստանի և Հայաստանի միջև կնքված պայմանագրի, Լոռին հայտարարվում է հայ-վրացական չեզոք գոտի: Չեզոք գոտու սահմանները՝ վրացական կողմից (հյուսիսային) - Սաղախլո, որտեղ Խրամի գետը թափվում է Կուր: Հայկական կողմից (հարավային) - Քոլազերան, Ջալալօղլի - Դսեղ: Սահմանապահ զորամասերի քանակը - 660 զինվոր՝ յուրաքանչյուր կողմից:

- Զինաթափում - կողմերն այն պետք է ավարտեն 1919թ. հունվարի 21-ին:

- Ռազմագերիների փոխանակությունը պետք է կայանա հունվարի 20-ին, Ղարաքիլիսայում:

- Ադմինիստրացիա - չեզոք գոտում հաստատվում է հայ-վրացական ադմինիստրացիա՝ դաշնակիցների վերահսկողությամբ: Բրիտանական հրամանատարությունն իր վրա է վերցնում ադմինիստրացիայի ծախսերը, որոնք հետագայում կդրվեն այն պետության վրա, որին կհանձնվի չեզոք գոտին:

- Ախալքալաքում գործելու է վրացական ադմինիստրացիան՝ դաշնակիցների ներկայացուցիչների վերահսկողությամբ, որն այն իրականացնելու է տեղի հայ և մուսուլման ազ-

գարնակչության միջոցով: Ախալքալաքում Վրաստանն իրավունք ունի պահելու 250 զինվոր¹:

Սա է 1919թ. հունվարի 17-ին կնքված հայ-վրացական պայմանագրի հիմնական բովանդակությունը: Անգեմ աչքով էլ տեսանելի է, որ Վրաստանն իր դաշնակից Գերմանիային կորցնելուց ոչինչ չէր կորցրել քաղաքական առումով: Իհարկե, այս պայմանագիրը համարժեք չէր պատերազմի արդյունքներին, հատկապես Լոռուն վերաբերող մասով: Պատկերացրեք, թե ինչպիսի տրտմությամբ ընդունվեց այս պայմանագիրը Երևանում: Ջինվորական հաջողությունը ստեղծել էր լավատեսական տրամադրություն ու հանկարծ՝ նման ոչ համարժեք արդյունք: Դժգոհություններ կային կառավարությունից և դա հասկանալի էր: Հասկանալի չէ այն, որ Թիֆլիսի այս պայմանագիրը երբեք և ոչ մեկի կողմից չի համեմատվել Բաթումի պայմանագրի հետ: Ո՛չ ժամանակի քաղաքական գործիչները և ո՛չ էլ պատմությամբ զբաղվողները, չգիտես ինչու, չեն ասել, որ «հայ գեները Դրոյի գլխավորությամբ փառահեղ հաղթանակ տարավ, իսկ հայ դիվանագիտությունը Թիֆլիսում խայտառակ պարտություն կրեց»: Սա նշում են որպես դրական երևույթ, որովհետև ինչքան էլ Հայաստանի վիճակը ծանր լիներ, միևնույնն է, Թիֆլիսի պայմանագիրն ստորագրվեց մի շրջանում, երբ քաղաքական իրատեսությունը կամաց-կամաց իր տեղը զիջում էր ազգային ոգևորությունը՝ կապված դաշնակիցների հաղթանակի ու Թուրքիայի պարտության հետ: Երկու կողմն էլ դժգոհ էին Թիֆլիսի կոնֆերանսի աշխատանքներից և դաշնակիցների հարկադրանքով կնքված պայմանագրից: Տարբերությունն այն էր, որ Վրաստանի հասարակական կարծիքը բացահայտ դժգոհում էր դաշնակիցների վերաբերմունքից: Դժգոհության արտահայտության ձևերից մեկը դեկտեմբերի 26-ի Թիֆլիսի նահանգապետի շրջաբերականն էր, որով Վրաստանի հայերը համարվում էին պատերազմի ռազմագե-

րիներ և բռնագրավվում կամ ազգայնացվում էր հայության ունեցվածքը: Պետք է ասել, որ ազգայնացվում էր նաև վրաց ազնվականության ունեցվածքը: Ազգայնացման հարցում վրաց մենշևիկները քիչ էին տարբերվում ռուս բոլշևիկներից, որը և հարուցում էր բազմազգ դժգոհություն: Վրաստանի ազգային գվարդիայի շտաբի պետ Կարցիվաձենն ազգայնացման քաղաքականությունը հրապարակավ համարել է «տխմարություն, որն ունենալու է իր տրամաբանական վախճանը»: Ֆեդերալիստ Թեդո Գլոնտին գտնում էր, որ Վրաստանի կառավարության հրահրած ազգամիջյան ներքին ու արտաքին բախումները թույլ չտվեցին երկրի ներքին կյանքը կազմակերպել²: Դասակարգային ոչինչ չկա այս դիտարկման մեջ, որովհետև «ներքին կյանք» կազմակերպելու անկարողությունը Անդրկովկասի քաղաքական մտքի ընդհանուր ու չբուժվող հիվանդությունն է: Ազգային խտրական քաղաքականությունը, ներքին ու արտաքին բախումները խիստ դժգոհություն էին առաջացնում նաև վրացիների մեջ: Բերենք արխիվային մի փաստաթուղթ, որը տալիս է երկու վրացիների խոսակցությունը սեփական կառավարության վարած քաղաքականության մասին. «Դուք ասում եք, որ մենք պարտավոր ենք պաշտպանել Վրաստանը: Մեզ ուղարկեցին Լոռի, բայց այնտեղ մենք ոչ մի վրացի չտեսանք, որ պաշտպանենք: Ուղարկեցին Սոչի, այնտեղ ևս վրացիներ չկան: Հիմա էլ ուղարկում են Ախալցխա և Ախալքալաք, ասացեք, այնտեղ որքան վրացի կա»³: Նույն փաստաթղթում նշվում է, որ վրացական սպայության շրջանում դժգոհություն կա կառավարության հանդեպ: Ամենայն հավանականությամբ այս տրամադրությունն էր պատճառը, որ բանակի ազգային ոգին բարձրացնելու նպատակով էին տարածել, թե Դրոն ուզում է գրավել Թիֆլիսը: Ու նաև արդարացնելու հայերի հանդեպ կատարված բռնարարքները, բայց այս ամենը Թիֆլիսի պայմանագիրն ստորագրելուց հետո

¹ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, ք. 24-26:

² Т. Глonti, Меншевицская и советская Грузия, Москва, 1923г., с. 12-13:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 76, ք. 22:

գնալով մարեց: Վրացական հասարակական կարծիքի, կառավարության կողմից հրահրված հակահայկական դրսևորումները հանդարտվեցին, երբ պատերազմական գերիները փոխանակվեցին: Վրացի զինվորներն ու սպաները 1919թ. հունվարի վերջին վերադարձան հայրենիք և պատմեցին գերության շրջանում իրենց հանդեպ ցուցաբերած մարդկային ու ոչ թշնամական վերաբերմունքի մասին: Ժողովուրդները միշտ էլ գտնում են կյանքը բնականոն հուն տեղափոխելու իմաստությունը: Ինչպես տեսանք, 1919թ. հունվարի 9-ից սկսված հայ-վրացական կոնֆերանսում քննարկված և հունվարի 17-ին ստորագրված պայմանագիրը վերաբերում էր միայն տարածքային հարցերին: Դաշնակիցները գտան, որ Վրաստանի և Հայաստանի հետագա բանակցություններին իրենց մասնակցությունն անտեղի է: Որոշ ընդմիջումից հետո հայ-վրացական կոնֆերանսը նույն կազմով վերսկսեց իր աշխատանքները: Քննարկման էին դրված միջպետական հարաբերությունների կարգավորման հետևյալ հարցերը. Անկախության փոխադարձ ճանաչումը և դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը: Տարանցիկ առևտրի հարցը: Երկաթուղային հաղորդակցության և փոստ-հեռագրային կապի կարգավորումը: Հայկական կորպուսի գույքի և Հայաստանին պատկանող 13 միլիոն ռուբլի գումարի վերադարձման հարցը: Այն քաղաքացիների ունեցվածքը դուրս բերելու հարցը, որոնք ցանկանում են տեղափոխվել Վրաստանից: Ռուսաստանի և Անդրկովկասի նախկին ունեցվածքի խնդիրները:

Վրաստանի պատվիրակությունը ձգձգում էր բանակցությունները: Փետրվարին Հայաստանի կառավարությունը հրահանգեց իր պատվիրակությանը ավատել բանակցությունները և մարտին վերադառնալ Հայաստան: Բանակցությունների հետագա դրական ընթացքին, թերևս, նպաստեց այն հանգամանքը, որ փետրվարին սրվել էին հարաբերությունները Վրաստանի կառավարության և դաշնակիցների ներկայացուցչության միջև: Նույնիսկ Թիֆլիսում լուրեր էին տարածվել, թե Վրաս-

տանը կարող է ռազմական բախում ունենալ անգլիական զորքերի հետ՝ կապված Սոչիի և Բաթումի խնդիրների հետ: Լարվածությունը կապված էր Սոչիի հետ, որին հավակնում էր Վրաստանի կառավարությունը և ցանկանում էր խաղալով դաշնակիցների հակառուսական տրամադրությունների վրա, հարցը լուծել իր օգտին: Բաթումի կնճիռը կապված էր անգլիական հրամանատարության կողմից շրջանառության մեջ մտցված Հարավարևմտյան հանրապետություն ստեղծելու գաղափարի հետ: Այդ նոր միավորումը, որը կառավարվելու էր անգլիացիների կողմից, իր կազմում ունենալու էր Կարսի մարզը, Արդահանի գավառը, Բաթումի մարզը և Ախալցխայի գավառը: Այս նախագիծը Ն. Ժորդանիային հավասարակշռությունից հանել էր, որը, բնականաբար, փոխանցվել էր իր ղեկավարած կառավարությանը և դարձել հակաբրիտանական տրամադրություն: Խնդիրը կարգավորվում է 1919թ. փետրվարի 15-ին: Հարաբերությունների ծայրահեղ լարվածության մասին է վկայում այն, որ փետրվարի 15-ին հանդիպում են Թիֆլիսի անգլիական և ֆրանսիական բոլոր ներկայացուցիչները՝ գեներալ Ֆորեստ Ուոկլերի գլխավորությամբ և Վրաստանի կառավարության անդամները՝ Ն. Ժորդանիայի գլխավորությամբ: Հանդիպումը տևում է երեք օր: Երկարատև վեճերից և բացատրություններից հետո Ն. Ժորդանիան պնդում է, որ «հարավ-արևմտյան հանրապետության կազմավորման մասին խոսք անգամ չի կարող լինել»: Գեներալ Ուոկլերը վերջապես համաձայնում է Ժորդանիայի առաջարկին, որ Կարսի մարզը բաժանվի Հայաստանի և Վրաստանի միջև: Որպես շնորհակալություն, Ժորդանիան հայտարարում է, որ «անգլիական զորքերի ներկայությունը Կովկասում փրկություն է և որ նրանց հեռանալը մեծ ռիսկոսություն կլինի ողջ երկրամասի համար»⁴: Այս հանդիպումից հետո Հարավարևմտյան հանրապետություն նոր վարչական միավորում ստեղծելու և այն

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.223, ց. 1, գ. 76, ք. 21:

անգլիական ներկայացուցչության ղեկավարությանը հանձնելու ծրագրից անգլիացիները հրաժարվեցին: Վրաստանի կառավարությունը փոխեց վերաբերմունքը հայ-վրացական բանակցությունների հանդեպ: Արդեն փետրվարի վերջին կոնֆերանսը լուրջ տեղաշարժ արձանագրեց ու լուծեց գլխավոր հարցը: Ստորագրվեց փոխադարձաբար անկախությունների ճանաչման և դիվանագիտական հարաբերությունների վերականգնման պայմանագիրը: Մարտի 1-ին համաձայնություն ձեռք բերվեց և անմիջապես ուժի մեջ մտավ փոստ-հեռագրական հաղորդակցության կարգավորման հարցը: Ընդամենը երեք օր հետո կոնֆերանսը նոր հաջողության հասավ, վերականգնվեց երկաթուղային հաղորդակցությունը երկու երկրների միջև: Հայաստանի համար այս համաձայնությունն ուներ կենսական նշանակություն, որովհետև վերջապես վերացվում էր շրջափակումը: Ինչպես հիշում եք, հայ-վրացական խնդրին վերաբերող Հայաստանի կառավարության քննարկումներում կենտրոնական հարցը Վրաստանի կողմից Հայաստանի երկաթուղային շրջափակման վերացումն էր: Այսպիսով, շուրջ տասը երկար ու ձիգ ամիսներ տևած երկու հարևան ժողովուրդների միջև պետական անընթեռնողության խնդիրները հիմնականում լուծվեցին: 1919թ. մարտի 8-ին Թիֆլիսում բացվեց Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը: Հայաստանի կառավարությունը Վրաստանում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Մ. - Թումանյանին: Մարտի 8-ին Վրաստանի կառավարությունը Հայաստանին, իսկ մարտի 24-ին Հայաստանի կառավարությունը Վրաստանին հեռագրեր հղեցին, որով հավաստեցին, որ ճանաչում են միմյանց պետական անկախությունը: Բնականաբար, ընթերցողի մոտ հարց կառաջանա, թե ի՞նչն էր պատճառը, որ փետրվարի վերջին փոխվեց Վրաստանի կառավարության վերաբերմունքը Հայաստանի հանդեպ: Եվ փոխվեց այնպես, որ երկու ամիս փակուղի մտած հայ-վրացական բանակցությունները մնան հաջողություն արձանագրեցին: Վերը

ասվեց, որ վերաբերմունքի փոփոխությունը կապված էր փետրվարի 15-ին դաշնակիցների ներկայացուցիչների ու Վրաստանի կառավարության հանդիպման հետ: Բանն այն է, որ հունվար-փետրվար ամիսներին Հայաստանի վիճակը գնալով սաստկանում էր: Սովն ու համաճարակային հիվանդությունները հազարավոր կյանքեր էին խլում: Այս պատկերը դաշնակիցների ներկայացուցիչների առաջ դրին Հայաստանի խորհրդարանի պատվիրակները, որոնք այդ նպատակով Թիֆլիս էին եկել հունվարի վերջին: Հացի չնչին պաշարները վերջանում էին, ու սկսվելու էր համատարած սովը: Խորհրդարանի նախագահ Ա. Սահակյանը դաշնակիցների հետ հանդիպման ժամանակ նշում է, որ «Կարսի կողմից անհրաժեշտ է շտապ պարենի մատակարարում, որովհետև, եթե երկու շաբաթից օգնությունը չհասնի Հայաստան, ապա մեկ ամսվա ընթացքում սովից կմահանա ազգաբնակչության կեսը»: Թող, որ մի քիչ չափազանցված ու ազդեցություն թողնելու համար գծագրված լինի այս պատկերը, բայց, այնուամենայնիվ, դրությունը օրհասական էր: Ու այդ ամենի համար հայտնի չափով մեղավոր էր Վրաստանի կառավարությունը: Շրջափակման հետ միասին վերջինս փակել էր նաև Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությունը ու ոչ մի կերպ չէր համաձայնում այն բացել: Հայաստանի խորհրդարանի պատվիրակության հանդիպումներն ու սովամահ լինող ժողովրդի վիճակի նկարագրությունը ծանր տպավորություն էր թողել դաշնակիցների Թիֆլիսի ներկայացուցչության անդամների վրա: Ահա, փետրվարի 15-ին, Վրաստանի կառավարության ու դաշնակիցների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ գեներալ Ուոկլերը անդրադառնում է նաև Հայաստանի հանդեպ Վրաստանի վերաբերմունքին և դրա հետևանքներին: Նա նշել է, որ իրենք եկել են Անդրկովկասում ազգամիջյան նորմալ հարաբերություններ հաստատելու: Խոսելով այն մասին, որ Վրաստանի կառավարությունը իրավունք չունի արգելելու Հայաստանի ներկայացուցչության գործունեությունը, Ուոկլերը նշել է, որ

«եթե Վրաստանը չի թույլատրի Հայաստանի ներկայացուցչությունը, ապա այն կընդունվի դաշնակիցների ներկայացուցչության կողմից»⁵: Նման կտրուկ հարցադրումը չէր կարող ազդեցություն չթողնել Վրաստանի կառավարության վրա: Այդ հանդիպմանն անդրադառնալիս նշեցինք, որ վրացական կողմին հիմնականում անհանգստացնում էր Հարավարևմտյան հանրապետության ստեղծման անգլիացիների նախագիծը: Ժորդանիան պնդում էր, որ Կարսի մարզը բաժանվի Հայաստանի և Վրաստանի միջև: Ու քանի որ անգլիական ներկայացուցիչները այս հարցում համաձայնեցին, Վրաստանը պետք է փոխեր իր վերաբերմունքը Հայաստանի հանդեպ, որպեսզի վերջինս չդիմակայեր այդ ծրագրի իրականացմանը: Այս ամենին գումարվում էին նաև հասարակական կարծիքի դրսևորումները: Ինչքան էլ, որ Ն. Ժորդանիան ջանում էր հիմնավորել Հայաստանի և հայության հանդեպ իր կառավարության վերաբերմունքը, միևնույնն է ժողովուրդը տեսավ և հասկացավ, որ ոչ Դրոն էր ուզում Թիֆլիսը գրավել և ոչ էլ «հայ բուրժուազիան է մեղավոր վրաց ժողովրդի ծանր վիճակի համար»: Այստեղ հարկ եմ համարում նկատել, որ Անդրկովկասի քաղաքական առաջնորդներին հաջողվում է իրենց պետական անկարողությունը քողարկել ազգամիջյան թշնամանքի դրսևորումներով, բայց ժողովրդին շեղել բազմազգ համակեցության բնականոնությունից իրենց շեղվածության ազգային-հեղափոխական աստիճանով, նրանց, այնուամենայնիվ, չի հաջողվում: Հայ-վրացական պատերազմից հետո վրացի զինվորների երկխոսությունը վերը բերելով, արդեն ասել եմ, թե վրացի զինվորներն ինչպես էին վերաբերում հայ-վրացական հարաբերություններին: Ու նաև հայ բուրժուազիային ցուցանելով վրացական սոցիալ-դեմոկրատական կառավարությանը չհաջողվեց քողարկել վրացական ազնվականության հանդեպ ցուցաբերած իր դասակարգային վերաբերմունքի իրական շար-

⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 223, ց. 1, գ. 75, ք. 21:

ժառիթները: Դաշնակիցների ներկայացուցիչներին երկու-երեք ամիս էր անհրաժեշտ տեսնելու ու նաև հասկանալու, որ հայերի ռուսական կողմնորոշումը Ն. Ժորդանիան և իր կառավարությունը վարպետորեն օգտագործում են քաղաքական նպատակներով: Եվ որ ռուս բոլշևիկների իրական ու դասակարգային դաշնակիցները Անդրկովկասում վրացի մենշևիկներն են՝ ազգային քողի տակ: Այս խորքային դրսևորումը տեսանելի դարձավ, երբ 1919թ. փետրվարին Վրաստանի կառավարությունը բացահայտեց իր թշնամական վերաբերմունքը Դենիկինի հանդեպ: Պատճառն այն էր, որ վերջինս մտել էր Աբխազիա, և Վրաստանը դաշնակիցներից պահանջում էր ազդել Դենիկինի վրա, որը ոչ մի կերպ չէր մտնում նրանց քաղաքական հաշիվների մեջ: Հանգամանքն այս դաշնակիցներին ցույց տվեց, որ վրացի մենշևիկների հակառուսական դրսևորումները հիմնականում բոլշևիկ-մենշևիկ վեճի ռուսական տարողության կնիքն ունեն ընդամենը և ոչ ավելին: Դաշնակիցների հետ հարաբերությունները լարված էին նաև Վրաստանի վարած տնտեսական քաղաքականության հետևանքով: Հատկապես անգլիական ներկայացուցիչները լրջորեն մեղադրում էին Վրաստանի կառավարությանը. «տնտեսության արագ ու չմտածված ազգայնացման համար, այն համարելով հեղափոխական անմտություն»: Այս խնդիրներով էլ 1919թ. փետրվար ամսին Վրաստանի կառավարությունն զբաղված էր դաշնակիցների հետ հարաբերություններ պարզելու ժամանակ, որի արդյունքում փոխվեց նաև վերաբերմունքը Հայաստանի հանդեպ:

1919թ. մարտից սկսվեցին, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ հաստատվեցին միջպետական տանելի հարաբերություններ: Մինչ այս կողմերի ոչ համարժեք վերաբերմունքի մասին է խոսում այն փաստը, որ 1919թ. մարտի 8-ին Հայաստանի կառավարությանը հղած հեռագրում նշվում է, թե Վրաստանը ճանաչում է Հայաստանի անկախությունը, 1919թ. մարտի 24-ի Հայաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Տիգրանյանի պա-

տասխան հեռագրում ընդգծված է, որ «Հայաստանը ճանաչելու ճանաչում է Վրաստանի Հանրապետության անկախությունը»:

1918թ. հունիսից մինչ 1919թ. մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանի և Վրաստանի կապերի միակողմ լինելն ու ոչ համարժեքությունը մատնանշում են, որովհետև ժամանակակիցներն իրենց հուշերում կամ գրություններում փաստում են, որ 1919թ. մարտին վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները: Այսպիսի մոտեցումները ճիշտ կարող էին նկատվել միայն Հայաստանի համար, որն, ինչպես տեսանք արտաքին գործերի մինիստրի մարտի 24-ի ուղերձից, «ճանաչելու ճանաչում է Վրաստանի անկախությունը»: Այսինքն՝ Հայաստանի կառավարությունը միակողմանի հարաբերություն է ունեցել մինչև պատերազմը: Այն ընդհատվել է ու վերսկսվել 1919թ. մարտի 4-ի համաձայնությամբ: Վրացական կողմից նման հարաբերություններ չեն եղել: 1918թ. հոկտեմբերի 29-ին Ս. Մոլիվանին Հայաստան էր ուղարկվել հայ-վրացական սահմանավեճի շուրջ բանակցություններ վարելու, և երբ ամիս ու կես տևած բանակցությունները արդյունք չտվեցին ու սկսվեցին պատերազմական գործողությունները, նա վերադարձավ Վրաստան: Այդ պատճառով էլ Ս. Մոլիվանու Երևանյան առաքելությունը չպետք է շփոթել կամ նկատել ինչպես Վրաստանի կողմից Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատում: Ուստի, 1919թ. մարտին Վրաստանի ու Հայաստանի միջև ոչ թե վերահաստատվեցին, այլ հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Որից հետո Հայաստանն անմիջապես՝ մարտի 8-ին, վերաբացեց իր ներկայացուցչությունը Թիֆլիսում և Ա. Ջամալյանի փոխարեն Ա. Թումանյանին նշանակեց դիվանագիտական ներկայացուցիչ: Դրանից հետո էլ Վրաստանը միայն հունիսին հայտնեց Հայաստանի կառավարությանը, որ Գ. Մախարաձեին նշանակում է Հայաստանում դիվանագիտական ներկայացուցիչ:

1919թ. զարմանը հայ-վրացական հարաբերությունների կարգավորման գործում զգալի դեր խաղաց այն հանգամանքը, որ անգլիական հրամանատարությունն ստանձնեց երեք հանրապետությունների տարածքային վեճերի արբիտրությունն ամբողջությամբ: Մարտի 14-ին անգլիական բանակի գեներալ Բիչը հայտնում է Հայաստանի կառավարությանը, որ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև եղած տարածքային խնդիրները կարգավորելու նպատակով ստեղծվում է անդրկովկասյան կոմիտե՝ գեներալ Վ. Թոմսոնի գլխավորությամբ⁶: Գրության մեջ նշված է, որ կոմիտեն ժամանակավոր է ու նրա ընդունած որոշումները ուժի մեջ են լինելու մինչև Փարիզի կոնֆերանսի ավարտը: Կոմիտեն իր կազմում ունենալու էր յուրաքանչյուր հանրապետությունից երկուական ներկայացուցիչ: Գեներալ Վ. Թոմսոնի գլխավորած կոմիտեն ապրիլի 6-ին Թիֆլիսում գումարեց առաջին խորհրդակցությունը, որի քննարկած հարցերի մասին նույն օրը Թոմսոնը հաղորդում է հանրապետությունների ղեկավարներին: Հայաստանի կառավարության նախագահին հղած հեռագրում Վ. Թոմսոնը նշում է շուտափույթ լուծման ենթակա հետևյալ խնդիրները. «1. Ամենակարևոր խնդիրն է Կարսի և Նախիջևանի փախստականներին վերադարձնել իրենց տեղերը: 2. Փախստականների վերադարձից հետո, որը ես հույս ունեմ կավարտվի այս ամսվա վերջին, անգլիական զորքերը ետ կկանգվեն Կարսից և Նախիջևանից, բայց միսիաները կմնան: Դրա համար ասնհրաժեշտ է, մինչև մայիսի 1-ը, բոլոր այդ շրջաններում կազմակերպվեն աղմինիստրացիաներ և պաշտպանության համար անհրաժեշտ քանակությամբ հայկական զորքեր: 3. Գաղթականների վերադարձը պետք է տեղի ունենա առանց ազգային խտրականության, առանց բռնությունների ու արյունահեղության: Հավատացած են, որ անգլիական զորքերի աջակցությամբ, այս սկզբունքներով առաջնորդվելով, դուք կհասնեք

⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 62, ք. 60:

ցանկալի արդյունքի»⁷: Թոմսոնը նաև նշում է, որ գեներալ Դ-
կին կշարունակի Կարսի կառավարումը մինչև վերը նշված
հարցերը կարգավորելուց հետո այն Հայաստանին հանձնելը:
Ապրիլի 16-ին Վրաստանի և Հայաստանի կառավարություն-
ներին Թոմսոնը հայտնում է «տարածքների ժամանակավոր
բաժանման» իր որոշումը, համաձայն որի՝ Ախալքալաքի գա-
վառը և Արդահանի գավառի Կուր գետով ջրբաժանվող ձա-
խափնյա մասը հանձնվում են Վրաստանի կառավարմանը:
Կարսի մարզը և Կաղզվանը հանձնվում են Հայաստանի կա-
ռավարմանը: Հայաստանին է հանձնվում նաև Նախիջևանի
գավառը: Գեներալ Թոմսոնի ապրիլի 16-ի որոշման մեջ հա-
տուկ կետով նշված է նաև, որ Լոռու չեզոք գոտին՝ Դեբեդ գետի
ջրբաժան գծով, հյուսիսային մասով տրվում է Վրաստանին,
իսկ հարավային մասով՝ Հայաստանին⁸: Չնայած դրան, հե-
տագա մեկ տարում այնտեղ գործում են «չոզոք գոտու» այն
սկզբունքները, որոնք որոշվել էին 1919թ. հունվարի 17-ի հայ-
վրացական պայմանագրով: Ամենայն հավանականությամբ
Թոմսոնի ապրիլի 16-ի որոշումը հետագա խմբագրումների է
ենթարկվել բրիտանական հրամանատարության կողմից: Այդ
մասին ապրիլի 18-ին Թոմսոնը կողմերին հղում է հետևյալ հե-
ռագիրը. «Վրաստանի և Հայաստանի միջև սահմանների ժա-
մանակավոր որոշումը պետք է հետաձգել մինչև գեներալ Ջորջ
Մյունի գալը: Նա Թիֆլիս է ժամանելու ապրիլի 24-ին»⁹: Մեզ
չհաջողվեց ճշտել, թե բրիտանական զորքերի գլխավոր հրա-
մանատարը Թիֆլիս ժամանելով ի՞նչ հրահանգներ է տվել,
բայց Թոմսոնի գրությունից երևում է, որ հայ-վրացական սահ-
մանների վերաբերյալ ապրիլի 16-ի որոշումից դժգոհող կողմ է
եղել: Սա հաստատվում է նաև այն փաստով, որ համաձայն
Թոմսոնի ապրիլի 16-ի որոշման, Արդահանի գավառի ա-
ջափնյա մասը հանձնվելու էր Բաթումի գեներալ-նահանգա-

⁷ Նույն տեղում, ք. 74:

⁸ Նույն տեղում, ք. 70:

⁹ Նույն տեղում, ք. 71:

պետի կառավարմանը, իսկ իրականում այն հանձնվեց Հա-
յաստանին:

Ապրիլի 28-ին Հայաստան են գալիս Մերձավոր Արևելքում
անգլիական զորքերի հրամանատար Ջ. Միլնը և Վ. Թոմսոնը:
Այս ամենը հիմք է տալիս նշելու, որ գեներալ Թոմսոնի ապրիլի
16-ի որոշմանը նախորդել և հաջորդել են կողմերի տարակար-
ծությունները: Այ. Խատիսյանը վկայում է, որ այդ խնդիրները
կարգավորելու համար ինքը Թիֆլիսում բանակցություններ է
վարել դաշնակիցների և վրացական կողմի հետ: Հայաստանի
վարչապետի պաշտոնակատարը նաև նշում է, որ վրացական
կողմը պահանջում էր Արդահանի գավառը, և բանակցությու-
նների ժամանակ երբեք չի նկատվել, որ «ներսնք աչք ունեն
Կարսի և Կաղզվանի վրա»¹⁰: Վերը խոսել ենք այն մասին, որ
Վրաստանի կառավարության և անձամբ Ն. Ժորդանիայի
դիրքորոշումը մեծ դեր խաղաց, որ անգլիական հրամանատա-
րությունը ձեռք քաշի «Հարավարևմտյան հանրապետության»
գաղափարից: Փետրվարի 15-ին Ժորդանիան Անդրկովկասում
անգլիական զորքերի հրամանատար Ֆորեստ Ուոկկերից
պարզապես պահանջեց ձեռք քաշել Կարսի մարզը Թուրքիա-
յին հանձնելու կամ էլ Կարս մայրաքաղաքով Հա-
րավարևմտյան հանրապետությունը անգլիական գեներալ-
նահանգապետությանը ենթարկելու մտքից¹¹: Այս հարցի հետ
կապված հարկ է նկատել, որ մինչև 1919թ. մարտ-ապրիլ ա-
միսները անգլիական հրամանատարությունը չէր ցանկանում
Կարսի մարզը հանձնել Հայաստանին: Նման մտտեցումը
պայմանավորված էր հայերի ռուսական կողմնորոշման քա-
ղաքական վարքագծով: Անշուշտ, այս տարածում գտած դի-
տարկումը ճշմարտությունից հեռու չէր, որի տեսանելի դրսևո-

¹⁰ Այ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968թ., էջ 91:

¹¹ Թուրքական զորքերի հեռանալուց հետո երկու ինքնակոչ հանրապետություն-
ներ էին գործում: Դրանցից մեկը վերը նշած «Հարավարևմտյանն» էր Կարս կենտրո-
նով, իսկ մյուսը՝ «Արաքսյան հանրապետությունը» Շարուր-Նախիջևան տարածքով
կենտրոնը Նախիջևան:

րումն էր Դեմիկիճի ներկայացուցչությունը Երևանում՝ գնդապետ Ջինկևիչի գլխավորությամբ: Իրողություն էր նաև, որ Ֆ. Ոսկկերի պահանջով Դեմիկիճի ներկայացուցչությունը հեռացվեց Հայաստանից: Սրանց կողքին նաև կար այն իրողությունը, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումից հետո հայ քաղաքական միտքը ամբողջապես թեքվել էր դեպի Եվրոպա ու չէր հասկանում Անգլիայի թրքամետ քաղաքականության տեսանկյունի դրսևորումները: Այս բոլորը արևմտյան տերություններին հասցնելու նպատակով 1919թ. մարտի 6-ին Ս. Տիգրանյանը ընդարձակ նամակ է հղում Փարիզի վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը: Արտաքին գործերի մինիստրի այդ նամակում հանգամանորեն պատկերված է բրիտանական ներկայացուցչության ընդգծված թրքամետ քաղաքականությունը: Այս հարցում նույնպիսի ակտիվություն և գրեթե նույն մոտեցումն էր դրսևորում Վրաստանի կառավարությունը: Այս ամենի արդյունքում էլ դաշնակիցները փոխեցին իրենց մոտեցումները և 1919թ. ապրիլին որոշեցին Կարսի մարզը բաժանել Հայաստանի և Վրաստանի միջև (արդեն հիշատակված ջրբաժանով):

Այս իրադարձություններից հետո, ավելի քան մեկ տարի, հայ-վրացական տարածքային վեճերը դուրս եկան օրակարգից: Իհարկե, առանձին բողոքներ ու դժգոհություններ լինում էին, բայց դրանք բնական էին ու չէին ազդում միջպետական կարգավորիչ հարաբերությունների վրա: Հայաստանի ու Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերություններն ավելի դինամիկ բնույթ ստացան, երբ 1919թ. օգոստոսին Հայաստան եկավ Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Գերասիմ Մախարաձեն: Նրա ջանքերով արագացվեց Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող «տրանզիտի մասին» պայմանագրի ընդունումը: Այն ստորագրվեց 1919թ. նոյեմբերի 3-ին Թիֆլիսում: Համաձայն այդ պայմանագրի, «Հայաստանի ու Վրաստանի միջև սահմանվում է եր-

կաթուղային բեռների փոխանակման ազատ տրանզիտ»¹²: Այս քայլը Վրաստանի կառավարության կողմից բարի կամքի դրսևորում էր և մեծ նշանակություն ուներ աշխարհի հետ կապող մեկ գործող երկաթուղային ճանապարհ ունեցող Հայաստանի Հանրապետության համար: Հայաստանի հանդեպ դաշնակիցների ներկայացուցչության և Վրաստանի կառավարության դրական ու փոխկապակցված փոփոխությունները պարզապես փրկարար դերակատարություն ունեցան: 1919թ. նոյեմբերի 14-ին Հայաստանի և Վրաստանի կառավարությունների ներկայացուցիչները Թիֆլիսում ստորագրեցին «Խաղաղության պայմանագիրը»: Այդ պայմանագիրը կողմերին պարտավորեցնում էր հետագա բոլոր վեճերը լուծել միայն խաղաղ եղանակներով կամ արբիտրաժի միջոցով: 1919թ. նոյեմբերի 20-ին Հայաստանի կառավարության անդամ Ս. Արարատյանը հեռագրով Թիֆլիսում գտնվող Ալ. Խատիսյանին հայտնում է, որ «ի նշանավորումը նոյեմբերի 14-ի դաշնագրի, կառավարությունը Երևանում ճաշկերույթ է կազմակերպել, Վրաստանի դեսպանատան աշխատակիցների մասնակցությամբ»¹³: Այս պայմանագիրը միջպետական բնականոն հարաբերությունները կարողացավ կարգավորել մինչև 1920թ. «հեղափոխական» տեղաշարժերի փորձությունը:

Ավարտելով Հայաստանի և Վրաստանի միջև միջպետական հարաբերությունների հաստատմանը վերաբերող շարադրանքը, հարկ եմ համարում նշել, որ հարցի կարգավորումը կողմերից խլեց ուղիղ մեկ տարի: Շա՞տ էր մեկ տարին, թե՞ քիչ՝ կրքերը հանդարտելու և նորաստեղծ հարևան պետությունների միջև բնականոն հարաբերություններ հաստատելու համար: Դժվար ու նաև անիմաստ է այս հարցին պատասխանել, որովհետև կարևորը կատարվածի քաղաքական դասերն են: Պատմության՝ վատ ուսուցիչ լինելու խորհուրդը թաքնված է նրա տված դասերը ճիշտ չյուրացնելու մեջ: Նաև այդ պատ-

¹² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 487, ք. 104:

¹³ Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 178, ք. 140:

ճառով է, որ Անդրկովկասում պատմությունը քայլում է ներկայի հետ և ապագան նմանեցնում անցյալին: Արդյունքում Անդրկովկասի պետությունները չեն կարողանում թոթափել մինչպետական շրջանի հոգեբանությունն ու գործելակերպը: Պետությունը միջազգայնորեն ճանաչված տարածքն է ու նրանում բնակվող քաղաքացին: Այս քաղաքական սինթեզված կանոնը չհարգելու ազգային հակվածությունն Անդրկովկասը դարձնում է օրինաչափությունից դուրս տարածաշրջան: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային ու նաև պատմական կուտակված խնդիրների մասին Անդրկովկասի քաղաքական գործիչների մտածումներն ու դատողությունները սեփական անկատար արարքներն արդարացնելու միջոց են: Այս ամենի շարունակական կրկնությունն էլ անհրաժեշտություն է դարձնում քաղաքական շարժի ներքին որակական դրսևորումների քննարկումը: Տվյալ առումով հայ-վրացական պատերազմը շատ ուսանելի է: Առաջինը լինելով, այն ցույց է տալիս կայսերական շրջանում ձևավորված ազգամիջյան հարաբերությունների արժեքային համակարգի սնանկությունը պետական մակարդակում: Սա հայ-վրացական պատերազմի թերևս գլխավոր դասն է, որից ճյուղավորվում ու ածանցվում են սույն պատճառի հետևանքները: Բանն այն է, որ ցանկացած կայսրություն իր տիրապետության տակ ապրող ժողովուրդներին ներարկում է չափավոր ազգային գիտակցություն՝ նրանց իրար դեմ տրամադրելու հասկանալի նպատակով: Տասնամյակների ընթացքում այդ ամենը դառնում է քաղաքական գիտակցություն տվյալ ազգերի առաջնորդների համար: Եթե սրան գումարենք նաև այն հանգամանքը, որ Անդրկովկասի քաղաքական կուտակությունները հիմնականում ծնվել ու սնվել են ռուսական քաղաքական այլազան դրսևորումներից, պատկերը պարզ կդառնա: Այս ամենն ունենում է այն տխուր հետևանքը, որ կայսրության անկումից հետո ազգային հեղափոխական ուժերը դառնում են դրության տերը: Ու նրանք, բնականաբար, գործում են նախկին մոտեցումներով և արդ-

յունքում ազգամիջյան հարաբերությունների մինչպետական շրջանի վարքագիծը դարձնում են պետական քաղաքականություն: Թշնամանք, հակադրություն, անիմաստ ու աննպատակ պատերազմներ ու՝ միջնադար: Հետո էլ զարմանում ու զայրանում են, երբ պարզ է դառնում այդ ամենի անարդյունք ու ինքնակործան հետևանքները: Առաջին զարմացողն ու զայրացողը Վրաստանի կառավարության նախագահ Ն. Ժորդանիան էր: 1918թ. դեկտեմբերի 17-ին Վրաստանի խորհրդարանում վերլուծելով հայ-վրացական պատերազմի պատճառները, նա նույնիսկ զայրույթով հարցնում է, թե ինչպե՞ս եղավ, որ միջին դարերում հայ-վրացական պատերազմներ չեղան, իսկ 20-րդ դարում այն հնարավոր դարձավ: Եվ իհարկե, Ժորդանիան գիտեր այս հարցի ամբողջական պատասխանը: Անգիջում դիրքորոշումը հենց մինչպետական շրջանին բնորոշ գործելակերպ է: Պատասխանատվությունը և կողմերի սխալականության չափը որոշում էր կենտրոնական իշխանությունը: Այսինքն՝ սեփական սխալն ընդունելու ու այն շտկելու գիտակցությունը իրավասուբյեկտին է բնորոշ: Հարաբերությունների օբյեկտին բնորոշ չէ նման մոտեցումը, որովհետև նա իր թույլ տված սխալների պատճառները փնտրում է դրսում: Այսինքն՝ ինչպես Վրաստանն, այնպես էլ Հայաստանը պետության իրավասուբյեկտային պատասխանատվության կրողները չէին: Բոլորովին կարևոր չէ, որ նրանք դեռևս միջազգային իրավունքի սուբյեկտներ չէին: Կարևորն այն է, որ նրանք իրենց հռչակել էին անկախ պետություններ, բայց գործում էին պետությամբ ոչ համապատասխան նախկին չափանիշներով: Ասածներին վկայությունն է, որ պատերազմն սկսելուց ընդամենը մի քանի օր հետո, երբ բրիտանական բանակի կապիտան Գրինը հանդես եկավ այն դադարեցնելու միջնորդությամբ, Հայաստանի կառավարությունն անմիջապես համաձայնեց այդ առաջարկին: Տասն օր հետո Վրաստանի կառավարությունը ևս համաձայնեց ղաշնակիցների միջնորդությամբ վերջացնել պատերազմական գործողությունները և նստել բանակցու-

յունների սեղանի շուրջ: Այս օրինակը ցույց է տալիս, որ կողմերը դեռևս ինքնուրույն պետություններ չէին հոգեբանորեն, և մեկը պետք էր, որ նրանց հաշտեցներ: Այստեղից էլ բխում է, որ այդ պատերազմն անհիմաստ էր ու հետևանք նախորդ շրջանի վեճը մեխանիկորեն կամ իներցիայի ուժով պետական քաղաքականության դաշտ տեղափոխելու: Այլապես կողմերն այդքան հեշտությամբ չէին ենթարկվի դաշնակիցների միջնորդությանը: Այսինքն՝ կողմերը հակված էին խաղաղության, բայց իրենք չկարողացան սեփական ջանքերով ու պետական իմաստնությամբ հարցը կարգավորել, որովհետև սովոր էին, որ իրենց վեճը մեկ ուրիշը պետք է լուծի: Դրա մասին է խոսում նաև կողմերի դժգոհությունը դաշնակիցների միջնորդությունից: Սա էլ հին հիվանդության դրսևորում էր, որովհետև կողմերից յուրաքանչյուրը ցանկանում էր, որ միջնորդներն իր շահերը պաշտպանեին: Ու ամեն մեկն ուներ նման մոտեցման իր հիմնավորումը: Այդպես էլ պետք է լիներ, որովհետև տեսանելի էր դարձել, որ պատերազմն անհիմաստ էր ու փաստորեն վեճը չլուծեց: Մեղավորն ո՞վ էր, կողմերը միաբերան ասում էին՝ իհարկե, դաշնակիցները: Պետական սկզբունքներին ու մոտեցումներին անհարիր նման դրսևորումները կատարվածի համար պատասխանատու խոսակցությունները բացառելու համար էին, որ հետագայում ծանր հետևանքներ ունեցան: Կատարվածից համապատասխան հետևություն չանելը հանգեցրեց նրան, որ հայ-վրացական տարածքային վեճը գրեթե նույնությամբ կրկնվեց 1920թ. աշնանը: Եղածից դասեր չքաղելը հանգեցրեց անկախության վախճանին ու բացահայտեց միջնորդների միջոցով սեփական հարցեր լուծելու քաղաքական մտայնության սնանկությունը: Այս առումով էլ հետաքրքիր է տեսնել կողմերի վերաբերմունքը դաշնակիցների հանդեպ: Վրացական կողմը մեղադրում էր դաշնակիցներին, որ, իբր, նրանք Հայաստանի դաշնակիցներն են և վատ աչքով են նայում Վրաստանին, որպես պարտված Գերմանիայի դաշնակցի: Վրացական կողմի նման դիտարկումները համարժեք չէին

այն պայմանագրին, որը ստորագրվեց դաշնակիցների միջնորդությամբ: Չնայած դրան, նրանք պնդում էին այդ հակաճշմարտությունը: Հետաքրքիր է, որ այս միտքը հայ դիվանագետներին անընդհատ ասում էին նաև Թուրքիայի և Ադրբեջանի ներկայացուցիչները: Դաշնակիցների միջնորդությունը հայ-վրացական պատերազմին արձագանքում և ցույց էր տալիս, որ նման բան գոյություն չունի: Ուստի, կարևոր է, թե արձանագրված փաստի և ականջաշոյ հոգեբանական գրոհի իրարամերժությանն ինչպես էին վերաբերում Հայաստանի կառավարությունը և քաղաքական ուժերը: Այս խնդիրն իր կարևորությամբ հավասարազոր ու նաև բազում թելերով կապված է քաղաքական մտայնության ու հակվածության մինչպետական շրջանի գործոնի հետ: Նկատի ունեն տերությունների միջնորդությամբ ու օգնությամբ «հայկական հարցը» լուծելուն ուղղված 1878-1915թթ. ձախողված փորձը: Արդյո՞ք այդ փորձից համապատասխան դասեր քաղել էին Հայաստանի ղեկավարները, որոնց մեծ մասը այդ մինչպետական շրջանի քաղաքականության իրագործողներն էին եղել: Ահա, այդ կետարյա փորձին գումարվել էր նաև հայ-վրացական պատերազմին դաշնակիցների միջնորդության նորօրյա փաստը: Ավելի տեսանելի ու նաև ուսանելի գործոն, որը Հայաստանի կառավարությանը հուշում էր ձեռք քաշել միջնորդությամբ հարց լուծելու քաղաքական հակվածությունից, դժվար է գտնել: Փաստերն ասում էին, որ հաղթանակած տերությունները բնավ էլ Հայաստանի դաշնակիցները չեն, բայց Հայաստանի կառավարության վրա դա որևէ ազդեցություն չէր գործում: Նույնիսկ նրանց վրա չէր ազդում, երբ այդ ճշմարտությունը պարզ ու հստակ ասում էին դաշնակից պետությունների անդրկովկասյան ներկայացուցիչները: Արտ. Բաբայանը վկայում է, որ երբ վարչապետ Հ. Բաջազունին տրտնջում էր Հայաստանի հանդեպ Անգլիայի վարած քաղաքականությունից, բրիտանական

գեներալ Ֆ. Ուոկկերը նրան պատասխանել է. «Ձեզ ով ասաց, որ դուք մեր դաշնակիցներն եք»¹⁴: Իհարկե, Հ. Քաջազունին չի ասում, որ վրացիները, թուրքերը կամ ադրբեջանցիներն են ասում, որովհետև գիտեր, որ հնարավոր պատասխանը լինելու էր. «սովորեք ինքնուրույն ապրել, լեզու գտեք հարևանների հետ և հույսը մի դրեք մեր վրա»: Հարյուր անգամ այս խոսքերն ասել են դաշնակիցների ներկայացուցիչները, բայց ասողին լսող ու նաև հասկացող էր պետք: Եվ որպեսզի դաշնակիցներին չնեղացնեին, Հայաստանի քաղաքական ուժերը ոչ թե նրանց էին մեղադրում, որ հայ-վրացական պայմանագիրը պատերազմին համարժեք արդյունք չունեցավ, այլ կառավարության նախագահին: Գիտեին, անշուշտ, որ Թիֆլիսի պայմանագիրը դաշնակիցներն են պարտադրել, բայց դրա համար սխալ էին համարում Հ. Քաջազունու չափավոր քաղաքական մոտեցումները: Դաշնակիցներին խնայում էին, որովհետև կարծում էին, թե հասել է այն պահը, երբ իրադարձությունների հրամայականով պետք է քաղաքականությունը տեղափոխել չափավոր ընթացքից դեպի կորցրած հայրենիքի ամբողջական պահանջատիրություն: Ահա այսպես փաստերն ու իրադարձությունները հարմարեցվում էին սեփական ցանկություններին ու հակվածությանը: Տեսնել դաշնակիցների դերը Թիֆլիսի պայմանագրի մեջ, նշանակում էր տեսնել իրականությունն այնպես, ինչպես որ այն կար և հետագա հույսեր չկապել դաշնակից պետությունների հետ: Այս որակափոխությունը նաև կլիներ անցում անպետական շրջանի գործելակերպից դեպի պետական քաղաքականություն: Հայաստանում չկայացավ այդ որակական անցումը: Ավելի ճիշտ, վեց ամիս, իրադարձությունների հարկադրանքով վարվեց չափավոր քաղաքականություն: Սակայն դա պարտադրված էր և ոչ որակափոխություն: Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը մարել էր ազգային գործիչների ոգևորությունը, և չափավորությունը այլևս այլընտ-

¹⁴ «Հայրենիք» ամսագիր, 1923, N 9, էջ 107:

րանք չուներ: Ահա, երբ 1918թ. հոկտեմբեր-նոյեմբերին պարսկեց գերմանա-թուրքական խմբավորումը և վերացավ պարտադրանքը, չափավորությունն ու իրատեսությունը իրենց տեղը զիջեցին ազգային-ավանդական քաղաքականությանը: Չարմանալի մի գուգադիպությամբ հենց այդ շրջանում հերթով կյանքից հեռացան պետական քաղաքականության ջատագովներ Խ. Կարճիկյանը և Ա. Մանուկյանը: Մնացել էր միայն վարչապետ Քաջազունին, որին արդեն սկսել էին հեզնել թրքամետության և հայ-վրացական պատերազմը մինչև հաղթական վախճան չհասցնելու համար: Հայաստանի խորհրդի որոշմամբ Քաջազունին պետք է մեկներ Ամերիկա հացի օգնությունը տեղում կազմակերպելու համար: Այս ձևը գտան վարչապետին փոխարինելու, և 1919թ. փետրվարից վարչապետի պաշտոնակատար դարձավ Ալ. Խատիսյանը: Մինչ այդ Պոլսից ետ էր կանչվել չորս ամիս այնտեղ գործած հայկական պատվիրակությունը: Դեկտեմբերի 8-ին Երևանից դուրս եկավ Փարիզի վեհաժողովի հայաստանյան պատվիրակությունը՝ Ավ. Ահարոնյան, Միք. Պապաջանյան: Նրանց Փարիզում պետք է միանար նաև պատվիրակության երրորդ անդամը՝ Բեռլինում գտնվող Հ. Օհանջանյանը: Ահա, Փարիզյան վեհաժողովին ընդառաջ, խմբագրվեց քաղաքականությունը և այն կրկին ուղղորդվեց միջազգային ատյաններ: Խելամիտ չէ կարծելը, թե Հայաստանի Հանրապետությունը չպետք է մասնակցեր Փարիզի վեհաժողովի աշխատանքներին, առավել ևս, որ Փարիզում արդեն գործում էր ազգային պատվիրակությունը՝ Պողոս-Նուպար փաշայի գլխավորությամբ: Խելամիտ ու պետական մոտեցում չէր փորձի անտեսումը և պետական քաղաքականությունը տարածաշրջանային ռեալություններից ամբողջապես միջազգային ատյաններ տեղափոխելը: Առավել ևս, սխալ էր պատվիրակության մեջ ընդգրկելը ոչ չափավոր թևի ներկայացուցիչներ Ավ. Ահարոնյանին և ժողովրդական կուսակցության նախագահ Միք. Պապաջանյանին: 1918թ. դեկտեմբերին, երբ խորհուրդը և կառավարությունը քննարկում

էին Փարիզի վեհաժողովում դրվելիք հողային պահանջների հայրը դաշնակցությունն հիմնականում չափավոր մոտեցում ունէր: Ծովից-ծով Հայաստանի պահանջը դնում էր Միք. Պապազանյանը: Հայկական հարցի լուծման նույն մոտեցումն էր պաշտպանում նաև Փարիզում գործող ազգային պատվիրակության ղեկավար Պողոս-Նուպար փաշան:

Այսպիսով, ընդամենը մեկ տարի առաջվա ազգային հուսախաբությանը կրկին փոխարինելու եկավ հերթական հուսադրությունը: Մեծ տերությունների միջոցով կորցրած հայրենիքը վերագտնելու ազգային գաղափարաբանությունը բարձրացվեց պետական քաղաքականության մակարդակ: Ու քանի որ Փարիզի վեհաժողովին էին սևեռված գալիքի հույսերը, անտեսվում էր հայ-վրացական պատերազմում նույն դաշնակիցների ունեցած դերակատարությունը: Հասկանում և խուլ դժգոհությունը երբեմն արտահայտում էին բարձրաձայն, բայց կատարվածից որևէ քաղաքական հետևություն չէին անում: Հակվածության ու հարմարեցումների սովորության ուժը, քաղաքական ռեալությունները սեփական ձգտումներին ու ցանկություններին համապատասխանեցնելը թույլ չէին տալիս տեսնելու երեկվա ողբերգության պատճառները: Անցյալի, ներկայի ու գալիքի փոխկապակցության քաղաքական տրամաբանության անտեսումը կամ դրան անհասու լինելը մեխանիկորեն կրկնում էր եղածը՝ ապագան մշուշելով անցյալի հնարավոր պատկերներով: Մեծ տեղաշարժերում սեփական շահի փնտրտուքը ազգի առաջնորդների հայացքը Ռուսաստանից տեղափոխեց Եվրոպա: Փույթ չէր, թե հաղթանակ տարած եվրոպական տերությունների ներկայացուցիչները պատեհ անպատեհ Հայաստանի կառավարության անդամներին հասկացնում էին, որ պետք չէ մեծ հույսեր կապել Փարիզի խորհրդաժողովի հետ: Անզլիական, իսկ հետո ամերիկյան զինվորական ներկայացուցիչների՝ տարածքային քաղաքական ռեալությունները չանտեսելու հորդորները ընդամենը ունենում էին այն հետևանքը, որ կառավարությունը հերթական ընդարձակ

զեկուցագիրն էր ուղարկում Փարիզի վեհաժողովի հայկական պատվիրակությանը: Դրանցում ապացուցվում էր, որ Անդրկովկասում դաշնակիցների ներկայացուցիչները վարում են պրոմոտսուլմանական քաղաքականություն:

Գլուխ 5. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՈՒՄՅ չԵՏՈ

Քաղաքական առումով գրեթե նույն պատկերն էր տիրում հայ-ադրբեջանական հարաբերություններում, որովհետև կայսրության շրջանի ազգամիջյան վեճերը նույնությամբ տեղափոխվեցին կամ բարձրացվեցին պետական հարաբերությունների մակարդակ: Հայ-ադրբեջանական հարաբերություններում վեճի առարկան Ելիզավետպոլի նահանգն էր: Ավելի որոշակի՝ Ղարաբաղն ու Ջանգեզուրը, որոնք մտնում էին Ելիզավետպոլի նահանգի մեջ: 1919թ. ամբողջ ընթացքում դաշնակիցները բազում որոշումներ կայացրին Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի մասին, բայց և այնպես հանդարտություն մտցնել հայ-ադրբեջանական հարաբերություններում, նրանց չհաջողվեց: Հարկ է նկատել, որ մինչ Ադրբեջանի խորհրդայնացումը, նրա իշխանություններն ամեն միջոցի դիմեցին Ղարաբաղն ու Ջանգեզուրը Ադրբեջանին ենթարկելու: Նրանց բազում փորձերը հանդիպեցին ազգաբնակչության դիմադրությանը, և գործադրած ջանքերն ապարդյուն անցան: 1918-1919թթ. հայ-ադրբեջանական առնչությունները բնութագրվում են ազգամիջյան մշտական բախումներով: Նույն պատկերը երկու երկրների ներքին կյանքում էր, որը, բնականաբար, ծանր ազդեցություն էր ունենում և հղի էր կանխատեսելի հետևանքներով ողջ Անդրկովկասի համար: Դեմիկլինին պարտության մատնելուց հետո բուլղարիայի գործերը մոտենում էին Անդրկովկասին: Ջգալով անկախության կորուստի վտանգը, Վրաստանի կառավարությունը նախաձեռնում է անդրկովկասյան պետությունների միացյալ կոնֆերանսի գումարում:

Ջգալի ներկայացուցչական կազմ ունեցող այս կոնֆերանսը գումարվում է 1920թ. ապրիլի 16-ին Թիֆլիսում: Վրաստանի կողմից մասնակցում էին Ե. Գեզեկորիան, Գ. Մախարաձեն, Վ. Թևզիան և Գ. Լորդկիպանիձեն: Ադրբեջանի կողմից՝ Ֆ. Խան-Խոյսկին, Գ. Աղաևը, Օ. Կրիչինսկին և Ֆ. Վեքիլովը: Հայաստանի կողմից կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Հ. Օհանջանյանը, Տ. Բեկզադյանը, Ս. Մամիկոնյանը և Ս. Խաչատրյանը: Կոնֆերանսի քննարկման հիմնական նյութը Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած տարածքային տարածայնությունների հարցն էր: Կոնֆերանսի հնգօրյա աշխատանքները և մտահոգ ելույթները ցույց են տալիս, որ երեք կառավարություններն էլ զգում են ներքին անկայուն վիճակի հնարավոր հետևանքները: Ապրիլի 21-ի նիստում ընդունվում է բանաձև, համաձայն որի՝ Հայաստանի և Ադրբեջանի վեճերը պետք է լուծվեն երկկողմ բանակցությունների միջոցով և փոխհամաձայնությամբ¹: Պետք է նկատել, որ նման որոշումներ կայացվել էին նաև նախկինում, բայց դրանք մնացել էին անհետևանք: Անդրկովկասի նախկին վարչատարածքային բաժանմամբ ստացած ժառանգությունը նորաստեղծ պետություններին ամուր պահեց մշտական բախումների մեջ մինչև բուլղարիայի գործերը մոտեցան Անդրկովկասին: Այս մտահոգությամբ էր գումարվել անդրկովկասյան պետությունների երկրորդ կոնֆերանսը: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ ձեռնարկումն ու մտահոգություններն ուշացած էին, որովհետև մինչ կոնֆերանսի գումարումն արդեն որոշված էր Ադրբեջանի խորհրդայնացման խնդիրը: Կարելի է ասել նաև, որ «Անդրկովկասում զինված բախումներին վերջ տալու և տարածքային վիճելի հարցերը միայն բանակցություններով լուծելու» կոնֆերանսի որոշումն ինչ-որ տեղ արագացրեց Ադրբեջանի խորհրդայնացումը: Անդրկովկասյան հանրապետությունների իշխանություններն իրադարձությունների վրա այլևս -

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 1-21:

չէին կարող ազդել, որովհետև բուլղարական Ռուսաստանի և քե-
մալական Թուրքիայի մերձեցումը կատարված փաստ էր:
Անդրկովկասյան 2-րդ կոնֆերանսը գումարելուց առաջ Թիֆլի-
սի թերթերը տպագրել էին, որ մայիսի 10-ին «թուրք ազգայնա-
կանները և Սովետական իշխանությունը ռազմական կոնվեն-
ցիա են ստորագրել, համաձայն որի՝ Թուրքիան հրաժարվելու
է ընդունել դաշնակից պետությունների պայմանները: Սովե-
տական իշխանությունն այդ հարցում Թուրքիային ցույց է
տալու նյութական և բարոյական օգնություն» («Слово», N 105,
12 мая, 1920г.): Այդ էր պատճառը, որ կոնֆերանսում երեք
պետությունների ներկայացուցիչներն էլ ակնարկում էին «Զե-
մալա-բուլղարական Անդրկովկասին մոտեցող վտանգի մասին»²:
Հետաքրքիրն այն է, որ կոնֆերանսը որևէ որոշում չկայացրեց
«մոտեցող վտանգը» կանխելու համար: Թվում էր, թե գոնե ու-
շացած, բայց, այնուամենայնիվ, այն գիտակցությունը, որ ե-
րեք պետություններին էլ անկախության կորուստի վտանգ է
սպառնում, պետք է ստիպել նրանց ընդհանուր անվտանգութ-
յան և համագործակցության պայմանագիր կնքելու ու գործո-
ղությունների ծրագիր մշակելու: Կոնֆերանսի աշխատանքի
հինգ օրը բավարար էր այդ ամենի համար: Բայց նման բան
չկատարվեց: Ամբողջ բարդությունն այն էր, որ Անդրկովկասի
պետությունների քաղաքական միտքը միջպետական ամուր
կապեր ստեղծելու և արտաքին վտանգը դիմակայելու անհրա-
ժեշտության առումով մնացել էր 1918թ. մակարդակին: Անցած
երկու տարում այդ ամենը չէր դարձել ներքին անհրաժեշ-
տություն, ու երեք պետություններն էլ մնացել էին մեծ տեղա-
շարժերի մեջ իրենց շահը փնտրող օբյեկտներ: Հայաստանը
հույսը ամբողջությամբ կապել էր Փարիզի վեհաժողովի հետ,
որը լուծելու էր տարածքային հարցերը: Ադրբեջանի ողջ ու-
շադրությունը գամված էր Ղարաբաղ-Չանգեզուր-Նախիջևան
տարածքը իրեն միացնելուն, բնականաբար, Թուրքիայի օգ-

² Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 217, ք. 103:

նությամբ: Կոնֆերանսի արձանագրություններից տեսանելի է,
որ գալիք իրադարձությունները մտահոգում էին Վրաստանի
պատվիրակությանը: Թերևս, միայն Վրաստանի պատվիրա-
կության ղեկավար Ն. Գեգեչկորին էր իր ելույթներում արժար-
ծում Անդրկովկասի պետություններին սպառնացող վտանգի
հնարավոր հետևանքները: Ադրբեջանի պատվիրակության ղե-
կավար Ֆ. Խան-Խոյսկին անտրամադիր էր ու համաձայնում
էր հայ-ադրբեջանական տարածքային վեճերը խաղաղ ճա-
նապարհով լուծելուն: Անտրամադիր էր ու նաև՝ թերահավատ
ուշացած այս համաժողովի հանդեպ, որովհետև հավանաբար
գիտեր, որ հաշված օրեր են մնացել իրենց իշխանությանը:
Կարծեք թե բարձրացող քեմալական Թուրքիայի և Ռուսաս-
տանի մերձեցումը բոլորից շատ պետք է մտահոգեր Հայաս-
տանի պատվիրակությանը, և նա էր, որ պետք է այդ ուղղու-
թյամբ գործնական որոշումների կայացման փորձ աներ: Նման
բան կոնֆերանսի աշխատանքները չեն արձանագրել: Հայկա-
կան պատվիրակության ղեկավար Հ. Օհանջանյանը կրկնում
էր, որ «վիճելի հարցերը արբիտրաժով լուծելու համար նախ
պետք է որոշել, թե որոնք են Հայաստանի և Ադրբեջանի միջև
վիճելի տարածքները»: Ապագա վարչապետն, անշուշտ, գի-
տեր, թե որոնք են «վիճելի տարածքները», բայց նա ցանկա-
նում էր, որ կոնֆերանսն արձանագրի դրանք, որպեսզի ինքը
հնչեցնի ու պնդի, որ Ղարաբաղը, Չանգեզուրը և Նախիջևանը
չեն կարող վեճի առարկա լինել, որովհետև դրանք հայկական
տարածքներ են: Այդպիսիք էին Հայաստանի և Ադրբեջանի
պատվիրակությունների 1919թ. մի շարք հանդիպումների
սկիզբն ու ավարտը: Բնականաբար, Վրաստանի արտաքին
գործերի մինիստր Ն. Գեգեչկորին տարակուսում էր Հ. Օհան-
ջանյանի հարցադրումից, որովհետև 1919թ. նոյեմբերի 23-ին
Թիֆլիսում համաձայնագիր էր ստորագրվել Ադրբեջանի և
Հայաստանի կառավարությունների ղեկավարների մակարդա-
կով, որով կողմերը պայմանավորվում էին «Չանգեզուրի վեճը
լուծել խաղաղ ճանապարհով և խուսափել ռազմական ուժ օգ-

տագործելուց»³: 1919թ. նոյեմբերին Ադրբեջանի և Հայաստանի միջև հանդիպման նախաձեռնողը Վրաստանն էր, իսկ համաձայնագրի տակ, որպես վկա, կա նաև Ն. Գեզեչկորու ստորագրությունը: Փաստորեն, նույն՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճի խնդիրն էր դրված ապրիլյան կոնֆերանսում: Նախաձեռնողն էլ նույն Վրաստանի կառավարությունն էր, որն, ի տարբերություն Հայաստանի կառավարության, տեսնում էր, որ արտաքին ուժերը օգտագործելու են հենց հայ-ադրբեջանական վիճելի տարածքների խնդիրը: Ապրիլյան կոնֆերանսի աշխատանքները ցույց տվեցին, որ Վրաստանի կառավարությունը տեսնում է «Անդրկովկասի երիտասարդ հանրապետությունների գլխին կախված վտանգը»: Նույնը չի կարելի ասել Հայաստանի կառավարության մասին: Կոնֆերանսում Հայաստանի պատվիրակության ելույթներից բացարձակապես չի զգացվում, որ նա գոնե կռահում է, թե իրադարձությունների մոտակա զարգացումներն ինչ ծանր դրություն են ստեղծելու հենց Հայաստանի համար: Դժվար է ասել, որ նման ոչ մտահոգ վիճակն ինֆորմացիայի պակասի հետևանք էր: Արդեն նշել են, որ Անդրկովկասի հանրապետությունների երկրորդ կոնֆերանսի գումարման նախօրեին Վրաստանի թերթերը գրում էին Անդրկովկասին սպառնացող «թուրք-բոլշևիկյան վտանգի» մասին: Այլ փաստեր չեն բերում, որովհետև Վրաստանի կողմից կոնֆերանսի նախաձեռնումն ու անցկացումն ինքնին պատասխանում է հարցին: Հայաստանի կառավարությունը 1919 թվականից քաղաքականության հիմքում դնելով միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարը, սպասում էր Փարիզի վեհաժողովի կողմից հարցի լուծմանը: Ուստի, նա այնքան էլ լուրջ չէր ընդունում տարածաշրջանային ռեալությունները ու թերահավատ վերաբերմունք ուներ անդրկովկասյան համագործակցության հանդեպ: Հայաստանի կառավարությունը լուրջ չէր ընդունում նաև թուրք-

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 131, ք. 80:

բոլշևիկյան համագործակցության հեռանկարը, որովհետև սպասում էր, որ «հաղթանակած Եվրոպան շուտով կայացնելու է Թուրքիայի մահավճիռը»: Թերևս, այս քաղաքական մոտեցումներով կարելի է բացատրել Վրաստանի և Հայաստանի կառավարությունների հակամետ վերաբերմունքները, որը կողմերին պահեց սեփական դիրքերում:

Անդրկովկասյան կոնֆերանսի աշխատանքների ավարտից մի քանի օր հետո՝ 1920թ. ապրիլի 28-ին, Ադրբեջանը խորհրդայնացվեց: Ադրբեջանի անարյուն հեղաշրջման գինը Դարաբաղ-Չանգեզուր-Նախիջևան տարածքն էր, որով Ռուսաստանը միանում էր Թուրքիային: Ադրբեջանում կատարված շրջադարձին օգնել էր նաև Թուրքիան: Քանի որ այս հարցը նախկինում հերքվել կամ հաստատվել է, ուստի, ես չեմ անդրադառնում դրան ու մտնում այդ ծեծված վեճի մեջ, որովհետև ժամանակին կատարվածին սպառիչ պատասխան է տվել Մուստաֆա Քեմալը: 1920թ. օգոստոսի 14-ին Ազգային Մեծ ժողովի նիստում անդրադառնալով կարմիր բանակի կովկասյան հաջողություններին, Մ. Քեմալը ընդգծում է. «Մեր ազդեցիկ համագործակցությամբ և օգնությամբ այդ բանակները (10 և 11-րդ) անցան Հյուսիսային Կովկասով և մտան Ադրբեջան: Ադրբեջանցիները հանգիստ ընդունեցին կատարվածը»⁴: Թող որ Քեմալը մի փոքր գերազնահատած լինի Թուրքիայի դերը կատարված իրադարձություններում: Այդպես են կարծում հարցի մասնագետներ Ա. Միլլերը և Գ. Հեյֆեցը, բայց միևնույնն է, դրանից ռուս-թուրքական համագործակցության քաղաքական բովանդակությունը չի փոխվում: Մ. Քեմալը պարզ ասում է նաև, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո «սովետական գործերի կողմից սկսվեցին ռազմա-ստրատեգիական գործողություններ Հայաստանի և Վրաստանի սահմաններում»⁵: Այս դիտարկումը հաստատվում է այն փաստով, որ 1920թ. մայիսին կարմիր բանակի երկու գնդեր մտան Իջևան: Մայիսի 1-ին

⁴ Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, М., 1966г., с. 102.

⁵ Նույն տեղում:

Ալեքսանդրապոլում սկսվում է բոլշևիկյան խռովությունը: Սակայն, այս ռազմա-ստրատեգիական ձեռնարկումն իր ավարտին չհասավ, ու «Ալեքսանդրապոլի պրոլետարիատի խնդրանքով» Իջևան մտած կարմիր ջոկատները չխորացան Հայաստանում և չհռչակեցին խորհրդային կարգեր: Ալեքսանդրապոլի խռովությունը ճնշվեց, իսկ Իջևան մտած գործազուգեքը Գ. Օրջոնիկիձեի հրամանով ետ նահանջեցին ու դուրս եկան Հայաստանի սահմաններից: Նրանք իրենց հետ Ադրբեջան տարան Դիլիջանի գեմստվոյի նախագահ Ն. Ջադեթյանին, Հայաստանի ներքին գործերի նախարարի տեղակալ Ս. Մանասյանին և հինգ այլ գործիչների, որոնք հետագայում գնդակահարվեցին⁶: 1920թ. մայիսին Հայաստանում կատարված իրադարձությունները ցույց են տալիս, որ որոշված էր մեկ հարվածով կամ միանգամից խորհրդային կարգեր հաստատել Հայաստանում և Վրաստանում: Հետո Մոսկվան փոխեց այս մոտեցումը և հետաձգեց կանխապես պլանավորված գործունեությունը: Ի՞նչն էր պատճառը տակտիկական մասն փոփոխության: Բոլշևիկյան առաջնորդները դա պայմանավորում են լեհական ճակատում կրած անհաջողության հետ և իբր այդ պատճառով 10-րդ բանակը Անդրկովկասից ուղարկվել է լեհական ճակատ: Սա պարզունակ բացատրություն է, թեկուզև այն առումով, որ բոլշևիկների այս փաստարկը նույնությամբ կրկնում է Մ. Քեմալը⁷: Իրականում 10-րդ բանակի գորամիավորումները Ադրբեջանի խորհրդայնացումից թեև ապստամբ Քյուչուկ խանի խնդրանքով մտել էին Պարսկաստան: Մենք համապատասխան տեղում կանդրադառնանք այս հարցին և ցույց կտանք, թե ինչպես Պարսկաստանում տաևուլ տրվեց «հեղափոխական գործը»: Ուստի, խնդիրն այն է, որ ուժերը չբավարարելու պատճառով հետաձգվեց Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը: Այն ավելի տարողունակ է և, կարծում եմ, չի համապատասխանում ժամանակի քաղա-

⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 211, ք. 180:

⁷ Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, М., 1966г., ст. 102:

քական և հետագայում պատմագիտության բացատրություններին ու մեկնաբանություններին: Մեր պատմագիտության մեջ այս հարցի վերաբերյալ դիտարկումն այն է, որ Ադրբեջանի օրինակով Հայաստանը ևս 1920թ. մայիսին պետք է խորհրդայնացվեր: Եվ տվյալ պարագայում Հայաստանը տարածքների կեսը չէր կորցնի ու կխուսափեր հետագա բարդություններից: Թվում է, թե հարցադրումն օրինաչափ է, առավել ևս, երբ մեխանիկական գուգահեռներ են անցկացվում Ադրբեջանում կատարված անարյուն հեղափոխության հետ: Առավել ևս, որ նման քայլը կբացառի հետագայում Հայաստանը «միջազգային իմպերիալիզմի» գործակից համարելու արհեստածին դիտարկումներն ու մեղադրանքներն, իրենց ունեցած ողբերգական հետևանքներով: Ամբողջ ցավն այն է, որ նման մոտեցումները ետին թվով դիտարկումներ ու նաև հայեցողական մեկնություններ են: 1919թ. ընդունված «Թուրքիայի ազգային ուխտը» Թուրքիայի արևելյան սահմանները որոշել էր համապատասխան 1918թ. մարտին բոլշևիկյան Ռուսաստանի հետ կնքած Բրեստ-Լիտովսկի պայմանագրի: Հնարավոր ընդդիմախոսներին կանխելու նպատակով, առաջ անցնելով, փաստում են Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինի՝ 1921թ. մարտին ռուս-թուրքական պայմանագրին վերաբերող հետևյալ տարողունակ միտքը. «Մոսկվայի պայմանագիրը ճշտեց այն հարաբերությունները, որ արդեն կյանքը հաստատած էր երկու շարժումների միջև»: Ու թե դեռևս կան մտածողներ, որոնք բարդ ու հակասական քաղաքական խնդիրներին չեն մոտենում թեզի և հակաթեզի համադրման ու սինթեզման գիտական չափումներով, թող ուշադիր ունկնդրեն Գ. Չիչերինի՝ Մոսկվայի պայմանագրին վերաբերող նաև հետևյալ ձևակերպմանը. «Մենք (Ռուսաստանը – Կ. Ս.) ամբողջովին և անվերապահ կերպով ճանաչեցինք թուրք ժողովրդի ազգային ուխտը»: Գ. Չիչերինը մտածված և առանց դիվանագիտական հնարքների է իր մոտեցումները շարադրել, որովհետև ինքը որոշակի ջանքեր էր գործադրել ազդե-

լու նման ընթացքի ու ավարտի վրա, բայց դրանք որևէ արդյունք չէին տվել: Իրադարձություններից առաջ անցնելու պատճառն այն էր, որ ընթերցողը հստակ պատկերացում կազմի այն մասին, որ Ադրբեջանի խորհրդայնացումը համեմատելի չէ Հայաստանի խորհրդայնացման հետ: Եթե նույնիսկ 1920թ. մայիսին Հայաստանում հաստատվեին խորհրդային կարգեր, դա բնավ չէր նշանակի, որ Խորհրդային Հայաստանը ժառանգելու էր Հայաստանի 1-ին հանրապետության՝ 1920թ. մայիսի դրությամբ ունեցած սահմանները: Իհարկե, դեպքերի նման հնարավոր զարգացումը, որը նախատեսել էր Ռուսաստանը, մեծ բարդություններ կստեղծեր Թուրքիայի համար: Ահա հենց այստեղ էլ պետք է փնտրել այն հարցի պատասխանը, թե ինչու՞ Ռուսաստանը ետ կանգնեց 1920թ. մայիսին Հայաստանը խորհրդայնացնելու մտքից և իր գորքերը ետ կանչեց Իջևանից: Անկախ Հայաստանի կառավարության ունեցած վերաբերմունքից ու նրա հակաբոլշևիկյան կեցվածքից այս հարցը կարևոր է, որովհետև Ռուսաստանը ձեռք քաշեց Հայաստանն ու Վրաստանը Ադրբեջանից հետո խորհրդայնացնելու մտքից: Ավելին, մայիսի 7-ին Ռ-ՍՖՍՀ կառավարությունը պայմանագրի ստորագրեց Վրաստանի կառավարության հետ և ճանաչեց նրա անկախությունը: Ի տարբերություն Վրաստանի, Հայաստանի անկախությունը ճանաչելու նպատակով մայիս ամսին Մոսկվայում սկսվեցին բանակցությունները Հայաստանի կառավարության պատվիրակության հետ: Տակտիկական նման փոփոխությունը կապված էր ինչպես միջազգային արենայում Հայաստանի և Վրաստանի տարածքների քննարկման (Փարիզի վեհաժողով), այնպես էլ հայ-վրացական հնարավոր ռազմական դաշինքի ստեղծումը բացառելու հետ, որի մասին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո բարձրաձայն խոսում էին Վրաստանի և Հայաստանի քաղաքական ուժերը: 1920թ. մայիսի 6-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը արտաքին գործերի մինիստրին հեռագրում է. «Վրաստանի զինվորական նա-

խարարի հետ ունեցած վերջին տեսակցության ժամանակ պարզվեց, որ հարավ-արևմտյան ուղղությամբ մեր գործողությունները ներդաշնակելու խնդիրը միանգամայն հասունացած է երկու կողմերի համար և հարկավոր է այն իրագործել: Դրա համար մենք փոխադարձ համաձայնությամբ որոշեցինք, որ նպատակահարմար է անմիջապես մեր զինվորական ներկայացուցիչներին հանձնարարել բանակցել և միմյանց ծանոթացնել բոլոր կարևոր խնդիրների հետ, պարզել կողմերի անելիքներն այդ ֆրոնտում և զեկուցել կառավարություններին վերջնականապես որոշելու փոխադարձ օգնության ձևն ու քանակը»⁸: 1920թ. մայիսի 7-ին Ռուսաստանի ու Վրաստանի միջև կնքված պայմանագրից հետո հայ-վրացական ռազմական դաշինք ստեղծելու ուղղությամբ գործնական քայլերը դադարեցվեցին: Ավելին, 1920թ. մայիսի 7-ին Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագիրը կրկին սրեց հայ-վրացական տարածքային վեճը, որովհետև հայ-վրացական վիճելի տարածքները Ռուսաստանը ճանաչում էր որպես Վրաստանի տարածք: 1920թ. հունիսի 11-ին Հայաստանի արտաքին գործերի մինիստր Հ. Օհանջանյանը բողոքի նոտա է հղում Վրաստանի կառավարությանը՝ կապված մայիսի 7-ին կնքված ռուս-վրացական պայմանագրի այն հոդվածների դեմ, որոնցով հայ-վրացական վիճելի համարվող տարածքները Ռուսաստանի կողմից ճանաչվում էին Վրաստանի անբաժանելի մասեր⁹: Այս բողոքը որևէ նշանակություն չունեցավ և չէր էլ կարող ունենալ, բացի հարաբերությունների բացասական լիցքավորումից: Հայաստանի և Վրաստանի սահմաններից մայիսին բուլշևիկյան գորքերի ետ քաշելը կապված էր նաև նույն ամսին Ադրբեջանում սկսված հակաբոլշևիկյան ապստամբությունների հետ: Դրանցից ամենանշանավորը Նուրի փաշայի գորքերի կողմից Գյանջայի գրավումն էր: Այս ռազմական գործողությունների արդյունքում թուրք գորավարի

⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 83, ք. 1:

⁹ Նույն տեղում, ք. 2:

3000-անոց բանակը պարտության մատնեց բոլշևիկյան զորքերին, որի արդյունքում զոհվեցին 1500 կարմիրբանակայիններ: Այս փաստը հետաքրքիր է այն առումով, որ Ադրբեջանի տարածքում գործող թուրք սպաներն ամբողջությամբ ենթարկվում էին Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը: Հանգամանք, որը ինքնին խոսում է այն մասին, որ Ադրբեջանում կարմիր բանակի դեմ գործող «հակահեղափոխական» զինված միավորումները գործում էին Թուրքիայի հրահանգով: Իհարկե, օգնության եկած կարմիր զորքերը դաժանորեն ճնշեցին խռովությունը (10. 000 զոհեր ու վիրավորներ)¹⁰: Թողնելով Գյանջան, Նուրի փաշան նահանջում է Ադղամ: Ադղամի ճակատամարտում նրա զորամիավորումները պարտվում են: Այս պատմության մեջ կարևորն այն է, որ կարմիր բանակի 32-րդ դիվիզիան Ադղամից անցնում է Շուշի և առաջ շարժվելով՝ հուլիսի 5-ին մտնում է Գորիս: Այս ամենի մասին ամենայն մանրամասնությամբ 1920թ. օգոստոսի 14-ին Ազգային ժողովին զեկուցում է Մ. Քեմալը: Նրա խոսքի շեշտադրումներից երևում է, որ իրենք ստիպեցին բոլշևիկներին փոխելու տակտիկան և ուղղորդեցին 32-րդ դիվիզիայի շարժը Ղարաբաղ-Չանգեզուր-Նախիջևան ուղղությամբ: Անշուշտ, Մ. Քեմալը նշում է, որ թուրք զորավար Նուրի փաշան «հակահեղափոխական գործողությունները» կարմիրների դեմ ծավալել էր անգլիացիների դրդումով, բայց Ազգային ժողովի պատգամավորները լավ հասկանում էին իրենց առաջնորդի դիտարկումների երկիմաստությունը: Հասկանալի է, որ Ազգային ժողովի ոչ մի պատգամավորի Մ. Քեմալը չէր կարող համոզել, որ երիտթուրքերի պարագլուխներից մեկի՝ Էնվեր փաշայի հարազատ եղբայր Նուրի փաշան կարող էր համագործակցել անգլիացիների հետ կամ «ընկնել նրանց ազդեցության տակ» ու կազմակերպեր Գյանջայի հակաբոլշևիկյան խռովությունը: Ուստի, Քեմալի բերած փաստարկը որևէ քննադատության չի դիմանում ու նաև ան-

¹⁰ Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 217, ք. 149:

լուրջ է այն առումով, որ խորհրդայնացումից հետո Ադրբեջանում անգլիացի չէր մնացել: Անգլիացիները իրենց զորքերը դուրս էին բերել նաև ողջ Անդրկովկասից: Քեմալը դա լավ գիտեր: Ու նաև գիտեր, որ Անգլիան մինչև Անդրկովկասից հեռանալն էլ երբեք հակամուսուլմանական քաղաքականություն չի վարել: Պարզապես, Գյանջայի խռովության կազմակերպման անգլիական տարբերակը հորինված էր, որպեսզի հեղափոխական ճշմարտանմանությունը թույլ չտա տեսնելու, որ Գյանջայի խռովության իրական հեղինակը հենց Մ. Քեմալն էր: Մոսկվայում այդպես էլ հասկացան կատարվածը, որովհետև նրանք չէին մոռացել, որ քեմալականների հետ կապի ու նախնական համաձայնությունը Մոսկվայում ձեռք բերողը եղել է Էնվեր փաշան: Բնականաբար, նրա եղբայրը, որը անգլիացիների քննամին էր, չէր կարող գործել ճիշտ հակառակ ուղղությամբ: Մյուս փաստարկն այն է, որ «համաշխարհային հեղափոխության» դեմ ցանկացած գործողություն վերջանում էր գնդակահարություններով: Նուրի փաշան ոչ միայն չպատժվեց, այլև իր զորաջոկատով 1920թ. հունիսին Նախիջևանի վրայով անցավ Թուրքիա:

Մ. Քեմալի առնչությունը Գյանջայի խռովության հետ, ինչ-որ ձևով հաստատվում է նաև այն փաստով, որ բոլշևիկները կարողացան քաղաքը ազատագրել հայ ազգաբնակչության շնորհիվ: Այսինքն՝ հայությունը կռվել է Նուրի փաշայի դեմ: Վրաստանի ինֆորմբյուրոն սա ներկայացրել է. «Գյանջայի հայությունը պաշտպանեց խորհրդային իշխանությունը, որովհետև վճռորոշ դեր ունեցավ հակաբոլշևիկյան ապստամբությունը ճնշելու գործում»: Հավանաբար, շատ ծանրացա առաջին հայացքից նշանակություն չունեցող այն հարցի վրա, որ Գյանջայի հակաբոլշևիկյան ապստամբությունը կազմակերպվել էր քեմալականների կողմից: Այս հարցն, իմ կարծիքով, կարևորվում է այնքանով, որքանով այն կապված է Հայաստանը և Վրաստանը խորհրդայնացնելու գլխավոր հարցի հետ: Արդեն նշել են, որ բազմաթիվ են այն գործոնները, որոնք

Ռուսաստանին ստիպեցին մայիսին փոխելու տակտիկան Վրաստանի և Հայաստանի հանդեպ: Հանգամանք, որը հատկապես շատ ծանր գին ունեցավ վերջինիս համար: Այսինքն՝ Ռուսաստանը ձեռք քաշեց մեկ հարվածով Անդրկովկասյան հանրապետությունները խորհրդայնացնելու մտքից այն հիմնական պատճառով, որ քեմալական Թուրքիային այն ձեռնտու չէր: Հենց դրա համար էլ կազմակերպելով Գյանջայի խռովությունը, քեմալականները Ռուսաստանին հասկացրին, որ Անդրկովկասը «հեղափոխելու» խաղի կանոններն իրենք են քելադրելու, այլապես բոլշևիկյան զորքերը կջարդվեն նաև համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում: Փաստորեն, քեմալականները ցույց տվեցին այն ճանապարհը, որով պետք է շարժվեն և Հայաստանը շրջափակեն «հեղափոխական զորքերով»: Այս ամենը ցույց է տալիս, որ 1920թ. մայիս-օգոստոս ամիսներին (մինչև 1920թ. օգոստոսի 1-ը, երբ Նախիջևանում միացան Թուրքիայի և Ռուսաստանի զորքերը) զգալի լարվածություն է գոյություն ունեցել Ռուսաստանի և Թուրքիայի միջև: 1920թ. օգոստոսի 14-ի Ազգային Մեծ ժողովում իր ընդարձակ ելույթում այդ ամենը նկարագրում է Մ. Քեմալը: Այդ լարվածությունը նաև փաստում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքների հարցում մինչև 1920թ. օգոստոս ամիսը Թուրքիայի և Ռուսաստանի միջև որևէ պայմանավորվածություն չի եղել: Սակայն, փաստ է նաև, որ մինչև Ռուսաստանի և Հայաստանի միջև 1920թ. օգոստոսի 10-ի պայմանագրի ստորագրումը, որով Ղարաբաղը, Չանգեզուրը և Նախիջևանը Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքներ լինելու պատճառով պետք է գրավվեին սովետական զորքերի կողմից, արդեն գրավված էին: Պարզապես այդ ընթացքը ձգվեց երկու ամիս և պայմանագրային ձևակերպում ստացավ այն օրը, երբ Սևրում ստորագրվեց «Թուրքիայի մահավճիռն արձանագրող» Սևրի պայմանագիրը: Սա պատահական զուգադիպություն չէր: Ավելին, 1920թ. մայիս-օգոստոս ամիսների կատարված իրադարձությունները գալիս են հաստատելու, որ

Հայաստանի հանդեպ գործողությունների ձգձգումը կապված էր հենց Սևրում կնքվելիք պայմանագրի հետ: Ասվածը հիմնավորելու համար համառոտ նկարագրենք այդ երեք ամիսների ընթացքում կատարված հիմնական իրադարձությունները: Արդեն նշվել է, որ այդ ամիսներին կարմիր բանակի զորամասերը գրավեցին Ղարաբաղ-Չանգեզուր-Նախիջևան գիծը և ուղիղ կապ հաստատեցին քեմալականների հետ: 1920թ. մայիս-օգոստոս ամիսներին Մոսկվայում բանակցություններ է վարում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Լ. Շանթի ղլխավորությամբ: Օգոստոսին պատվիրակությունը վերադարձավ առանց պայմանագրի ստորագրելու: Մոսկովյան բանակցությունների ժամանակ ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը և նրա տեղակալ Լ. Կարախանը Հայաստանից պահանջում էին «համաշխարհային իմպերիալիզմի և պրոլետարիատի պայքարում» կողմնորոշվել և որոշել իրենց տեղը: Միջինը չկար: Հայաստանի պատվիրակությունը չկարողացավ ճիշտ կողմնորոշվել և մերժեց ՌՍՖՍՀ առաջարկությունները: 1920թ. հունիսին Գ. Չիչերինի միջնորդությամբ հետաձգվեց Թուրքիայի կողմից նախատեսված հարձակում Հայաստանի վրա: Կան նաև տասնյակ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ Գ. Չիչերինն ու Լ. Կարախանը ջանում էին օգնել Հայաստանի կառավարությանը, որպեսզի վերջինս կողմնորոշվի դեպի Խորհրդային Ռուսաստան: Ամբողջ բարդությունն այն էր, որ անկախ քաղաքական այս կամ այն գործչի վերաբերմունքից, ՌՍՖՍՀ կառավարությունը չէր կարող օգնել մի կողմից Թուրքիային ու Ադրբեջանին, մյուս կողմից էլ՝ Հայաստանին: Առավել ևս, որ Ադրբեջանն արդեն խորհրդայնացված էր, իսկ քեմալականների հետ զուգահեռ բանակցություններ էին վարվում նույն Մոսկվայում: Հայաստանի պատվիրակությունը բանակցություններում պահանջում էր, որ Ռուսաստանը ճանաչի Հայաստանի անկախությունը գոյություն ունեցող տարածքներով: Թուրքիան իր հերթին Ռուսաստանից պահանջում էր հարգել Բրեստ-Լի-

տովսկի պայմանագիրն ու Ազգային Մեծ ժողովի ընդունած «Ազգային ուխտը»: Ադրբեջանն իր հերթին պահանջում էր Դադաբադ-Չանգեզուր-Նախիջևան տարածքները: Որքան էլ ուսումնասիրողները, փաստելով Շանթի պատվիրակության անդամ Հ. Տերտերյանի հուշերը, պնդեն հակառակը, փաստերն ու քաղաքական գործընթացի տրամաբանությունն այլ բանի մասին է խոսում: 1920թ. հուլիսի 6-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը կառավարության նախագահ Հ. Օհանջանյանին գրում է. «Ծանոթանալով Մոսկվայից ստացված Շանթի հեռագրի հետ, ես հարկ եմ համարում իմ կարծիքն հայտնել այդ մասին: Իմ կարծիքով սովետական իշխանության և ոչ մի առաջարկ ընդունելի չէ: Միակ տեսակետը, որի վրա մենք պետք է կանգնած մնանք, այն է, որ տարածքների խնդրում ոչ մի զիջում չենք կարող անել հոգուտ Ադրբեջանի»¹¹: Որքան էլ, որ վիճահարույց տեղեր կան կապված քաղաքական ռեալություններն անտեսելու Շանթի պատվիրակության գործունեության հետ, միևնույնն է, մոսկովյան բանակցությունները չէին կարող պայմանագրային արդյունք ունենալ: Այլ խնդիր է, երբ Մոսկվայի բանակցությունները քննարկվում էին քաղաքական ողջ տարողությունից դուրս: Այդ պարագայում իսկապես կարելի է հիմնավորել, որ Շանթի պատվիրակությունը, եթե համաձայներ Խորհրդային Ռուսաստանի առաջարկներին, Հայաստանը կխուսափեր հետագա բարդություններից և չէր-կորցնի իր տարածքների կեսը: Որ Հայաստանի կառավարությունը չկարողացավ ճիշտ կողմնորոշվել ստեղծված բարդ ու հակասական իրադրությունում, փաստ է, բայց փաստերն աներկբա ցույց են տալիս, որ դա Մոսկվայի բանակցություններին քիչ է վերաբերում: Միայն այն իրողությունը, որ հունիսի 28-ին ռուսական կողմը որոշում է բանակցությունները տեղափոխել Երևան, խոսում է այն մասին, որ նրանք լուրջ չէին վերաբերվում մոսկովյան բանակ-

¹¹ ՀՀ ՊԿՊԱ, քաղվածքների ֆոնդ, գ. 89, ք. 5:

ցություններին: Հունիսի 29-ին Հայաստանի կառավարությանը հղած հեռագրում իր կառավարության այդ որոշմանը Գ. Չիչերինը հետևյալ հիմնավորումն է տալիս. «Նպատակահարմար ենք գտնում, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք դաշնադրի մշակումը կայանա Երևանում: ...Մոտ օրերս մեր ներկայացուցչությունը ընկ. Լեզրանի գլխավորությամբ ճանապարհ կընկնի դեպի Երևան»: Տեսնում ենք, որ Գ. Չիչերինը որևէ բացատրություն կամ հիմնավորում չի տալիս իրենց որոշմանը: Բացատրություն չկար, որովհետև բանակցությունները Երևան տեղափոխելը հարմար միջոց էր հարցը ձգձգելու համար: 1920թ. հուլիսի 8-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին հղած հեռագրում Լ. Շանթը նշում է. «Բանակցությունների տեղափոխումը Երևան հարցը կբարդացնի և անվերջ կհետաձգվի պայմանագրի կնքումը»¹²: Այս ամենով հանդերձ պետք է նաև տեսնել, որ Գ. Չիչերինը և Լ. Կարախանը Մոսկվայի բանակցություններում ջանում էին հարցի խաղաղ կարգավորումը գտնել, որպեսզի կանխվեր Թուրքիայի հետագա հարձակումը Հայաստանի վրա: Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջև տարածքային խնդիրները խաղաղ կարգավորելու նպատակով էր, որ Գ. Չիչերինի միջնորդությամբ Թուրքիան հետաձգեց Հայաստանի դեմ ռազմական գործողությունները: Ռուսաստանի ձեռնարկած այս քայլերը ուղղորդված էին մինչ Սևրի պայմանագրի լույս աշխարհ գալը Հայաստանը «միջազգային իմպերիալիզմի դաշնակցի» դրությունից դուրս բերելուն: Չստացվեց ու չէր էլ կարող ստացվել, որովհետև Հայաստանի Հանրապետությունն 1919թ. սկզբից իր ողջ քաղաքական հաշիվները կառուցել ու կապել էր Փարիզի խաղաղության կոնֆերանսի և նրա կայացնելիք որոշումների հետ: Հայաստանի կառավարությունը գտնում էր, որ Հայաստանն 1-ին աշխարհամարտում հաղթող պետությունների դաշնակիցն է: Ահա թե ինչու

¹² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, ք. 168:

Սևրի պայմանագրի ստորագրման նախօրեին Հայաստանի կառավարությունը չէր կարող կատարել «միջազգային իմպերիալիզմից» ձեռք քաշելու Ռուսաստանի պահանջը: Մոսկվայի բանակցությունների մասին շատ լուրջ դատողություններ ու եզրահանգումներ անելիս աչքաթող չպետք է անել նաև երկու կարևոր հանգամանք: Առաջին, որ Ռուսաստանը 1918թ. սկսած բազում անգամներ է հայտարարել, որ չի ճանաչել ու չի ճանաչելու անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախ գոյությունը: Ու նաև դիվանագիտության պատմությունը լուրջ չի ընդունում այն պահը, երբ երկու երկրներ միջպետական հարաբերություններ հաստատելու նպատակով բանակցում են, և բանակցությունների ընթացքում կողմերից մեկի գորքերը գրավում են մյուսի տարածքները: 1920թ. հուլիսի 12-ի Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինին հղած բողոքի նոտայում Հայաստանի կառավարությունը գտնում էր, որ «Ձեր գորքերի կողմից Հայաստանի տարածքների գրավումը Հայաստանի և հայ ժողովրդի սուվերենության խախտում է»¹³: Երկրորդ կարևոր հանգամանքն այն էր, որ Հայաստանի պատվիրակությունը կապի բացակայության պատճառով չէր կարողանում հրահանգներ ստանալ իր կառավարությունից: 1920թ. հուլիսի 8-ին Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին հղած հեռագրում վարչապետ Հ. Օհանջանյանն ասում է. «Մինչև այժմ ոչ մի լուր չունենք Շանթից ու չգիտենք, թե ինչ է կատարվում Մոսկվայում: Պետք է Կիրովին ասել, որ նման դրությունը, երբ ամիսների ընթացքում պատվիրակությունը կտրված է իր կառավարությունից, տանելի չէ: Մանավանդ որ Չիչերինն իր հեռագրում խոստացել էր նրանց տալ մեզ հետ կապվելու բոլոր հարմարությունները»¹⁴:

Այս շրջանում Հայաստանի շուրջ կատարված անցքերը թերի կլինեին, եթե չանդրադառնանք Ադրբեջանի քայլերին: Խորհրդայնացումից անմիջապես հետո Բաքվում տրամադ-

¹³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, ք. 197:

¹⁴ Նույն տեղում, ք. 199-200:

րությունն այնպիսին էր, որ մայիսին խորհրդային կարգեր պիտի հաստատվեին նաև Հայաստանում: Ապրիլի 30-ին ձեռքակալվում են Ադրբեջանում Հայաստանի ներկայացուցչության անդամները՝ Մ. Հարությունյանի հետ միասին: Վերջինս Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչն էր: Մայիսի կեսերից վերաբերմունքը փոխվում է: Մայիսի 18-ին Մ. Հարությունյանը բանտից ազատվում և տեսակցություն է ունենում Նարիմանովի և Հուսեյնովի հետ¹⁵: Նրանք խոստանում են բանտից ազատել նաև ներկայացուցչության մյուս անդամներին և բացել կնքված հայկական ներկայացուցչությունը: Ինչը որ կատարում են հունիսի մեկին: Ադրբեջանը նույնիսկ ցանկություն է հայտնում բանակցություններ սկսել Հայաստանի հետ՝ տարածքային հարցերը լուծելու նպատակով¹⁶: Բնականաբար, հայ-ադրբեջանական կոնֆերանս չի գումարվում, որովհետև Ադրբեջանը ևս այդ քայլերն անում էր ելնելով հեղափոխական ընդհանուր շարժի տրամաբանությունից: Սևրի պայմանագրի ստորագրումից և նույն օրը Հայաստանի և ՌՍՖՍՀ միջև ստորագրված (Թիֆլիս) պայմանագրից հետո, երբ փոխվեց վերաբերմունքն, ու Հայաստանը որակվեց «միջազգային իմպերիալիզմի արևելյան դաշնակից», Ադրբեջանը մոռացավ հայ-ադրբեջանական կոնֆերանս հրավիրելու իր խոստումները: 1920թ. օգոստոսի 27-ին Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանը Հ. Օհանջանյանին հղած հեռագրում նշում է, «Մուսավաթական իշխանությունն իր գոյության վերջին ամիսներին կարծեք թե տրամադրվել էր որոշ զիջումներ անելու (նկատի ունի անդրկովկասյան 2-րդ կոնֆերանսի ապրիլյան որոշումը): Սովետական Ադրբեջանն այդ զիջումներն ավելորդ է համարում և ձգտում է խնդիրն ավարտել այսօր: Այդ նպատակին հասնելու համար նա ունի երկու ճանապարհ: Առաջինը ստեղծել Սովետական Հայաստան և երկրորդը՝ անմիջական կապ հաստատել Տաճկաստանի հետ:

¹⁵ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 60, ք. 7-8:

¹⁶ Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 211, ք. 188:

Մոսկվայի կառավարության որոշումը ձեռք մեկնել բոլոր հակաանգլիական ուժերին կարճ ճանապարհով իրագործելի է Ադրբեջանը Ղարաբաղ-Չանգեզուր-Նախիջևան-Սուրմալու գծով Տաճկաստանի հետ կապելով: Համաշխարհային հեղափոխության առումով բոլշևիզմի այս էֆեկտի քայլը Ադրբեջանի համար ռեալ նշանակություն ունի: Այն, ինչ առաջ իրագործվում էր թուրք ցեղի միացյալ լոգունգի տակ, այժմ իրագործվում է բանվորագյուղացիական հեղափոխության և հակաանգլիական պայքարի լոգունգի տակ»¹⁷: Այս եկար մեջբերումը ցույց է տալիս, որ Հայաստանի կառավարությունը շատ լավ էլ ինֆորմացված է եղել, թե ինչ է կատարվելու, բայց գալիք արհավիրքը կանխելու ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկել: Ավելին, իմ կարծիքով, արել է քայլեր, որոնք ավելի են բարդացրել Հայաստանի վիճակը: 1920թ. հունիսին կառավարության որոշմամբ հայկական գործերը Կարսից շարժվեցին Օլթի և գրավեցին այն: Հիմնավորումը՝ շրջափակված վիճակում Օլթիի ածխահանքերից օգտվելն էր: Այս հարցում խնդիրն այն չէ, որ թուրքական կողմը առիթ ունեցավ պնդելու Հայաստանի նախահարձակ լինելու և իր ռազմական գործողությունները արդարացնելու քայլերը: Եվ ոչ էլ այն, որ հետագա ուսումնասիրողներից ոմանք հայ-թուրքական պատերազմում նախահարձակ կողմ են ճանաչել Հայաստանը՝ փաստելով Օլթիի շրջանի գրավումը: Խնդիրն այն է, որ հայտնվելով շատ ծանր իրավիճակում, Հայաստանի կառավարությունն անում էր քայլեր, որոնք ավելի շատ համընկնում էին թշնամու ծրագրերին: Դրան նպաստում էր բարոյա-հոգեբանական մթնոլորտը, որը չէր համապատասխանում քաղաքական փոփոխված իրավիճակին: Հայաստանի կառավարությունը չէր հավատում բոլշևիկ-քեմալական դաշինքի կենսունակությանը և համոզված էր, որ ի վերջո Եվրոպան հաղթելու է այդ պայքարում, և դրան ոչ համարժեք քայլեր անելու առումով 1920 թվա-

կանը շատ դրսևորումներով նման էր 1918 թվականին: Այն ժամանակ էլ հայ քաղաքական ուժերը չէին հաշտվում, որ Ռուսաստանը ստորագրել է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և փոթորկեցին այդ պայմանագրի դեմ, իսկ հետո ստիպված ստորագրեցին Բաթումի ավելի ծանր պայմանագիրը: Այժմ էլ Հայաստանի կառավարությունը չէր ուզում ընդունել, որ Ռուսաստանը պարզապես շարունակում է Անդրկովկասում ընդհատված իր քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր նույն Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Մոսկվայի բանակցությունների ժամանակ Գ. Չիչերինը դա էր հասկացնում Հայաստանի պատվիրակությանը, որը վերջինս մերժեց: Իր դերն էր խաղում նաև այն հանգամանքը, որ հայ քաղաքական գործիչները նեղացած էին Ռուսաստանից՝ բոլշևիկյան դառնալու համար: Այս գործոններից յուրաքանչյուրը կարելի է հաստատել կամ հերքել, բայց միևնույնն է, Հայաստանի կառավարությունը, իր հակվածության պատճառով, որևէ գործնական քայլ չէր կարողանում կատարել գալիք մարտահրավերներին դիմակայելու առումով: Հայաստանի դեմ հետագա գործողությունները ծրագրելիս այդ գործոնները հաշվի էին առնված: Այդ ծրագիրը մշակվեց ու գործողության մեջ դրվեց սեպտեմբեր ամսին: 1920թ. սեպտեմբերի 1-ին Բաքվում իր աշխատանքն է սկսում Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը: Համագումարին մասնակցում էին 1891 պատգամավորներ՝ հիմնականում մուսուլմանական երկրներից (Թուրքիա, Պարսկաստան, Պակիստան, Աֆղանստան, Եգիպտոս և այլն): Համագումարի ընդունած բոլոր փաստաթղթերում նշվում է, որ «Հայաստանը միջազգային իմպերիալիզմի դաշնակիցն է» ու «անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությանը պարտության մատնել»: Հեղափոխական գաղափարը տրված էր: Համագումարն ընտրել էր Արևելքի ժողովուրդների պրոպագանդայի ու գործողության խորհուրդ: Այս խորհուրդին էլ հանձնարարվում է մշակելու Հայաստանը պարտության մատնելու գործողությունների ծրագիրը: 1920թ. սեպտեմբերի 17-ին խոր-

¹⁷ Նույն տեղում, ֆ. 278, ց. 1, գ. 30, ք. 28-29:

հուրդը կոմիսներնի գործադիր կոմիտեին, ՌԿ/բ/Կ կենտկոմին և ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատին է ուղարկում այդ ծրագիրը: Այն կոչվում է «Եզրակացություն Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա մոմենտի մասին»: Այս ընդարձակ փաստաթղթում խոսվում է, որ «Պարսկաստանում բոլշևիկների դիրքերը թուլացել են հոգուտ անգլիացիներին»: Ի՞նչ էր թաքնված այս պարբերության տակ, փաստաթղթում չի ասված: Բանն այն է, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո կարմիր բանակի գործադիրությունները մտան Պարսկաստան: Նրանց օգնում էր ապստամբ Բյուչուկ խանը: Նույն Բյուչուկ խանը, տեսնելով մի քանի ամսում բոլշևիկյան զորքերի բռնագրավումներն ու կամայական գործելակերպը, զենքը շուտ տվեց նրանց դեմ: 1920թ. սեպտեմբերին Ռաշտի մոտ խոր կիրճում, պարսկական զորքերը երկու կողմից փակելով կիրճի ելքերը, գլխավին ջարդում են ռուսական զորամիավորումը: 12 հազար կարմիրբանակայիններից ազատվում են միայն չորս հարյուր զինվոր: Ամեն ինչ սկսվել էր այն բանից, որ պարսիկները կրակի էին տվել Ռաշտի մոտակայքում գտնվող, ազգաբնակչությունից բռնագրաված պարսեմամբերքի պահեստները: Մինչ սեպտեմբերի կեսերը տևած բախումների ժամանակ բոլշևիկները Պարսկաստանում կորցնում են շուրջ 17 հազար զինվոր և սպա¹⁸: Ահա, այսպես Արևելքը հեղափոխականացնող պարսկական ուղին փակվել էր: Այդ պատճառով էլ շահական Պարսկաստանը դասվել էր հեղափոխության թշնամիների ու Հայաստանի դաշնակիցների շարքում: Բնականաբար, Պարսկաստանում կատարված իրադարձությունները ցնցել էին բոլշևիկյան ղեկավարությանը: Օրջոնիկիձեն Բյուչուկ խանի արածը որակեց ստորություն: Հավելելով նաև, որ իբր «իրեն հարգող ոչ մի քաղաքական գործիչ չէր կարող այդպես վարվել»¹⁹: Ահա, խոսքը վերաբերում էր Պարսկաստանում տեղի ունեցած այս միջադեպին, որից հետո Մ. Է-

մալն ավելի մեծ կշիռ էր ձեռք բերում «արևելքը հեղափոխականացնելու գործում»: Այդ պատճառով էլ «Մերձավոր Արևելքի ներկա պահի մասին» եզրակացությունում մանրամասն շարադրված է, թե ինչպես պետք է պաշտպանել քեմալական շարժումը անգլո-պարսկա-հայկական հնարավոր ագրեսիայից: Բնության մեջ գոյություն չունեցող նման դաշինքի վտանգները կանխելու միջոց է դիտվում Հայաստանը պարտության մատնելու անհրաժեշտությունը. «Հայաստանի վրա հարձակումը բացի թուրքական ազգայնական շարժումը փրկելուց, մեզ հնարավորություն կտա առարձին-առանձին ջարդելու թշնամիներին, որոնք պատրաստվում են մեզ վրա հարձակվելու»: Այնուհետև նշվում է, որ այդ հարձակման հետևանքով «Հայաստանը շարքից դուրս կգա ավելի շուտ, քան կհասնեն անգլո-շահական զորքերը, իսկ Վրաստանը, որին մենք չենք դիպչի այդ հարձակման ժամանակ, կվախենա խառնվել այդ պայքարին»: Այս հիմնավորումները տալուց հետո գալիս է Հայաստանի վրա համաշխարհային հեղափոխական ուժերի հարձակման գործնական մասը: Այդ պատճառով էլ այն տալիս են ամբողջությամբ. «Ռազմական գործողությունները մեր կողմից ոչ մի լրացուցիչ ուժ չեն պահանջի: Ըստ էության դրանք կիրագործվեն թուրքական էրզրումյան կորպուսի միջոցով: Մեր կողմից հարձակումը կլինի մոտավորապես ցուցադրական, որի համար մեր ուժերը բավական են: Դիվանագիտական առումով Արևմտյան Եվրոպայի հասարակության դժգոհությունը դիմակայելու նպատակով Հայաստանի վրա հարձակումը պետք է իրագործվի հետևյալ ձևով. թուրքական զորքերը սկսում են հարձակումը Հայաստանի վրա, իսկ մենք մեր մամուլի և հրապարակայնության մյուս օրգանների միջոցով ահավոր աղմուկ ենք բարձրացնում Եվրոպայում, նոր հայթուրքական կոտորածների և դրանք մեկընդմիջտ կանխելու անհրաժեշտության մասին: Ու այդ կոտորածները վերջ տալու նպատակով մեր զորքերը Հայաստան են մտնում, նրա զորքերի կողմից անպաշտպան մնացած արևելյան սահմանից: Ազ-

¹⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 621, ք. 1-2:

¹⁹ ՀՀ ՀԷՓ ՊԿԱ, ֆ. 4005, ց. 1, գ. 26, ք. 6:

գայնական պատերազմը կանխվում է և դրա ս փոխարեն Հայաստանում հաստատվում է խորհրդային իշխմանություն: Այնուհետև, մենք թուրքական զորքերը դուրս կբերենք Հայաստանի սահմաններից և հայերի ու թուրքերի հետ ս. ազա բախումը կանխելու նպատակով մեր զորքերով կգրավենք հայ-թուրքական սահմանը: Այսպիսով, մենք արևմտաեվրոպական պրոլետարիատի աչքում կհառնենք խաղաղարարի աբրտակարգ ազնիվ դերում, որը Հայաստան է շարժվել միայն ր այն բանի համար, որ վերջ դնի կոտորածներին և հայ ժողովրդի մնացած մասին փրկի վերջնական ոչնչացումից»²⁰: Այս վստիաստաթուղթը մեկնաբանության անհրաժեշտություն չունի, որովհետև հետագա գործողություններն ամբողջապես կատարվել են դրան համապատասխան: Չնայած դրան, այնուամենայնիվ, անհրաժեշտ է բացատրել, թե առանց այն էլ ծանր կոլագության մեջ գտնվող Հայաստանի դեմ նման քաղաքական մասշտաբներով կամպանիան ինչով էր պայմանավորված: Գումսիարելով Արևելքի ժողովուրդների համագումարը, կոմիստերները ձգտում էր դրանով ազդել եվրոպական պետությունների վրա, որպեսզի կանխեն նրանց կողմից Սևրի պայմանագրի իրականացումը: Անհրաժեշտ էր արևմուտքին և հատկապես Անո գլխային, ցույց տալ, որ Սևրի պայմանագրով որոշած սահմանն ենթով Հայաստան ստեղծելու պարագայում նրանց դեմ է դուրս գալու ողջ մուսուլմանական աշխարհը: Նաև, որպեսզի Հայաստանի դեմ ռազմական նախատեսվող գործողությունների ժամանակ արևմուտքը չօգնի նրան: Այնուհետև, քանի որ Հայաստանն ուներ 30 հազարանոց լավ զինված ու մարտունակ ի բանակ, անհրաժեշտ էր ցույց տալ, որ քեմալական զորքերն ի ու ռուսական զորքերը միասին են հարձակվում: Սա հիմնականում արվում էր հայոց բանակը դասալքելու և անմարտունակ դարձնելու նպատակով: Փաստաթղթի հեղինակները լավ գիտեին, որ հայկական բանակը հիմնականում գտնվում է ռուսական նախկին

բանակի սպաների հրամանատարության տակ: Պետք է ասել, որ այս քարոզչությունն ամենամեծ հարվածը եղավ բանակին, որը, փաստորեն, չկովեց քեմալականների դեմ: Դրա նախադեպը ևս կար: 1920թ. հունիսին Ղարաբաղում գտնվող էրսպեղիցիոն հատուկ կորպուսը, տեսնելով, որ Ղարաբաղ են մտնում կարմիր զորքերը, առանց մարտի նահանջեց²¹: Ահա այս հոգեբանական էֆեկտի վրա էլ մեծ ուշադրություն էին դարձրել Հայաստանը պարտության մատնելու ծրագրի հեղինակները, որն էլ արդյունքում հսկայական նշանակություն ունեցավ: Սրանք էին 1920թ. սեպտեմբերի 17-ի փաստաթղթերի լույս աշխարհ գալու և գործողության ծրագրի դառնալու հիմնական գործոնները: Կարելի է ասել, որ այն Հայաստանը և Վրաստանը խորհրդայնացնելուն և Թուրքիայի ամբողջականությունը սատարելուն ուղղված գործողությունների ծրագիր էր: Միշտ է, Վրաստանի անունը երկու անգամ է հիշատակված փաստաթղթում, բայց դա ևս բավարար է պատկերացում կազմելու համար: Վրաստանը դիտվում է թշնամի պետությունների շարքում, իսկ հետո, ինչպես հիշում եք, նշվում է, որ «Այդ հարձակման ժամանակ Վրաստանին չենք դիպչի և նա կվախենա խառնվել այդ պայքարին»: Այսինքն՝ Հայաստանից հետո հերթը հասնելու էր Վրաստանին: Բայց անհրաժեշտ էր բացառել ռազմական դաշինքի հնարավորությունը Հայաստանի և Վրաստանի միջև: Ամեն դեպքում, հայ-վրացական հնարավոր դաշինքը, որի մասին Ադրբեջանը խորհրդայնացնելուց առաջ և հետո (մինչև 1920թ. օգոստոս) շատ էին խոսում հատկապես Վրաստանում, փաստաթղթի հեղինակների ուշադրության կենտրոնում է եղել: Ինչպես կտեսնենք քեմալականների Հայաստանի վրա հարձակման շրջանում, Վրաստանը չեզոք դիրք գրավեց և մերժեց Հայաստանի կառավարության «ընդհանուր վտանգի» դեմ դաշինք կնքելու մասին առաջարկությունները: Այսինքն՝ հայ-վրացական հնարավոր դաշինքը բա-

²⁰ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, ք. 1-3:

²¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 211, ք. 184:

ցառելու հարցում ևս այդ ծրագիրը կյանքում իրականացվեց: Ինչ վերաբերում է հայ-վրացական դաշինքի մասին խոսակցություններին, ապա այդ խնդիրը պետք է մանրամասն քննարկել: Մենք նախընթաց շարադրությունից զիտենք, որ 1919թ. հունվարից Թիֆլիսում գործում էր հայ-վրացական կոնֆերանսը, որն զբաղվում էր Հայաստանի և Վրաստանի միջև սահմանների վերջնական որոշմամբ: Չնայած հայ-վրացական հարաբերությունները կարգավորվել էին, բայց տարածքային վեճը շարունակվում էր այդ կոնֆերանսի աշխատանքային տարողությամբ: Այսինքն կողմերը պայմանավորվածություն էին ձեռք բերել, որ տարածքային խնդիրները քննարկվեն միայն կոնֆերանսի շրջանակներում մինչև Փարիզի վեհաժողովը որոշի երկու պետությունների սահմանները: 1919թ. վերջերին, երբ սրվեցին տարածքային վեճերն ու բախումները Հայաստանի և Ադրբեջանի միջև, Վաստանը դարձավ միջնորդ: Մտահոգված Անդրկովկասի ապագայով, Վրաստանը նախաձեռնեց երեք պետությունների 1920թ. ապրիլյան կոնֆերանսը, որը գործնական հետևանք չունեցավ, որովհետև մի քանի օր հետո Ադրբեջանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Արդեն ասվել է, որ Վրաստանի արտաքին գործերի մինիստր Ն. Գեգեչկորին «ընդհանուր վտանգի» դեմ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև համագործակցության դաշինքի անհրաժեշտությունն ընդգծում էր Թիֆլիսի կոնֆերանսում: Ադրբեջանի խորհրդայնացումը կանխեց այդ դաշինքի ստեղծումը: Ահա, դրանից հետո էր, որ սկսվեցին կամ շարունակվեցին դաշինքի մասին խոսակցությունները: Այս անգամ արդեն խոսքը վերաբերում էր «ընդհանուր վտանգի» դեմ հայ-վրացական համագործակցությանը:

Այժմ տեսնենք, թե հայ-վրացական դաշինքի ստեղծման մասին խոսք ու գրույցն իր մեջ քաղաքական ռեալություն պարունակո՞ւմ էր, թե՞ ոչ: 1920թ. մայիսին, երբ վերացել էր մեկ հարվածով Հայաստանը և Վրաստանը խորհրդայնացնելու միտքը, սկսվեցին անջատ գործողությունները: Մայիսի 7-ին

պայմանագիր կնքելով Վրաստանի հետ և ճանաչելով նրա սովերենությունն այն տարածքներով, որին ձգտում էր Վրաստանը, ՌՍՖՍՀ կառավարությունը բացառեց հայ-վրացական դաշինքի ստեղծման հնարավորությունը: Շուրջ մեկ ամիս իր վերաբերմունքն այս պայմանագրի վերաբերյալ քննարկելուց հետո Հայաստանի կառավարությունը 1920թ. հունիսի 11-ին բողոքի հետևյալ նոտան է հղում Վրաստանի կառավարությանը. «Ծանոթանալով Ռուսաստանի և Վրաստանի միջև սույն թվի մայիսի 7-ին կնքված դաշնագրին, տեղեկացանք, որ Ռուսաստանն այդ դաշնագրով պարտավորվում է ճանաչել Թիֆլիսի նահանգն ու Բաթումի շրջանը բոլոր գավառներով ու շրջաններով, որպես վրացական պետության կազմի մեջ մտնող հողամասեր: Անցյալ տարվա հունվարի 17-ին Հայաստանի ու Վրաստանի միջև կնքված դաշնագրով Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեկ մասը, որ սահմանակից է Վրաստանին և Հայաստանին, երկու հանրապետությունների կողմից ճանաչված է չեզոք, մինչև հարցի վերջնական լուծում: Նույն դաշնագրով Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառը ճանաչված է վիճելի: Բաթումի շրջանում՝ Ճորոխի որոշ հողաբաժինների նկատմամբ Հայաստանը ներկայացրել է իր պահանջը Կարս-Բաթում երկաթգծի կառուցման համար, որը Հայաստանին հնարավորություն կտա իրեն այնքան կենսական ու անհրաժեշտ տնտեսական ելքը դեպի ծով»²²: Այնուհետև, նշվում է, որ Հայաստանի կառավարությունը չի ընդունում մայիսի 7-ի պայմանագրի Թիֆլիսի նահանգին և Բաթումի շրջանին վերաբերող մասը: Վերոհիշյալ նոտայի մեկ ամսով ուշացումը պայմանավորված էր այն բանով, որ մայիսին Բաթումի հարցը լուծելու նպատակով Փարիզի վեհաժողովի խորհուրդը Սան-Ռեմոյում խորհրդակցություն էր վարում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների հետ: Խնդիրն այն է, որ Սան-Ռեմոյի կոնֆերանսը պաշտպանել էր

²² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 84, ք. 3:

հայկական պատվիրակության առաջարկը, որ Կարս-Բաթում-Ռիզե կառուցվելիք երկաթգիծը և նրան հարող տարածքները ճանաչվեն Հայաստանի Հանրապետության սեփականություն: Վրաստանի պատվիրակությունը կտրականապես դեմ էր արտահայտվել, և հարցը քննարկման էր դրվել երեք հանրապետությունների պատվիրակությունների խորհրդակցությունում: Այստեղ ևս Վրաստանի պատվիրակությունը դեմ արտահայտվեց այդ նախագծին: Վրաստանի պատվիրակության առաջարկը հետևյալն էր՝ Բաթումի մարզը Վրաստանի անկապտելի մաս պետք է ճանաչվի: Վրաստանի կառավարությունն այդ խորհրդակցությունում պնդում էր, որ ինքը պատրաստ է կառուցելու Կարս-Բաթումի երկաթգիծը, Հայաստանին վերապահելով միայն երկաթգծից օգտվելու իրավունքը: Աղբյուրների պատվիրակությունը ևս պաշտպանում է Վրաստանի այս առաջարկը²³: Այս ամենից հետո Կարս-Բաթում երկաթգծի հետ կապված հարցի քննարկումը հետաձգվեց, բայց այն զգալի լարվածություն մտցրեց հայ-վրացական հարաբերություններում: Վրաստանում այն մեկնաբանվում էր, որ Հայաստանը խոչընդոտում է Բաթումի մարզը Վրաստանին հանձնելուն և դրանով վտանգում է հայ-վրացական համագործակցությունը²⁴: Բաթումի հարցի հետ կապված այս լարվածությունը շուտով վերացավ, որովհետև 1920թ. հուլիսի 7-ին վրացական զորքերը մտան Բաթումի, և դաշնակիցները մարզի իշխանությունը հանձնեցին Վրաստանին: Դրանից հետո վրացական կողմը կրկին շեշտադրումները փոխեց: 1920թ. օգոստոսի 3-ին Հայաստան է գալիս Լոնդոնում Վրաստանի ներկայացուցիչ Գամբաշիձեն: Այս այցը հետաքրքիր է այն առումով, որ այն պաշտոնական բնույթ չէր կրում և կապված էր Կարս-Բաթում երկաթգծի հարցի հետ: Հ. Օհանջանյանի հետ հանդիպման ժամանակ նա նշում է, որ «Վրաստանի ներկայացուցիչները Սան-Ռեմոյում մեծ սխալ են գործել, Բաթումի հարցում բռնե-

²³ Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 217, ք. 94:

²⁴ «Борьба», N 108, 15 мая, 1920г.

լով չզիջող դիրք, որը վատ տպավորություն է թողել լորդ Զերզոնի վրա: Այն տպավորությունն է ստեղծվել, թե վրացիք չեն ցանկանում հայերին ելք տալ դեպի ծով»²⁵: Գամբաշիձեն նաև Հայաստանի վարչապետին հայտնում է, որ ինքը աշխատում է համոզել իր ընկերներին, որ փոխեն վերաբերմունքը կապված Կարս-Բաթում երկաթգծի կառուցման և Բաթումի նավահանգստից Հայաստանի օգտվելու հարցի հետ: Այս առաքելության բուն նպատակը պարզվում է Գամբաշիձեի և Օհանջանյանի զրույցի վերջին մասով: Բաթումի հարցի հետ կապված Հայաստանի վարչապետի գայրույթը լորդ Զերզոնի անունով մեղմելուց հետո Գամբաշիձեն խոսում է սլավոն և տաճիկ ազգերի մերձեցման մասին և նշում է, որ դրանից տուժելու են Հայաստանն ու Վրաստանը: Այնուհետև, նա գտնում է, որ «այդ վտանգի առաջն առնելու համար մեր երկու երկրները պետք է զինվորական դաշինք կնքեն և դրանով հող նախապատրաստեն ֆեդերացիա կամ կոնֆեդերացիա ստեղծելու համար»²⁶: Այս հարցադրումներին Հայաստանի վարչապետը պատասխանում է, որ «իր կառավարությունը գտնում է, որ վերջին երկու հարցերի շուրջ բանակցելը դեռևս վաղ է»: Փաստորեն, Հայաստանի և Վրաստանի միջև ռազմական դաշինք կնքելու մասին խոսակցությունը տեղի է ունեցել 1920թ. օգոստոսի 3-ի այս ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ: Մի կողմ թողնելով այն հարցը, թե արված առաջարկությունը լո՞րջ էր, թե՞ տրամադրություն էր ստուգվում, բայց այն ճիշտ ժամանակին էր: Հ. Օհանջանյանի պատասխանը ցույց է տալիս, որ Հայաստանի կառավարությունը չէր զգում, թե ժամանակն ինչպիսի արագությամբ էր աշխատում ի վնաս Հայաստանի: Հայ-վրացական համագործակցության անհրաժեշտությունը նույն օրերին փորձում է հասունացնել նաև Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ Ջախարիաձեն: 1920թ. օգոստոսի 6-ին Հայաստանի ռազմական

²⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, ք. 10:

²⁶ Նույն տեղում:

մինիստրին հղած հաղորդագրությունում Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության զինվորական կցորդ, պորտչիկ Եղիազարովը հայտնում է Ղազախում ռուսական զորքերի կուտակման ճշգրիտ տեղեկությունները: Նա հայտնում է նաև, որ դրանք իրեն է տրամադրել անձամբ գեներալ Ջախարիաձեն: Այնուհետև հայտնում է, որ գլխավոր շտաբի պետը իրեն ասել է, որ Ղազախում կուտակված բոլշևիկյան զորքերը ստացել են գաղտնի ծրարներ, որոնք պետք է բացեն լրացուցիչ հրահանգով: Այս հաղորդագրությունից նաև տեղեկանում ենք, որ Վրաստանի ռազմական մինիստր Լորդկիպանիձեն և Ջախարիաձեն պլանավորած են եղել Հայաստան գալու, բայց մինիստրի հիվանդանալու պատճառով այցը հետաձգվել է²⁷: Վրացական կողմի նման անհանգստությունը պայմանավորված էր այն բանով, որ օգոստոսին նրանք կարծում էին, թե ռազմական գործողություններ էին նախապատրաստվում Հայաստանի և Վրաստանի դեմ: Դրա վկայությունն է նաև հուլիս-օգոստոս ամիսներին վրացական թերթերի բարձրացրած աղմուկը՝ Վրաստանին և Հայաստանին սպառնացող ընդհանուր վտանգի ու ընդհանուր ուժերով նրա առաջն առնելու մասին: Տեսնելով այս ամենը, Հայաստանի վարչապետը 1920թ. օգոստոսի 18-ին հեռագրում է Թիֆլիս՝ Ս. Բեկզաղյանին. «Ընդհանուր համաձայնություն կնքելու վրացիների առաջարկին սկզբունքորեն համաձայն ենք: Բանակցություններն սկսելու տեղի, ժամանակի մասին Ձեր ձեռք բերվելիք պայմանավորվածությունը մեր կողմից հավանության կարժանանա»²⁸: Վրաստանի կառավարությունը Հայաստանի կառավարության նախագահի՝ հայ-վրացական ընդհանուր դաշինք կնքելու վրացական կողմի արած առաջարկությանը համաձայնելու այս գրությանը երկար ժամանակ չի պատասխանում: Հանգամանք, որը ցույց է տալիս, թե ինչու էր վրացական կողմը ոչ պաշտոնական առաջարկ ա-

նում: Հայ-վրացական դաշինքի մասին ոչ պաշտոնական առաջարկներով նրանք նման հնարավորությունը լսելի էին դարձնում՝ կանխելու Վրաստանի դեմ հնարավոր հարձակումը: Դրա վկայությունն է մամուլի միջոցով հարցի քննարկումը: Մյուս կողմից էլ ոչ պաշտոնական առաջարկներով վրացական կողմը ստուգում և Հայաստանին հասկացնում էր, որ վերջինս հանդես գա նման առաջարկությամբ: Թերևս, այդ պատճառով էր, որ նրանց ոչ պաշտոնական առաջարկներում մույնականություն չկար: Օգոստոսի 3-ին Լոնդոնում Վրաստանի ներկայացուցիչ Գամբաշիձեն Օհանջանյանին առաջարկում էր հայ-վրացական դաշինք կնքել Ադրբեջանի դեմ, իսկ օգոստոսի 6-ին ռազմական թևի կողմից ակնարկվում էր բոլշևիկյան վտանգի դեմ ընդհանուր պայքարի անհրաժեշտությունը: Ահա, երբ օգոստոսի 18-ին Օհանջանյանը համաձայնություն տվեց հայ-վրացական ընդհանուր համաձայնության շուրջ բանակցություններ սկսելու մասին, Վրաստանի կառավարությունը չպատասխանեց հարցադրմանը և սպասեց մինչև հայկական կողմը կրկին հետաքրքրվի: Որոշ ժամանակ անց, երբ Ս. Բեկզաղյանն արտաքին գործերի նախարարից պատասխան է պահանջում, վերջինս նշում է, որ իրենք չգիտեն, թե ում դեմ է դաշինք առաջարկվում: Ահա, այդ հանդիպման խոսակցությունն ինչպես է ներկայացնում Ս. Բեկզաղյանը Հ. Օհանջանյանին հղած հեռագրում. «Երեկ տեսնվեցի Սաբահթարաշվիլու հետ: Հարցրի նրանց պաշտոնական պատասխանի մասին:

Պատասխանեց, որ առանց պաշտոնական գրության իրենք դժվարանում են պատասխանել, որովհետև չգիտեն, թե ում դեմ է առաջարկվում դաշինքը՝ տաճիկների²⁹, թե՞ ռուսների: Ես հայտնեցի, որ զինվորական նախարարը հարցը դրել է՝ ռազմական դաշինք բոլշևիկների դեմ և դուք պետք է պատասխանեք դրան: Սակայն, նա վճռականապես պնդեց, որ դիմումը լիմի գրավոր: Եթե համաձայն եք, ցուցում տվեք, թեև ես դա համարում եմ իզուր, որովհետև երբ ես հայտնեցի, որ Գեորգաձեն համաձայն է դաշինքին, նա ասաց, որ Գեորգաձեն նման լիա-

²⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 184, ք. 93:

²⁸ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 607, ք. 81:

գորություն չի ունեցել»²⁹: Արխիվային այս փաստաթուղթը քվազրված չէ, և դժվար է պնդել, թե երբ է եղել Բեկզադյանի և Սաբահթարաշվիլու այս հանդիպումը: Իրադարձությունների ընդհանուր տրամաբանությամբ այն պետք է որ կայացած լինի օգոստոսի վերջին կամ սեպտեմբերին³⁰: Ամեն դեպքում այս հանդիպումը կայացել է մինչև Հայաստանի վրա Թուրքիայի հարձակումը: Այս հարցում պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ռազմական մինիստր Գեորգաձեն իսկապես պնդել է հայ-վրացական ռազմական դաշինքի անհրաժեշտության վրա, և չի բացառվում, որ 1920թ. օգոստոսին նա ազատվել է աշխատանքից հենց այդ պատճառով: Եթե ուշադրություն դարձնենք Սաբահթարաշվիլի-Բեկզադյան գրույցին, ապա կտեսնենք, որ Սաբահթարաշվիլին պատահական չի ասել, որ «Գեորգաձեն նման լիազորություն չի ունեցել»: Այնուամենայնիվ, այս իրադարձությունները նաև ցույց են տալիս, որ Վրաստանում եղել են հայ-վրացական դաշինքի ջատագովներ ի դեմս գեներալներ Գեորգաձեի և Ջախարիաձեի: Անկողմնակալ քննությունը պահանջում է ասել, որ ստեղծված բարդ ու հակասական պայմաններում Վրաստանի կառավարությունը ճիշտ էր կողմնորոշվում: Այս ամենում իր մեծ ավանդն ուներ պետության ղեկավար Ն. Ժորդանիան, որն աշխատում էր տարածաշրջանային ռեալությունները հաշվի առնելով՝ Վրաստանը քիչ կորուստներով դուրս բերել ստեղծված վիճակից: Թվում էր, թե հայ-վրացական դաշինքի ստեղծումը ձեռնառու պետք է լիներ նաև Վրաստանին, որովհետև օգոստոսին Մոսկվայում ընթացող բանակցություններում Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի տարածքային ամբողջականությունը «ազգային ուխտի» գծագրած սահմաններում, որի մեջ մտնում էր նաև Բաթումի մարզը: Բաթումի հարցը Վրաստանի համար առաջ-

²⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 81, ք. 4:

³⁰ Պրոֆ. Է. Ա. Ջոիրաբյանը «1920թ. հայ-թուրքական պատերազմը և տերությունները» գրքում նշում է, որ Սաբահթարաշվիլի - Բեկզադյան այս հանդիպումը կայացել է հոկտեմբերի 28-ին: (Երևան, 1997թ., էջ 231):

նային նշանակություն ունեցող հարց էր, և եթե նա դաշինքի մեջ մտներ Հայաստանի հետ, դա նշանակում էր, որ միանգամից դուրս է գալիս Թուրքիայի և Ռուսաստանի դեմ: Նման քայլի հնարավոր հետևանքն այն կլիներ, որ Վրաստանը կկորցներ Բաթումը: Բացի դրանից: Հայ-վրացական դաշինք չէր կարող ստորագրվել, որովհետև 1920թ. մայիսի 7-ի պայմանագրով Ռուսաստանը ճանաչել էր Վրաստանի անկախությունը ցարական Ռուսաստանի վարչատարածքային բաժանման սահմաններում: Այսինքն՝ Բաթումի մարզը Ռուսաստանի կողմից ճանաչվել էր Վրաստանի տարածք, և վերջինիս խնդիրն էր թույլ չտալ, որ Թուրքիան վերստին գրավի այն: Տեսնում ենք, որ շատ գծերով Վրաստանի ու Հայաստանի առաջ նույն խնդիրներն էին կանգնած, որոնք էլ թույլ չտվեցին կամ անհնարին դարձրին հայ-վրացական դաշինքի ստեղծումը: Բայց Անդրկովկասում մեծ քաղաքական տեղաշարժը ճիշտ կամ սխալ ընկալելուց Վրաստանի և Հայաստանի միջև չէր կարող դաշինք ստեղծվել նաև կողմերի միջև տարածքային վեճի պատճառով: Քիչ հետո մենք կտեսնենք, թե ինչպես թուրք-հայկական պատերազմի շրջանում Վրաստանը Հայաստանի հանդեպ որդեգրեց 1918թ. քաղաքական վարքագիծը: Դրա նախանշանները զգացվում էին նաև սեպտեմբեր ամսին: 1920թ. սեպտեմբերի կեսերին Վրաստանի կառավարության ղեկավարի պաշտոնակատար և նորանշանակ պաշտպանության մինիստր Լորդկիպանիձեն հրավիրում է Տ. Բեկզադյանին և հայտնում իր կառավարության տեսակետն այն մասին, որ «սպասվող վտանգը կանխելու նպատակով անհրաժեշտ է հայ-վրացական չեզոք գոտին բաժանել Հայաստանի և Վրաստանի միջև»³¹: Հայաստանի կառավարությունը մերժում է այս առաջարկությունը, բայց ինչպես միշտ, չի խորանում հարցադրման շարժառիթների մեջ: Այլապես միամտորեն չէր կարծի կամ Թուրքիայի դեմ պատերազմի շրջանում անտեղի ջան-

³¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, ք. 11:

քեր չէր գործադրի Վրաստանի հետ դաշինք կնքելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ այն բանից հետո, երբ Վրաստանի կառավարությունը 1920թ. սեպտեմբերին փաստորեն մերժեց հայ-վրացական համատեղ գործողությունների կամ դաշինքի հնարավորությունը, Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը շարունակում է իր կառավարությանը հավաստել, որ հնարավոր է հայ-վրացական գործողությունները կոորդինացնել: Նման ոչ իրատես գործունեության համար, թերևս, զգալի դեր էր խաղում Տ. - Բեկզադյանի հակաբոլշևիկյան դիրքորոշումը: Այս փորձված դիվանագետը, գործելով Թիֆլիսում և լավ տեսնելով ու նաև հասկանալով Վրաստանի կառավարության գործունեության իմաստը, ձգտում էր դրանց տալ հայեցողական մեկնություններ: Գտնելով, որ «Հայաստանն ու Վրաստանը բնական դաշնակից են ռուս-թուրքական շրջափակման պայմաններում» ու գործը կառուցելով այս տրամաբանության վրա, նա հաճախ անում էր քայլեր, որոնք հակասում էին դիվանագիտական նորմերին: 1920թ. սեպտեմբերի 27-ին նա Հ. Օհանջանյանին հայտնում է, որ Մոսկվա մեկնելուց առաջ սեպտեմբերի 25-ին իրեն էր այցելել Սովետական Ռուսաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ նշանակված Գերասիմ Մախարաձեն: Այնուհետև հայ-վրացական մերձեցման անհրաժեշտության մասին իրենց գրույցի բովանդակությունը շարադրելուց հետո հայտնում է. «Ես նրան տվի մեր մոսկվացի ներկայացուցչի անունով մի նամակ, որի մեջ ընդգծեցի մեր և Վրաստանի գործելակերպի կոորդինացիայի անհրաժեշտությունը Սովետական Ռուսաստանի դեմ»³²: Այստեղ դիվանագիտական նորմերը հայ դիվանագետը խախտել է ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության առումով: Նաև գործել է առանց կառավարության գիտության: Նամակը Գ. Մախարաձեին տվել է սեպտեմբերի 25-ին, իսկ կառավարության ղեկավար և

³² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 83, ք. 5:

արտաքին գործերի մինիստր Հ. Օհանջանյանին այդ մասին հայտնել է երկու օր հետո: Այս ամենը որևէ քննադատության չի դիմանում, որովհետև պատկերացնելն անգամ անհնարին է, որ նման բան հնարավոր է պետական քաղաքականության մեջ: Բեկզադյանը ոչ միայն գտնում էր, որ Մոսկվայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը պետք է գործի Սովետական Ռուսաստանի դեմ, այլ նաև այդ գործում նա կարող է համախոհ ունենալ նույն Սովետական Ռուսաստանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչին: Բարեբախտաբար, արխիվներում պահպանվել է նաև Բեկզադյանի՝ Ռուսաստանում Հայաստանի դիվանագիտական ժամանակավոր ներկայացուցիչ Եդ. Եդիազարյանին ուղարկած այդ նամակը. «Մոսկվա է գալիս,- գրում է Տ. Բեկզադյանը, - գրաբերս՝ Գերասիմ Ֆոմիչ Մախարաձեն, որը մինչև հիմա եղել է Վրաստանի ներկայացուցիչը Հայաստանում: Հանձնարարում եմ իբրև մի չափազանց խոհուն, ազնիվ, գիտակ մարդու, որը դեպի մեր դատը շատ լավ է տրամադրված»: Այնուհետև ընդգծված հակառուսական շեշտադրումներով Տ. Բեկզադյանը պատմում է, որ Հայաստանը օղակված է տաճկա-բոլշևիկյան ուժերով: Նաև՝ Լեզրանի մասին, որը չի ցանկանում Երևան գնալ և մնում է Թիֆլիսում: «Մեր ընդհանուր կարծիքն է, որ այժմ արդեն Լեզրանն է ձգձգում իր Հայաստան գնալը և միաժամանակ ինչ-որ դավադիր ծրագիր է իրագործում, օղակելով Հայաստանը ռուսական և տաճկական զորքերով, և երբ Հայաստանը ստիպված կլինի շնորհիվ իր նեղ կացության, իր դեմ կովողներից ողորմություն հայցել, ահա այդ պահին գնալ Հայաստան և առաջարկել իր բարեկամության պայմանները»: Տպավորությունն այնպիսին է, որ Բեկզադյանը տեսնում էր զալիք արհավիրքը, բայց փրկության ելք չի տեսնում, որովհետև «երկիրը չորս կողմից օղակված է թշնամիներով, որոնց թվում է այժմ նաև Ռուսաստանը, հայ ժողովրդի վաղեմի սիրո առարկան, իր դարավոր թշնամու՝ թուրքի ու տաճիկի հետ դաշնակցած»: Այս տողերից պարզ երևում է Ռուսաստանից Տ. -

Բեկզաղյանի դառնացածության աստիճանը: Քանի որ Ռուսաստանն իր թշնամի թուրքի դաշնակիցն է, ուստի, նա նաև Հայաստանի թշնամին է: Այս մերկապարանոց ու ոչ քաղաքական ձևակերպումը, ցավոք, ուղեկիցն էր Հայաստանի գրեթե բոլոր պետական ու քաղաքական գործիչների: Թերևս՝ այս հոգեբանական գործոնը ևս քեմալականները կարողացան ճիշտ օգտագործել Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելիս: Այս երևույթի բացատրությունն այն է, որ սիրո կամ ատելության գրգիռներով լիցքավորված քաղաքականությունը համընկնում է թշնամու պլանների հետ: Դրա գումարելիներից է նաև չեղած բաներին հավատալն ու դրանց հետ զուր հույսեր կապելը: Ասածներին ասպացույցն ամբողջապես տրված է Տ. - Բեկզաղյանի այս նամակում: Բեկզաղյանը գիտեր, որ հայվրացական դաշինքը բացառվում է և դրա գլխավոր ջատագով, ռազմական միմիստր Գեորգաձեն էլ ազատված էր աշխատանքից: Չնայած դրան, նա ոչ միայն հավատում, այլև հավատացնում է Ռուսաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, որ հայերն ու վրացիները միասին են պաշտպանելու իրենց անկախությունը: «Ինչ վերաբերում է Վրաստանին,- գրում է Բեկզաղյանը,- ապա մենք ձգտում ենք ստեղծել մտերիմ փոխհարաբերություններ, մինչև նույնիսկ դաշնագրություն. ... վրաց ղեկավար շրջաններն այժմ պարզ գիտակցում են, որ այն օրը, երբ Հայաստանում բոլշևիկյան իշխանություն եղավ, կորած է Հայաստանի անկախության հետև իրենց անկախությունը, այդ պատճառով անկեղծորեն փարած են մեր անկախությանը: ... Պետք է, որ Սովետական իշխանությունը համոզվի, որ մենք երկուսս էլ այնքան ուժեղ ենք փարված մեր անկախությանը, որ պատրաստ ենք միասին դիմադրել այն դաշինքին, որը ձեռք կտա մեր անկախությանը»³³: Հնարավոր է, որ Գ. Մախարաձեն և մի քանի վրացի քաղաքական գործիչներ ևս կիսում էին այս մտտեցումը, բայց երբ Բեկ-

³³ Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 191, ք. 37-40:

զաղյանը գրում էր այս տողերը, Թուրքիան արդեն ձեռք էր բերել Վրաստանի չեզոքությունը և հարձակվել էր Հայաստանի վրա: Այս «գաղտնիքը» պետք է որ Բեկզաղյանը կռահած լիներ, որովհետև դեռևս սեպտեմբերի 18-ին նա հանդիպել էր Ժորդանիային, և վերջինս հրաժարվել էր Հայաստանին նավթ բաց թողնել՝ փաստելով նավթի վրա Ադրբեջանի հսկողությունը³⁴: Ինչ վերաբերում է Բեկզաղյանի ռուս-տաճկական «դաշինքին դիմակայելու» լավատեսությանը, ապա դա կապված էր այն տխուր իրողության հետ, որ Հայաստանի կառավարությունը տեղեկություն չունեի քեմալական գործերի մասին: Ոչ միայն տեղեկություն չունեի, այլև կարծում էր, որ 1-ին աշխարհամարտում պարտված թուրքական զորքերն իրենցից վտանգ չեն ներկայացնում: Տեսեք, թե այդ մասին ինչ է հայտնել իր կառավարությանը Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Ա. Հարությունյանը 1920թ. հունիսի 18-ին Օրջոնիկիձեի հետ ունեցած հանդիպումից հետո. «Օրջոնիկիձեն ասաց, որ Հայաստանի կառավարությունն իզուր է վախենում տաճիկներից, նրանք անկարող են հարձակվել Հայաստանի վրա: Տաճիկներն իրենք են վախենում Հայաստանից, նրանք ընդամենը մեկ շտաբ ունեն Բայազետում, որը, հավանաբար, հնից է մնացել: Ասաց նաև, որ ինքը նոր է նամակ ստացել և ճիշտ տեղեկություններ ունի տաճիկների մասին»³⁵: Տեղեկատվության պակասին գումարվում էին նման «ձեռնառու», բայց իրականության հետ կապ չունեցող փաստերը: Տեսնում եք, թե Օրջոնիկիձեն ինչպես և ինչ նպատակով է նման տեղեկատվությամբ սնուցում Հայաստանին: Նա շատ լավ գիտեր, որ Անգլիան չի զինաթափել պարտված Թուրքիային: Ավելին, Անգլիան երկու տարի ձգձգեց փարիզյան բանակցությունները: Այդ ընթացքում Քեմալ Աթաթուրքին հաջողվեց ստեղծել կենտրոնաձիգ քաղաքական և ռազմական իշխանություն: Չնայած դրան, Հայաստանում բոլորովին այլ կարծիք կար պարտված Թուր-

³⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, ք. 237:

³⁵ ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 57, ք. 47:

քիայի մասին: Հանգամանքն այս պայմանավորված էր Հայաստանի պետական մեքենայի անկատարությամբ: Անշուշտ, դյուրին է հարցը փակել Անգլիայի կամ դաշնակիցների պրոթուրական քաղաքականությամբ: Բայց հարցը այդ իրողությամբ չի փակվում, որովհետև նույն Անգլիայի ներկայացուցիչները հատկապես 1919թ. Հայաստանի իշխանություններին հորդորում էին բավարարվել ձեռք բերված տարածքներով, զբաղվել պետական մեքենայի կատարելագործմամբ և անմիջական հարաբերությունների մեջ մտնել Թուրքիայի հետ: Անգլիական բանակի զենքերալ Բիչը 1919թ. ապրիլին Կարսի բանալիները հանձնելով Ալ. Խատիսյանին, նշում է, որ սկզբի համար Հայաստանը լավ հնարավորություն է ստացել, և Եվրոպայից ավելին չպետք է պահանջել: Այս և նման հորդորները անտեսվում կամ փաստվում էին ինչպես թրքամետություն: Հայաստանի կառավարությունը հույսը դնելով դաշնակից մեծ տերությունների վրա, իրականում մնաց առանց դաշնակցի: Վրաստանի հետ դաշինք կնքելու ուղղությամբ Հայաստանի կառավարության ձեռնարկները շարունակվեցին մինչև 1920թ. հոկտեմբեր: Երկու ամսվա բանակցային քաշքշուկից և դրանով Հայաստանի կառավարության մոտ գուր հույսեր փայփայելուց հետո 1920թ. հոկտեմբերի 26-ին Վրաստանի կառավարությունը մերժեց «ընդհանուր թշնամու դեմ միասին հանդես գալու» Հայաստանի կառավարության հարցադրումը: Այդ մասին 1920թ. հոկտեմբերի 26-ին Ս. Բեկզադյանն իր կառավարությանը հայտնում է. «Երեկ ցերեկը և երեկոյան երկու միստ ունեցանք վրաց պատվիրակության հետ, որի մեջ մտնում էին Ռամիշվիլին, Սաբահարաշվիլին և Մղիվանին: Նիստերը նրանք սկսում էին սահմանավեճերից, իսկ մենք՝ նրանց մեզ անելիք գործնական աջակցությունից: Նրանք ստիպված էին անցնել մեր հարցին և արտահայտվեցին պարզ: Ռամիշվիլին ասաց, որ «այս վտանգը մենք համարում ենք ընդհանուր և գտնում ենք, որ պետք է աջակցենք Հայաստանին, որ նա կարողանա դիմադրել իր թշնամիներին»: Ռամիշվիլու արտահայ-

տած մտքից պարզ երևում է, որ այլևս «ընդհանուր վտանգ ու ընդհանուր թշնամի» չկա: Վտանգն ու թշնամիները միայն Հայաստանին են և Վրաստանին այլևս վտանգ չի սպառնում: Իսկ դրանից ընդամենը երկու ամիս առաջ Վրաստանն ավելի վտանգի զգացողություն ուներ և օգոստոսին ինքն էր Հայաստանին առաջարկում «ընդհանուր գործողությունների համաձայնագիր կնքել»: Այս ամենը խոսում է այն մասին, որ մինչև Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա ապահովվել էր Վրաստանի չեզոքությունը: Ու միայն հոկտեմբերի 26-ին, երբ, փաստորեն, վճռված էր հայ-թուրքական պատերազմի ելքը, վրացական կողմը հայտնեց իր չեզոքության մասին: Հոկտեմբերի 26-ի բանակցություններում Ռամիշվիլին ասում է. «Մենք Ձեզ ցույց ենք տալիս բարոյական և նյութական օժանդակություն: Մենք Ձեզ հնարավորություն ենք տալիս զինակոչել մեր հպատակ հայերին, մավթ ենք տալիս, թույլ ենք տալիս ներկրել ռազմական պիտույքներ, այդպիսով խախտելով մեր չեզոքությունը»: Այնուհետև, որևէ պատրանք չթողնելու համար, Ռամիշվիլին խոսակցությունից հանում է դիվանագիտական պաճուճանքը և հանդիմանական տոնով ասում է. «Ի՞նչ եք ուզում ավելին՝ սա արդեն բարյացկամ չեզոքություն չէ, այլ խախտումն է ամեն տեսակ չեզոքության: Ավելին մեզանից մի պահանջեք, Ռուսաստանի դեմ մենք այժմ չենք կարող կռվել, որովհետև պայմանագիր ունենք, որը չենք կարող խախտել, իսկ Քենալի դեմ մենք կռիվ սկսել չենք կարող, որովհետև ունենք թուրք հպատակներ, որոնց գրգռելու ոչ մի հարկ չունենք»³⁶: Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Բեկզադյանը, որը կառավարությանը երեք ամիս շարունակ հավաստում էր հայ-վրացական դաշինքի հնարավորության մասին, այս բանակցություններից հետո միայն ընդունեց, որ «վրացիների դիրքը պարզ է և բնական իրենց շահերի տեսակետից»: Փաստերը ցույց են տալիս, որ Վրաստանի կառավարությունը

³⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 83, ք. 7-9:

նակ կապեր է ունեցել ու ինֆորմացիա է ստացել Թուրքիայից: Մինչև այդ կարևոր հարցին անցնելը, որը ցույց է տալիս, թե որքան ճկուն ու բազմապլան է գործել Վրաստանի կառավարությունը, հարկ է անդրադառնալ նաև Թուրքիայի հարձակման շրջանում Արդահանում Վրաստանի բռնած դիրքին: Պատերազմի առաջին օրերին վրացական կողմը Արդահան-Բաթում գիծը փակելու պատրվակով սկսեց հավակնություն հանդես բերել աջափնյա Արդահանի հանդեպ, որը մտնում էր Հայաստանի տարածքի մեջ: Հոկտեմբերի սկզբին այդ մասին Հայաստանի արտաքին գործերի մինիստր Հ. Օհանջանյանը հեռագրով Տ. Բեկզադյանին հայտնում է. «Մեպտեմբերի 30-ին, երբ դեռ նոր էին սկսվել կռիվները մեր և տաճիկների միջև, վրացիները նշանակել և Չըլդր ու Գյուլի շրջաններ են ուղարկել իրենց գավառապետերը: Այդ առիթով վճռականորեն բողոքեցեք Սաբահթարաշվիլուն: Բացի այդ, հայտնեցեք, որ դա հակասում է նրանց խոստումներին: Նման քայլերն անհանդուրժելի են և մեր կողմից կարող են դիտվել որպես թշնամական վերաբերմունք դեպի մեզ: Պահանջեցեք այդ շրջանից անմիջապես հեռացնել վրացական իշխանությունների ներկայացուցիչներին և բացատրեք, որ վրացիները ոչ մի դեպքում չեն կարող ձեռնամուխ (հավակնել – Կ. Ս.) լինել Կուրի աջափնյա սահմաններին»³⁷: Այս միջադեպի մասին Բեկզադյանը գեներալ Քիշմիշյանին սեպտեմբերի 30-ին հղած նամակում ասում է. «Չըլդր և Գեվլա շրջաններում նրանց բռնած դիրքը ցույց է տալիս, որ կարող է կապ ունեն թուրքերի հետ և կամ ուզում են օգտվել մեր ծանր դրությունից»³⁸: 1920թ. հոկտեմբերի 9-ին Բեկզադյանը Թիֆլիսից հայտնում է, որ Արդահանի հարցով տեսակցել է Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սաբահթարաշվիլու հետ: Վերջինս հավաստել է, որ իրենց ձեռնարկումները ոչ թե տարածքային զավթում են, այլ Արդահանը պաշտպանելու ձեռնարկումներ: Այնուհետև Սաբահթարաշվի-

լին Բեկզադյանին հավաստում է, որ «Ձեր պարտությունը մեր պարտությունն է և մենք անհամբեր սպասում ենք Ձեր հաղթանակին, ինչպես մեր փրկությունն»: Դրանից ընդամենը մի քանի օր առաջ, երբ թուրքերը գրավեցին հայկական Արդահանը, վրացիները հանգիստ դիտեցին այդ տեսարանը, որովհետև Արդահանի վրացական մասին վտանգ չէր սպառնում: Իսկ Արդահանի գավառապետ, գնդապետ Կադիմովը վրացիների հանգստությունը բացատրեց այն բանով, որ թուրքերը կովում են Հայաստանի և ոչ թե Վրաստանի դեմ: Հայաստանի ռազմական մինիստր Ռ. Տեր-Մինասյանն արտաքին գործերի մինիստրությանը հանձնարարում է. «Պարզել վրացիների հանգստության պատճառները: Արդյո՞ք դա հետևանք չէ քեմալականների հետ նրանց ունեցած կապերի»³⁹: Հոկտեմբերի 9-ին Սաբահթարաշվիլու հետ հանդիպման ժամանակ Բեկզադյանը ջանում է պարզել նաև այդ հարցը: Սաբահթարաշվիլին հանգստացնում է Բեկզադյանին. «Ձերոնց ասեք, որ նման բան չի կարող լինել»: Անշուշտ, կարևոր հարց է՝ եղե՞լ է, թե՞ ոչ վրացիների և քեմալականների միջև զաղտնի համաձայնություն: Կարևոր է այն առումով, որ հնարավոր հայ-վրացական դաշինքի կողմնակիցները (Ռ. Տեր-Մինասյան, Տ. Բեկզադյան) հետո էլ սկսեցին կասկածել, որ գոյություն ունի թուրք-վրացական դաշինք Հայաստանի դեմ: Արդահանի հանդեպ Վրաստանի հավակնությունները նման եզրահանգման հիմք են հանդիսացել: Կան նաև այլ փաստեր, որոնք սպացուցում են, որ Հայաստանի դեկավարների կասկածներն անհիմն չեն եղել: Դեռևս 1920թ. օգոստոսի 20-ին գեներալ Քիշմիշյանը Թիֆլիսից հայտնել էր, որ «Վրաստանն ազիտացիա է տանում խաղաղ ճանապարհով Արդահանի, Օլթիի, Չըլդրի շրջանները գրավելու: ... Այն հանձնարարված է Ախալցխայի և Ախալքալաքի սահմանապահ զորքերի հրամանատար գեներալ Չիկվաիժեին, որը Ջեմալ-Բեկ Սաչաբեիի միջոցով կապ է

³⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 81, ք. 4:

³⁸ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 486, ք. 237:

³⁹ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 486, ք. 287:

պահպանում տեղի մուսուլմանների հետ: Լուրեր կան նաև, որ իբր Արդահանի գավառապետ Կադիմովը ևս գործում է Վրաստանի օգտին: Առայժմ ամեն ինչ տարվում է խաղաղ ճանապարհով: Օգոստոսի 6-ին Թիֆլիս են եկել Չալդրի մուսուլմանների ներկայացուցիչները և հանդիպել են ներքին գործերի մինիստր Ն. Ռամիշվիլու հետ: Վրացիները մույն քաղաքակառուցությունն են վարում նաև չեզոք գոտում»⁴⁰: Վրաստանի կառավարությունը, նաև հասարակական կարծիքը, երկակի ու երկփեղկված մտտեցում ուներ Հայաստանի վրա Թուրքիայի հարձակմանը և նրա ունենալիք հետևանքների մասին: Վրացական մամուլի ամենօրյա ուշադրության կենտրոնում է հայվրացական հարաբերությունների խնդիրը: Սոցիալ-դեմոկրատների «Բորբա» և ազգային-դեմոկրատների «Մաքարթվելու» թերթերը գտնում էին, որ քեմալականների հաջողությունը վտանգի մեջ է դնելու Վրաստանը և իշխանություններից պահանջում էին դաշինքի մեջ մտնել Հայաստանի հետ և թույլ չտալ, որ Հայաստանի պարտությունով «Վրաստանն օղակվի տաճիկ-բուլղարիկյան ուժերով»: Վրացի ազգայնականների օրգան «Նաջիմալիստ» թերթը ճիշտ հակառակ տեսակետն է պնդում և գտնում է. «Զինվորական դաշինքը Հայաստանի հետ ընդունելի չէ Վրաստանի համար մույնիսկ այն պարագայում, եթե Հայաստանը հովանավորող գտնելու երկարատև որոնումներից հետո իր մանդատը սիրահոժար հանձնի Վրաստանին»⁴¹: Տեսանելի է, որ 1920թ. հոկտեմբերից Վրաստանի վերաբերմունքը ավելի թեքվում է քեմալականների հաջողության դեպքում վտանգն անտեսելու քաղաքական հարթություն: Հանգամանք, որը Հայաստանի կառավարությանը հիմք էր տալիս կարծելու, որ գոյություն ունի թուրք-վրացական զաղտնի դաշինք: Հատկապես նման եզրահանգմանը տրամադրեց Արդահանի հանդեպ Վրաստանի բռնած դիրքը: Անշուշտ, կարևոր է՝ Վրաստանը չեզոք դիրք էր պահպանում, թե՞ չեզոք-

⁴⁰ Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, ք. 184, ք. 101:

⁴¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, ք. 86, ք. 39:

քության անվան տակ կատարում էր իր դաշնային պարտականությունները Թուրքիայի հանդեպ: Նույնիսկ հոկտեմբերի վերջին, այսինքն՝ Կարսի անկման նախօրեին, Վրաստանի կառավարության կողմից Անգլիայից Բաթումի նավահանգստում ստացված մագուքը Հայաստան տեղափոխելն արգելելը⁴², մեզ հիմք չի տալիս պնդելու, որ գոյություն ուներ դաշինք քեմալականների և Վրաստանի միջև: Այդ մասին պատմությանը հայտնի վկայություններ կան: Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ քեմալականների պատվիրակության ղեկավար Զ. Կարաբեքիրը Ալ. Խատիսյանին պատմել է, որ Հայաստանի դեմ պատերազմ սկսելուց առաջ «Անգորայի ներկայացուցիչները ի դեմս Յուսուֆ Քեմալ Բեյի և Ալի Ֆուատ փաշայի 1920թ. ամռանը եղան Թիֆլիս և վրաց կառավարության հետ դաշն կապեցին, որի զորությամբ Վրաստանը հայ-թուրքական պատերազմի պարագային պետք է չեզոքություն պահեր և ատոր փոխարեն պետք է ստանար Բորչալուի և Ախալքալաքի գավառները և Արդահանի շրջանը»⁴³: Թուրք զորավարի ասածը միակ փաստարկն է, որ գոյություն է ունեցել թուրք-վրացական զաղտնի դաշինք: Չեզոքության մասին չեն ասում, որովհետև, ինչպես հիշում եք, հոկտեմբերի 26-ի բանակցությունների ժամանակ Ն. Ռամիշվիլին քանիցս նշել և հայկական կողմից չէր թաքցրել, որ իրենք չեզոքության պարտավորվածություն ունեն: Այդ փաստարկները Ռամիշվիլին բերում էր ցույց տալու, որ Վրաստանը չի կարող խախտել չեզոքությունը և դաշինքի մեջ մտնել Հայաստանի հետ: Ուստի, թուրք զորավարի ասածների մեջ նորություն չկար: Թուրք-վրացական դաշինքի մասին Կարաբեքիրի Խատիսյանին պատմածը ճշմարտանման է նաև այն պատճառով, որ Վրաստանի հետ կապված մույնաման մի ակնարկ էլ նա արել է Խատիսյանին, ասելով, որ «թուրք-վրացական պատերազմի

⁴² Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, ք. 636, ք. 32:

⁴³ Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 268:

պարագային հայերը Հայաստանի չեզոքությամբ կարող են ստանալ Ախալքալաքի գավառը և Բորչալուի գավառի մեկ մասը»: Տեսնում եք, որ դժվար է ասել, թե թուրք գորավարը որ դեպքում է ճիշտ: Խոսելով թուրք-վրացական համաձայնության կամ Վրաստանի չեզոք դիրքի մասին, նա ոչ մի գաղտնիք էլ չի բացել: Այլ խնդիր է, որ Կարաբեքիրը ցանկացել է Խատիսյանին ասել, որ մենք բոլոր կողմերից ապահովել էինք Հայաստանի մեկուսացումը, և դուք իզուր էիք հույս դնում Վրաստանի վրա: Այդ մասին գիտեին սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Վրաստանի հետ բանակցություններ վարած հայ գործիչները: Վրաստանն ունեցե՞լ է գաղտնի դաշնագիր տաճիկների հետ, թե՞ չի ունեցել: Այն եղել է անշուշտ, բայց դա չի նշանակում, որ այդ պայմանավորվածությունը եղել է Հայաստանի դեմ: Այս հարցերը Հայաստանի կառավարությանը ժամանակին մտահոգել է և դրանք ճշգրտվել են: 1920թ. հոկտեմբերին այդ հարցերով մտահոգ Հայաստանի ռազմական մինիստր Ռ. Տեր-Մինասյանին Տ. Բեկզադյանը պատասխանում է. «Վրացիները մեր դեմ չեն կռվի: Համաձայն են մեզ օգնել նյութապես միայն ծածուկ, որպեսզի թուրքերը չիմանան: Բոլշևիկները վստահեցրել են վրացիներին, որ տաճիկները Բաթումը չեն գրավի»⁴⁴: Անշուշտ, մասնավորապես հոկտեմբեր ամսին, երբ պարզ էր պատերազմի ելքը, Վրաստանի վերաբերմունքը փոխվել էր Հայաստանի հանդեպ:

Շատ հաճախ Բաթումում Հայաստանի համար ստացված ապրանքների մի մասը բռնագրավում էին, իսկ երբեմն էլ ընդհանրապես արգելում էին կարևոր նշանակության ապրանքների առաքումը Հայաստան: Հոկտեմբերի 20-ին Հ. Օհանջանյանը Թիֆլիս՝ Բեկզադյանին հաղորդում է, որ «հաղորդակցության մինիստրության ներկայացուցիչները Բաթումում պայմանագիր են կնքել Հայաստանի համար 500 տոննա կերոսին և 200 տոննա մագուր գնելու համար: Այն պայմանով, որ կերոսի-

⁴⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 79, ք. 150:

նի յուրաքանչյուր տոննային վճարվի 9 ֆունտ ստերլինգ, իսկ մագուրին՝ 8 ֆունտ ստերլինգ: Պայմանագիրը կորցնում է իր ուժը, եթե մինչև նոյեմբերի 5-ը արտահանության թույլտվություն չստանանք վրաց կառավարությունից: Խնդրում են շտապ սկսել բանակցությունները վրաց կառավարության հետ, վերոհիշյալ քանակությամբ մագուր և կերոսին Հայաստան ներմուծելու թույլտվություն ստանալու համար»⁴⁵: Այս փաստաթղթի վրա Բեկզադյանը գրել է «բանակցությունները սկսված են և մերժված»: Անշուշտ, նման վերաբերմունքը, բնականաբար, Հայաստանի կառավարության մոտ չէր կարող կասկածներ չառաջացնել Վրաստանի կառավարության վարած հակասական քաղաքականության հանդեպ: Հարկ է նաև նշել, որ այս մեծ քանակությամբ ուժանյութի արգելքը համընկնում էր քեմալականների կողմից Կարսի գրավման օրերի հետ: Այդ 500 տոննա կերոսինը և 200 տոննա մագուրը օգտագործվելու էին պատերազմի համար վճարող օրերին: Այսինքն՝ Վրաստանի կառավարության համար երբ տեսանելի դարձավ, որ Հայաստանը պարտվում է պատերազմում, նա փոխեց վերաբերմունքը: Բայց հանգամանքն այս չի ապացուցում, որ գոյություն է ունեցել վրաց-քեմալական համաձայնություն Հայաստանի դեմ: Նման բան չէր կարող լինել, որովհետև արդեն խոսել ենք այն մասին, թե ովքեր էին ծրագրավորում և որոշում Անդրկովկասի խորհրդայնացման խնդիրները: Ուստի, Վրաստանը չէր կարող «չեզոք դիրքից» բացի, որևէ լուրջ կամ դաշնակցային դերակատարություն ունենալ: Այլ հարց է, որ Վրաստանը գործում էր մեծ շարժի տրամաբանությամբ, որովհետև տեղեկատվություն էր ստանում Ռուսաստանից և Թուրքիայից: Հոկտեմբերին, երբ քեմալական զորքերը մոտեցան Արդահանին, վրացական կողմը լուրջ անհանգստություն հանդես բերեց այն առումով, որ թուրքական զորքերը կարող են շարժվել և գրավել Բաթումը: Անհանգստությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագ-

⁴⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, ք. 178:

րի տրամաբանությունից էր բխում, որովհետև Անդրկովկասի խորհրդայնացման և դրա հետևանքով Թուրքիային հանձնվելիք տարածքները ամուր կապված էին ու բխում էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրից: Մենք գիտենք, որ դաշնակիցները 1920թ. Բաթումը և նավահանգիստը հանձնեցին Վրաստանին: 1920թ. մայիսի 7-ին Սովետական Ռուսաստանի և Վրաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրով Բաթումը համարվում էր Վրաստանի տարածք: Քեմալականներին մեծ անհանգստություն էր պատճառում այս հանգամանքը: 1920թ. ամռանը Ռուսաստանի հետ ունեցած բանակցություններում թուրքական կողմը համառորեն պնդում էր, որ Անդրկովկասի և Թուրքիայի միջև տարածքային սահմանազատումը պետք է կատարվի համապատասխան Բրեստ-Լիտովսկի: Հանգամանք, որը զգալի բարդություններ էր առաջացնում Ռուսաստանի և Վրաստանի ու Հայաստանի հարաբերություններում: Ահա և Բաթումի հարցը հայ-թուրքական պատերազմի շրջանում Վրաստանի համար դարձել էր կենտրոնական հարց: Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սաբահթարաշվիլին ՌՍՖՍՀ արտաքին գործերի կոմիսար Չիչերինին հղած 1920թ. հոկտեմբերի ռադիոհեռագրում մտահոգված նշում է. «Մեր ունեցած տեղեկություններով Քեմալ փաշայի զորքերը հարձակվում են Սարիղամիշի և Մերդենեկի ուղղությամբ: Դրանով պարզ երևում է այդ զորքերի շարժը դեպի Արդահան և Բաթումի մարզ: Ելնելով ՌՍՖՍՀ կառավարության և Քեմալ-փաշայի միջև գոյություն ունեցող բարեկամական կապերից. խնդրում ենք մեզ տեղեկացնել ՌՍՖՍՀ կառավարության վերաբերմունքը Քեմալ փաշայի Անդրկովկասում կատարվող զինվորական գործողությունների մասին: Մյուս կողմից էլ, քանի որ Քեմալի արշավանքը ստանում է վտանգավորություն Վրաստանի սահմանների անվտանգության տեսանկյունից և կարծելով, որ թուրքերի նպատակներին ու պլաններին Դուք պետք է, որ լավ տեղյակ լինեք, իմ կառավարությունը կցանկանար տեղյակ լինել այն մասին, որոնք Ձեր կառավարությունը ձեռնարկելու է

կանխելու համար հնարավոր ռազմական բախումը Վրաստանի և Քեմալի զորքերի միջև»⁴⁶: Ինչպես տեսնում ենք, այս փաստաթղթում Վրաստանի կառավարության բերած փաստարկները ապացուցում են, որ վրաց-թուրքական հնարավոր գաղտնի դաշինքի մասին Հայաստանի պետական գործիչների կասկածներն անհիմն են: Պարզապես, ծանր վիճակի մեջ գտնվող երկրի ղեկավարները ավելին էին պահանջում Վրաստանից, քան այն կարող էր անել: Ուստի, տարբեր գրքերում, հոդվածներում, հուշերում Վրաստանի հանդեպ արված բացահայտ մեղադրանքները կամ նման ակնարկները բուն թուրքահայկական պատերազմի շրջանում հայեցողական են: Անշուշտ, կան փաստեր ու արխիվային փաստաթղթեր, որոնք առանց լուրջ քննության ենթարկելու կարող է նման տպավորություն թողնել: Նման տպավորություն թողնող փաստաթղթերից է 1920թ. հոկտեմբերի 9-ի Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Ահմեդ Մուխթարի տարողունակ նամակը Վրաստանի արտաքին գործերի մինիստրին: Մինչև այս նամակից մեջբերումներ անելը կամ այն ամբողջական ընթերցողին ներկայացնելը, պետք է ասեն, որ նամակի տոնայնությունը բարեկամ կամ դաշնակից երկրի տպավորություն է թողնում: Առավել ևս, որ Ահմեդ Մուխթարը առիթը բաց չի թողնում փնտելու «դաշնակցությանը» և «դաշնակցական Հայաստանին»: Եթե սրան գումարում ենք նաև թուրքական շողում լեզվով մեկնաբանությունները Վրաստանի կառավարության հասցեին, պատկերն ու տպավորությունը պարզ են դառնում: Այսինքն՝ միայն բարեկամական երկրի արտաքին գործերի մինիստրը կարող են նման նամակ գրել: Բայց տպավորությունը միանգամից փոխվում է, երբ փաստերը համադրելով տեսնում ենք, որ հոկտեմբերի 9-ի այդ նամակը փաստորեն պատասխանն էր հոկտեմբերի սկզբին Չիչերինին հղած Վրաստանի արտաքին գործերի մինիստրի նամակի: Այսինքն՝ քեմալականների կողմից Վրաս-

⁴⁶ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 486, մ. 2, ք. 289:

տանի սահմանների հնարավոր սպառնալիքների մասին Ռուսաստանից պահանջվող հարցադրումներին պատասխանել է Թուրքիայի արտաքին գործերի կոմիսարը: Անշուշտ, նամակում որևէ ակնարկ չկա, որ այն գրվել է Չիչերինի հանձնարարականով: Դա կարևոր էլ չէ: Վրաստանն ուներ մտահոգություններ, որ թուրքական զորքերը կարող են հարձակվել նաև Վրաստանի վրա: Ահա, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրն էլ պատասխանում է Վրաստանի կառավարության հարցադրմանը: «Կասված այն բանի հետ,- ասված է նամակում,- որ դաշնակցական երևանյան կառավարությունը երկու անգամ դիմել է Մովետական Հանրապետությանը և վերջին անգամ Վրաստանի կառավարությանը բողոքով մեր գորքերի արևելյան ռազմաճակատում առաջխաղացման դեմ և հավատացնում էր վրացական ժողովրդին, որ Թուրքիան նաև մտադրություն ունի հարձակվելու Վրաստանի վրա: Այդ պատճառով մենք անհրաժեշտ ենք համարում Թիֆլիսի կառավարությանը տալ հետևյալ բացատրությունը: ...Թուրքական ժողովուրդը դաշնակցական կառավարությանը ներկայացնում է հետևյալ մեղադրանքները:

1) Ամիսներ շարունակ բանդաները և դաշնակների բանակը չեն դադարում իրագործելուց դաժանություններ Կարսի, Օլթիի, Կոյուբի ազգաբնակչության դեմ: Բանակը հարձակվում է մեր ուղեկալների վրա և թալանում են մեր գյուղերը, որը ստիպում է մուսուլման ազգաբնակչությանը գաղթելու երկրի խորքերը: Այս ամենը մեր ազգաբնակչության մեջ առաջացնում է անտիրապետելի դժգոհություն:

2) Դաշնակցության կառավարությունը անգլիացիների ցանկությամբ միշտ խանգարել են հաղորդակցություն հաստատելու մի կողմից Թուրքիայի և Ռուսաստանի միջև և Ադրբեջանի հետ մյուս կողմից: Նրանց գորքերը միշտ հարձակվել են Նախիջևանի վրա, որպեսզի այն անջատեն Ադրբեջանից:

3) Չնայած մեր բոլոր քայլերին, դաշնակները միշտ մերժեցին մեզ հետ խաղաղություն կնքելու առաջարկները: ...

Նրանք սպասում էին հարմար պահի հարձակում սկսելու Էրզրումի վրա, որպեսզի մեր արևելյան շրջանների վրայով Մեսեպոտամում միանան անգլիական զորքերին, որպեսզի արևելքում խաղան նույն դերը ինչ որ խաղում է Հունաստանը Արևմտյան Անատոլիայում: Նրանք կարծում են, որ բրիտանական իմպերիալիզմի միջոցով կարող են իրագործել Սևրի պայմանագիրը և ստեղծել մեծ Հայաստան»: Ընթերցողին Թուրքիայի արտաքին գործերի կոմիսարի այս մտքերն, անշուշտ, հիշեցրին 1920թ. սեպտեմբերին Արևելքի ժողովուրդների համագումարի կողմից ստեղծված գործադիր մարմնի կազմած փաստաթուղթը: Տեսնում եք նաև, որ այս ամենը Վրաստանի հետ որևէ կապ չունի: Բայց այդ ամենը Վրաստանի արտաքին գործերի մինիստրին հղած նամակում ասվում է, որպեսզի հասկացնի, որ, ի տարբերություն Հայաստանի, Վրաստանն անգլիական իմպերիալիզմի դաշնակիցը չէ և մտահոգվելու անհրաժեշտություն չունի: Բացի դրանից, հիմնավորում են նաև Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման պատճառները: Այնուհետև, Ա. Մուխթարը գրում է. «Այդ բոլոր փաստերը ստիպեցին Անգորայի կառավարությանը համապատասխան ձևով դաս տալ դաշնակներին ու մեր գորքերով գրավել այնպիսի ստրատեգիական դիրքեր, որ Երևանի կառավարությունը ճիշտ հասկանալով իրերի իրական վիճակը... մեզ հետ կնքի խաղաղության պայմանագիր: Կովկասում մեր միակ թշնամիները դաշնակներն են և ուրիշ ժողովուրդների վրա հարձակման մասին խոսք չի կարող լինել: Մենք համոզված ենք, որ Թուրքիայի և Վրաստանի միջև հարաբերությունները միշտ եղել են բարեկամական և դաշնակների դրդումները չեն կարող ազդել Վրաստանի վրա»⁴⁷: Վրաստանում այս նամակը ստանալուց հետո էր, որ վերջնականապես համոզվեցին, որ վտանգը միայն Հայաստանին է վերաբերում: Այս նամակը նաև հիմնավորում է, որ վրաց-թուրքական որևէ համաձայնություն չի ե-

⁴⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 86, ք. 22-24:

ղել: Այլ հարց է, որ Վրաստանն իրեն ապահովագրված զգալով թուրքական հնարավոր հարձակումից, հայտնի չափով փոխեց վերաբերմունքը Հայաստանի հանդեպ, իսկ հոկտեմբերի 26-ին վերջնականապես մերժեց Թուրքիայի դեմ համատեղ գործողությունների առաջարկը: Հայաստանի վրա քեմալականների հարձակման շրջանում հայ-վրացական հարաբերությունները բարդ ու հակասական բնույթ են կրել, և դրանում ավելի շատ իր մեղքի բաժինն ունի հայկական կողմը:

Ռազմական միմիստր Ռ. Տեր-Սիմասյանը, որի ձեռքում էր կենտրոնացված ողջ իշխանությունը, համոզված կողմնակիցը լինելով Վրաստանի հետ սերտ համագործակցության, միևնույն ժամանակ Արդահանի միջադեպին չափից ավելի կարևորություն տվեց: Վրացական կողմը հոկտեմբերին գորքեր էր կուտակում սահմանի վրա: Այս իրողությունը կարելի էր նաև այլ կերպ օգտագործել կամ, ելնելով Հայաստանի ծանր վիճակից, այն չսրել ու չհասցնել սահմանավեճի տարողության: Փաստորեն, Հայաստանի կառավարությունը մի կողմից ամեն ջանք գործադրում էր, որ Վրաստանը հակաքեմալական դաշինք կնքի իր հետ, իսկ մյուս կողմից էլ Արդահանի հայկական մասը վրացական գորք մտցնելը դարձրեց հարաբերությունները սրելու պատճառ: 1920թ. հոկտեմբերի 11-ին Հայաստանի արտաքին գործերի միմիստր Հ. Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին. «Ղարսից հայտնում են, որ Չուրգունա են մտել վրաց 30 զինվոր և մեկ սպա: Բարձրացրել են վրացական դրոշակ: Տեղեկությունների համաձայն Ախալքալաքից Չուրգունա է գալիս վրացական ութերորդ բատալիոնը: ... Շտապ և կտրուկ կերպով պահանջեցեք վրացական կառավարությունից անմիջապես հեռացնել իրենց գորքերը Արդահանի մեր սահմաններից: Հակառակ դեպքում՝ հետևանքների ողջ պատասխանատվությունը կընկնի նրանց վրա»⁴⁸: Առանց Վրաստանի կառավարությունից պատասխան բացատ-

⁴⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 636, ք. 17:

րություն ստանալու կատարվածի վերաբերյալ, բանտարկվում են վրացի զինվորները, իսկ վրացական դրոշը պատռում են: Այդ մասին հոկտեմբերի 14-ին Բեկզադյանը հեռախոսով Օհանջանյանին հայտնում է. «Երեկ մինչև Չուրգունայում վրացիների բանտարկման լուրը իմանալը, կառավարությունը որոշել է Արդահանից ետ քաշել իր գորքերը»: Պարզ երևում է, որ հայկական կողմի ձեռնարկած քայլերն անհիմաստ են եղել, որովհետև մինչ այդ Վրաստանի կառավարությունն արդեն որոշած է եղել իր գորքերն Արդահանից դուրս բերել: Բնականաբար, նման միջադեպերն անհետևանք չէին անցնում: Այդ մասին ևս Բեկզադյանը հայտնում է Օհանջանյանին. «Այսօր տեսնվեցի Սաբահթարաշվիլու հետ: Խոսակցության ժամանակ ստացվեց հեռագիրը վերոհիշյալ բանտարկության մասին: Խոսակցությունը սուր կերպարանք ընդունեց, որովհետև ես ասացի, որ նրանք չէին բանտարկվի, եթե ուրիշի հողի վրա իրենց դրոշը չպարզեին»: Չգալով, որ մթնոլորտը շիկանում է, Բեկզադյանն ասում է, որ «այդ բանտարկությունը հավանաբար կատարվել է առանց կառավարության գիտության»: Նաև խոստանում է, որ բանտարկյալներն անհապաղ կազատվեն: Հաջորդ օրը բանտարկյալներն ազատվում են և դուրս հրավիրվում հայկական տարածքից: Այս անգամ էլ պահում են վրացական ազատ արձակված միլիցիաներների հրացաններն ու ձիերը: Տեսեք, թե դրացիական հարաբերություններն ինչ աստիճանի են հասնում: Հոկտեմբերի 15-ին Սաբահթարաշվիլին Բեկզադյանից պահանջում է ետ վերադարձնել ձիերն ու հրացանները և պատժել Վրաստանի դրոշը պատռողին: Այս ամենի մասին Բեկզադյանը հեռախոսով հոկտեմբերի 15-ին հայտնում է Հ. Օհանջանյանին: Այս հեռախոսագրույցի ժամանակ Բեկզադյանը նաև հայտնում է, որ Արդահանում վրացական գորքերը քաշվում են նախկին դիրքերը: Փոխարենը Հայաստանը համաձայնում է Վրաստանի հսկողությանը հանձնել Արդահան-Ախալքալաք խճուղին: Փաստորեն, հոկտեմբեր ամսին հայ-վրացական հարաբերությունների առանցքային հար-

ցը Արղահանի շուրջ եղած վիճաբանությունն էր: Այն անհարիր է Հայաստանի ծանր դրությանը: Առավել ևս, որ դրան զուգահեռ Հայաստանի կառավարությունը ջանքեր էր գործադրում Վրաստանի հետ քեմալականների դեմ դաշինք ստեղծելու: Արդեն նշել եմ, որ Վրաստանի կառավարության կողմից այն վերջնականապես մերժվեց 1920թ. հոկտեմբերի 26-ին: Չնայած դրան, Հայաստանի կառավարությունը դեռևս հույսեր էր փայփայում Վրաստանի օգնության հետ: Հոկտեմբերի 20-ին հատուկ դեսպանորդի կարգավիճակով Հայաստան է գալիս Վրաստանի նախկին ռազմական մինիստր Գեորգաձեն: Առաքելության բուն նպատակը Հայաստանի կառավարության և ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջև Երևանում հոկտեմբերի 13-ից վարվող բանակցություններից տեղեկություն ունենալն էր: Այդ մասին արտաքին գործերի մինիստր Հ. Օհանջանյանին հոկտեմբերի 19-ին հեռախոսով հայտնում է Տ. Բեկզադյանը⁴⁹: Խոսքը վերաբերում է Հայաստանի կառավարության և Լեգրանի միջև վարվող այն բանակցություններին, որն ավարտվեցին 1920թ. հոկտեմբերի 28-ին ՌՍՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված արձանագրությամբ: Արձանագրություն, որով ՌՍՖՍՀ և Հայաստանի պատվիրակները գտնում են, որ Հայաստանի և Թուրքիայի միջև տարածքային վեճերը պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով ՌՍՖՍՀ բարեկամական աջակցությամբ այն բանից հետո, երբ. «1). Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարությունը իր գործերը ետ քաշի 1914թ. ռուս-թուրքական սահմանը: 2). Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարությունը հրաժարվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրից և Բաթումի կոնվենցիայից»⁵⁰: Պարզ երևում է, որ ստորագրված փաստաթուղթը բարի ցանկություն է և որևէ կապ չունի օրվա քաղաքական ռեալությունների հետ: Հարկ է նաև նկատել, որ Երևանում Լեգրանը ստորագրելով այս արձանագրությունը, դրսևորել էր

⁴⁹ Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 636, ք. 28:

⁵⁰ Բանքեր Հայաստանի արխիվների, 1967թ., էջ 71-72:

հարցի լուծման իր անձնական և ոչ թե ՌՍՖՍՀ կառավարության մոտեցումները: Այս փաստաթղթի լույս աշխարհ գալու մասին Հայաստանի արտաքին գործերի մինիստր Հ. Օհանջանյանը հոկտեմբերի 29-ին Տ. Բեկզադյանին հղած հեռագրում նշում է. «Երեկ երկու կողմից ստորագրվեց արձանագրություն, որը հիմք ընդունելու դեպքում Լեգրանի վերադառնալուց հետո պիտի ստորագրվի հաշտարար պայմանագիրը մեր և Ռուսաստանի միջև: Ռուբենի (Տեր-Սիմոնյան-Կ. Ս.) առաջարկը Լեգրանի կողմից ընդունվեց համարյա անփոփոխ»⁵¹: Որ կողմերը լուրջ չէին մոտենում ստորագրված արձանագրությանը, երևում է այն բանից, որ Լեգրանը դրանից հետո մեկնեց Երևանից և տարբեր պատճառաբանություններով չվերադարձավ այնքան ժամանակ, մինչև իրադարձությունների զարգացումը մոտեցավ իր տրամաբանական ավարտին: Հայաստանի կառավարությունը ևս առանձնապես հույսեր չէր կապում հոկտեմբերի 28-ին Լեգրանի հետ ստորագրած փաստաթղթի հետ: Հոկտեմբերի 29-ի, արդեն նշած հեռագրում, Հ. Օհանջանյանը Տ. Բեկզադյանին նաև հայտնում է, որ «Գեորգաձեի հետ ունեցած բանակցություններից երևում է, որ վրացիք խուսափում են զինակցության հարցից և չեն կոպելու տաճիկների դեմ: Առաջարկեցինք զինակցություն Մովսեսյան Ռուսաստանի և Ադրբեջանի դեմ»⁵²: Գեորգաձեն այս հարցադրմանը ևս խուսափողական պատասխան է տալիս և կառավարությանն ինֆորմացիա տալու պատճառաբանությամբ նույն օրը մեկնում է Թիֆլիս: Այս հարցում պարզապես զարմանք են պատճառում Հայաստանի կառավարության մոտեցումները: Թերևս, հասկանալի է, որ նրանք տեսնում էին, որ պատերազմը տանուլ է տրված և որևէ հույս չէին կապում հոկտեմբերի 28-ին Լեգրանի հետ ստորագրած փաստաթղթի հետ: Միևնույն ժամանակ անհասկանալի է, թե ինչ նպատակով էին նրանք Գեորգաձեին առաջարկում Հայաստանի հետ մտնել

⁵¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 636, ք. 35-36:

⁵² Նույն տեղում:

հակառուսական դաշինքի մեջ: Չարմանայի ու անհասկանալի է նման անհետատես մոտեցումը, որովհետև հոկտեմբերի 26-ին Թիֆլիսի բանակցությունների ժամանակ Ն. Ռամիշվիլին հայկական կողմին, ինչն ավելի քան դիվանագիտական նրբանկատությունն էր պահանջում, բացատրել էր, որ Վրաստանը չի կարող խախտել չեզոքությունը: Նաև նշել էր, որ Վրաստանը չի կարող դաշինքի մեջ մտնել Հայաստանի հետ ոչ քեմալականների և ոչ էլ բուլշևիկների դեմ: Հոկտեմբերի 26-ի բանակցություններին նախորդել էին նաև Ռ. Տեր-Մինասյանի այցելությունը և բանակցությունները Վրաստանի ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումները կայացել էր հոկտեմբերի 17-ից մինչև 22-ը: Այստեղ հետաքրքրությունից գուրկ չէ այն հանգամանքը, որ Հայաստանի համար այդ ճակատագրական շրջանում ռազմական միմիստրը, որը նաև Հայաստանի փաստացի ղեկավար էր, մոտ մեկ շաբաթով մեկնում է Վրաստան՝ հայկական դաշինքը հաջողացնելու նպատակով: Նաև կարևոր է, որ Բ. Լեզրանի հետ բանակցությունների շրջանում էր, որ Ռ. Տեր-Մինասյանը մեկնեց Թիֆլիս ու հոկտեմբերի 22-ին ձեռնունայն վերադարձավ: Հայաստանի պաշտպանության մինիստրն ամենայն հավանականությամբ չէր վստահում դիվանագետներին և փորձում է անձամբ վարել խոսակցություն և վերջնականապես պարզել վրացական կողմի դիրքորոշումը: Վրացական կողմն էլ պահանջում է գրավոր ձևակերպել Ռ. Տեր-Մինասյանի՝ հայ-վրացական դաշինքի մասին արված առաջարկությունները: Այդ մասին Ռ. Տեր-Մինասյանի Թիֆլիսից վերադառնալու հաջորդ օրը՝ հոկտեմբերի 23-ին, Բեկզադյանը հեռագրում է Հ. Օհանջանյանին. «Վրացիք պահանջում են Ռուբենի արած առաջարկությունները գրավոր ձևակերպել, որպեսզի գրավոր պատասխանեն: Նրանք ձգձգում են անշուշտ, բայց պետք է կատարել»⁵³: Ու քանի որ մենք գիտենք հոկտեմբերի 26-ին կայացած հայ-վրացական բանակցու-

յունների մասին, որտեղ էլ վրացական կողմը մերժեց դաշինքի առաջարկությունը, ուստի, Բեկզադյանը վրացական կողմի պահանջած գրավոր առաջարկությունն, այնուամենայնիվ, ներկայացրել է հոկտեմբերի 24-ին կամ 25-ին:

Արխիվներում մեզ չհաջողվեց գտնել Բեկզադյանի՝ Վրաստանի կառավարությանն արված գրավոր առաջարկությունը, բայց հոկտեմբերի 26-ի բանակցությունների արձանագրությունից գիտենք, որ խոսքը վերաբերել է Վրաստանի հետ Հայաստանի զինական դաշինքին՝ ընդդեմ քեմալականների կամ բուլշևիկների: Բացի հոկտեմբերի 26-ի փաստաթղթից, մեր ձեռքի տակ կա նաև Հ. Օհանջանյանի հոկտեմբերի 14-ին Տ. Բեկզադյանին հղած հեռագիրը, որը նույն խնդրին է վերաբերում ու ամբողջական պատկերացում է տալիս կատարվածի մասին: «Լեզրանի պահանջը կնշանակի օկուպացիա, - ասում է Հ. Օհանջանյանը, - քանի որ նրանք պահանջում են երկաթուղին, կնշանակի, որ վրացիների հետ որևէ համաձայնություն պետք է ունենան: Եթե այդ այդպես է, պետք է հասկացնել վրացիներին և Ստոքսին, իսկ եթե այդպես չէ, պետք է որ վրացիք մեզ օգնեն գրավելով Ղազախը, որով ճանապարհի խնդիրը ջուրը կընկնի և մենք մեր ուժերը կլարենք դեպի տաճիկները: Այդ քայլը պետք է անել տալ վրացիներին անգլիացիների ճնշման տակ: Հակառակ պարագային, մենք երկու կողմից ճնշվելով կարող ենք ջախջախվել»⁵⁴: Այս հեռագիրը տրվել է այն օրը, երբ հայկական զորքերը հակահարձակման փորձ արին Կարսի ճակատում, որն անհաջող անցավ: Հոկտեմբերի 14-ի հակահարձակման ձախողումը հայկական կողմին այլ ելք չէր թողել, քան Վրաստանին ամեն գնով համոզելու հայ-վրացական դաշինքի անհրաժեշտությունը: Այդ էր պատճառը, որ հոկտեմբերի 26-ին վերջնական մերժում ստանալուց հետո էլ դարձյալ հայկական կողմը ձեռք չէր քաշում այդ գաղափարից: Դրա վկայությունը հարցի վերստին, Հ. Օհանջանյանի կողմից

⁵³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 636, ք. 30:

⁵⁴ Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 636, ք. 20-21:

բարձրացումն էր Գեորգաձեի հետ երևանյան հանդիպումների ժամանակ: Բնական է, որ երկու օրվա մեջ ոչինչ չէր փոխվել, և Գեորգաձեն էլ նման լիազորություններ չուներ: Առավել ևս, որ այդ հանդիպումից ընդամենը երկու օր հետո, թուրքական զորքերը գրավեցին Կարսը, որը, փաստորեն, որոշեց պատերազմի ելքը: Ավարտվեց պատերազմը: Հայաստանը պարտություն կրեց ու հարվածի տակ դրվեց նրա սուվերեն գոյությունը: Հույսը դնելով պատերազմի սկզբից գրեթե մեկ ամիս առաջ ստորագրված Սևրի դաշնագրի և տերությունների կողմից իրեն պաշտպանելու ոչ ռեալ մոտեցումների վրա, Հայաստանը մեռավ մեռած, և շատ ծանր եղան դրա հետևանքները: Չնայած պատերազմը թեմայի հետ քիչ է առնչվում, բայց, քանի որ պատերազմից հետո սրվեցին հարաբերությունները Վրաստանի հետ, ավելորդ չեմ համարում համառոտ ներկայացնելու զոհե Կարսի անկման պատմությունը, որը, փաստորեն, պատերազմի վերջն էր: Հավաստիության համար ներկայացնում եմ 1920թ. հոկտեմբերի 30-ին՝ այսինքն՝ Կարսի անկման օրը Կարսում գտնվող ու գերի ընկած Հայաստանի խնամատարության մինիստր Արտ. Բաբայանի «Մի տարի գերության մեջ» հուշերը կատարվածի մասին: Չնայած մեր պատմագիտությունը շատ է խոսել ու գրել այդ մասին, բայց, այնուամենայնիվ, կարծում եմ Ա. Բաբայանը տալիս է կատարվածի ամբողջական պատկերը: Եվ այսպես, պատմում է ականատես (որի նկատումները գրեթե ամբողջությամբ համընկնում են իմ մոտ եղած արխիվային նյութերին): «Հոկտեմբերի 30-ը մի անիծյալ ճակատագրական օր էր...: Այդ օրն էր, որ զարմանալի պայմաններում ընկավ Կարսը: Մի ժամ չտևած նրա դիմադրությունը, առանց ուժի հանդիպելու, տաճիկների փոքրաթիվ զորքը քաղաք մտավ և այդ հուժկու բերդին տեր դարձավ առանց զոհերի: Մեր զորքերը փախչում էին դեռ ձգելով հրացանները, պարենի տոպրակները, նույնիսկ վերարկուները և կոշիկները: Չիավորները սրարշավ անցնում էին Կարսի հռչակավոր ձորով, սպառազինված, առողջ, կոխկրտելով ծերունի-

ներին ու կանանց, որոնք թափվել էին ձորը և փրկություն էին փնտրում (փախչելով – Կ. Ս.) դեպի Ալեքսյոյ: ...Ժամը 10-ին դեռ քաղաքը հանգիստ էր, իսկ ժամը 11-ին քաղաքը գրավված էր թշնամու կողմից: Ամեն ինչ խառնված էր իրար և միայն մի տենչ կար՝ փախչել, փախչել: Ու՞ր էին մեր գնդերը. բոլորը փախուստի ճամփին:

...Թշնամին տիրել էր քաղաքին, շատերը շշմել էին, այնքան ծանր ու անսպասելի էր հարվածը: Չորի մեջտեղում էր գտնվում մեր թնդանոթների մի ամբողջ բառարեա: Հրամանատար սպան աջ ու ձախ է նայում ճամփա փնտրելու համար: Թշնամին արդեն իջնում է Կարադաղից դեպի ձորը: Անշարժ կանգնած են մեր զինվորներն ու սպաները: Հանկարծ հրամանատար սպան, երիտասարդ և քաջ կապիտան Բագրատունին ստորճանակը հանելով կանչում է. «տղերք, փախեք, ազատվեցեք» և ինքնասպան է լինում: Մի քանի րոպեից հետո թնդանոթները թշնամու ձեռքում էին: Մեր շտաբում հավաքված էին հազարից ավելի սպաներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և Գարեգին Եպիսկոպոսը: ...Երկու ժամ անց, եկավ թուրքական մի սպա և կարգադրեց, որ կայարան երթանք ներկայանալու Քյազմ Կարաբեքիր փաշային: Ասկյարների ուղեկցությամբ գնում ենք կայարան: Կարաբեքիր փաշան հարցրեց ինձ. «Ինչու՞ սկսեցիք պատերազմը, ինչու՞ չկամեցաք բանակցություններ սկսել, ինչու՞ չպատասխանեցիք իմ նամակներին»: Ես պատասխանեցի, որ պատերազմը սկսողն իրենք էին և որ մենք ոչ մի մտադրություն չունեինք 1914թ. սահմանն անցնել: - Հապա ինչու՞ գրավեցիք Օլթին և ինչու՞ հարձակում կատարեցիք մեր զորքերի վրա Բարդուսի շրջանում: ... Ձեր կառավարությունը (Հայաստանի – Կ. Ս.) չուզեց իմ դիմումին պատասխանել: Ձեր արտաքին գործոց նախարարը չուզեց ինքն ինձ գրել, այլ ինչ որ քեթիք (մինիստրության քարտուղար Տեր-Հակոբյանի մասին է խոսքը – Կ. Ս.) անորոշ խոսքերով քողարկելով ուզեց Ձեր իսկական նպատակը: Այնուհետև Կարաբեքիր փաշան ասաց, որ եթե արյուն է հոսում, մեղքը մ'

չէ»⁵⁵: Թերևս Կարաբեքիբի քաղաքական անպատկառությունն էր հարկավոր նման եզրահանգման համար: Իսկ հետագայում նրա հպարտության թեման էր Հայաստանի Հանրապետության ոչնչացման պատմությունը: Այնուհետև, Բաբայանը պատմում է, որ Կարսը երեք օր շարունակ հանձնվեց ասկյարների թալանին: «Ղեկտեմբերի 2-ին քաղաքը զարդարվեց դրոշակներով և մի մեծ խումբ տաճիկներ մեր զորանոցը եկան և շնորհավորեցին հաշտություն կնքելու առիթով»: Բաբայանի խոսքը վերաբերում է ղեկտեմբերի 2-ին կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրին, այնպես էլ նույն օրը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը: Անշուշտ, Ալեքսանդրապոլում կնքված հայ-թուրքական պայմանագիրը և նույն օրը Երևանում Լեզրանի և Դրոյի կողմից ստորագրված պայմանագիրը Հայաստանի պարտության տրամաբանական հետևանքն էին ու քաղաքական մեկ ամբողջականություն: Բաբայանը նշում է, որ Կարսում գեղության մեջ գտնվող ռուսահայ սպաների մեծ մասն ուրախ էր, որ Հայաստանում խորհրդային իշխանություն էր հաստատվել: Չարմանալի փաստ է բերում նախարարը, որ շուրջ հազար հայ գերիներից «միայն երեք-չորս հոգով էինք հոգով-սրտով տանջվում մեր երկրի կորուստով: Մյուսները դեն նետեցին ուսադիրները և սկսեցին օգտագործել ընկեր բառը»: Կարսի անփառունակ անկման մասին, որն հետևանք էր ապաշնորհ հրամանատարության և անպատասխանատու քաղաքական ու ռազմական գործողությունների, Բաբայանի պատմածները բացառիկ հավաստիություն ունեն: Կատարվածը գրեթե նույնությամբ կամ ավելի ծանր մանրամասներով ներկայացրել է նաև Կարսի նահանգապետ Ստ. Լորդանյանը: Տեսնելով Կարսի անփառունակ վախճանը և զգալով, որ անհիմաստ է կանգնեցնել արհավիրքը, Ա. Բաբայանը նոյեմբերի 1-ին կառավարությանը գրում է. «Ի նկատի առնելով վերջին օրերի դեպքերը և բոլոր

⁵⁵ «Հայրենիք», 1924թ., N6, էջ 53-55:

հանգամանքները, ես այն համոզմունքին եմ, որ օր առաջ պետք է վերջ տալ պատերազմական գործողություններին և շտապ կերպով սկսել հաշտության բանակցությունները և համաձայնության գալ տաճիկ Անատոլիո կառավարության հետ և գտնել ընդհանուր լեզու հաշտ ապրելու միմյանց հետ: Ես կարծում եմ, որ այս է մեր պետության և ժողովրդի անմիջական շահը: Տարիներ տևող արյունահեղությանը պետք է վերջ տալ, որ քայքայում է մեր ժողովրդին: Այս առաջարկի հետ համաձայն են գեներալներ Դ. Փիրումյանը, Արարատյանը, Ղազարյանը և զնդապետ Վեքիլովը»⁵⁶: Նոյեմբերի 7-ին, Ալեքսանդրապոլը գրավելուց հետո, Հայաստանի կառավարության նիստը որոշում է «ընդունել զինադադարի տաճկական առաջարկությունը և հանձնարարել հրամանատարությանն ի կատար ածել այն»: Այս որոշումը նոյեմբերի 7-ին ժամը 5-ին հեռագրով հաղորդվում է Ալեքսանդրապոլում գտնվող գեներալներ Միլիկյանին և Հախավերդյանին⁵⁷: Բայց սա պատերազմի վերջ չէր, որովհետև նոյեմբերի 9-ի Կարաբեքիբը խախտելով զինադադար հաստատելու իր տված համաձայնությունը, առաջ քաշեց նոր՝ ավելի ծանր պայմաններ զինադադարի համար: Համաձայն այդ պայմանների, Հայաստանը թուրքական կողմին պետք է հանձներ իր ողջ զենքը և զինամթերքը: Նոյեմբերի 10-ին վարչապետ Հ. Օհանջանյանը հեռագրում է Անգոբայի արտաքին գործերի կոմիսար Ա. Մուիթարին և իր բողոքն է հայտնում զինադադարի (նոյեմբերի 6-ի) պայմանները խախտելու առիթով⁵⁸: Նոյեմբերի 11-ին նման մի հեռագիր էլ Հ. Օհանջանյանը ուղարկում է Ք. Կարաբեքիբին⁵⁹: Սակայն դրանք որևէ նշանակություն չեն ունենում, և նոյեմբերի 11-ին ռազմական գործողությունները վերսկսվում են: Դրանք տևում են մինչև նոյեմբերի 18-ը, որը նոր պարտություններ է արձա-

⁵⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, մ. 2, ք. 383:

⁵⁷ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 486, մ. 2, ք. 71:

⁵⁸ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602, ք. 228:

⁵⁹ Նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 27, ք. 6:

նագրում ի վնաս Հայաստանի: 1920թ. նոյեմբերի 18-ին Հայաստանի կառավարությունն ստիպված է լինում ընդունելու հայկական բանակը զինաթափելու և զենքն ու զինամթերքը Թուրքիային հանձնելու 1920թ. նոյեմբերի 9-ին թուրքական կողմի առաջ քաշած պայմանները: 1920թ. նոյեմբերի 20-ին Կառավարության հաղորդագրությունում այդ մասին ասվում է հետևյալը. «Նոյեմբերի 18-ին մեր և տաճիկների միջև կնքված է զինադադար և այդ օրից զինվորական գործողությունները կանգ են առել: Ըստ այդ զինադադարի պայմանների, թշնամու զորքերը բռնում են Ալազյազ-Կրմզի Նալբանդ-Վորոնցովկա գիծը: ...Միջին տարածությունը պիտի մնա չեզոք, հայկական ադմինիստրացիայով: Իբրև զինադադարի պայման, տաճիկներին տրվում է որոշ քանակությամբ զենք, ռազմամթերք և երկաթուղային ստացվածք: Ձինադադարի վերջին օրն է. նոյեմբերի 25-ի երեկոյան ժամը 6. 45: Նոյեմբերի 24-ի երեկոյան պիտի սկսվի հաշտության բանակցությունները: Տաճիկ պատգամավորությունն արդեն Ալեքսանդրապոլում է, իսկ հայկականը պատրաստ է մկնելու»⁶⁰:

Կատարված իրադարձությունների արդյունքում Հ. Օհանջանյանի կաբինետը հրաժարական է տալիս: Կյանքի է կոչվում Հայաստանի վերջին վարչապետ Ս. Վրացյանի կաբինետը, որը և իշխանությունը փոխանցեց Հայեղկոմին, ու Հայաստանը դարձավ խորհրդային: Վրացյանը հասցրեց մի քանի հեռագրեր ուղարկել տարբեր պետությունների և հայտնել խաղաղ ապրելու Հայաստանի ցանկությունը: Նման մի հեռագիր էլ նա ուղարկեց Անգորա՝ Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարության նախագահ Մ. Քեմալին: Մ. Քեմալի պատասխան հեռագիրը Երևանում ստացվեց նոյեմբերի 29-ին, որով նա ողջունում էր հարևանների հետ հաշտ ապրելու Վրացյանի մոտեցումը և հույս է հայտնում, որ այդ ամենին հիմք կդնեն և կանաչ ճանապարհ կտա Ալեքսանդրապոլում սկսված

երկու երկրների միջև բանակցությունները: Հայաստանում հասկացան, թե ինչու՞ է Քեմալն իր հեռագիրն ուղարկել նոյեմբերի 29-ին: Դժվար է ասել...: Այդ առումով անհրաժեշտ են համարում տալ Ս. Վրացյանի կառավարության հրապարակած առաջին դեկլարացիան: «Վերջին տարիների ընթացքում անդրկովկասյան ժողովուրդներին հասած բոլոր աղետների և դժբախտությունների պատճառը աշխարհի հզորների վարած իմպերիալիստական քաղաքականությունն է, որի հետևանքով անվերջ ու արյունալի կռիվների ու ավերածությունների քատերաբեմ է դարձել նաև Հայաստանը: Ներկա կառավարության առաջին և գլխավոր նպատակն է լինելու հանել մեր երկիրը քաղաքական այդ շրջապատույտից և ազատել նրան օտար ուժերի քայքայիչ ազդեցությունից: Հայաստանի պետական կառուցվածքն ու գործունեությունը խարսխելու, ելնելով ոչ թե օտար ուժերի սին և վտանգավոր ներշնչումներից, այլ Հայաստանի իրական կարողությունից և հարևանների հետ խաղաղ համակցություն ստեղծելու՝ ցանկությունից: ...Մեր գործունեության նշանաբանն է լինելու անկեղծ հաշտություն տաճիկների հետ և համերաշխություն բոլոր հարևան ժողովուրդների հետ»⁶¹: Փաստորեն խաղաղության այս հռչակագրի հրապարակման օրն էլ Ալեքսանդրապոլում սկսվեց հայ-թուրքական բանակցությունները, որն, ըստ Մ. Քեմալի, պետք է հիմնք դներ «երկու երկրների հաշտ ապրելուն»:

Իրադարձությունների նման զարգացումները գլխովին փոխեցին Վրաստանի կառավարության վերաբերմունքը Հայաստանի հանդեպ: Հայ-վրացական հարաբերություններն հատկապես սուր բնույթ ստացան 1920թ. նոյեմբերին: Համաձայն Թուրքիայի՝ նոյեմբերի 18-ին առաջ քաշած զինադադարի պայմանների, հայ-վրացական չեզոք գոտու կողքին, Վորոնցովկայից մինչև Նալբանդ, ստեղծվեց նոր՝ հայ-թուրքական չեզոք գոտի, որտեղ իրականում տնօրինում էին թուրք ասկյարները:

⁶⁰ Նույն տեղում, ֆ. 200, ց. 2, գ. 97, ք. 16:

⁶¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 632, ք. 13:

1920թ. նոյեմբերի 5-ին գեներալ Արեշևը Ղարաքիլիսայից հեռախոսով վարչապետ Հ. Օհանջանյանին հայտնում է, որ վրացական զորքերը մոտենում են հայ-վրացական չեզոք գոտուն: Օհանջանյանը պատասխանում է, որ թուրքերի հետ արդեն զինադադարի համաձայնություն⁶² կայացվել է, և վրացական կողմի նման քայլը անթույլատրելի է ու անհասկանալի: Այնուհետև Հ. Օհանջանյանը հեռախոսազրույց է ունենում Հայաստանում Վրաստանի լիազոր ներկայացուցիչ, գեներալ Կարալովի հետ: Վերջինս նույնպես գտնվում էր Ղարաքիլիսայում: Նա հաստատում է գեներալ Արեշևի տեղեկությունը և խնդրում է, որ Հայաստանի կառավարությունը թույլ տա Վրաստանին իր զորքերը մտցնելու Շահալի կայարան՝ ստրատեգիական նկատառումներով: «Ստրատեգիական նկատառումներ» ասածը վերաբերում էր Լոռվա չեզոք գոտուն սպառնացող թուրքական հարձակման վտանգին: Վրաստանի կառավարությունը գիտեր, որ նման վտանգ չկա, բայց դրանով փորձում էր արդարացնել իր հավակնություններն այդ տարածքների հանդեպ: Օհանջանյանը գեներալ Կարալովին պատասխանում է. «Ոչ ստրատեգիական և ոչ էլ քաղաքական առումներով չի կարելի արդարացնել վրացական զորքերի մուտքը չեզոք գոտի, իսկ հետո էլ Հայաստանի տարածք, առանց Հայաստանի և Վրաստանի միջև նախնական պաշտպանական համաձայնագիր ստորագրելու, որը իմ կառավարության կողմից պաշտոնապես առաջարկվել է Ձեր կառավարությանը»⁶³: Հայաստանի կառավարության նախագահը հիշեցնում է թշնամու դեմ կամ ընդհանուր վտանգի դեմ հայ-վրացական դաշինք կնքելու առաջարկները, որոնք մերժվել էին Վրաստանի կառավարության կողմից: Բայց նման հիշեցումը բարոյական փաստարկ էր և ոչինչ տալ կամ դրությունը փոխել չէր կա-

⁶² Խոսքը վերաբերում է նոյեմբերի 2-ին Թուրքիայի հետ ձեռք բերած զինադադարի պայմանավորվածությանը, որը նոյեմբերի 9-ին խախտվեց, երբ թուրքական իրամանատարությունն առաջ քաշեց զինադադարի ավելի ծանր պայմաններ:

⁶³ ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 200, ց. 1, գ. 602, ք. 84:

րող, որովհետև վրացական զորքերն արդեն շարժվում էին դեպի չեզոք գոտի: Վրաստանը բարեկամական խոսքերով գայթակղեց Հայաստանի կառավարությանը, իսկ պարտությունից անմիջապես հետո բացահայտեց իր հավակնությունը: Այդ պատճառով էլ, արդեն հիշատակած հեռախոսազրույցում Հ. Օհանջանյանը նաև նշում է. «Վրացական կառավարության այդ անսպասելի քայլը իմ կառավարության ու ժողովրդի կողմից կարող է դիտվել ինչպես թշնամական քայլ Հայաստանի համար այս կրիտիկական պահին»⁶⁴: Հետաքրքիրն այն է, որ այս հեռախոսազրույցից երևում է, որ այնուամենայնիվ Հայաստանի կառավարությունը դեռևս հույս էր փայփայում, որ հնարավոր է հայ-վրացական ռազմական դաշինքի կնքումը: Դա երևում է Հ. Օհանջանյանի հետևյալ առաջարկությունից. «Ձեր կառավարությունից լիազորություն ստացեք և եկեք Երևան համաձայնություն կնքելու: Թշնամու ուժերը մեծաքանակ չեն»⁶⁵: Այս հարցադրմանը Վրաստանի ներկայացուցիչը պատասխանում է, որ ինքը չէր սպասում նման եզրակացության: Այնուհետև, գեներալ Կարալովը Հ. Օհանջանյանին ասում է. «Ես մեր այս զրույցի մասին կզեկուցեմ իմ կառավարությանը և կգամ Երևան, ... բայց ցավալի է, որ այդ հարցը պետք է հետաձգվի, որը թվում է վտանգավոր է ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի համար»: Հայաստանի վարչապետը կրկին հիշեցնում է չկայացած հայ-վրացական դաշինքի մասին. «Ես շատ ցավում եմ, որ վրացական կառավարությունը ժամանակին հնարավորություն չգտավ մտնելու համաձայնության մեջ իմ կառավարության հետ: Գտնում եմ, որ վրացական զորքերի շարժը կկանգնեցվի»: Հ. Օհանջանյանը ընդգծելու համար, որ Վրաստանին թուրքական վտանգ չի սպառնում, Կարալովին ասում է, որ Թուրքիայի հարձակման հիմնական նպատակն է չափավորել Հայաստանի պահանջները Թուրքիայի հանդեպ: Չնայած Հայաստանի կառավա-

⁶⁴ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602, ք. 85:

⁶⁵ Նույն տեղում:

րության ղեկավարի բերած փաստարկներին, Կարալովն ասում է, որ ինքը չի երաշխավորում վրացական զորքերի առաջխաղացման կասեցումը դեպի չեզոք գոտի: Այս հեռախոսագրույցի բովանդակությանը սեփական կառավարությանը հայտնելուց հետո Կարալովը Դիլիջանով գալիս է Երևան: Հայաստանի ղեկավարների հետ մի շարք հանդիպումներում նա կրկին հավաստում է, որ Վրաստանի զորքերի մուտքը չեզոք գոտի բխում է երկու երկրների շահերից: Վրաստանի կառավարությունը նաև մեղադրում էր Հայաստանին, որ թուրքական զորքերը մոտենում են հայ-վրացական չեզոք գոտուն, որը պաշտպանելու նպատակով էլ ինքը զորքերը մտցնում է՝ այն թուրքիայից պաշտպանելու համար: Հայաստանի կառավարությունը ելնելով կատարված փաստից, հանձնարարում է Թիֆլիսի իր ներկայացուցչությանը բանակցել՝ Վրաստանի կառավարության առաջարկությունն ընդունելու նպատակահարմարությունից ելնելով: Հայաստանի և Վրաստանի կառավարությունների ներկայացուցիչների բանակցությունների արդյունքում 1920թ. նոյեմբերի 13-ին կողմերի միջև կնքվում է համաձայնություն «վրացական զորքերը ժամանակավորապես Բորչալուի գավառի չեզոք գոտի մուտք գործելու մասին»: Նոյեմբերի 13-ին ստորագրված համաձայնագրում արձանագրված է. «Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության վրա Անգորայի կառավարության զորքերի հարձակման հետևանքով վտանգ է ստեղծվել չեզոք գոտու և Վրաստանի համար, վերջինիս կառավարության առաջարկով՝ Վրաստանի կողմից զինվորական մինիստր Գ. Լորդկիպանիձեն, արտաքին գործերի մինիստր Կ. Մաբահթարաշվիլին, իսկ Հայաստանի կողմից՝ Ս. Մամիկոնյանը, Ս. Բեկզադյանը և Ա. Խաչատրյանը կնքեցին հետևյալ համաձայնությունը.

1) Վրաստանի կառավարության առաջարկությամբ Հայաստանը համաձայնություն է տալիս, որ վրացական զորքերը մուտք գործեն չեզոք գոտի:

2) Վրացական զորքերի գտնվելը չեզոք գոտում նոր իրավունք չեն տալիս Վրաստանին այդ տարածքների հանդեպ:

3) Չեզոք գոտու աղմինիստրացիան մնում և գործում է նախկին իրավասություններով:

4) Չորքերի մատակարարումը (պարենային) չի կատարվում բռնագրավումների միջոցով:

5) Անհրաժեշտության դեպքում թույլատրվում է գոտի մուտք գործելու 10.000 հոգի փախստականներ Հայաստանից»:

Այնուհետև երկու առանձին կետերով կամ հոդվածներով սահմանվում են չեզոք գոտում Հայաստանի ունեցվածքի հարցերը և վրացական կողմից համաձայնագրի կատարմանը հետևելու նպատակով չեզոք գոտում Հայաստանի կառավարության լիազոր ներկայացուցչի գտնվելու հարցը:

Համաձայնագրի 8-րդ հոդվածը սահմանում է, որ այն կնքվում է երեք ամիս ժամանակով: «Եթե նոր համաձայնագիր չստորագրվի, ուստի նարկա համաձայնագիրը կորցնում է իր ուժը, վրացական զորքերը դուրս են գալիս գոտուց և վերականգնվում է նախկին դրությունը»⁶⁶:

Համաձայնագրի կնքման օրը՝ նոյեմբերի 13-ին, Ս. Բեկզադյանը հայտնում է արտաքին գործերի մինիստրությանը կատարվածի մասին: Կառավարության նախագահ և արտաքին գործերի մինիստր Հ. Օհանջանյանը Ս. Բեկզադյանից ստացած այդ հեռագրի տակ գրառել է «լիազոր կարող են իրենք նշանակել»⁶⁷: Հավանաբար, Հ. Օհանջանյանը չի հավատացել, որ համաձայնագրի՝ Ս. Բեկզադյանի կողմից թվարկված կետերից որևէ մեկը իրագործվելու է: Եվ դա այն պարզ պատճառով, որ Հայաստանի կառավարությունը համաձայնություն էր տվել արդեն կատարված փաստին և իսկապես որևէ նշանակություն չէր կարող ունենալ, թե պայմանների կատարման հա-

⁶⁶ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, ք. 27:

⁶⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, ք. 275:

մար կոչված լիազոր ներկայացուցիչը Վրաստանի կողմի՞ց էր նշանակվում, թե՞ Հայաստանի: Այդպես էլ հետագայում եղավ: Վրաստանի կառավարությունը ոչ միայն չկատարեց նոյեմբերի 13-ի համաձայնագրի պայմանները, այլև օգտվելով Հայաստանի օրհասական դրությունից, նոր մեղադրանքներ ու պահանջներ էր առաջ քաշում: Վրաստանի կառավարությունը, որպեսզի հերքի Հայաստանի կառավարության այն փաստարկները, որ հարևան երկիրը օգտվում է իր ծանր դրությունից, նորանոր մեղադրանքներ էր հասցեագրում նրան: Հատկապես այդ մեղադրանքները հարևանական հանդիմանությունից անցան քաղաքականի, երբ Հայաստանի կառավարությունն այլ ելք չտեսնելով՝ ընդունեց նոյեմբերի 18-ի թուրքական վերջնագիրը զինադադարի մասին: Դրանից հետո Վրաստանի կառավարությունը պարզապես Հայաստանին մեղադրում էր, որ վերջինս առանց Վրաստանին տեղյակ պահելու է ընդունել թուրքական վերջնագիրը զինադադարի մասին և որ այն իբր վտանգում է Վրաստանի տարածքները: Անշուշտ, նկատի ունեին այն հանգամանքը, որ համաձայն նոյեմբերի 18-ի թուրքական վերջնագրի, Նալբանդ գյուղից մինչև Վորոնցովկա գյուղը, հայ-թուրքական չեզոք գոտու անվան տակ, անցնում էր թուրքական զորքերի վերահսկողության տակ: Իսկապես, նոյեմբերի 8-ի զինադադարի պայմանները թուրքական կողմից մերժվելուց և ռազմական գործողությունները վերսկսելուց հետո թուրքական զորքերը նոր տարածքներ գրավեցին: Սակայն փաստ է նաև, որ դրանից առաջ, դեռևս նոյեմբերի 5-ին, այդ ամենի և սպասվող ընդհանուր վտանգի մասին Հ. Օհանջանյանը ավելի քան մանրամասն նկարագրել էր Վրաստանի ներկայացուցչին և միամտորեն մի վերջին փորձ արել ակնարկելու հայ-վրացական դաշինքի մասին: Խոսքը վերաբերում է նոյեմբերի 5-ին Հ. Օհանջանյանի և գեներալ Կարալովի՝ հեռախոսագրույցին, որը գրեթե ամբողջությամբ մեջ բերեցի պատկերը պարզ տեսնելու նպատակով: Հ. Օհանջանյանը այդ հեռախոս-

սագրույցի ժամանակ նույնիսկ նշում է, որ «թուրքական զորքերը փոքրաթիվ են»: Նա նաև ընդգծում է, որ Վրաստանին որևէ վտանգ չի սպառնում: Վրաստանի կառավարության մտահոգությունը գեներալ Կարալովը արտահայտել է նոյեմբերի 8-ի զինադադարի հետ կապված՝ Զ. Կարաբեքիրին հղած բողոքում: Նոյեմբերի 11-ին նա Կարաբեքիրին գրում է. «Ծանոթանալով Ձեր նոյեմբերի 8-ի գրությանը, Հայաստանի զխսավոր հրամանատարի անունով զինադադարի պայմանների վերաբերմամբ, որում Դուք շոշափում եք Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառը, որտեղ, ըստ այդ պայմանների, զինադադարի ժամկետը լրանալուց հետո կարող են սկսվել պատերազմական գործողություններ (կետ 5) և զինադադարի միջոցին իսկ դադարում են երկաթուղային հաղորդակցություն Սամահին և Ալեքսանդրապոլ կայարանների միջև (կետ 3): Ես իբրև Վրաստանի Հանրապետության զինվորական ներկայացուցիչ Հայաստանում, հայտնում եմ իմ բողոքը և պարտք եմ համարում բացատրել, որ Բորչալուի գավառի չեզոք գոտին Վրաստանի Հանրապետության կառավարությունը համարում է իր հողամասը, որի մասին նա վեճ է ունեցել Հայաստանի կառավարության հետ: Խորհրդային Ռուսաստանի հետ կնքված պայմանագրով այդ տարածքը ճանաչված է իբրև անվիճելի վրացական: Ուստի, որևէ հավակնություն Բորչալուի գավառի և նրա սահմաններում գտնվող երկաթուղու վերաբերմամբ իմ կառավարությունը կհամարի իբրև թշնամական Ձեր կառավարության կողմից իր նկատմամբ»⁶⁸: Բողոքի այս գրությունում ամբողջապես տրված է Վրաստանի մտահոգությունը: Բնական հարց է առաջանում, ստեղծված պայմաններում Վրաստանի կառավարությունը թուրքական վտանգից երաշխավորվա՞ծ էր, և նրա մտահոգությունը հիմնավորվա՞ծ էր, թե՞ ոչ: Անշուշտ, այդ վտանգը գոյություն ուներ, բայց ոչ Հայաստանի

⁶⁸ Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Արեւնք, 1930թ., էջ 250:

դեմ Թուրքիայի վարած պատերազմի շրջանում: Այդ մասին ամենահավաստին Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Ա. Մուհթարի 1920թ. հոկտեմբերի 9-ին Վրաստանի կառավարությանը հղած, արդեն հիշատակած, նամակում բերված փաստարկներն էին, որոնցում պարզ ասված էր, որ Վրաստանին Հայաստանի դեմ հարձակման ժամանակ որևէ վտանգ չի սպառնում: Ուստի, թուրքական վտանգի խնդիր թուրք-հայկական պատերազմի շրջանում Վրաստանը չունեի: Կրկնում են, որ այդ փաստարկի տակ նա թաքցնում էր Հայաստանի տարածքների հանդեպ իր վաղեմի հավակնությունները: Նոյեմբերի 18-ի զինադադարից հետո Վրաստանը մի քանի նոտա է հղում Հայաստանի կառավարությանը և Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը: Նոյեմբերի 23-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստր Կ. Սաբահթարաշվիլին Ա. Բեկգադյանից պահանջում է իր կառավարությանը ներկայացնել նոյեմբերի 18-ին Թուրքիայի կողմից առաջարկված և Հայաստանի կողմից ընդունված զինադադարի տեքստը: Այս հարցում Հայաստանի կառավարությանը մեղադրելու դիվանագիտական մղումն այնքան ուժգին էր, որ առանց պատասխանի սպասելու, երկու օր հետո՝ նոյեմբերի 25-ին, նա կրկին դիմում է Տ. Բեկգադյանին նույն պահանջով: Կ. - Սաբահթարաշվիլին նշում է. «Նոյեմբերի 23-ի նոտայով ես պատիվ ունեցա Ձեզ խնդրելու ինձ հայտնելու թուրքական վերջնագրի տեքստը, որը ընդունվել է Հայաստանի կառավարության կողմից ինչպես հիմք թուրքերի հետ զինադադարի: Ձեզանից պատասխան չստանալով, բայց հավաստի աղբյուրներից իմացել ենք, որ թուրքական վերջնագիրը պարունակում է հետևյալ դրույթները. 1). Թուրքական ուժերի կողմից Բորչալուի գավառի հարավ-արևմտյան մասի գրավումը (Վորոնցովկա գյուղից մինչև Նալբանդ), 2). Հայաստանի կողմից Բորչալուի գավառի հարավային մասից դուրս գալը և 3). թույլատրել չգոք գոտի (հայ-վրացական – Կ. Ս.) թուրքական վերահսկող

հանձնաժողով: Հայաստանի կառավարությունը ընդունելով և արդեն կատարելով այդ պայմանները, ոտնահարել է Վրաստանի կառավարության իրավունքները»: Կ. Սաբահթարաշվիլին այս հիմնավորումներով անում է հետևյալ եզրահանգումը. «Իմ կառավարության հանձնարարությամբ հայտարարում են բողոքս Հայաստանի կառավարության այդ քայլի դեմ: Այն ստիպում է իմ կառավարությանը անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու իր սահմանների պաշտպանության ուղղությամբ Բորչալուի գավառում»⁶⁹: Տեսանելի է, որ Սաբահթարաշվիլու «մեղադրանքներն ու հիմնավորումները» Վրաստանի կառավարության քայլերն արդարացնելու նպատակ էին հետապնդում: Սաբահթարաշվիլին ինքն էլ զիտեր, որ եթե նույնիսկ նոյեմբերի 18-ի թուրքական վերջնագրի մասին Հայաստանի կառավարությունը Վրաստանին տեղյակ պահեր, դրանից ոչինչ չէր փոխվելու: Այդ մասին Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 26-ին հայտնում է (ի պատասխան Սաբահթարաշվիլու նոյեմբերի 25-ի նոտայի), որ «Վրաստանի կառավարությունն օգտվում է Հայաստանի ծանր դրությունից»: Դեկտեմբերի 1-ի պատասխան գրությունում Սաբահթարաշվիլին հերքում է մեղադրանքները և ջանում է ապացուցել, որ Բորչալուի գավառում իրենց ձեռնարկած քայլերը ելնում են միայն Վրաստանի ինքնապաշտպանության խնդիրներից: 1920թ. նոյեմբեր ամսին հայ-վրացական հարաբերությունների նման դրսևորումները բացատրելի են այն բանով, որ նույնիսկ նոյեմբերի 13-ի համաձայնագիրը չէր բավարարում Վրաստանին: Այսինքն՝ կրկնվում էին 1918թ. տարածքային պահանջները: Այդ մասին տեղեկանում ենք հայ-թուրքական չեզոք գոտու կոմիսար Մելիքովի՝ Վրաստանի գործերի հրամանատարին հղած հեռագրից: Նա նշում է, որ 1920թ. նոյեմբերի 23-ին վրացական գործերը խախտել են նոյեմբերի 13-ի զինադադարը և մտել են Հայաս-

⁶⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 215, ք. 3:

տանի տարածքները: Նա բողոքում և պահանջում է վրացական գործերը հանել Հայաստանի տարածքներից⁷⁰: Բազում են այն փաստերը, որ Վրաստանի կառավարությունը չէր կատարում նոյեմբերի 13-ի պայմանագրի կետերը, որը և բնակչության բողոքն էր հարուցում: «Ազգաբնակչությանը թուրքական հնարավոր հարձակումից պաշտպանելու նպատակով» չեզոք գոտում ստեղծվում է գեներալ-նահանգապետի պաշտոն⁷¹: Վերջինիս հրամաններին պարտավոր էին ենթարկվելու քաղաքացիական աղմինիստրացիան: Այս ամենը խախտումն էր նոյեմբերի 13-ի համաձայնության: Ստեղծված պայմաններում Հայաստանի կառավարությունը գործնական ոչինչ չէր կարողանում անել չեզոք գոտու ազգաբնակչությունից ստացված բողոքներին բավարարություն տալու առումով: Ահա այսպես օգտագործեց Վրաստանի կառավարությունն «ընդհանուր վտանգի» իր վաղեմի մտահոգությունը:

1920թ. նոյեմբերի 23-ին Հայաստանում տեղի ունեցավ կառավարության փոփոխություն: Հ. Օհանջանյանի կառավարությանը փոխարինելու եկավ Ս. Վրացյանի կաբինետը: Նոյեմբերի 30-ին Վրացյանը հեռագրում է Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին, որով հայտնում է, որ Վրաստանի կառավարությունը չի կատարում նոյեմբերի 13-ի պայմանագիրը, որ ազգաբնակչության բողոքն ու զայրույթն է հարուցում: Ինչպես ապացույց ասվածի, նա նշում է հետևյալ փաստերը. «Ջալալօղլու փոստ-հեռագրատունը գրավված է վրացիների կողմից, հայ ծառայողներն արձակված են, նրանց տեղը նշանակված են վրացիները: Կատարվում են բռնագրավումներ: Ուժով խուժում են տները, ապրում այնտեղ և սնվում են առանց վճարելու: Անձամբ տեսնվեցեք կառավարության նախագահի հետ, բողոքեցեք և պարզեք նրանց մտադրությունը»⁷²: Տ. Բեկզադյանը կա-

⁷⁰ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 12, ք. 9:

⁷¹ Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 12, ք. 4:

⁷² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 100, ք. 54:

տարում է կառավարության հրահանգը: Արդյունքում՝ ոչ մի տեղաշարժ և նույն պատասխանը՝ թուրքական վտանգը դիմակայելու մասին: Ամփոփելով թուրք-հայկական պատերազմի շրջանում Վրաստանի և Հայաստանի միջև հարաբերությունները, կարող ենք արձանագրել, որ 1. Հայաստանի կառավարությունը 1920թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին եռանդուն, բայց անտեղի ջանքեր գործադրեց հայ-վրացական ռազմական դաշինք ստեղծելու ուղղությամբ: 2. Վրաստանը պահեց ՌՍՖՍՀ կառավարությանը և քեմալականներին խոստացած իր չեզոք դիրքը, բայց միևնույն ժամանակ զգալի նյութական օգնություն ցույց տվեց Հայաստանին: 3. Հոկտեմբերին Վրաստանը հավակնություններ ցուցաբերեց Արդահանի շրջանի հանդեպ, որը լարված վիճակ ստեղծեց երկու երկրների հարաբերություններում: Պատերազմում Հայաստանի պարտվելուց հետո Վրաստանը պահանջեց վրացական գործեր մտցնել չեզոք գոտի՝ փաստելով թուրքական վտանգը: 4. 1920թ. նոյեմբերի 13-ի հայ-վրացական պայմանագրով Հայաստանի կառավարությունը համաձայնեց, որ երեք ամսով վրացական գործերը մտնեն չեզոք գոտի:

Այդպիսով, Հայաստանի խորհրդայնացման նախօրեին նրա տարածքները բզկտված և բաժանված էին մի քանի մասերի: Կարսից մինչև Ալեքսանդրապոլ գրավված էին թուրքական գործերի կողմից: Նալբանդ կայարանից մինչև Ղարաքիլիսա ստեղծված էր հայ-թուրքական չեզոք գոտի, որտեղ, փաստորեն, տնօրինում էին թուրքական ջոկատները: Հայ-վրացական չեզոք գոտին գրավված էր վրացական գործերով:

Գլուխ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՈՒՄԸ

Քենալականների հարձակումը Հայաստանի վրա և վերջինիս պարտության հետևանքով երկրում ստեղծված քաոսային վիճակը Հայաստանի կառավարությանը ստիպեցին ընդունելու Բ. Լեզրանի՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու առաջարկությունը: Դեկտեմբերի 2-ին ստորագրվեց այդ պայմանագիրը, և Հայաստանը հռչակվեց խորհրդային հանրապետություն: 1920թ. դեկտեմբերի 1-ին Ս. Վրացյանը հեռախոսով Ալեքսանդրապոլում գտնվող Ալ. Խատիսյանին հայտնում է. «Տաճիկների առաջարկած ծանր պայմանները շատ ուժեղացրին կարմիրների դիրքը, որոնք արդեն գրավել են Դիլիջանը և գալիս են այն լուգունգով, որ իրենք գնում են Հայաստանը փրկելու տաճիկներից: Հայ զորքերը համբյուրներով են ընդունել կարմիրներին: Այսպիսի պայմաններում կառավարությունը համաձայնվում է սովետիզացիայի, անկախության երաշխավորության հիմքերով»¹: Հայաստանում ստեղծված դրությունը ճշգրիտ համընկնում էր Հայաստանը պարտության մատնելու այն ծրագրին, որը սեպտեմբերի 17-ին կազմվել էր Բաքվում Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարի ստեղծած խորհրդի կողմից, համաձայն որի՝ Հայաստանը պարտության էր մատնվելու քենալականների կողմից, որից հետո կարմիր զորքերը մտնելու էին Հայաստան՝ կործանման եղրին հասած հայ ժողովրդին փրկելու: Այդ փաստաթղթում նաև ասված էր. «Վրաստանը, որին մենք չենք դիպչի այդ հարձակման ժամանակ, կվախենա խառնվելու այդ պայքարին»²: Սա նշանակում

¹ ՀՀ ՀՔՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 58, ք. 34:

² ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, ք. 2:

էր՝ Հայաստանից հետո հերթը հասնելու էր չեզոք Վրաստանին: Վրաստանի կառավարությունն այդ վտանգը զգում էր Ադրբեջանի խորհրդայնացումից հետո: 1920թ. մայիսի 7-ին, երբ ՌՍՖՍՀ-ն ճանաչեց Վրաստանի անկախությունը, դրությունը փոխվեց: Հայաստանի պարտությունից հետո Վրաստանի կառավարությանը թվում էր, որ Թուրքիան կարող է հարձակվել նաև Վրաստանի վրա: Նման ակնարկ Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ Կարաբեքիրն արել էր Խատիսյանին: Բայց Թուրքիայի նման ձգտումը, որը պայմանավորված էր Բաթումը գրավելու նրա ցանկությամբ, հանդիպեց ՌՍՖՍՀ դիմադրությանը: Վրաստանի կառավարությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո զգում էր, որ ինքը միայնակ մնալով չի կարող պահել անկախությունը: Այս հարցում վրացական մենշևիկյան կառավարության անդամները բաժանված էին երկու թևի: Հունվարի առաջին կեսին Թիֆլիսում կայանում է մենշևիկյան լիդերների գաղտնի նիստ, որտեղ քննարկվում է Վրաստանի քաղաքական կողմնորոշման խնդիրը: Ն. Ժորդանիան առաջարկում է քաղաքացիական պատերազմից խուսափելու կամ այն կանխելու նպատակով ընդունել կառավարման խորհրդային ձևը, ընդունել ռուսական կողմնորոշում և մոտենալ Անգորայի կառավարության հետ: Ն. Ռամիշվիլին և նրա կողմնակիցները գտնում են, որ Քենալը ավանտյուրիստ է և հանդես են գալիս Վրաստանում խորհրդային կառավարում մտցնելու Ն. Ժորդանիայի առաջարկին: Ն. Ռամիշվիլին հակառակ կողմին նույնիսկ սպառնում է քաղաքական կուրսը փոխելու պարագայում ռազմական դիմադրություն ցույց տալ³: Վրաստանի կառավարության անդամների միջև ծագած այս վեճը պայմանավորված էր այն բանով, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո հերթը հասել էր Վրաստանին, և վերջինս պետք է կողմնորոշվեր: Ժորդանիան պահանջում և գտնում էր, որ պետք է չդիմադրել և համաձայնել Վրաստանում կառավարման խորհրդային ձև մտցնելուն և

³ Նույն տեղում, ֆ. 4/114, ց. 2, գ. 5, ք. 9:

խուսափել բախումներից ու քաղաքացիական պատերազմից: Սակայն մեծամասնությունը Ն. Ռամիշվիլու գլխավորությամբ դեմ է արտահայտվում: Հաղթում է Ռամիշվիլու խմբավորումը: Հարկ է նկատել, որ թուրք-հայկական պատերազմի շրջանում էլ այս երկու խմբավորումների դիրքորոշումը ևս տեսանելի էր: Ի տարբերություն Ն. Ժորդանիայի, Ն. Ռամիշվիլին և իր կողմնակիցները բարյացկամ էին տրամադրված Հայաստանի հանդեպ: Վրաստանի կառավարական շրջանակներում այս իրարանցումը պայմանավորված էր նրանով, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ արդեն ղեկտեմբեր ամսից, Հայաստանը պահանջում էր, որ վրացական զորքերը դուրս բերվեն չեզոք գոտուց: Դեկտեմբերի 18-ին Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանը նոտա է հղում Վրաստանի կառավարությանը և պահանջում է զորքերը դուրս բերել չեզոք գոտուց, քանի որ ՀԽՍՀ կառավարությունը չեղյալ է համարում 1920թ. նոյեմբերի 13-ի հայ-վրացական համաձայնությունը: 1920թ. դեկտեմբերից Լոռվա չեզոք գոտին, որը, ըստ նոյեմբերի 13-ի համաձայնության, գրավված էր վրացական զորքերի կողմից, դարձավ տարածքային լուրջ վեճի նյութ: Վրաստանի կառավարությունը հասկանում էր, որ մեծ բարդություններ են ստեղծվելու, Ժորդանիայի պահանջը հենց դրա հետ էր կապված, բայց չէր համաձայնվում ու հաշտվում չեզոք գոտուց զորքերը դուրս բերելու և տարածքը Հայաստանին հանձնելու պահանջին: 1921թ. դեկտեմբերի 21-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստր Կ. Սաբահթարաշվիլին ի պատասխան Բեկզադյանի ղեկտեմբերի 18-ի նոտայի հայտնում է, որ «իր կառավարությունը համաձայն չէ 1920թ. նոյեմբերի 13-ի համաձայնությունը լիկվիդացիայի միակողմանի հարցադրմանը»⁴: Սաբահթարաշվիլին նաև հայտնում է, որ վիճելի հարցը կարելի է լուծել բանակցությունների միջոցով: Նաև հայտնում է, որ Թիֆլիս-Երևան կապը կգործի անխափան, ու իրենք խոչընդոտներ չեն հարու-

⁴ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 24, ք. 53:

ցում այդ հարցում: Այս նոտաները փոխանակելու ժամանակ հարաբերություններն արդեն լարված էին: 1920թ. դեկտեմբերի 7-ին Հայիեղկոմի նախագահ Ս. Կասյանի հանձնարարությամբ տնային կալանքի էին ենթարկվել Հայաստանում Վրաստանի ներկայացուցիչները⁵: 1920թ. դեկտեմբերի 10-ին Կ. Սաբահթարաշվիլին հեռագրով Ս. Կասյանին հայտնում է, որ կատարվածը թշնամական դրսևորում է Վրաստանի նկատմամբ: Նա բողոքում է և պահանջում. «տնային կալանքից ազատել Վրաստանի ներկայացուցչության ղեկավար, գեներալ Կարալովին և քարտուղար, գնդապետ Միգաբերիձեին»⁶: Փաստորեն, Խորհրդային Հայաստանը քաղաքական իրավահաջորդը դարձավ այն լարված հարաբերությունների, որը նոյեմբեր ամսից գոյություն ուներ Վրաստանի և Հայաստանի միջև: Գնալով այդ հարաբերություններն իսկապես թշնամական բնույթ էին կրում, ինչը որ արձանագրել էր Վրաստանի արտաքին գործերի մինիստրը Ս. Կասյանին հղած ղեկտեմբերի 10-ի նոտայում: Դեկտեմբերի 13-ին Ալ. Բեկզադյանը Կ. Սաբահթարաշվիլուն հայտնում է, որ Կարալովին և Միգաբերիձեին տնային կալանքի են ենթարկել Թիֆլիսում Լեզրանի միսիայի անդամներին ձերբակալելու պատճառով: 1920թ. դեկտեմբերի 15-ի պատասխան հեռագրով Սաբահթարաշվիլին Բեկզադյանին հայտնում է, որ Թիֆլիսում Լեզրանի միսիան ոչ ոք չի ձերբակալել, և որ մնան բան գոյություն չունի և այն հիմնված է ոչ ճիշտ տեղեկատվության վրա: «Այդ պատճառով էլ,՝ նշում է Սաբահթարաշվիլին,՝ գտնելով, որ կատարվածը դիվանագիտական նորմերի և միջպետական հարաբերությունների կոպիտ խախտում է, պահանջում են հանել տնային կալանքը»⁷: Հավանաբար, ճշտելով, որ Լեզրանի հետ կապված վերոհիշյալ միջադեպը տեղի չի ունեցել դեկտեմբերի 17-ին, Ալ. Բեկզադյանի ցուցումով Վրաստանի ներկայացուցիչներն ազատվում են տնային կալանքից: Այս միջադեպը տեսանելի է դարձ-

⁵ Նույն տեղում, գ. 23, ք. 1:

⁶ Նույն տեղում, գ. 24, ք. 5:

⁷ Նույն տեղում, գ. 24, ք. 8:

նում, որ Վրաստանի հետ հարաբերությունները անտեղի բարդանում էին, և դրա հիմնական պատճառն այն էր, որ բուլղարական կենտրոնն էր չեզոք գոտու հետ կապված հայ-վրացական վեճը օգտագործում: Այսինքն՝ այն վերածել ռազմական բախման և չեզոք գոտուց սկսել Վրաստանի խորհրդայնացման գործընթացը: Դեկտեմբեր-հունվար ամիսներին ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանի և Վրաստանի արտաքին գործերի մինիստր Կ. Սաբահթարաշվիլու միջև մի շարք նոտաների փոխանակություն է տեղի ունենում չեզոք գոտու հարցը բանակցությունների միջոցով կարգավորելու նպատակով: Պատկերը պարզ լինելու համար նշենք, որ Վրաստանի կառավարությունը գտնում էր, որ բանակցությունները պետք է սկսել առանց վրացական գորքերը չեզոք գոտուց դուրս բերելու, իսկ հայկական կողմը գտնում էր, որ բանակցություններ պետք է սկսել վրացական գորքերը գոտուց դուրս բերելուց հետո: Այսինքն՝ Վրաստանի կառավարությունը գտնում էր, որ պետք է պահպանել գոյություն ունեցող վիճակը և գորքերի դուրս բերումը չեզոք գոտուց ևս պետք է քննարկել բանակցությունների ժամանակ: Հարցին այս իրարամերժ մոտեցումն էլ բարդացնում էր խնդիրը: 1921թ. հունվարի 5-ին Ալ. Բեկզադյանի հղած հեռագրում Կ. Սաբահթարաշվիլին նշում է, որ Վրաստանի կառավարությունը գտնում է, որ վիճելի հարցերը պետք է լուծել բանակցությունների միջոցով: Ինչ վերաբերում է վրացական գորքերը դուրս բերելու խնդրին, ապա հիմնավորվում է, որ «տեղական բնակչությունը որևէ դժգոհություն չունի վրացական գորքերից, իսկ կատարված որոշ միջոցառումները եղել են անխուսափելի անհրաժեշտություն»⁸: Զանի որ Բեկզադյանն իր դեկտեմբերի 29-ին Վրաստանի կառավարությանը հղած նոտայում հարցադրում էր արել հայ-վրացական նախատեսվող բանակցություններում ՌՍՖՍՀ կառավարության ներկայացուցչի մասնակցության վերաբերյալ, Սաբահթարաշվիլին անդրադառնում է նաև այդ -

հարցադրմանը: Նա դրա վերաբերյալ հայտնում է իր կառավարության հետևյալ մոտեցումը. «Սկզբունքորեն դեմ չլինելով բանակցություններին ՌՍՖՍՀ ներկայացուցչի մասնակցությանը, գտնում ենք, որ այդ մասնակցության ձևը պետք է քննարկվի Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների կողմից»... Խնդրում է պատգամավորներ ուղարկել Թիֆլիս բանակցությունները սկսելու համար: Տեսնում ենք, որ վրացական կողմը համառորեն պնդում է իր այն տեսակետը, որ բանակցությունները պետք է սկսել առանց վրացական գորքերի դուրս բերման հարցը քննարկելու: Այդ իսկ պատճառով էլ բանակցությունների հարցը ձգձգվում էր: 1921թ. հունվարի 18-ին Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանը Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչին հայտնում է. «Լեզրանի հետ գալիս եմ Թիֆլիս Վրաստանի կառավարության հետ պարզելու նախատեսվող բանակցությունների հարցը»⁹: Թիֆլիսում Բեկզադյանի հանդիպումները Վրաստանի ղեկավարության հետ դիրքորոշումների փոփոխություն չեն կատարում: Դրանից մի քանի օր հետո՝ 1921թ. հունվարի 25-ին, Գ. Օրջոնիկիձեին Ս. Կասյանին և Ա. Նորիջանյանին հղած հեռագրով հրահանգում է. «Չեզոք գոտին պետք է վերցնել վրացիներից: Ամնիջապես սկսեք ջոկատների կազմակերպումը: Գնդացրային ջոկատը պետք է ուղարկել Վելիկանովին: Արեք, ինչ որ կարող եք, որքան արագ, այնքան լավ: Մենք կօգնենք երկու գնդով: Բորբիշչևին ուղարկում եմ Վելիկանովի մոտ (չեզոք գոտի - Կ. Ս.): Լեզրանն ասում է, որ կարելի է հազար հոգուց բաղկացած ջոկատ կազմակերպել»¹⁰: Փաստորեն, Օրջոնիկիձեի հրահանգով ոչ միայն Վելիկանովի հրամանատարությամբ գործող ռուսական գորքերն էին ուղարկվել չեզոք գոտի՝ Վրաստանի դեմ կովելու, այլև Կասյանից պահանջվում էր նոր ջոկատներ կազմել և ուղարկել չեզոք գոտի: Վրաստանն էլ այս հանգամանքը ներկայացնում էր ինչպես Հայաստանի կողմից նախաձեռնվող ռազմական գործո-

⁸ Նույն տեղում, գ. 12, ք. 13:

⁹ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 36, ք. 32:

¹⁰ ՍՄԻ ԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 172, ք. 1:

դուքյուններ Վրաստանի դեմ: Դեռևս դեկտեմբերի 27-ին Ալ. Բեկզադյանը Կ. Սաբահթարաշվիլուն հղած հեռագրում նշում է, որ «իր կառավարությունը դեմ չէ բանակցություններին»¹¹, բայց, այնուամենայնիվ, Վրաստանի գորքերը պետք է անմիջապես հանվեն Հայաստանի անվիճելի տարածքներից: Վրաստանի կառավարությունը համառոտ և դրոճ պատերազմական գործողություններ հայ-վրացական սահմանում: Փաստորեն, Հայաստանում փետրվարյան իրադարձության նախօրեին ռազմական ուժը և տեխնիկական տեղափոխվել էր չեզոք գոտի և օգնում էր «բռնկված ապստամբությանը»՝ գոտին վրացական գորքերից ազատագրելու: Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում 1921թ. փետրվարի 18-ին հաղթանակած ապստամբությունը անմիջապես կապ ունի հայ-վրացական սահմանում կատարվող իրադարձությունների հետ: Հայաստանում բոլշևիկների վարած բռնացումների ու բռնագրավումների քաղաքականությունը՝ մի կողմից և գորքերի տեղափոխումը չեզոք գոտի՝ մյուս կողմից, հող նախապատրաստեցին ապստամբության համար: Ստացվեց այնպես, որ 1920թ. փետրվարին Լոռվա չեզոք գոտու հայությունը ապստամբեց Վրաստանի դեմ, իսկ Երևանի հայությունը խորհրդային իշխանության դեմ: Այնուհաստ էր այս գործողությունների փոխկապակցվածությունը: Լոռվա չեզոք գոտում Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ բոլշևիկների սկսած գործողություններով սկիզբ դրվեցին Վրաստանի խորհրդայնացմանը: Հայաստանում կատարվեց ճիշտ հակառակը: Այս իրարամերժ գործողությունները պատահական զուգադիպություն չէին, որովհետև կազմակերպվում և ուղղորդվում էին նույն կենտրոնի կողմից: Վրաստանի կառավարությունը լավ հասկանալով կատարվածի քաղաքական տարողությունն, այնուամենայնիվ, մեղադրում է Հայաստանին Վրաստանի դեմ պատերազմական գործողություններ սկսելու համար: 1921թ. փետրվարի 12-ի Վրաստանի արտաքին գործերի մինիստր Կ.

¹¹ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 24, ք. 53:

Սաբահթարաշվիլին Վրաստանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Դ. Շահվերդյանին հայտնում է, որ Հայաստանը նախապատրաստվում է պատերազմի Վրաստանի դեմ: Նույն օրը Վրաստանի հատուկ գնդի ջոկատները շրջապատում են Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչության շենքը: Փետրվարի 14-ին Դ. Շահվերդյանը Կ. Սաբահթարաշվիլուն հղած պատասխան գրությունում հերքում է Հայաստանի հասցեին արած Վրաստանի կառավարության մեղադրանքները: Այս մեղադրանքները շարունակվեցին մինչև փետրվարի 18-ը, երբ Հայաստանում կատարված հեղաշրջումից հետո Հայաստանի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանը Վրաստանի կառավարությանը հայտնեց եղելությունը: Դրանից հետո Վրաստանի կառավարությունը վերջապես «հասկացավ» կատարվածի իմաստը և սկսեց բողոքները հղել իսկական հասցեատիրոջը: 1921թ. փետրվարի 19-ին, երբ չեզոք գոտու ապստամբությունն արդեն ավարտված էր հայ գյուղացիների հաղթանակով, և ռուսական գորքերը մուտք էին գործել Վրաստան, Ն. Ժորդանիան հեռագրում է Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինին, պահանջելով «ռուսական գորքերը դուրս բերել Վրաստանից և վիճելի հարցերը լուծել բանակցությունների միջոցով»¹²: Հարկ է նկատել, որ 1920թ. դեկտեմբերից մինչև 1921թ. հունվար ամիսները չեզոք գոտում առնչվող հայ-վրացական փոխհարաբերությունները շատ գծերով նման էին 1918թ. հունիս-դեկտեմբեր ամիսների իրողություններին, որոնք հանգեցրեցին դեկտեմբերյան պատերազմին: Վրաստանի կառավարությունն երկու դեպքում էլ չէր ցանկանում լսել, թե խոսքն ինչի մասին է: Նրա ամբողջ ուշադրությունը սևեռված էր վիճելի տարածքը սեփականացնելուն, և բոլորովին մոռացել էր, որ նոյեմբերի 13-ի պայմանագիրը կնքվել էր երեք ամսով: Չարմանալի զուգադիպություն է, որ ուղիղ երեք ամիս հետո չեզոք գոտու ապստամբության արդյունքում այն ազատվեց վրացական գորքերից: Այլ հարց է,

¹² Նույն տեղում, ֆ. 37, ց. 1, գ. 28, ք. 1:

որ չեզոք գոտուց սկսված իրադարձությունները տարածվեցին ողջ Վրաստանով մեկ, որի արդյունքում Վրաստանում ևս հաստատվեցին խորհրդային կարգեր: Եվ իզուր էր իր հակահայկական ճառերում փոթորկում Վրաստանի ղեկավար Ն. Ժորդանիան, որովհետև ինքը տեղյակ էր աշխարհաքաղաքական մեծ ու փոքր տեղաշարժերին, ինչպես 1918-ին, այնպես էլ 1920 թվականին վրացական զորքերը չեզոք գոտի էին մտել թուրքական «առաջխաղացման դեմն առնելու» նախապայմանով: Ահա, երբ իրադարձությունները փոխվում էին, և Հայաստանի կառավարությունները իրենց հիշեցնում էին, որ վրացական զորքերը դուրս պետք է բերվեն վիճելի տարածքից և դրանից հետո սկսվեն խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու բանակցությունները, Վրաստանը համառում և լսել չէր ցանկանում: Ինչպես 1918թ., այնպես էլ 1921թ. Վրաստանի նման մոտեցումը մեծ թյուրիմացությունների դուռ բաց արեց երկու հարևան ժողովուրդների միջև: 1918թ. նման կոշտ դիրքորոշումն ավարտվեց պատերազմով, երկրորդ դեպքում՝ 1921թ., կրկին Լոռվա չեզոք գոտում տեղի ունեցավ համաժողովրդական ապստամբություն, որի արդյունքում ոչ միայն վրացական զորքերը պարտվեցին ու դուրս քշվեցին չեզոք գոտուց, այլ նաև ռազմական գործողությունները դասակարգային բնույթ ստացան ու տեղափոխվեցին Վրաստան: 1921թ. փետրվարին կատարված իրադարձությունները ցույց են տալիս, որ Անդրկովկասում բուլշևիկյան զորքերը փոքրաթիվ էին: Ու եթե Ն. Ժորդանիան ժամանակին լսեր Հայաստանի փաստարկները հայ վրացական դաշինք ստեղծելու մասին, իրադարձություններն այլ ընթացք կունենային: Այնպես որ, հակահայկական խժոժությունները Վրաստանում հիմնավորված չէին, որովհետև Վելիկանովը ռուսական զորքերով չեզոք գոտի տեղափոխվեց ոչ թե Հայաստանի Հեղկոմի ցանկությամբ, այլ Գ. Օրջոնիկիձեի հրահանգով, որը մեկ այլ վրացու՝ Ի. Ստալինի հետ համատեղ, ղեկավարում էր Անդրկովկասի գործողությունները: Այս պահի վրա ընթերցողի ուշադրությունն են հրավիրում ոչ այն պատճառով, որ Անդրկովկասի հանրապետությ-

յունները հերքով խորհրդայնացնողները Ստալինն ու Օրջոնիկիձեն էին, ճշտելով նրանց ազգային պատկանելիությունը: Ո՛չ և կրկին անգամ ո՛չ, որովհետև չլինեին նրանք, կլինեին այդ քաղաքականության այլ իրականացնողներ: Ասել կուզեմ, որ Ն. Ժորդանիան և Ն. Ռամիշվիլին դեռևս 1920թ. ապրիլ ամսից լավ գիտեին, թե ինչ է կատարվում Անդրկովկասում: Գիտեին նաև, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրում վիճակն այնքան օրհասական էր, որ Հայաստանը նույնիսկ ցանկության դեպքում չէր կարող պատերազմ վարել Վրաստանի դեմ: Ուստի, խոսքս շրջանառու դարձած այդ թեզի մասին է, որը միայն ճշմարտանման եզրեր ունի: Վերջին հաշվով, բացի 1921թ. հունվարի 25-ի Կասյանին և Ավիսին ուղարկված հեռագրից, որ «չեզոք գոտին պետք է վերցվի վրացիներից», չկա ուրիշ որևէ փաստ, որ Հայաստանը նախապատրաստվում կամ պատերազմ է սկսել Վրաստանի դեմ: Հայաստանի նոր իշխանությունները զբաղված էին այլ պայքարով՝ այն է դասակարգային թշնամու՝ դաշնակցության դեմ պայքարով: Այնպես որ Հայիեղկոմն ու ՀԿԿ-ն բոլորովին ուրիշ պայքարով ու հեղափոխական պատերազմով էին զբաղված: Այլ հարց է, որ Օրջոնիկիձեի ցուցումով Հայաստանում գտնվող ռուսական զորքերը տեղափոխվել էին չեզոք գոտի ապստամբներին օգնելու: Այս հարցադրումն էլ իր պատասխանն ունի: 1921թ. փետրվարի 13-ին լրացել էր ուղիղ երեք ամիսը նոյեմբերի 13-ին Հայաստանի ու Վրաստանի միջև կնքված պայմանագրի: Ու, քանի որ պայմանագիրը կնքվել էր երեք ամսով և չէր երկարացվել նոր պայմանագրով, ուստի նոյեմբերի 13-ի պայմանագիրը համարվում էր ուժը կորցրած, և Վրաստանը պարտավոր էր իր զորքերը դուրս բերել չեզոք գոտուց: Թող զորքերը դուրս բերեին: Ուստի, և քաղաքական և իրավական առումով մեղադրանքներն անհիմն են, որովհետև չեզոք գոտին բուն հայկական տարածք էր: Թուրքական վտանգից ելնելով էր, որ Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 13-ի պայմանագրով համաձայնեց, որ վրացական զորքերը երեք ամսով մուտք գործեն չեզոք գոտի: Չնայած այս հիմնավորումներին, որոնց հեր-

քումն ու հակառակը պնդելը հայեցողական է ու հարմարեցված, պետք է նշել, որ Հայաստանում գտնվող ռուսական զորքերն, իսկապես, տեղափոխվել են չեզոք գոտի ապստամբներին օգնելու, բայց դա դեռևս ապացույց չէր որ Հայաստանը պատերազմ էր սկսել Վրաստանի դեմ: Վերջին հաշվով կատարված այս իրադարձությունների վերաբերյալ գոյություն ունի 1921թ. փետրվարի 17-ի Օրջոնիկիձեի հաղորդագրությունը Ստալինին: Նա այդ հաղորդագրությունում պարզ ասում է, որ Վորոնցովկա գյուղում սկսված ապստամբությունը «արագ քափով տարածվեց ողջ Վրաստանով մեկ և որ Թիֆլիսի ժամերն հաշված են ու շուտով Վրաստանը մտնելու է խորհրդային ընտանիքի մեջ»: Օրջոնիկիձեն նաև պատմում է Ադրբեջանի տարածքից կարմիր զորքերի մուտքը Վրաստան: Ու նաև մանրամասն պատմում է «Վրաստանի բուրժուական իշխանությունը տապալելու» պլանավորված մյուս գործողությունների մասին: Վերջին հաշվով, եթե Հայաստանի սովետական իշխանությունն էր կազմակերպել զորքերի տեղաշարժը հայկրացական սահման, և դրա արդյունքում ու հետևանքով 1921թ. փետրվարի 18-ին ինքը Երևանում կորցրեց իշխանությունը, նշանակում է՝ նա գործում էր իր դեմ: Այսինքն՝ ռուսական զորքերը հանելով Երևանից, ինքը մնաց անպաշտպան և կորցրեց իշխանությունը: Որևէ տրամաբանություն կա՞ այս ամենի մեջ: Իհարկե՝ ոչ, եթե չես ջանում պատմական անցքերին նայել ցանկալի ու նպատակային հայացքով, ինչը որ անում էր Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սաբահթարաշվիլին: Որպեսզի ցույց տանք, որ Վրաստանի մեղադրանքներն անհիմն էին, ուստի, ընդհանուր գծերով պարտավոր ենք ցույց տալ, թե այդ շրջանում ի՞նչ էր տեղի ունենում Հայաստանի ներքին կյանքում: Հայտնի է, որ Հայհեղկոմի անդամները Երևան ժամանեցին դեկտեմբերի 2-ի Լեզրան-Դրո պայմանագիրը ստորագրելուց մի քանի օր հետո: Նրանք Հայաստան գալով նախ Բ. Լեզրանի հետ վեճ ունեցան, թե ինչու՞ է վերջինս նման մեղմ պայմանագիր ստորագրել դաշնակցության հետ և դրանով «տեղ չի թողել հեղափոխական կովի»: Այս հե-

ղափոխական մտաբախումներն հանգեցրին այն բանին, որ դեկտեմբերի 2-ի պայմանագրից կյանքում իրականացվեց միայն իշխանության հանձնումը: Դրոն, որը ստորագրել էր պայմանագիրը, և, համաձայն պայմանագրի, Հ. Տերտերյանի հետ պետք է ընդգրկվեր Հայհեղկոմի կազմի մեջ, հունվարի վերջերին Ռուսաստան մեկնելու անվան տակ, փաստորեն, արտաքսվեց Հայաստանից: Դրանից հետո հավաքվեցին և Հայաստանից Բաքու, այնուհետև Ռյազան արտաքսվեցին հարյուրավոր սպաներ: Չնայած նրան, որ դեկտեմբերի 2-ի պայմանագրի 4-րդ հոդվածում ամրագրված էր, որ «Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում պատասխանատվության այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը»¹³: Դեկտեմբերի 2-ի պայմանագրի և իրականում կատարվածի համեմատությունը անհրաժեշտ է հերքելու համար այն տեսակետը, որը փաստելով պայմանագիրը և անտեսելով ներքին կյանքում կատարված բռնությունները, հիմնավորում է, որ, իբր, փետրվարյան ապստամբությունը հնարավոր դարձավ Հայհեղկոմի լոյալ վերաբերմունքի շնորհիվ: Դեկտեմբերից մինչև փետրվարի 18-ը Հայաստանում իշխող Ավիս-Աթարբեկյան խումբը գտնում էր, որ դեկտեմբերի 2-ի պայմանագիրը մեղմ է: Ահա, այստեղից է տարածում գտել ու շրջանառու դարձել այդ տեսակետը: Այդ «բացը» նրանք լրացնում էին հեղափոխական այնպիսի քայլերով, որոնք հակառակ էին դեկտեմբերի 2-ի պայմանագրին: Պայմանագրի 5-րդ հոդվածում կողմերը պայմանավորվել էին, որ «դաշնակցությունը և ուրիշ սոցիալիստական կուսակցություններ Ս.Հ. Ս.Դ. անդամները ոչ մի հալածանքի չպետք է ենթարկվեն»: Կատարվում է ճիշտ հակառակը: Հունվար-փետրվար ամիսներին ձերբակալվում և բանտերն են նետվում հարյուրավոր դաշնակցական զործիչներ: Փետրվարի 4-ին Ս. Վրացյանը տեսնվում է Ավիսի և Աթարբեկյանի հետ և ասում է, որ «բոլշևիկները

¹³ Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աբենք, 1930թ., էջ 276:

ձգտում են արհեստական քայլերով քաղաքացիական կռիվ առաջացնել»: Ավիսը Վրացյանին «բացատրում է», որ «առանց քաղաքացիական կռիվի ոչ մի պրոլետարական դիկտատուրա չի կարող գոյություն ունենալ: Բոլոր խորհրդային երկրներում քաղաքացիական կռիվն անխուսափելի է: Հայաստանն էլ պետք է անցնի քաղաքացիական կռիվի բովով»¹⁴: Ս. Վրացյանը նույն գրության մեջ նաև նշում է, որ Հայհեղկոմի ղեկավարներ Կասյանը և Մոսվյանը համարվում էին չափավոր ուղղության ներկայացուցիչներ, պայքարում էին Աթաբեկյան-Ավիս խմբավորման դեմ: Նաև ճիշտ է նկատել Ս. Վրացյանը, որ Կասյանն ու Մոսվյանը դիտորդի դերում էին, իսկ բռնագրավումների ու բռնությունների քաղաքականությունն իրականացնում էին Ավիս Նուրիջանյանը և Գևորգ Աթաբեկյանը: Ավելի ճիշտ, քաղաքականությունն իրականացնում էր ՀԿԿ - կենտկոմը, որի անդամները ևս առանց քաղաքացիական պատերազմի չէին պատկերացնում հեղափոխական գործողությունները: Դաշնակցությունն իշխանությունը հանձնեց բոլշևիկներին, որպեսզի բացառվի քաղաքացիական պատերազմը, որ Հայաստանի դրությանը հասած երկրի համար պարզապես կործանարար էր: Դա նշանակում էր՝ թշնամու կիսատ թողած գործը լրացնել ներքին թշնամանք առաջ բերելով: Պատկերը պարզ լինելու համար տեսնենք, թե այդ ամենի մասին ինչ է ասում Ա. Մոսվյանը. «մեր իշխանության վերջին օրերը (նկատի ունի մինչև փետրվարի 18-ը – Կ. Ս.) նշանավորվեցին դաշնակցների զանգվածային ձերբակալություններով: Երևանում ձերբակալվեցին 200 հոգի, մյուս տեղերում ևս տեղի էին ունենում տասնյակ, հարյուրավոր մարդկանց ձերբակալություններ: Մեր թերթերն այնպիսի աղմուկ-աղաղակով էին քաղաքացիական պատերազմի կոչում, որը հղի էր ծանր հետևանքներով: ...Այդ գործողությունները կատարվում էին փետրվարի 10-ին, Գևորգի ղեկավարությամբ: Ես և Մերգելը (Կասյան-Կ. Ս.) եղել ենք այդ ամենի միայն վկաները, որը ող-

¹⁴ Ս. Վրացյան, Էջեր մոտիկ անցյալից, Հայրենիք, 1923թ., N4, էջ 39:

բերգական հետևանքներ ունեցավ: ...Մենք դաշնակցներին ձեռնոց նետեցինք այն պահին, երբ Հայաստանում չունեինք համապատասխան ռազմական ուժ և հենարան»¹⁵: Մոսվյանը պարզ ու հասկանալի ասում է, որ քաղաքացիական կռիվ հրահրել են իրենք և ոչ թե դաշնակցությունը: Երկրորդ կարևոր դրույթը Մոսվյանի դիտարկումներից այն է, որ հակադաշնակցական ու քաղաքացիական պատերազմի միտված գործողությունները կատարվել են այն ժամանակ, երբ Հայաստանում ռազմական ուժ չկար: Մենք արդեն նշել ենք, որ այդ ուժերը մեկնել էին չեզոք գոտու ապստամբներին օգնելու: Հենց այստեղ է, որ բացահայտման կարիք ունի կատարվածը: Որքան էլ որ Մոսվյանը Ավիս-Աթաբեկյան խմբի անդամներին համարի ավանտյուրիստներ կամ «հեղափոխական հիվանդությամբ տառապողներ», միևնույնն է, դրանով հարցը պատասխան չի ստանում և առավել ևս չի սպառվում ու փակվում այն դիտարկումով, որ Հայաստանում կային աջ և ձախ խմբավորումներ: Առավել ևս, որ լոյալ գործիչները դիտորդի դերում էին և նամակներ էին ուղարկում այս ու այն անդրկովկասյան ղեկավարներին, որոնք որևէ ազդեցություն չէին կարողանում ունենալ: Ուստի, գլխավոր հարցն այն է, թե խորհրդային իշխանությունն ինչու¹⁶ էր հրահրում քաղաքացիական պատերազմ և ում էր ձեռնադրում, որ այդ ծանր շրջանում Հայաստանում սկսվեն ներքին խժոժություններ, որ ձեռնադրում չէր ոչ նոր և ոչ էլ իշխանությունը հանձնած դաշնակցությանը: Անհերքելի փաստ է այն հանգամանքը, որ դաշնակցությունն համաձայնեց ստորագրել Լեգրանի հետ Հայաստանի խորհրդայնացման պայմանագիրը նաև քաղաքացիական պատերազմից խուսափելու համար: 1920թ. դեկտեմբերի 1-ին Ս. Վրացյանը Ալեքսանդրապոլում գտնվող Ալ. Խատիսյանին հայտնում է. «Բյուրոն, ֆրակցիան (դաշնակցական – Կ. Ս.), կառավարությունը որոշեցին ընդունել կարմիրների առաջարկը սովետիզացիայի մասին: Դրել ենք որոշ պայմաններ, որ ճանաչվի Հա-

¹⁵ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 79, ք. 6:

յաստանի անկախությունը, հաշտություն կնքել տաճիկների հետ, թույլ չտալ քաղաքացիական կռիվ»։ Այսինքն՝ Հայաստանում հեղափոխություն չի եղել, այլ եղել է իշխանության կամավոր կամ հարկադրական հանձնում, որպեսզի հեղափոխություն ու քաղաքացիական պատերազմ չլինի կործանման եզրին հասած երկրում։ Իսկ Ա. Մռավյանը վկայում է, որ խորհրդային իշխանության և մամուլի ողջ գործունեությունը նպատակամղված էր դրան։ 1921թ. փետրվարի 1-ին «Կոմունիստ» թերթի առաջնորդող հոդվածում կարդում ենք. «Հայաստանը մեկ անգամ ընդմիջտ մաքրելու համար դաշնակցական գարշահոտությունից, անհրաժեշտ է ունենալ դասակարգային ինքնագիտակցությամբ հզոր և դիսցիպլինար զինված բռունցք։ Այդ բռունցքը պետք է պատրաստ լինի ամեն բոլոր խեղդելու և ոչնչացնելու բոլոր նրանց, ովքեր կարծում են, որ հնարավոր է խեղդել կոմունիստական հեղափոխությունը Հայաստանում»¹⁶։ Քիչ է ու ճշմարտանման կարծելու, որ հեղափոխական գաղափարաբանությունը մտել էր այդ մարդկանց երիտասարդ ու նաև փոքր գյուղացիները և ավերածությունների էր մղում։ Ճշմարտանման է, ու ամբողջական պատկերը չի տալիս, որովհետև Հայաստանն ավերածության տանող նրանց հեղափոխական քաղաքականությունը ղեկավարվում էր բուլշևիկյան կենտրոնից։ Ուստի, այդ ամենը որոշակի նպատակով ղեկավարվում և ուղղորդվում էր դրսից։ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով որևէ դրական տեղաշարժ չէր կատարվել։ Գնալով դրությունը ծանրանում էր, որովհետև խորհրդայնացումը չփոխեց շրջապատի թշնամական վերաբերմունքը Հայաստանի հանդեպ։ Դրսից որևէ օգնություն չէր ստացվում շրջափակման հետևանքով։ Փաստորեն, բոլոր կողմերից ջանում էին ապացուցել, որ Հայաստանում իշխանության ձևական փոփոխություն է եղել, և իրական հեղափոխություն չի կատարվել։ Ալեքսանդրապոլը նստավայր դարձրած Ք. Կարաբեքիրը 1921թ. հունվարի 3-ին Երևանում գտնվող կապի

սպա Բեհադդինին հայտնում է, որ Հայաստանի կառավարությունը Երևանից տրված հեռագրերին արգելք է հանդիսանում։ Նաև հավելում է. «Եթե մինչև հունվարի 5-ը Ձեր հեռագրերը չստանանք, ստիպված կլինենք Երևանի և Ալեքսանդրապոլի միջև հաղորդակցությունը խզելու»¹⁷։ Սա նշանակում էր, որ Կարաբեքիրն էլ իր հերթին էր հետևում Երևանում կատարվող անցքերին և առիթը բաց չէր թողնում ընդգծելու, որ Հայաստանի իշխանությունը «բարեկամաբար տրամադրված չէ հեղափոխական Թուրքիային»։ Այսինքն՝ Թուրքիան ևս ջանք չէր խնայում, որպեսզի քաղաքացիական պատերազմ սկսվի Հայաստանում։ Բացի դրանից, Թուրքիան տնօրինում էր նաև Նալբանդից մինչև Բոզի գյուղ ընկած տարածքը, որը հայտարարված էր հայ-թուրքական չեզոք գոտի։ Եթե հանկարծ Հայաստանի կառավարությունը ստուգում կատարեր իր տարածքով անցնող թուրքական բազում կապի սպաներից որևէ մեկին, Կարաբեքիրն անմիջապես միջադեպը դիտել էր տալիս հակահեղափոխական քայլ Հայաստանի կողմից։ Ու նաև անմիջապես առիթը բաց չթողնելով հեռագրեր էր հղում Մոսկվա, Բաքու, որոնցում նշում էր, որ քեմալականների «հեղափոխական ջանքերը փոխըմբռնման չեն հանդիպում Հայաստանի կառավարության կողմից»։ Փաստորեն, Հայաստանը խորհրդայնացվելուց հետո էլ չկարողացավ դուրս գալ համաշխարհային հեղափոխության թշնամական վերաբերմունքից։ Հանգամանք, որն ինքնին հերքում է մինչ օրս էլ իր ուժը չկորցրած այն պնդումները, որ, եթե Հայաստանի իշխանությունները 1920թ. մայիսին, հետևելով Ադրբեջանի օրինակին, խորհրդային կարգեր հռչակեին, ապա տարածքներ չէին կորցնի, և պատմությունը բոլորովին այլ ընթացք կունենար։ Դա ոչ միայն հնարավոր չէր, այլև անհնարին էր այն պարզ պատճառով, որ ՌՍՖՍՀ կառավարությունը չէր կարող բավարարել և իր հեղափոխական գործընկեր Թուրքիայի և նրա թշնամի Հայաստանի պահանջները։ Եվ վերջին հաշվով խորհրդայնացումից հե-

¹⁶ ՀՀ ԼՔՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 718, ք. 1:

¹⁷ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 25, ք. 82:

տո էլ հայտնվել էր ծանր ու անելանելի վիճակում, և «ելքը գտնվեց» ու վերաբերմունքը փոխվեց միայն այն ժամանակ, երբ 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց ռուս-թուրքական բարեկամական պայմանագիրը: Այսինքն՝ Հայաստանում քաղաքացիական պատերազմն հրահրելու և խժոժություններ սարքելու ողջ այս քաղաքական խարդավանքները պայմանավորված էին այդ գլխավոր հարցով: Ուստի, քաղաքական առումով տարբեր էին Ադրբեջանի և Հայաստանի խնդիրները, և մեխանիկական եզրեր փնտրելը նշանակում է անտեսել այն ամենն, ինչը, որ կատարվում էր Հայաստանում խորհրդայնացումից հետո չորս ամիս շարունակ: Թուրքիան ոչ միայն գրավել էր Հայաստանի տարածքների մեծ մասը, այլև ստանձնել էր նրա հեղափոխական փաստաբանի դերը: Ահա, ավիսներն ու աթարբեկյաններն էլ շուր էին լցնում Թուրքիայի ջրաղացին: Այս վիճահարույց հարցին 1920թ. հոկտեմբերի 9-ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Բեկզադյանի հետ ունեցած գրույցում հստակ պատասխանել է Բ. Լեգրանը: Հոկտեմբերի 14-ին Հ. Օհանջանյանին Ս. Բեկզադյանն այդ գրույցի մասին հայտնում է հետևյալը. «Լեգրանը կրկին հայտնեց այն միտքը, որ եթե գիտակցորեն դնել հարցը, պիտի ընդունել, որ այժմ կա միայն երկու իրար հետ մահու և կյանքի իմաստով կռվող քաղաքականություն: Դա մի կողմից Անտանտայի քաղաքականությունն է, և մյուս կողմից՝ Սովետական Ռուսաստանի հեղափոխական քաղաքականությունն է: Ես չգիտեմ, ավելացրեց նա, գիտակցորեն է կատարվում, թե անգիտակցորեն, բայց, համենայն դեպս, տանիկները այժմ մեր հեղափոխական դրոշակի տակ են գնում, որովհետև Անտանտայի քաղաքականությունը եթե հաջողությամբ պսակվի, մահացու հարված պետք է հասցնի նրանց»¹⁸: Շինձո՞ւ ու հորինված՞ էր այս ամենը. իհարկե՛ ոչ, բայց փաստ է, որ 1920թ. մայիսից մինչև հոկտեմբերի 28-ը ՌՍՖՍՀ կառավարությունը չճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ գո-

յություն ունեցող տարածքներով: Ուստի, դրա շարունակության ու տրամաբանական դրսևորումն էր այն, ինչը որ կատարվում էր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո: Թուրքիան շատ խելոք էր գործում, որովհետև չէր վստահում Ռուսաստանին: Նա իր գորքերն Արփաչայից այն կողմ չբաշեց մինչև Մոսկվայի հետ դիվանագիտորեն չվավերացրեց Ալեքսանդրապոլում ստորագրված պայմանագիրը: Ահա, այդ իսկ պատճառով էլ նա շրջափակել էր Հայաստանը և հեղափոխական կրքեր էր հրահրում ջահել հեղափոխականների միջոցով: Որ Հայաստանը 1920թ. դեկտեմբեր-փետրվար ամիսներին դրսից որևէ նյութական աջակցություն չէր ստացել, և Հայիեղկոմը այդ ուղղությամբ ոչինչ անել չէր կարողանում և բավարարվում էր միայն պարենամթերքի բռնագրավումներով, դա ապացուցվում է բազում փաստերով: Հայաստանի արտաքին գործերի կոմիսար Ալ. Բեկզադյանը 1921թ. հունվարի 12-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստրին հղած նոտայում նշում է. «Ադրբեջանում մեր ներկայացուցչի հաղորդման համաձայն ընդմիջված և առաքման համար վաղուց պատրաստ հացահատիկի և վառելիքի երթուղային գնացքները, որոնք նախատեսված են Հայաստանի համար, մինչև այժմ կանգնած են Բաքվում, քանի որ չի ստացվել Ձեր կառավարությունից խնդրած համաձայնությունն այդ գնացքները Վրաստանի միջով անցկացնելու մասին: Այսպիսով, հակառակ Ձեր բոլոր հավաստիացումներին, հակառակ Վրաստանում ՌՍՖՍՀ-ի ներկայացուցչի ընկ. Շեյնմանի այն հաղորդման, որ Ձեր կառավարությունն անցյալ տարվա դեկտեմբերի 4-ին պաշտոնապես ծանուցել է նրան, ՌՍՖՍՀ-ին և ՀՍՍՀ-ին իրավունք է վերապահվում Հայաստանի համար նախատեսված բեռները տրանզիտով ազատ փոխադրել Ձեր երկաթուղիներով, հակառակ այս ամենին, Սովետական Հայաստանը փաստորեն ենթարկվում է շրջափակման, քանի որ Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու օրից Վրաստանի միջով

¹⁸ Բանբեր Հայաստանի արխիվների, 1967թ., N3, էջ 63:

անցկացվել է, այն էլ մեծ դժվարությամբ, ընդամենը մեկ երկաթուղային գնացք»¹⁹: Որպեսզի Հայաստանի շրջափակմանը և ծանր դրությանը ծանոթանան նաև խորհրդային երկրները, Բեկզադյանն այս նուտայի պատճեններն հղում է նաև Մոսկվայի և Բաքվի պատկան մարմիններին: Սակայն այդ քայլերը իրավիճակը փոխել չէին կարող, որովհետև Հայաստանը երկակի շրջափակման էր ենթարկված: Եթե նույնիսկ գնացքն անցնում էր Վրաստանով, ապա այն հետո ընկնու էր քեմալականների ձեռքը: Հայաստանի դրության ողջ բարդությունն այն էր, որ այն ամբողջությամբ գտնվում էր ոչ միայն շրջափակման, այլև օկուպացիայի մեջ: Քեմալականները հեղափոխական փաստաբանի կեցվածքով Հայաստանի իշխանություններին պարտադրում էին իրենց՝ նվաճողին վայել ու արժանի քաղաքականություն: Քեմալականներն ամբողջապես իրենց էին ենթարկել Ալեքսանդրապոլի հեղկումը և ամբողջ թալանն իրականացնում էին այդ հեղկումի անունից: Նաև աջ ու ձախ տարածում էին, որ Հայաստանում ձևական իշխանափոխություն է կատարվել և որ, իբր, օկուպացված տարածքներում թալանը կատարում են ոչ թե իրենք, այլ «դաշնակցական բանդաները»: Կարսում գտնվող Ս. Մոլիվանին դարձել էր Կարաբեքիրի ձայնափողը և նրա այդ պնդումները հաղորդում էր Մոսկվա, Բաքու և Երևան: Այնտեղից էլ ստացվում էին համապատասխան արձագանքները, ու բռնացումների գործողությունները ծավալվում էին Երևանում: Թող Մռավյանն ու Կասյանը Մոսկվա և Բաքու ուղարկած իրենց նամակներով Ավիսի ու Աթարբեկյանի գործողությունները որակեին «մանկական հիվանդություն», միևնույն է, տարածում էր գտել այն տեսակետը, որ Հայհեղկումը մեղմ քաղաքականություն է վարում: 1921թ. հունվարի 14-ին Ղարաքիլիսայի հեղկումի նախագահը Հայհեղկումին հայտնում է, որ «տեղի թուրքական միսիան ամեն օր մթերքներ է պահանջում, իսկ իրենք ոչինչ չունեն տալու»²⁰: Այս ամենից բացի Երևանում և Ղարաքիլիսայում գտնվող իրենց

կապի սպաների միջոցով քեմալականները տեղի իշխանություններից պահանջում են բարեհաճ վերաբերմունք մուսուլման ազգաբնակչության հանդեպ: Այսինքն՝ քեմալականներն ջանադրաբար աշխատում էին ազգաբնակչության աչքին հեղինակազրկել առանց այն էլ ժողովրդի համար ոչինչ չարած նոր իշխանություններին: Երևանից սպայության աքսորը և մյուս գործողությունները ընդգծված դասակարգային բնույթ էին կրում: Հավանաբար, հասկանալով քեմալականների մտադրությունը, 1921թ. հունվարի 25-ին Ալեքսանդրապոլի հեղկումը դիմում է շրջանի թուրք հրամանատար Ռուշտի փաշային, որ «թուրք զինվորական պրոտեկտորատի ստեղծած պայմաններում այլևս անկարող է իր գործունեությունը շարունակել, քանի որ խաղաղ բնակչության թալանն ու բռնաբարումը չի ընդհատվում: Հեղկումի և թուրք հրամանատարության հարաբերության տարրական կանոնների ոտնահարումը հասել է իր գագաթնակետին: Այդ իսկ պատճառով էլ հեղկումը հրաժարվում է իր իշխանությունից»²¹: Թուրքիայի հետ հարաբերությունները շտկելու նպատակով 1921թ. հունվարին Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանը երկու նուտա է հղում Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Ա. Մուիթարին: Ալեքսանդրապոլի օկուպացված տարածքներում քեմալականների կատարած վայրագություններին վերջ տալու համար հունվարի 14-ի նուտայով Ալ. Բեկզադյանը պահանջում է գորքերը դուրս բերել Ալեքսանդրապոլից: «Մովետական Հայաստանի կառավարությունը, - գրում է Ալ. Բեկզադյանը, - Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետևանքով փոփոխված պայմաններում հիմնավոր արդարացում չի տեսնում Ալեքսանդրապոլի զավառում և հայկական բնակչության էթնիկական տարաբնակեցման գոտում գտնվող սահմանակից շրջաններում Ձեր գորքերի հետագա մնալու համար, բնակչություն, որը դրա հետևանքով հարկադրված է տանել ռազմական օկուպացիայի բոլոր չարչարանքները. ... Լիովին համող-

¹⁹ Ալ. Բեկզադյան, Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Երևան, 1981թ., էջ 111-112:

²⁰ ՀՀ Ն.Պ.Կ.Պ.Ա. Ա. 114, ց. 1, գ. 6, ք. 106:

²¹ «Կոմունիստ», 18 փետրվարի, 1921թ., N38:

ված լինելով, որ երկու կառավարությունների միջև եղած բոլոր վիճելի հարցերը պետք է իրենց սպառնիչ լուծումը գտնեն մոտ օրերս Մոսկվայում կայանալիք կոնֆերանսում: Մովետական Հայաստանի կառավարությունը հույս է հայտնում, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը, որպես ապացույց Հայաստանի և Ռ.Ֆ.Ս.Մ.Ն-ի հանդեպ ունեցած իր բարեկամական մտադրությունների անկողծության, չի հապաղի դուրս բերել իր գործերը Ալեքսանդրապոլի գավառից և հայկական բնակչության էթնիկական տարաբնակեցման սահմանակից շրջաններից»²²: Այնուհետև Ալ. Բեկզադյանը պահանջում է ազատել ռազմագերիներին և փոխել վերաբերմունքը և այն համապատասխանեցնել բարեկամական հավաստիացումներին: Ալ. Բեկզադյանն այս նոտայում նաև վիճարկում է Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինական լինելու հանգամանքը, փաստելով, որ այն ստորագրվել է «հոգեվարքի մեջ գտնվող դաշնակցության կողմից»: Ընդհանուր առմամբ, օրինական էին Ալ. Բեկզադյանի պահանջները: Սակայն, կարծում ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի սակարկումը քարոզչական բնույթի էր և տեղ չպետք է գտներ դիվանագիտական փաստաթղթում: Առավել ևս, որ թուրքական գործերը Ալեքսանդրապոլից դուրս բերելու պահանջը չէր հակադրվում Ալեքսանդրապոլի պայմանագրին: Խնդիրն այն է, որ Խորհրդային իշխանության կողմից Ալեքսանդրապոլի պայմանագիրը սակարկելու կամ այն չեղյալ համարելու ակնարկները քեմալականներին տրամադրում էր Հայաստանում հեղաշրջում կատարելու անհրաժեշտությանը: Առավել ևս, որ նրանք արդեն գիտեին, որ Մոսկվայի կոնֆերանսում Հայաստանի պատվիրակության ղեկավար էր նշանակված Ալ. Բեկզադյանը: Ամբողջ հարցն այն էր, որ քեմալականները մեծանոտաներից և Ալեքսանդրապոլի պայմանագրի դեմ բոլշևիկյան քարոզչամիջոցների աղմուկից ենթադրում էին, որ Մոսկվայում հայկական կողմը որպես բանակցությունների հիմք չի ընդունելու Ալեքսանդրա-

պոլի պայմանագիրը, փաստելով, որ այն ստորագրվել է դաշնակցության կողմից: Այդ իսկ պատճառով էլ քեմալականները պետք է ջանային, որ Մոսկվայի կոնֆերանսից առաջ Հայաստանում հեղաշրջում կատարվի և իշխանությունը կրկին անցնի դաշնակցությանը: Ահա այս վտանգն էին պարունակում Բեկզադյանի նոտայում տեղ գտած դրույթները Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին: Հնարավոր է, որ Բեկզադյանը տեղյակ չէր, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվել էր նաև խորհրդային կողմի համաձայնությամբ: Բայց այս տարբերակը քիչ հավանական է, որովհետև, զոնե ղեկավար կազմը գիտեր, որ բոլշևիկներն ուզում էին, որ Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրվի, բայց ոչ իրենց, այլ դաշնակցության ձեռքով: Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրած Ալ. Խատիսյանը պատմում է հետևյալն իր և Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանի միջև այդ մասին կայացած գրույցի մասին. «Կասյան ինձ ըսավ. Դուք օրինավոր վարվեցաք: Այդ բույսերի անկարելի էր վարվել այլ կերպ: Բայց դուք հասկանում եք, որ մենք խորհրդային իշխանություն ենք, մենք չենք կարող վերցնել մեր վրա պատասխանատվությունն այս դաշնագրի համար: Եվ այդ պատճառով մեր մամուլի մեջ շատ խիստ կերպով կքննադատենք և կպախարակենք Ձեզ: Բայց դա տակտիկական խնդիր է»²³: Կասյանի ասածներին կարելի է հավելել նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարներից միայն Ալեքսանդրապոլի պատվիրակության անդամները զերծ մնացին ձեռքակալությունից և անարգել հեռացան Հայաստանից: Եթե Բեկզադյանն այս ամենին տեղյակ էր, ուստի, մնում է, որ ինքը ընկել էր քարոզչության ազդեցության տակ կամ էլ Ալեքսանդրապոլի պայմանագրի սակարկումն իր քաղաքական համոզմունքն էր: Առավել ևս, որ Ալեքսանդրապոլի գավառը թուրքական գործերից ազատելու պահանջը չէր հակասում Ալեքսանդրապոլի պայմանագրին, որովհետև, համաձայն պայմանագրի, Ալեքսանդրապոլի գա-

²² Ալ. Բեկզադյան, Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Երևան, 1981թ., էջ 114-115:

²³ Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 281:

վաղը մնում էր Հայաստանին, և սահմանագիծը կամ ջրբաժանը Արփաչայն էր: Այս հարցում, ամենայն հավանականությամբ, դեր է խաղացել այն հանգամանքը, որ Ալ. Բեկզադյանը համոզված էր, որ Մոսկվայի կոնֆերանսը հայ-թուրքական տարածքային հարցերը քննարկելիս չի ելնի կամ հիմք չի ընդունի Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Այս քաղաքական համոզմունքը կար ոչ միայն Ա. Բեկզադյանի, այլև Ա. Մոավյանի և Ս. Տեր-Պարթևյանի մոտ: Հենց սրանով էլ այս գործիչները շահեկանորեն տարբերվում էին մյուսներից: Այդպիսի մոտեցում ունեցողների թվին կարելի է դասել նաև Բ. Լեգրանին: Բայց քաղաքականություն իրականացնողները և որոշում կայացնողները իրենք չէին: Ուստի, Ալ. Բեկզադյանի մոտեցումները Ալեքսանդրապոլի պայմանագրի հարցում զգալի վնաս հասցրին Հայաստանին: Քեմալականները հիմք ունենալով այս և նման մոտեցումները, ամեն ջանք գործադրեցին, որ «հեղափոխական պայքարի բացակայությունը» շեփոթելով հեղաշրջում կատարեն Հայաստանում: Այդ պարագայում նրանք հանգիստ կվերաբերվեին Մոսկվայի կոնֆերանսին Հայաստանի մասնակցության հարցին: Սա, անշուշտ, փետրվարյան հեղաշրջման շարժառիթներից մեկն էր, բայց ոչ երկրորդականը: Հունվարի 18-ին Բեկզադյանի Մոսկվա մեկնելուց հետո այլևս նման բովանդակությամբ նոտաներ Թուրքիան չստացավ: Ավելին, Հայաստանը որևէ օրինական գործունեություն ձեռնարկելիս, եթե դրանից դժգոհում էին քեմալականները, պարտավոր էր բացատրություն տալ: Արդեն հիշատակած Ղարաբիլիսայի դեպքի առիթով, երբ Կարաբեքիրը հատուկ գրությամբ հունվարի 29-ին իր դժգոհությունը հայտնեց Հայաստանին, Ա. Մոավյանը նամակ է հղում թուրք գորավարին և վերստին նրան բացատրում է, որ Հայաստանը ինչպես հռչակագրերով, այնպես էլ ամենօրյա իր գործերով հավատարիմ է քեմալականների հետ բարիդրացիական հարաբերություններին: Նաև նշում է, որ լավ կլիներ, որ այդ հարաբերությունները

փոխադարձ լինեին²⁴: Այսքանով հանդերձ, Թուրքիան ու Ադրբեջանը դժգոհ էին Հայաստանի վարած քաղաքականությունից: 1921թ. հունվարի վերջերին Բաքվից հեռախոսագրույցի ընթացքում Ալ. Բեկզադյանը Մոավյանին ու Կասյանին խորհուրդ է տալիս չսրել հարաբերությունները, նկատի ունենալով ստեղծված հանգամանքները: Խնդիրն այն է, որ Մոավյանն ու Կասյանը տեսնելով, որ ոչնչով չեն կարողանում ազդել բռնացումների ու բռնագրավումների քաղաքականության վրա, հայտարարել էին, որ դուրս են գալիս գործից, որպեսզի «մասնակից չլինեն կատարվող խայտառակ քաղաքականությանը»: Բեկզադյանը նրանց հասկացնում է, որ ինչ որ շրջան պետք է հարմարվել և ուշադրությունը կենտրոնացնել սպավելիք ռուս-թուրք-ադրբեջանահայկական մոսկովյան սպասվելիք բանակցությունների վրա, որտեղ լուծվելու են տարածքային հարցերը: Բեկզադյանը, որը նշանակված էր Մոսկվայում սպասվող կոնֆերանսում հայկական պատվիրակության ղեկավար, դեռևս չէր կոահում, որ Հայաստանում իշխանափոխությանը տանող գործողությունները նաև այն բանի համար էին, որ Հայաստանը զրկվի Մոսկվայի կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից: Այդ հեռախոսային գրույցի ժամանակ Ալ. Բեկզադյանը նաև անդրադառնում է հայ-վրացական տարածքային վեճին՝ կապված չեզոք գոտու հետ: Նա նշում է, որ բանակցությունների հարցը մտել է փակուղի, որովհետև «Վրաստանը համատորեն մերժում է Ռ-ՍՖՍՀ մասնակցությունը բանակցություններին վճռական ձայնի իրավունքով»²⁵: Վրաստանի նման դիրքորոշումն էլ դարձավ հիմնական պատճառ, որ չեզոք գոտու հարցը բանակցություններով լուծելու հնարավորությունից վերածվեց հայ-վրացական առճակատման քատերաբեմի: 1920թ. դեկտեմբեր 1921թ. հունվար ամիսներին Ռ-ՍՖՍՀ կառավարությունը ջանում էր, որ Հայաստանի օրինակով՝ բանակցությունների միջոցով Վրաստանը խորհրդայնացվի: Հանդիպելով Ն. Ռամիշվիլու թևի դիմադրությանը,

²⁴ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113c, ց. 3, գ. 11, ք. 38-39:

²⁵ Նույն տեղում, ֆ. 114, ց. 2c, գ. 35, ք. 28:

նրանք որոշեցին դիմել ռազմական գործողությունների: Նշել ենք, որ հունվարին Ն. Ժորդանիան եռանդուն, բայց ապարդյուն ջանքեր գործադրեց խաղաղ ճանապարհով Վրաստանը խորհրդայնացնելու գործում: Այդ ժամանակահատվածում տասնյակ նոտաներ ու փոխադարձ մեղադրանքներով գրություններ փոխանակվեցին Վաստանի և Խորհրդային Հայաստանի միջև²⁶: Կողմերը մնացին իրենց դիրքորոշումների վրա: Վրացական գորքերը չեզոք գոտուց դուրս բերելու և Ռուսաստանի մասնակցությամբ բանակցություններ սկսելու մի քանի գրություն էլ փոխանակվեցին Վրաստանի և ՌՍՖՍՀ կառավարությունների միջև, որոնք ևս որևէ էական արդյունք չտվեց²⁷: Դրանից հետո էր, որ Օրջոնիկիձեն հրահանգեց 11-րդ բանակի հրամանատար Վելիկանովին և Հայհեղկոմի անդամներ Կասյանին ու Ավ. Նուրիջանյանին ռազմական գործողություններ նախապատրաստել և չեզոք գոտին Վրաստանից վերցնել: Այ. Բեկզադյանի ջանքերը հայ-վրացական տարածքային վիճելի հարցերը բանակցությունների միջոցով լուծելու ուղղությամբ արդյունք չտվեցին: Ամենայն հավանականությամբ, Բեկզադյանը զգում էր, որ բախումը հայ-վրացական սահմանում երկու հարևան երկրներին էլ լավ բան չի խոստանում: Նա հունվարի 19-ից 21-ը բանակցություններ վարեց Վրաստանի արտաքին գործերի մինիստր Կ. Սաբահթարաշվիլու և մյուս ղեկավարների հետ, որոնք արդյունք չտվեցին: Այդ մասին նա Բաքվում զեկուցում է Օրջոնիկիձեին: Այնուհետև, Այ. Բեկզադյանը Բաքվից մեկնում է Մոսկվա և երկար ժամանակ մնում է այնտեղ: Այս հանգամանքը ևս բացասական ազդեցություն է ունենում, որովհետև Այ. Բեկզադյանը գտնում էր, որ ղեկտեմբերի 2-ին Լեգրանի կնքած պայմանագրի դրույթների անտեսումը և նոր ու արհեստական հեղափոխություն առաջացնելը Հայաստանում հղի է ծանր հետևանքներով: Դժվար է ասել՝ նրա քաղաքական հայացքներն էին պատճառը, որ հենց նա նշանակվեց Մոսկվայում սկսվելիք

²⁶ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 12, ք. 4-8:

²⁷ Նույն տեղում, գ. 35, ք. 27-28:

կոնֆերանսին մասնակցելու Հայաստանի պատվիրակության ղեկավար և 1921թ. հունվարի 18-ին մեկնեց Հայաստանից և երկար ժամանակ մնաց Մոսկվայում: Այս հարցադրումն անում են այն պատճառով, որ նախնական տարբերակով պատվիրակությունը պետք է ղեկավարեր Արտ. Կարինյանը, հետո Կարինյանի թեկնածությունը հանվեց և նշանակվեց Այ. Բեկզադյանը: Ժամանակին փորձել են Ա. Կարինյանից իմանալ այս հարցի պատասխանը, բայց ապարդյուն, որովհետև նա, չգիտես ինչու, հրաժարվեց հարցին պատասխանել: Հնարավոր է, որ այդ փոփոխությունը Հայաստանի ղեկավարների ներքին տարածայնությունների խնդրի հետ որևէ կապ չուներ: Պարզապես, այդ փոփոխությունը պայմանավորված է եղել Այ. Բեկզադյանի քաղաքական լայնախոհության ու նաև Մոսկվայի ղեկավարության հետ նրա ունեցած կապերով: Խնդիրն այն է, որ ինչպես Հայաստանի Հանրապետության ղեկավարներն էին երկու տարի շարունակ սպասում, որ Փարիզի խաղաղության վեհաժողովը լուծելու է Հայաստանի տարածքային հարցերը, այնպես էլ Խորհրդային Հայաստանը մեծ հույսեր էր կապում Մոսկվայում գումարվելիք խաղաղության կոնֆերանսի հետ: Դրա վկայությունն է, որ պատվիրակությունը մեծ քանակությամբ նյութեր էր տանում Մոսկվա հիմնավորելու համար Հայաստանի տարածքային պահանջների օրինական լինելը: Դեռևս 1920թ. ղեկտեմբերի 26-ին Ա. Մռավյանը Դովաթյանի հետ ունեցած հեռախոսազրույցում ասում է, որ «ղեկտեմբերի 14-ին Կարախանն ինձ ու Սահակին (Տեր-Գաբրիելյան) հայտնել է Մոսկվայում գումարվելիք կոնֆերանսի մասին, որին մասնակցելու են Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները: Այդ կոնֆերանսում լուծվելու են բոլոր վիճելի հարցերը: Գտնում են, որ անհրաժեշտ է շտապ Մոսկվա ուղարկել որևէ մեկին փորձագետների հետ, քարտեզներով և այլ նյութերով: Ցանկալի է ուղարկել Կասյանին կամ Բեկզադյանին: Կարելի է նաև

պատվիրակության մեջ մտցնել Սահակին և Կարինյանին: Վերջինիս որպես հայկական հարցի գիտակի»²⁸: Մոավյանի Բաքվից հայտնած այս տեղեկությունից հետո էր, որ սկսվեց հարցին վերաբերվող նյութերի հավաքագրումը և պատվիրակության ղեկավար նշանակվեց Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեկզադյանը: Արդեն հունվարի կեսերին նյութերը և քարտեզները հավաքված էին, փորձագետները նշանակված, և 1921թ. հունվարի 18-ին Բեկզադյանը փորձագետների հետ մեկնում է Մոսկվա: Նույն օրը նա հեռագրում է Բաքու Աթաբեկյանին. «Հայտնի Սահակին (Տեր-Գաբրիելյան), որ ինձ հետ բերում են ամբողջական նյութերը»²⁹: Ահա, Մոսկվա մեկնելու ճանապարհին էլ երկու օրով նա Լեզրանի հետ կանգ առավ Թիֆլիսում, որպեսզի քննարկի չեզոք գոտու շուրջ սկսվելիք հայ-վրացական բանակցությունները: 1921թ. հունվարի 15-ին նա Բաքու՝ Աթաբեկովին հեռախոսով հայտնում է, որ «Այսօր վրացիներից ստացա իմ նոտայի պատասխանը, որով վրացիները խնդրում են ուղարկել ներկայացուցիչներ բանակցություններ սկսելու չեզոք գոտու վերաբերյալ, սկզբունքորեն ընդունելով ՌՍՖՍՀ միջնորդությունը»³⁰: ՌՍՖՍՀ միջնորդություն ասածը Թիֆլիսում քննարկելուց հետո էր, որ Վրաստանի կառավարությունը մեծամասնությամբ մերժեց Վրաստանը խորհրդայնացնելու առաջարկը, և դրանից հետո չեզոք գոտու սկսվեցին ռազմական գործողությունները: Այսինքն՝ Հայաստանից հետո Վրաստանը ևս «խաղաղ ճանապարհով» խորհրդայնացնելու ՌՍՖՍՀ առաջարկը մերժվեց Ն. Ռամիշվիլու մեծամասնություն կազմող խմբի կողմից, որին արդեն անդրադարձել ենք: Ալ. Բեկզադյանի Մոսկվա մեկնելուց հետո Հայաստանի արտաքին գործերի ժողովուրդի պարտականությունները դրվում են Ա. Մոավյանի վրա: 1921թ. փետրվարի 14-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստր Կ. Սաբահթարաշվիլին բողոքի նոտա է հղում Ա. Մոավյանին,

²⁸ Նույն տեղում, ք. 3:

²⁹ Նույն տեղում, գ. 27, ք. 14:

³⁰ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 35, ք. 31:

հայտնելով, որ փետրվարի 11-ին կարմիր զորքերը Հայաստանի կողմից անցել են հարձակման: Սաբահթարաշվիլին նաև հիշեցնում է, որ «երկու կառավարությունների միջև համաձայնություն էր կայացվել չեզոք գոտու հարցը բանակցությունների միջոցով լուծելու»³¹: Սաբահթարաշվիլին նշում է նաև, որ խաղաղ բանակցությունների առաջարկը պաշտպանել է նաև Ալ. Բեկզադյանը Թիֆլիսում գտնված ժամանակ: Չնական առումով Սաբահթարաշվիլու բողոքը հիմքեր ուներ, որովհետև այն փաստերը, որոնք նա բերում է նոտայում, ճիշտ էին, բայց նա մոռանում է երկու կարևոր հանգամանք: Դրանցից առաջինն այն էր, որ չեզոք գոտու հայ ազգաբնակչությունը արդեն երկրորդ անգամ էր ապստամբում Վրաստանի դեմ: Եվ երկրորդ, որ բանակցությունները չկայացան, որովհետև Վրաստանի կառավարությունը մերժեց ՌՍՖՍՀ կառավարության մասնակցությունը բանակցություններին: Այդ հարցում Հայաստանը ոչինչ չէր կարող անել, որովհետև նույնիսկ կարգին կառավարություն չուներ: Ու նաև Հայաստանը ոչինչ չէր կարողանում անել Վրաստանի կողմից շրջափակումը բացելու ուղղությամբ: Ստացվել էր 1918թ. պատմությունը գրեթե բոլոր մանրամասներով: Պարզապես, այն ժամանակ ապստամբության կազմակերպիչը Դրոն էր, իսկ կռիվները իր գլխավորած զորքերը, այժմ՝ 1921թ. փետրվարին, գործն ավելի ծավալում էր: Ապստամբողները հայ գյուղացիներն էին՝ Հ. Լազյանի գլխավորությամբ, կռիվները՝ կարմիր բանակը Վելիկանովի գլխավորությամբ: Այդ ամենի արդյունքում փետրվարի 25-ին Վրաստանում հաստատվեց խորհրդային իշխանություն, իսկ փետրվարի 18-ին Երևանում ընկավ խորհրդային իշխանությունը: Սաբահթարաշվիլին պարզապես չէր ուզում ընդունել, որ այդ ողջ գործողությունները ղեկավարվում էին ոչ թե Երևանից, այլ Բաքվից: Թերևս, լավ տեսնում ու հասկանում էին, թե իրականում ինչ է կատարվում, բայց կառչած էին մնում իրադարձությունների ձևական կողմին, որ իբր Հայաստանը պատերազմ է

³¹ Նույն տեղում, գ. 53, ք. 48:

սկսել Վրաստանի դեմ: Ժորդանիան կրկին իր հակահայկական ճառերն էր ասում Սահմանադիր ժողովի նիստերում, փաստելով հայերի «անուղղելի ռուսասիրությունը»: Անշուշտ, ամբողջապես մոռանալով, որ դեռևս 1920թ. հոկտեմբեր ամսին, երբ հայ-վրացական բանակցությունների ժամանակ հենց հայերն էին նրանց զգուշացնում, որ Հայաստանը միայնակ ոչինչ չի կարող անել հեղափոխական դաշինքի դեմ: Այն ժամանակ նրանք փաստում էին իրենց չեզոքության պարտավորվածությունը, իսկ այժմ, երբ վտանգը կախվել էր Վրաստանի գլխին, մեղադրում էին օրհասական վիճակի մեջ հայտնված Հայաստանին: Այլ հարց է, որ հնարավոր է Վրաստանը լուրջ էր ընդունում Խորհրդային Հայաստանը և զգիտեին, թե իրականում ի՞նչ է կատարվում այնտեղ: Այս տարբերակը քիչ հավանական է, որովհետև Վրաստանի ներկայացուցչությունը գտնվում էր Երևանում և նրանք իրենց կառավարությանը պարբերաբար տեղյակ էին պահում Հայաստանի ներքաղաքական լարված դրությանը: Փետրվարի 16-ին, երբ չեզոք գոտու «ապստամբությունը» հաղթել էր և Շուլավերում ստեղծվել էր Վրաստանի հեղկոմը, իսկ Վրաստանի մի շարք քաղաքներում բռնկվել էր բոլշևիկյան ապստամբություն, Հայաստանում կատարվեց հեղաշրջում և փետրվարի 18-ին Երևանում իշխանությունը ստանձնեց Հայաստանի փրկության կոմիտեն Ս. Վրացյանի գլխավորությամբ: Փետրվարի 19-ին Ս. Վրացյանը հեռագրով հայտնում է Թիֆլիս՝ Ժորդանիային, որ «Հայաստանի աշխատավորությունը այլևս ի վիճակի չլինելով հանդուրժելու կոմունիստների ծանր լուծը և թալանը, փետրվարի 18-ին ապստամբեց և տապալեց բոլշևիկյան իշխանությունը: Մինչև նոր կառավարության ձևավորումն ամբողջ իշխանությունը կենտրոնացված է փրկության կոմիտեի ձեռքում: Տեղեկացնելով Ձեզ այդ մասին, կարծում եմ, որ Վրաստանը չի ենթարկվի նույն փորձությանը, որը բաժին հասավ հայկական ժողովրդավարությանը»³²: Այնուհետև, Ս. Վրացյանն ասում է,

որ Ս. Բեկզադյանը կրկին նշանակվում է Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ և խնդրում է, որ այդ մասին տեղյակ պահեն նրան: Վրացյանն էլ իր հերթին, փաստորեն, տեղյակ չէր, թե ի՞նչ է կատարվում Վրաստանում: Այլապես չէր գրի, որ «Վրաստանը չի ենթարկվի նույն փորձությանը»: Փետրվարի 20-ին Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սաբահթարաշվիլին հեռագրով Վրացյանին հայտնում է, որ «Բեկզադյանը կհամարվի Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ այն բանից հետո, եթե պաշտոնապես չեղյալ համարվի պատերազմը Վրաստանի դեմ և հայկական զորքերը դուրս բերվեն Վրաստանից»³³: Ահա, այսպիսի վիճակ էր ստեղծվել երկու հարևան երկրների հարաբերություններում: Իսկապես, Ս. Վրացյանը չէր կարող իմանալ և տեղյակ էլ չէր, թե ի՞նչ է կատարվում հայ-վրացական սահմաններում: Այդ պատճառով էլ նույն օրը՝ փետրվարի 20-ին նա հեռագրում է Սաբահթարաշվիլուն. «Մինչև այժմ Հայաստանում հայտնի չէր հայ-վրացական պատերազմի մասին... Ձեզանից տեղեկացանք այդ պատերազմի մասին: Հայաստանի Հանրապետության անունից հայտարարում եմ, որ Վրաստանի հետ թշնամանք չունենք և պատերազմի մեջ չենք նրա հետ: Եթե կարմիր բանակի շարքերում գտնվում են հայկական զորամասեր, ապա դրանք խաբեությանը կամ բոլշևիկյան ապստամբությանի տակ են ուղարկվել վրաց ժողովրդի դեմ»³⁴: Ս. Վրացյանը, թերևս ճշգրիտ ներկայացնում է պատկերը և հայտարարում է, որ Հայաստանը թշնամանք չունի և պատերազմի մեջ չէ Վրաստանի դեմ: Սակայն, դրանից ոչինչ չէր փոխվում, որովհետև ընդամենը հինգ օր հետո ընկավ Վրաստանի դեմոկրատական հանրապետությունը: Ուստի, քաղաքական չափումների առումով բոլորովին էլ կարևոր չէ, թե Վրաստանի խորհրդայնացման գործընթացը որտեղից սկսվեց: Կարևորն այն է, որ Հայաստանից հետո պետք է խորհրդային կարգեր հաստատվեին Վրաստանում և այդ ծրագիրը կատարվեց: Ուստի, Հայաստա-

³² Նույն տեղում, ֆ. 37, ց. 1, գ. 28, ք. 12:

³³ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 37, ց. 1, գ. 28, ք. 13:

³⁴ Նույն տեղում, ք. 8:

նի խորհրդայնացումից հետո լուրջ կամ քաղաքական օրինաչափությունների տրամաբանությամբ քննարկել հայ-վրացական հարաբերությունների հարցը, անհնարին է, որովհետև Հայաստանն ինքնուրույն քաղաքականություն չէր վարում: Ինչպես Ադրբեջանի խորհրդայնացումից հետո բուլղարիայի կենտրոնն ամեն միջոց գործադրում էր Հայաստանը խորհրդայնացնելու, այնպես էլ Հայաստանից հետո բոլոր ջանքերը գործադրվում էին Վրաստանը խորհրդայնացնելու համար: Տրամաբանություն փնտրել այս ամենի մեջ անհնարին է նաև այն պատճառով, որ բուլղարիկները մտածում էին մի բան, ասում էին դրա հակառակը և անում էին բոլորովին ուրիշ բան: Այսինքն՝ Հայաստանը և Վրաստանը հայտնվել էին այնպիսի քաղաքական խաղերի ու խարդավանքների աքցանում, որտեղ տրամաբանություն փնտրելն անլուրջ զբաղմունք էր: Այլ հարց է, որ Վրաստանը դիմադրություն ցույց տվեց և Հայաստանի պես կամավոր չհանձնեց իշխանությունը: Հենց դրա համար էլ Հայաստանը պատժվեց և այնտեղ խորհրդայնացումը տեղի ունեցավ երկու անգամ: Բուլղարիկները Հայաստանում 1920թ. դեկտեմբեր 1921թ. փետրվար ամիսներին բոլոր նախադրյալները ստեղծեցին հեղաշրջման համար, որպեսզի հիմնավորեն, որ Հայաստանը «միջազգային իմպերիալիզմի միջնաբերդն է և որ դաշնակցությունը կամավոր հանձնելով իշխանությունը, հեռուն տանող քաղաքական նպատակներ էր հետապնդել»: Այսինքն՝ իշխանությունը կամովին հանձնելով, նրանք ի սկզբանե ծրագրավորած էին եղել այն վերագրավելու և իբր այդ ամենի հիմքերը նրանք դրել էին Ալեքսանդրապոլի պայմանագրով «դաշինքի մեջ մտնելով քեմալականների հետ»: Այժմ էլ ստացվում էր, որ քեմալականները ոչ թե բուլղարիկների հեղափոխական դաշնակիցներն էին, այլ դաշնակցության: Այս ամենի մեջ տրամաբանություն փնտրել և առավել ևս լուրջ ընդունել խորհրդային իշխանությունը Հայաստանում 1920թ. դեկտեմբեր 1921թ. փետրվար ամիսներին, պարզապես անհնարին էր: Վրաստանի կառավարության մեղադրանքը, որ իբր 1921թ. փետրվարին Հայաստանը պատե-

րագմ էր սկսել Վրաստանի դեմ, նույնն էր, թե Հայաստանը Վրաստանին 1921թ. մարտին մեղադրեր, որ վերջինս պատերազմ է սկսել Հայաստանի դեմ, որովհետև կարմիր բանակը Հայաստան էր շարժվում նաև Վրաստանից: 1921թ. փետրվարյան իրադարձությունների շուրջ կարելի է երկար խոսել, բայց այն թեմայի հետ քիչ է աղերսվում և կարևոր էլ չէ: Կարևորն այն է, որ Վրաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, իսկ Հայաստանում կատարվեց հակառակը: Գումարելիների նման տեղափոխությունը մի կողմից կապված էր այն բանի հետ, որ բուլղարիկները փոքրաթիվ գորքեր ունեին, իսկ մյուս կողմից էլ համաշխարհային հեղափոխության տրամաբանությունը պարզել էր, որ Հայաստանը շուտ է խորհրդայնացվել: Ժամանակ էր հարկավոր, որպեսզի քեմալականները և բուլղարիկները Մոսկվայում լուծեին Հայաստանի տարածքների բաժանման հարցը և դրանից հետո միայն ևս մեկ անգամ խորհրդայնացնեին Հայաստանն այս անգամ արդեն զենքի ուժով: Ինչը որ կատարվեց 1921թ. ապրիլ ամսին, որով և ավարտվեց Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման պատմությունը:

Հետադարձ հայացք կամ վերջաբանի փոխարեն

Ցանկանում եմ գիրքն ավարտել ոչ թե ամփոփելով ասվածը: Դրա անհրաժեշտությունը չեմ տեսնում այն առումով, որ հնարավորինս այդ բանն արվել է շարադրանքի ընթացքում: Բնական է, որ հայ-վրացական հարաբերությունները տեսանելի ապագայում չեն խամրի քաղաքական այն անհեռատեսությամբ, ինչը եղավ 1-ին հանրապետությունների պատմության կարճ ընթացքում: Այդ պատճառով էլ ցանկանում եմ, որ ընթերցողն ընկալի այն հետադարձ հայացքը, որը վերախմաստավորեց կատարվածը և սերունդներին պատգամեց չկրկնել արդեն եղած կովկասյան քաղաքական անհեռատեսությունը:

Դեռևս 1921թ. հունիսին Փարիզում հավաքվեցին երկու տարի շարունակ իրար խոսք չհասկացնող, քաղաքական օրինաչափություններն ու խաղի կանոնները չհարգող երեք հանրապետությունների ղեկավարները: Այդ հավաքը նրանք անվանեցին «կովկասյան հանրապետությունների կոնֆերանս»: Փորձեցին նաև թղթի վրա ստեղծել «Կովկասյան հանրապետությունների միություն»: Ահարոնյան, Թովչիբաշիչև, Չխենկելի, Չերմոև ու նաև այլ երևելի անուններ, որոնք փորձեցին վերախմաստավորել կատարվածը: Պատմության ընթացքն ու իրենց թույլ տված սխալները նրանք, անշուշտ, այլևս շտկել չէին կարող: Բայց այդ հավաքի քաղաքական ու պատմական դասն այն էր, որ նրանք ընդունեցին իրենց թույլ տված սխալները և խոստացան ու նաև երդվեցին, որ եթե պատմությունը կրկին անկախության հնարավորություն ընձեռի, իրենք բոլոր վիճելի հարցերը կլուծեն միայն բանակցությունների միջոցով՝

առաջին պլանում ունենալով Կովկասի ընդհանուր շահը: Անդրկովկասի 1-ին հանրապետության ղեկավարների այս ինքնախոստովանությունը կարևոր է այսօրվա քաղաքական ընթացքի համար, որովհետև այն իմաստավորված է փորձով և հնչում է ինչպես պատգամ գալիք սերունդներին:

ԿՏՐԻՇ ԽԱՉԻԿԻ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1918-1921 ԹԹ.

КТРИЧ ХАЧИКОВИЧ САРДАРЯН

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ
ОТНОШЕНИЯ В 1918-1921 ГГ.

Խմբագիր՝ Վ. Վ. Չաղայան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան
Համակարգչային շարվածքը՝ Ն. Ա. Վարդանյանի
Ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր 55 տպարանակ 500

«Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ

Երևան-9, Տերյան 91

«Երևանի առաջին տպարան» ՓԲԸ
Հանրապետության 65